Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

Էլ. փոստ՝ ***info@armin.am***

ՄԵԼԻՆԵ ԱՆՈՒՄՅԱՆ

ՃԱՆԱՉՈՒՄ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ.
ԵՐԻՏՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(1919-1921 թթ. և 1926 թ.)

ԵՐԵՎԱՆ
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ
2013

ՀՏԴ 941(479.25):341
ԳՄԴ 63.3(2Հ) 52+67.91
Ա 641

Հրատարակվում է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գրախոս՝ պ. գ. դ. Հայկ Դեմոյան
Պատասխանատու խմբագիր՝ պ. գ. դ. Արսեն Ավագյան

Անումյան Մ.
Ա 641 Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.) / Մ. Անումյան; Պատասխանատու խմբագիր՝ Ա. Ավագյան.-Եր.:
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013.-168 էջ:

Մենագրությունում գիտական շրջանառության մեջ դրված արխիվային փաստաթղթերի, օսմանյան և այլալեզու մամուլի հրապարակումների, դատական սղագրությունների, ժամանակակիցների հուշերի և տարբեր գիտական ուսումնասիրությունների հենքի վրա ներկայացվում են 1919-1921 թթ. Թուրքիայում հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված դատական գործերը և 1919-1920 թթ. ու 1926 թ. երիտթուրքերի դատավարությունները: Աշխատության մեջ համեմատություն է անցկացվում 1919-1921 թթ. և 1926 թ. իթթիհադականների դատավարությունների միջև: Գիրքը նախատեսված է պատմաբանների, ուսանողների և ընթերցող լայն հանրության համար:

ISBN 978-9939-822-31-0

ՀՏԴ 941(479.25):341
ԳՄԴ 63.3(2Հ) 52+67.91

© Մելինե Անումյան, 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ **5**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **8**

ԳԼՈՒԽ 1. *ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՄՈՒԴՐՈՍԻ ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ԿՆՔՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԵՎ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* **20**

1.1 Քաղաքական մթնոլորտը Թուրքիայում Մուդրոսի զինադադարի կնքումից հետո **20**

1.2 Հայոց ցեղասպանության պատասխանատուների դեմ իրականացված հետաքննությունները **38**

ԳԼՈՒԽ 2. *ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻԹԹԻՀԱԴԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԴՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԾԱՎԱԼ ՎԱԾ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՄԱՐ* 52

2.1 Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների դատավարությունը (1919 թ. ապրիլ-մայիս ամիսներ) **52**

2.2 Պատերազմի տարիներին կառավարած երիտթուրքական վարչակազմերի անդամների դատավարությունը (1919 թ. հունիս-հուլիս ամիսներ) **73**

2.3 Միություն և առաջադիմություն կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների դատավարությունը **79**

2.4 Հայերի տեղահանության և կոտորածների դատավարություններն ըստ շրջանների. առանձին անհատների դատաքննություններ **86**

ԳԼՈՒԽ 3. *ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ 1926 Թ. ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* **117**

3.1 Քաղաքական զարգացումները Թուրքիայում 1923-1926 թթ., Իթթիհադի ղեկավարների ընդդիմության ճակատում և Իզմիրի մահափորձը **117**

3.2 1926 թ. Իզմիրի և Անկարայի դատավարությունները **126**

3.3 Իթթիհադական ավանդույթի պահպանումը Թուրքիայի Հանրապետությունում. երիտթուրքերի 1919-1921 թթ. և 1926 թ. դատավարությունների համեմատական վերլուծություն 149

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 158

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 163

ԱՌԱՋԱԲԱՆ

Թուրքական պատմագրությունը հազվադեպ է անդրադառնում 1919-21 թթ. և 1926 թ. Միություն և առաջադիմություն կուսակցության դատավարարություններին: 1919-21 թթ. երիտթուրքերի դատավարություններին նվիրված գիտական աշխատանքների հեղինակներն առաջ են քաշում այն թեզը, որ դատավարություններն իրականացվել են Անտանտի պետությունների, առաջին հերթին՝ Մեծ Բրիտանիայի ճնշման տակ և, հակառակ բոլոր ջանքերի, չի հաջողվել բավականաչափ ապացույցներ հավաքել առ այն, թե հայերի ոչնչացումը պետության կողմից մշակված և իրականացված քաղաքականության արդյունք է: Որոշ թուրք պատմաբաններ աշխատություններում առանձնահատուկ հպարտությամբ շեշտվում է այն հանգամանքը, որ 1919-21 թթ. դատավարությունների ժամանակ տարբեր հանցանքների մեջ մեղադրվողի երիտթուրքերը որևէ գաղտնիք չհայտնեցին՝ հավատարիմ մնալով կուսակցությանն անդամագրվելու ժամանակ տրված երդմանը:

1926 թ. դատավարությունը մշտապես ուսումնասիրվել և մեկնաբանվել է թուրքական պաշտոնական պատմագրության տեսակետից՝ դատավարության համար պատրվակ հանդիսացած՝ Աթաթուրքի դեմ Իզմիրի մահափորձը մեկնաբանելով որպես հետադիմական ուժերի դավադրություն և, այսպիսով փորձելով կապ տեսնել Անկարայի դատավարության հետ: 1926 թ. Անկարայի դատավարությունն իրականում շատ քիչ կապ ուներ Իզմիրի մահափորձի հետ. այն քաղաքական հաշվեհարդարի արդյունք էր, ինչի մասին վկայում են դոկտոր Նազըմի՝ կախաղան բարձրանալուց առաջ ասված վերջին խոսքերը. «Ափսո՜ս, ես այդ գործի հետ կապ չունեի», ինչպես նաև հենց իր՝ Աթաթուրքի խոստովանությունը դոկտոր Նազըմի քենակալին՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Թևֆիկ Արասին, թե նա ստիպված էր կախել Իթթիհադի նախկին ղեկավարներին, քանի որ հակառակ դեպքում նրանք իրեն կախաղան կբարձրացնեին: Եվ պատահական չէ, որ երբ 1994 թ. Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր Հասան Մեզարջըն իր ելույթում քննադատեց Աթաթուրքին և պահանջեց վերանայել 1926 թ. Անկարայի դատավարությունը, նրան զրկեցին պատգամավորական անձեռնմխելիությունից և ձերբակալեցին:

Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների դատավարությունների նկատմամբ Թուրքիայում որդեգրված մոտեցումը հասկանալի է, քանի որ այդ դատավարություններում Իթթիհադը, որպես կազմակերպված ուժ կամ գործոն, չվերացավ քաղաքական թատերաբե-

մից: 1919-21 թթ. դատավարություններն անավարտ մնացին, իսկ 1926 թ. դատաքննությունների արդյունքում մահվան դատապարտվեցին միայն կուսակցության մի շարք պարագլուխներ:

Թուրքիայի ներկայիս քաղաքական ավանդույթը նույն երիտթուրքական ավանդույթն է, գործելաոճը՝ նույն իթթիհադականը. թուրք հայտնի գիտնականների կարծիքով՝ այդ պետությունում մինչև այսօր իրականում գոյություն ունի միայն մեկ կուսակցություն՝ Միություն և առաջադիմություն, իսկ մյուս կուսակցությունները նրանից սերված, նրա գաղափարախոսությունը զարգացնող կուսակցություններն են: Հատկանշական է, որ հանրապետության հռչակման օր Մուստաֆա Քեմալն ընտրեց հոկտեմբերի 29-ը, այն օրը, երբ նա 1907 թ. երդում տվեց և ընդունվեց Միություն և առաջադիմություն կուսակցության շարքերը:

Հայոց ցեղասպանության ուսումնասիրության տեսակետից առավել կարևոր է 1919-1921 թթ. դատավարությունների հանգամանալից ուսումնասիրությունը, որովհետև չնայած հերքման ջանքերին և պնդումներին՝ այդ դատավարությունների ժամանակ հայտնաբերվել են երիտթուրքական կուսակցության և կառավարության կողմից Ցեղասպանության քաղաքականության մշակման բազմաթիվ անհերքելի փաստեր, իրենք՝ մեղադրվողները, հաստատել են թե ում կողմից են ստացել հրահանգները, ներկայացվել են բազմաթիվ հեռագրեր և վկայություններ: Եվ այդ ամենը հակառակ իթթիլաֆական կառավարության ուղեգծի՝ ոչ թե բացահայտել, այլ կոծկե՛ր, և հակառակ թուրք հասարակության ջանքերի՝ անել ամեն ինչ՝ հայերի ոչնչացմանն ու նրանց ունեցվածքին տիրանալուն մահմեդական լայն զանգվածների մասնակցությունը թաքցնելու համար: Այս դատավարությունները կարևոր են նաև այն տեսակետից, որ վկաների ճնշող մեծամասնությունը ոչ թե հայեր էին, այլ թուրքեր և այլազգի մահմեդականներ, պաշտոնյաններ, զինվորականներ, հասարակական գործիչներ:

Մելինե Անումյանի արժեքավոր աշխատությունում արխիվային նյութերի, այդ շրջանի օսմանյան և այլ մամուլի հրապարակումների, վկայությունների, դատավարությունների պաշտոնական հաղորդումների և աղագրությունների, հուշագրությունների, տարբեր ուսումնասիրությունների գիտական վերլուծության հիման վրա ներկայացվում են զանազան շրջանների դատավարությունները, որոնց ընթացքում բացահայտվել են հայ ժողովրդի ոչնչացման ծրագրի բոլոր մանրամասնությունները: Համեմատելով 1919-21 թթ. և 1926 թ. դատավարությունները՝ հեղինակը ցույց է տալիս, որ երկուսի միջև ընդհանուր կապող օղակ են հանդիսացել Իթթիհադի կողմից պետությունն անհիմն պատերազմի մեջ ներքաշելու և

պատերազմի ժամանակ չարաշահումներ կատարելու մեղադրանքները, իսկ քրիստոնյա փոքրամասնությունների ոչնչացման մեղադրանքը՝ հանվել: Կարևոր է հեղինակի հիմնավորված եզրակացությունը, թե այսօրվա Թուրքիան նույնպես իթթիհադական պետություն է. քաղաքական ավանդույթը, գաղափարախոսությունը, որդեգրած քաղաքական գիծը Միություն և առաջադիմություն կուսակցության քաղաքականության ու գործելաոճի շարունակություն է:

Եվ քանի դեռ կպահպանվի երիտթուրքական ոգին, դժվար է ակնկալել որևէ դրական զարգացում թուրքական ժխտողականության փոփոխության ու սեփական պատմության հետ առերեսման հարցերում:

Արսեն Ավագյան
Պատմական գիտությունների դոկտոր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ ավելի շատ է ուշադրություն հատկացվում այն փաստին, որ երիտթուրքերի՝ հայերի բնաջնջմանն ուղղված քաղաքականությունը դատապարտվել է դեռևս 1919-1921 թթ.՝ Օսմանյան կայսրության ռազմական արտակարգ ատյաններում կայացած 60-ից ավել դատավարությունների արդյունքում ընդունված դատավճիռների միջոցով: Այդ բոլոր դատական գործերը հարուցվել են Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրությունում հայերի տեղահանության և կոտորածների (Tehcir ve Taktil) մեղադրանքով: Երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների՝ 1919 թ. ապրիլ-հուլիս ամիսներին տեղի ունեցած դատաքննությունների համար հիմք են ծառայել ոչ միայն հայերի տեղահանման և ոչնչացման ու Հայոց ցեղասպանության իրականացման մեջ կարևոր դեր ունեցած Հատուկ կազմակերպությունը (Teşkilât-ı Mahsusa) հիմնելու, այլ նաև՝ առանց հիմնավոր պատճառի երկիրը պատերազմի մեջ ներքաշելու, տնտեսական չարաշահումներ թույլ տալու, սև շուկայում գործունեություն ծավալելու և երկրի անվտանգությունը խախտելու մեղադրանքները:

Սույն դատավարությունների կայացման փաստն ինքնին արժեքավոր է, քանի որ որոշ գիտնականներ այն ընդունում են որպես Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչում: Ինչպես, օրինակ, նշում է պրոֆեսոր Ն.Հ. Հովհաննիսյանը՝ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի մեծ մասն առաջին անգամ հայերենով հրատարակած օսմանագետ Ա.Հ. Փափազյանի «Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի» արժեքավոր գրքի առաջաբանում, հենց այս դատաքննությունների արդյունքում ընդունված դատավճիռների միջոցով Թուրքիան, ի դեմս սուլթանական կառավարության, արդեն իսկ պաշտոնապես ճանաչել է Հայոց ցեղասպանությունը[1]:

1919-1921 թթ. երիտթուրքերի դատավարությունների ուսումնասիրությունը կարևորվում է նաև Հայոց ցեղասպանության փաստագրման առումով: Քանզի 1919-1921 թթ. հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված դատական գործերի նիստերում, հատկապես՝ 1919 թ. երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների դատավարության ժամանակ ներկայացված մեղադրական եզրակացությունները, վկաների և ամբաստանյալների ցուցմունքները, ընթերցված

1 **Ա.Հ. Փափազեան,** Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի, Լոս Անճելես, 2005, էջ 2-3:

ծածկագիր հեռագրերը և, հատկապես, դատավճիռները կարևոր տեղեկություններ են պարունակում Հայոց ցեղասպանության իրականացման մեխանիզմների մասին: Դատական վավերագրերի շարքում առանձնահատուկ հիշատակման է արժանի Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների դատաքննության առաջին նիստում (1919 թ. ապրիլի 28) ներկայացված ամբաստանագիրը, որը բաղկացած էր 41 պաշտոնական ու կիսապաշտոնական բնագիր փաստաթղթերից, ինչպես նաև՝ 1919 թ. հուլիսի 5-ին երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների վերաբերյալ կայացված ընդհանուր դատավճիռը, ըստ որի՝ մահվան են դատապարտվել Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուները:

Երիտթուրքական կուսակցության անդամների դեմ դատական հետապնդման յուրօրինակ շարունակությունը և վերջակետը դարձավ 1926 թ. Անկարայի դատավարությունը: 1926 թ. Մուստաֆա Քեմալի դեմ մահափորձի մեղադրանքով կայացած Իզմիրի դատավարության և «Սև ավազակախմբի» կամ Անկարայի դատավարության ուսումնասիրությունը կարևորվում է հանրապետական Թուրքիայի իշխանությունների՝ երիտթուրքական նշանավոր գործիչների հետ հաշվեհարդար տեսնելու պատճառներն ընկալելու առումով: 1926 թ. դատավարությունների ուսումնասիրությունը էական է նաև այն հանգամանքով, որ 1926 թ. դատավարությունների ժամանակ այլևս չեն անդրադարձել 1919-1921 թթ. դատական գործերի հիմնական մեղադրանքներից մեկը եղած հայերի տեղահանությանը և կոտորածներին: Եվ թեև 1919-1921 թթ. թուրքերը ճանաչել և դատապարտել են հայերի տեղահանությունը և զանգվածային կոտորածները, սակայն հետագայում՝ Թուրքիայի Հանրապետության պատմության ողջ ընթացքում, համառորեն ժխտել են Հայոց ցեղասպանության փաստը:

1926 թ. դատավարությունները 1919-1921 թթ. երիտթուրքերի դատավարությունների հետ համեմատելով՝ հարկ է նշել, որ 1926 թ. Անկարայի դատավարության ժամանակ քեմալական կառավարությունը Միություն և առաջադիմություն կուսակցությանը վերստին ներկայացրել էր 1919 թ. դատավարության հետևյալ երկու մեղադրանքները՝ պետությունը պատերազմի մեջ ներքաշելու և պատերազմի տարիներին չարաշահումներ կատարելու:

Ի նկատի առնելով ուսումնասիրվող թեմայի բազմազանությունը և նշանակությունը՝ հարկ ենք համարում ներածության մեջ անդրադառնալ սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների համառոտ տեսությանը, որի

շնորհիվ հնարավոր կլինի առավել հանգամանալի պատկերացում կազմել մենագրությունում արծարծվող խնդիրների վերաբերյալ:

Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատաքննությունները լուսաբանելու համար մեզ սկզբնաղբյուր են ծառայել Օսմանյան կայսրության պաշտոնաթերթ «Թաքվիմ-ի վեքայի»-ի («Իրադարձությունների օրացույց») հավելվածներում 1919-1920 թթ. արաբատառ օսմաներենով տպագրված երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների դատաքննությունների արձանագրությունները[2]: Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում հայերի կոտորածները կազմակերպած նահանգապետերի, գավառապետերի և այլ կառավարիչների դատաքննությունների վերաբերյալ կարևոր աղբյուր կարող են լինել 1918-1921 թթ. Ստամբուլում տպագրված ինչպես օսմաներեն, այնպես էլ հայալեզու, ֆրանսալեզու, և հունալեզու պարբերականները: Ժամանակի մամուլում են տպագրվել նաև «Թաքվիմ-ի վեքայի»-ում տեղ չգտած որոշ դատավարությունների արձանագրություններ, մեղադրական ակտեր ու դատավճիռներ: Սույն աշխատության մեջ լայնորեն օգտվել ենք հատկապես Ստամբուլում տպագրված օսմանյան «Ալեմդար»[3] օրաթերթում հրատարակված Յոզղատի, Տրապիզոնի, Խարբերդի և Բյույուք Դերեի դատավարությունների նիստերը ներկայացնող հրապարակումներից, հիշյալ պարբերականի պատասխանատու խմբագրի և տնօրենի վերլուծական հոդվածներից, հայերի տեղահանության և կոտորածների տարբեր դատաքննությունների ընթացքը մեկնաբանող խմբագրական հոդվածներից և հարցազրույցներից[4]: 1919-1921 թթ. դատավարություններին վերաբերող փաստերի շարադրման հարցում մեզ օգտակար են եղել նաև օսմանյան «Մեմլեքեթ»[5], «Փեյամ-ը սաբահ»[6] և «Թասվիր-ի էֆքյար»[7] պարբերականներում տեղ

2 "Takvîm-i Vekayi", 1919-1920.

3 1912-1921 թթ. Ստամբուլում տպագրված և զինադադարի շրջանում ոչ պաշտոնապես սուլթանական պալատի բանբերը հանդիսացած «Ալեմդար» օրաթերթի պատասխանատու խմբագիրն է եղել Ռեֆի Ջևադ Ուլունայր, իսկ տնօրենը՝ Ահմեդ (Փեհլիվան) Քադրին: «Ալեմդարը» հրատարակվել է նաև «Թաքվիմի գազեթե» («Օրացույց-օրաթերթ») և «Թեշրիհ» («Մեկնաբանում») անվանումներով: Օրաթերթի՝ 1918-1921 թվականների եզակի համարները պահպանվում են Թուրքիայի Ազգային մեծ ժողովի գրադարանում:

4 "Alemdar", 1919.

5 "Memleket", 1919.

6 "Peyâm-ı Sabah", 1920.

7 "Tasvir-i Efkâr", 1919.

գտած որոշ հրապարակումներ: Ժամանակի պոլսահայ մամուլից օգտագործել ենք «Ժողովուրդ»[8], «Ժողովուրդի ձայնը»[9], «Ճակատամարտ»[10] և «Վերջին լուր»[11] պարբերականներում տպագրված հրապարակումները:

1919-1921 թթ. երիտթուրքերի դատավարությունների թեման ուսումնասիրելիս օգտվել ենք նաև հայ և թուրք պատմաբանների կողմից հրատարակված արխիվային փաստաթղթերից: 1918 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին օսմանյան խորհրդարանում հայերի կոտորածների խնդրի քննարկումը լուսաբանելիս մեր ուսումնասիրությանը նպաստել է ցեղասպանագետ Վ. Դադրյանի[12] հրապարակած փաստաթղթերի ժողովածուն:

Երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների, շրջանային պատասխանատու քարտուղարների դատական նիստերի արձանագրությունների, ինչպես նաև՝ Յոզղատի, Տրապիզոնի, Խարբերդի և Բյույուք Դերեի դատավճիռների բնագրերի հայերեն թարգմանությունն առաջին անգամ կատարել է օսմանագետ Ա.Հ. Փափազյանը[13]: Երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների դատավարության մեղադրական ակտի ֆրանսերենից ռուսերեն թարգմանված տարբերակը «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի ժողովածուում ներկայացրել են Մ. Գ. Ներսիսյանը և Ռ. Գ. Սահակյանը, որտեղ որոշ կրճատումներով բերված են նաև Տրապիզոնի և Խարբերդի դատավճիռները[14]:

Թուրք ուսումնասիրողների շրջանում 1919-1921 թթ. գլխավոր դատավարությունների որոշ հատվածների առաջին տառադարձումը՝ արաբատառ օսմաներենից լատինատառի, 1988 թ. կատարել է պատմաբան Օսման Սելիմ Քոջահանօղլուն, որի կազմած «Իթթիհադականների հարցաքննությունն ու դատավարությունը (1918-1919)» վերնագրով փաստաթղթերի ժողովածուում լատինատառ օսմաներենով ներկայացված են

8 «Ժողովուրդ», 1919:

9 «Ժողովուրդի ձայնը», 1919:

10 «Ճակատամարտ», 1919-1921:

11 «Վերջին լուր», 1919:

12 **Տատրեան Վ.**, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, տպ. «Պայքար», Մասաչուսեթս, 1995:

13 **Փափազյան Ա.**, Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Երևան, 1989: Նույնը 2005 թ. վերահրատարակվել է Լոս Անջելեսում:

14 **Нерсисян М., Саакян Р.**, Геноцид армян в Османской империи, Ереван, 1982.

օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնախմբի (Beşinci Şube) կողմից իրականացված հարցաքննության արձանագրությունները և երիտթուրքական կուսակցության ու կառավարության անդամների դատաքննության մի քանի նիստեր[15]:

Ցեղասպանագետ Վ. Դադրյանի և Կլարկի համալսարանի (ԱՄՆ) Ցեղասպանությունների հետազոտման կենտրոնի դասախոս Թ. Աքչամի համատեղ կազմած և 2008 թ. Ստամբուլում հրատարակած «Տեղահանություն և կոտորածներ. Ռազմական արտակարգ ատյանի արձանագրությունները: «Միություն և առաջադիմություն» կուսակցության դատավարությունը 1919-1922 թթ.» վերնագրով ժողովածուում ոչ միայն ներկայացված է գլխավոր դատաքննությունների ամբողջական արձանագրությունների՝ արաբատառ օսմաներենից լատինատառ օսմաներենի տառադարձված տարբերակը, այլ նաև դրանց ընթերցումը դյուրացված է՝ կից տրված թուրքերեն հոմանիշների շնորհիվ[16]:

Աշխատության՝ 1919-1921 թթ. դատավարություններին վերաբերող իրադարձությունների լուսաբանմանը նպաստել են նաև տվյալ ժամանակաշրջանում ապրած քաղաքական գործիչների և հրապարակախոսների հուշերը: Թուրք քաղաքական գործիչներից օգտվել ենք Ահմեդ Ռեֆիք Ալթընայի[17], Ֆալիհ Ռըֆքը Աթայի[18], Հալիլ փաշայի[19], Հյուսամեդդին Էրթյուրքի[20], Գալիփ Վարդարի[21], դոկտոր Մեհմեդ Ռեշիդի[22], Միդհադ Շյուքրյու Բլեդայի[23], Հալիլ Մենթեշեի[24], Թալեաթ փաշայի[25], Յունուս Նադիի[26] և Հասան Ամջայի[27], ինչպես նաև՝ երիտթուրքական շրջանում Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի ռեզիդենտ Օբրի Հերբերտի[28] հուշերից:

Հայոց ցեղասպանության ընթացքի որոշ մանրամասների լուսաբանման հարցում մեր ուսումնասիրությանը նպաստել են թուրք պատմաբան Մուրադ Բարդաքչըի հրապարակած Թալեաթ փաշայի օրագիրը[29], ինչպես նաև՝ «Ժամանակ» թերթի խմբագիր Սեպուհ Ակունու[30] և անգլիացի հայտնի քաղաքական գործիչ Լլոյդ Ջորջի աշխատությունները[31]:

Աշխատության մեջ 1919-1921 թթ. երիտթուրքերի դատավարությունների հիմնական մեղադրանքը հանդիսացող հայերի տեղահանության և կոտորածների, իմա՝ Հայոց ցեղասպանության ծրագիրը և որոշ դրվագներ ներկայացված են Ջ. Կիրակոսյանի[32], Ս. Պողոսյանի[33], Ռ. Սահակյանի[34], Ն. Հովհաննիսյանի[35], Ռ. Սաֆրաստյանի[36], Ա. Ավագյանի[37] ու Ն. Փիլի-

15 **Kocahanoğlu O. S.,** İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması (1918-1919), İstanbul, 1998.

16 **Dadrian V., Akçam T.,** "Tehcir ve Taktil", Divan-ı Harb-i Örfî Zabıtları, İttihad ve Terakki'nin Yargılanması 1919-1922, Bilgi Üniversitesi Yayınları, İstanbul, 2008. Uույն աշխատության կրճատված տարբերակը թարգմանվել է նաև անգլերեն, տես **Vahakn N. Dadrian and Taner Akçam,** Judgment at İstanbul; The Armenian Genocide Trials, Toronto, 2011.

17 **Refik A. (Altınay),** İki Komite, İki Kıtal, Bedir Yayınevi, İstanbul, 1999; **Refik A.,** Kafkas Yollarında. İki Komite İki Kıtal, Temel Yayınları, İstanbul, 1998.

18 **Atay F. R.,** Zeytindağı, Bateş, İstanbul, 1981.

19 **Halil Paşa,** İttihat ve Terakki'den Cumhuriyet'e Bitmeyen Savaş, Derleyen: Taylan Sorgun, Kamer Yayınları, İstanbul, 1997.

20 **Ertürk H.,** İki Devrin Perde Arkası, Sebil Yayınları, İstanbul, 1996.

21 İttihat ve Terakki İçinde Dünenler, Anlatan: Galip Vardar, Yazan: Samih Nafiz Tansu, Yeni Zamanlar Yayınları, İstanbul, 2003.

22 İttihat ve Terakki'nin Kurucu Üyelerinden Dr. Reşid Bey'in Hatıraları. "Sürgünden İntihara", Yayına Hazırlayan: Ahmet Mehmetefendioğlu, Arba Yayınları, İstanbul, 1993.

23 **Bleda M. Ş.,** İmparatorluğun Çöküşü, Remzi Kitabevi, İstanbul, 1979.

24 Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları, Yay. Haz. İsmail Arar, Hürriyet Vakfı Yayınları, İstanbul, 1986.

25 Talât Paşa'nın Hatıraları, H. Yalçın'ın Önsözüyle, Yeni Matbaa, İstanbul, 1958; **Çavdar T.,** Talât Paşa, Bir Örgüt Ustasının Yaşamöyküsü, 4. Baskı, İmge Kitabevi, İstanbul, 2001.

26 **Nadi Y.,** Kurtuluş Savaşı Anıları, Erdini Basım ve Yayınevi, İstanbul, 1978.

27 **Ամջա Հ.,** Տեղահանություն և ոչնչացում (Տեղահանության իրական պատկերը), օսմաներենից թարգմանությունը, ներածականն ու ծանոթությունները՝ Ա.Գ. Ավագյանի, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2007:

28 **Herbert A., Ben Kendim.** A Record of Eastern Travel, Hutchinson, London, 1924.

29 **Bardakçı M.,** Talât Paşa'nın Evrak-ı Metrûkesi, Everest Yayınları, İstanbul, 2009.

30 **Ակունի Ս.,** Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ.Պոլիս, 1920:

31 **Джордж Л.,** Правда о мирных договорах, том второй, Москва, 1957.

32 **Կիրակոսյան Ջ.,** Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1967

33 **Պողոսյան Ս.,** Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, 1988:

34 **Սահակյան Ռ.,** Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990:

35 **Հովհաննիսյան Ն.,** Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, 2010:

36 **Սաֆրաստյան Ռ.,** Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009:

37 **Аванян А.,** Геноцид 1915 г., Механизмы принятия и исполнения решений, Ереван, 1999.

պոսյանի և Ա. Քեսթեքյանի[38] աշխատություններում, իսկ այլազգի պատմաբաններից՝ Թ. Աքչամի[39] և Հ. Բայուրի[40] մենագրություններում, ինչպես նաև՝ Ուղուր Ումիթ Ունգորի և Մեհմեդ Փոլաթելի համահեղինակությամբ հրատարակված գրքում[41]:

Մուդրոսի զինադադարին անմիջապես հաջորդած ժամանակաշրջանի և Թուրքիայում ազգայնական շարժման ծավալման տարիների որոշ իրադարձությունների լուսաբանման համար օգտվել ենք թուրք պատմաբաններ Դ. Ավջըօղլուի[42], Ս. Սևլեքի[43], Թ. Աքչամի[44], մենագրություններից, որոնք տարբերվում են թուրքական պաշտոնական պատմագրության մեջ ընդունված թեզից, ինչպես նաև՝ օգտագործել Զ. Սարըհանի[45] կողմից օսմանյան մամուլից բաղված դեպքերի ժամանակագրությունը ներկայացնող աշխատությունը, Ս. Աքշինի[46] և Թ. Սորգունի[47] գրքերը: Հարկ է նշել, որ Աքշինի և Սորգունի ուսումնասիրություններից օգտվելիս, ի նկատի ունենալով վերջիններիս՝ ազգայնական շարժումը ներկայացնող պաշտոնական պատմագրության կողմնակալ դրույթները, քաղել ենք զուտ պատմական փաստեր:

Միություն և առաջադիմություն կուսակցության բնույթի և գործունեության մասին համակողմանի պատկերացում կազմելու համար հիմնականում օգտվել ենք թուրք հայտնի պատմաբան Թ. Զ. Թունայայի[48]՝ Միություն և առաջադիմություն կուսակցության պատմությանը նվիրված

38 **Փիլիպոսեան Ն., Քէստէքեան Ա. (Կապենց Ա.),** Յուշարձան եօզղատցիներու (Եօզկատ), Ֆրէզնօ, 1955:

39 **Akçam T.,** Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu. Su Yayınları, İstanbul, 2001.

40 **Bayur Y. H.,** Türk İnkılâbı Tarihi, Cilt 1, Giriş: Berlin Muahedesinden Trablus-Garp Savaşına Kadar, Maarif Matbaası, İstanbul, 1940.

41 **Üngör U. Ü.t and Polatel M.,** Confiscation and Distruction, Continuum International Publishing Group, London, 2011.

42 **Avcıoğlu D.,** Millî Kurtuluş Tarihi 1835den-1995e, 1. Cilt, İstanbul, 1996.

43 **Selek S.,** Anadolu İhtilali, Cilt 1, Kastaş Yayınevi, İstanbul, 2000.

44 **Akçam T.,** İnsan Hakları ve Ermeni Sorunu. İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşı'na, 2. Baskı, İmge Kitabevi, İstanbul, 2002.

45 **Sarıhan Z.,** Kurtuluş Savaşı Günlüğü, I. Cilt, Mondros'tan Erzurum Kongresi'ne (30 Ekim 1918-22 Temmuz 1919), Öğretmen Yayınları, İstanbul, 1982.

46 **Akşin S.,** İstanbul Hükümetleri ve Milli Mücadele, Öztürk Matbaası, İstanbul, 1983.

47 **Sorgun T.,** Mütareke Dönemi ve Bekirağa Bölüğü, Kamer Yayınları, İstanbul, 1998.

48 **Tunaya T. Z.,** Türkiye'de Siyasal Partiler, Cilt 3, İttihat ve Terakki, Bir Çağın, Bir Kuşağın, Bir Partinin Tarihi, İletişim Yayınları, İstanbul, 2000.

համապարփակ աշխատությունից, իսկ ազգայնական պայքարում երիտթուրքերի ունեցած էական ներդրման հարցերը լուսաբանելիս հիմնվել ենք հոլանդացի ուսումնասիրող Էրիկ Յոյրխերի[49] աշխատությունների վրա:

Յոզղատի տեղահանության ու կոտորածների դատավարության մի շարք նիստերի արձանագրություններ օսմաներենից արևմտահայերեն է թարգմանել ու հրատարակել հայր Գրիկերը (Գրիգոր Կերկերյան)՝ «Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը» փաստագրական մենագրության մեջ[50]: Ցեղասպանությունը վերապրած հետազոտող Հայկազն Գ. Ղազարյանը «Ցեղասպան թուրքը» գրքում թարգմանել և հրապարակել է օսմանյան «Թերջյուման-ը հաքիքաթ» («Ճշմարտության մեկնաբան») օրաթերթի՝ 1920 թ. օգոստոսի 5-ի համարում տեղ գտած՝ Բաբերդի հայերի տեղահանության և կոտորածների պատասխանատուների վերաբերյալ կայացված դատավճիռը[51]: Երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների դատավարության ամբաստանագիրն առաջին անգամ օսմաներենից հայերեն է թարգմանել և 1921 թ. Բոստոնում տպագրված «Մեծ ոճիրը» գրքում հրատարակել Արամ Անտոնյանը[52]: Սույն դատավարությունների վերաբերյալ 1919-1920 թթ. ստամբուլյան մամուլից քաղված առանձին նյութեր հայերեն է թարգմանել ու հրատարակել նաև Զոհ Կիրակոսյանը[53]: Երիտթուրքերի դատական գործերին որոշ մենագրություններում անդրադարձել է նաև Վահագն Դադրյանը[54]:

1919-1921 թթ. հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով կայացած որոշ դատական գործեր քննվել են նաև օտարազգի ուսումնասիրողների կողմից: Այսպես՝ հայազգի ֆրանսիացի հետազոտող Ժ.Մ. Գառզուն 1975 թ. հրատարակած «Օրինակելի ցեղասպանություն. Հայաստան, 1915» աշխատության մեջ օսմաներեն բնագրից ֆրանսե-

49 **Zürcher E. J.,** The Unionist Factor. The Role of Committee of Union and Progress in Turkish National Movement 1906-1926, Leiden, 1984; **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, İstanbul, İletişim Yayınları, 2008.

50 **Գրիկէր,** Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980:

51 **Ղազարեան Հ.,** Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968:

52 **Անտոնյան Ա.,** Մեծ ոճիրը, Պոսթըն, 1921:

53 **Կիրակոսյան Զ.,** Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հատոր երկրորդ, Երևան, 1983:

54 **Dadrian V. N.,** Ulusal ve Uluslararası Hukuk Sorunu Olarak Jenosid, Belge Yayınları, İstanbul, 1995; **Dadrian V.,** Histoire du génocide arménien, Stock, Paris, 1996.

րեն է թարգմանել Յոզղատի, Տրապիզոնի և Խարբերդի հայերի տեղահանության ու կոտորածների պատասխանատուներին վերաբերող դատավճիռները[55]: Թուրք պատմաբաններից երիտթուրքերի 1919-1921 թթ. որոշ դատական գործերի են անդրադարձել Թ. Աքչամը[56], Բ. Շիմշիրը[57] և Ֆ. Աթան[58]: Հարկ է նշել, որ վերջին երկու ուսումնասիրողների գրքերից օգտվել ենք մեծ վերապահությամբ և օգտագործել միայն պատմական որոշ փաստեր, քանի որ նրանք հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով 1919-1921 թթ. կայացած դատաքննություններին անդրադառնալիս չեն ցուցաբերում անաչառ վերաբերմունք: Այսպես, օրինակ, Ֆ. Աթան, Թուրքական պատմագիտական ընկերության (Türk Tarih Kurumu) պատվերով գրած «Տեղահանության դատավարությունները գրավյալ Ստամբուլում» վերնագրով իր աշխատության մեջ փորձ է անում խեղաթյուրել 1919-1921թթ. դատաքննություններին առնչվող որոշ փաստեր կամ այլ մեկնաբանություններ տալ դրանց: Գրքում միտումնավոր կերպով աչքաթող է արվում այն փաստը, որ այս դատական գործերը հարուցվել են ոչ միայն հայերի տեղահանման, այլ նաև՝ կոտորածների (taktil) մեղադրանքով: Բացի այդ՝ Ֆ. Աթան այս դատաքննություններին է անդրադառնում թուրքական պաշտոնական պատմագրությանը ձեռնտու դիտանկյունից՝ աղճատելով բազմաթիվ փաստեր: Օրինակ՝ նա պնդում է, թե իբր դատական նիստերում մեղադրյալների դեմ ուղղված ցուցմունքներով հանդես են եկել միայն ազգությամբ հայ վկաները, որոնք ուղղորդվել են վրեժխնդրության զգացումով, այնինչ Օսմանյան կայսրության տարբեր շրջանների հայերի տեղահանության և կոտորածների դատաքննությունների նիստերում հանդես են եկել ոչ միայն հայ, այլև՝ բազմաթիվ թուրք և այլազգի, անգամ՝ մինչև նախարարի և նահանգապետի մակարդակով մի շարք թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ: Թուրք և այլազգի վկաների առատությամբ հատկապես աչքի է ընկել Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Թուրքական պատմագիտական ընկերության պատվերով հրատարակված հիշյալ գրքի այդ և այլ փաստարկների սնանկությունը հաստատվում է «Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն» գիտահետազոտական հիմնադրամի կողմից 2011

55 **Garzou J.-M.**, Un génocide exemplaire: Armenie 1915, Paris, 1975.

56 **Akçam T.**, Ermeni Tabusu Aralanırken Diyalogtan Başka Çözüm Var mı?, İstanbul, 2002.

57 **Şimşir B.**, Malta Sürgünleri, Bilgi Yayınevi, İstanbul, 1985.

58 **Ata F.**, İşgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, Ankara, 2005.

թ. Երևանում մեր հեղինակությամբ լույս ընծայված «Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի» մենագրության շնորհիվ, որում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում 1919-1921 թթ. Ստամբուլում տպագրված օսմանյան «Ալեմդար» օրաթերթում հրատարակված Յոզղատի, Տրապիզոնի, Խարբերդի և Բյույուք Դերեի դատավարությունների նիստերը ներկայացնող հրապարակումների հայերեն թարգմանությունները[59]:

Հաշվի առնելով այն փաստը, որ 1926 թ. դատավարությունների շատ արձանագրություններ Թուրքիայում ցայսօր չեն գաղտնազերծվել և հասու չեն գիտնականներին, 1926 թ. դատավարությունների լուսաբանման առումով մեզ սկզբնաղբյուր են ծառայել Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության արխիվում պահվող նյութերը, մասնավորապես՝ Անկարայում Խորհրդային Ռուսաստանի դեսպանության և Արտաքին գործերի նախարարության միջև նամակագրությունը, ինչպես նաև՝ Խորհրդային Ռուսաստանի դեսպանության կողմից իր լրտեսական ցանցի միջոցով ձեռք բերված տեղեկատվությունը[60]:

Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո երիտթուրքերի՝ ընդդիմության ճակատում հայտնվելու հանգամանքները ներկայացված են թուրք գիտնականներ Մուրադ Չուլջուի[61], Յըլմազ Գյուլջանի[62] և Մեթե Թունչայի[63] աշխատություններում: Վերջին երկու հեղինակները մանրամասն ներկայացնում են Թուրքիայում Ժողովրդական (հետագայում՝ Ժողովրդա-հանրապետական (CHP)) կուսակցության (Halk Partisi) հիմնադրման և միակուսակցական համակարգի ստեղծման պատմությունը: Երիտթուրքերի՝ քեմալականների դեմ ընդդիմություն դառնալու որոշ պատճառներ մեկնաբանված են նաև խորհրդային դիվանագետ Ս. Արալովի հուշերում[64]:

Ուսումնասիրության երրորդ գլուխը շարադրելիս օգտվել ենք նաև

59 **Անումյան Մ.**, Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Երևան, 2011:

60 Архив Внешней Политики Российской Федерации, фонд 132, Референтура по Турции; Архив внешней политики Российской Федерации, фонд 08, Секретариат Карахана.

61 **Murat Çulcu**, Spekülatif Marjinal Tarih Tezleri, İstanbul, E Yayınları, 2000.

62 **Yılmaz Gülcan**, Cumhuriyet Halk Partisi 1923-1946, Alfa Yayınları, 2001.

63 **Mete Tunçay**, Türkiye Cumhuriyeti'nde Tek-Parti Yönetimi'nin Kurulması (1923-1931), Tarih Vakfı Yurt Yayınları, İstanbul, 1999.

64 **Аралов С.И.**, Воспоминания советского дипломата 1922-1923, Москва, 1960.

Աթաթուրքի կենսագիր Ֆալիհ Ռըֆքը Աթայի[65] և Անկախության դատարանի (İstiklâl Mahkemesi) անդամ Քըլըչ Ալիի[66] հուշերից:

Թուրք ուսումնասիրողներից 1926 թ. Անկարայի դատավարության մի շարք նիստերի արձանագրություններ հրապարակել է O.U. Քոջահանօղլուն[67]: Նա իր կազմած փաստաթղթերի ժողովածուում հիմնականում ընդգրկել է նշյալ դատաքննության այն հատվածները, որոնք վերաբերում էին Մուստաֆա Քեմալի դեմ կազմակերպված մահափորձին և դրա մեջ Իթթիհադի ներգրավվածության աստիճանին՝ քիչ անդրադառնալով երիտթուրքերին ներկայացված այլ մեղադրանքներին, մասնավորապես՝ երկիրը Համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու և պատերազմի տարիներին կատարված չարաշահումների խնդիրներին:

Թուրք պատմաբաններից Աթաթուրքի դեմ ուղղված մահափորձին և Իզմիրի դատաքննությանն է անդրադարձել նաև Քանդեմիրը՝ իր փաստագրական մենագրություններում[68]:

Մեր աշխատությանան մեջ 1926 թ. Մուստաֆա Քեմալի դեմ մահափորձի, ինչպես նաև՝ Իզմիրի ու Անկարայի դատավարությունների որոշ հանգամանքների լուսաբանմանը նպաստել են նաև թուրք պատմաբաններ Էրգյուն Այբարսի[69], Ուղուր Մումջուի[70], Սեյհուն Թունաշարի[71] և Ահմեդ Էյիջիլի մենագրությունները[72]: Հարկ է նշել, որ հատկապես Էրգյուն Այբարսի և Ուղուր Մումջուի մենագրությունները աչքի են ընկնում Քեմալ Աթաթուրքին սատարող դիրքորոշմամբ:

Գրքի այն հատվածի վերլուծման ժամանակ, որը վերաբերում է Թուրքիայի Հանրապետությունում իթթիհադական մտայնության և ավանդույթի պահպանմանը, վերևում նշված որոշ հեղինակներից բացի՝ օգտվել ենք նաև թուրք պատմաբան Ծյուքրյու Հանիօղլուի[73] և թուրդ ուսումնասիրող Գյուլչիչեք Գյունել Թեքինի[74] մենագրություններից:

Կցանկանայինք ևս մեկ անգամ շեշտել, որ միայն Օսմանյան կայսրության վերջին տասնամյակների ու Միություն և առաջադիմություն կուսակցության պատմության բազմակողմանի և հանգամանալի ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռնի ակտիվացնել մեր պայքարը՝ թուրքական ժխտողականության դեմ, պայքար, որն առանձնահատուկ կարևորություն է ստանում Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցի նախօրեին:

65 **Falih Rıfkı Atay,** Çankaya-Atatürk'ün doğumundan ölümüne kadar-, İstanbul, 1969; **Falih Rıfkı Atay,** Çankaya. Mustafa Kemal'ın Çankaya'sı, İstanbul, 1998.

66 Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, Derleyen: Hulûsi Turgut, İstanbul, 2005.

67 **Osman Selim Kocahanoğlu,** Atatürk'e Kurulan Pusu. İzmir Suikasti'nin Perde Arkası 1926. İddianame/Duruşmalar/Hüküm, İstanbul, Temel Yayınları, 2003.

68 **Kandemir,** Cumhuriyet Devrinde Siyasî Cinayetler, Ekiciğil Matbaası, İstanbul, 1955; **Kandemir,** İzmir Suikastinin İç Yüzü, Birinci Cilt, Ekiciğil Matbaası, İstanbul, 1955; **Kandemir,** İzmir Suikastinin İç Yüzü, İkinci Cilt, Ekiciğil Matbaası, İstanbul, 1955.

69 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri. İstanbul, 1998.

70 **Uğur Mumcu,** Gazi Paşa'ya Suikast, Ankara, 1999.

71 **Seyhun Tunaşar,** Gizemli Bir Devrimci Osmanlı'nın Dahiliye Vekili Cumhuriyetimizin İstanbul Milletvekili İsmail Canpolat (Janbulet), Piramit Yayıncılık,Ankara, 2004.

72 **Doç. Dr. Ahmet Eyicil,** İttihat ve Terakki Liderlerinden Doktor Nazım Bey, Gün Yayıncılık, Ankara, 2004.

73 **M. Şükrü Hanioğlu,** Osmanlı'dan Cumhuriyet'e Zihniyet, Siyaset ve Tarih, Bağlam Yayıncılık, İstanbul, 2009.

74 **Gülçiçek Günel,** İttihat Terakki'den Günümüze Yek Tarz-ı Siyaset: Türkleştirme, Belge Yayınları, İstanbul, 2006.

ԳԼՈՒԽ 1

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՄՈՒԴՐՈՍԻ ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ԿՆՔՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1 Քաղաքական մթնոլորտը Թուրքիայում Մուդրոսի զինադադարի կնքումից հետո

Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո երկրում տիրում էր ծանր իրավիճակ: Երբ 1918 թ. սեպտեմբերի 15-ին դաշնակից պետությունների զորքերը, Մակեդոնիայում ճեղքելով ռազմաճակատի գիծը, սկսել են ուղղակիորեն սպառնալ Ստամբուլին, իթթիհադական ղեկավարները հաշտություն են խնդրել, սակայն դաշնակիցները մերժել են բանակցություններ սկսելու նրանց խնդրանքը[75]: 1918 թ. հոկտեմբերի 7-ին Թալեաթ փաշայի կառավարությունը հրաժարական տվեց, իսկ նոյեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը երիտթուրքական յոթ պարագլուխներ, ի դեմս վարչապետ Թալեաթի, նախարարներ Էնվերի, Ջեմալի, դոկտոր Նազըմի, Հատուկ կազմակերպության (Teşkilât-ı Mahsusa) ղեկավարներից մեկի՝ Բեհաեդդին Շաքիրի, ինչպես նաև՝ ոստիկանապետեր Բեդրիի և Ազմիի, գերմանական հածանավով ճողոպրեցին Օդեսա, այնտեղից էլ՝ Գերմանիա[76]: 1918 թ. հոկտեմբերի 30-ին դաշնակից տերությունների հետ Մուդրոսում զինադադարը կնքեց նոր սադրազամ (վարչապետ) Ահմեդ Իզզեթ փաշայի կառավարությունը, որն օսմանյան խորհրդարանում հավանության քվե էր ստացել 1918 թ. հոկտեմբերի 19-ին[77]: Ի դեպ՝ Ահմեդ Իզզեթը սադրազամի պաշտոնում էր նշանակվել Թալեաթ փաշայի նախածեռնությամբ, քանի որ վերջինս, պատերազմի տարիների հանցագործությունների, այդ թվում նաև՝ քրիստոնյաների ոչնչացման համար պատասխանատվության կանչվելու մտավախությամբ նախընտրել էր կառավարության ղեկավարի պաշտոնում տեսնել «իր

75 **Шамсутдинов А.**, Национально-освободительная борьба в Турции 1918-1923, Москва, 1966, с. 15.

76 **Տատրեան Վ.**, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, տպ. «Պայքար», Մասաչուսեթս, 1995, էջ 5:

77 **Akçam T.**, İnsan Hakları ve Ermeni Sorunu. İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşı'na, 2. Baskı, İmge Kitabevi, İstanbul, 2002, s. 390.

մարդուն»[78]: Զինադադարի կնքումից հետո դաշնակից պետությունների զորքերը՝ Մեծ Բրիտանիայի գլխավորությամբ, մուտք գործեցին Կ.Պոլիս և սկսեցին ռազմակալել Օսմանյան պետության տարածքները: Թեև զինադադարի պայմանները սպասվածի չափ ծանր չէին, բայց և այնպես՝ օսմանյան կառավարությունն ու հասարակությունը տագնապալից սպասման մեջ էին, թե ինչպիսին պիտի լինեն վերջնական հաշտության պայմանագրի դրույթները[79]:

Նորընտիր վարչապետ Ահմեդ Իզզեթի՝ 1918 թ. հոկտեմբերի 19-ին օսմանյան խորհրդարանում ներկայացրած ծրագրում ոչ մի քննադատություն չկար՝ ուղղված պատերազմի ժամանակ Միություն և առաջադիմություն (İttihat ve Terakki) կուսակցության վարած քաղաքականությանը: Անգամ «տեղահանության դեպքը» բացատրվում էր «պատերազմական դրության անհրաժեշտությամբ»[80]: Հարկ է նշել, որ Ահմեդ Իզզեթ փաշան ոչ միայն արգելք էր դարձել իթթիհադականների հետաքննությանը, այլև՝ անգամ հրահանգել ոչնչացնել այն բոլոր փաստաթղթերը, որոնք հնարավորություն կընձեռեին հետաքննություն սկսել ոճրագործների նկատմամբ[81]: Սադրազամ դառնալուն պես նա հրամայել էր անմիջապես դադարեցնել Հատուկ կազմակերպության աշխատանքները և վերացնել տվյալ կազմակերպության արխիվը, բացի այդ՝ ապահովել էր, որպեսզի հայերի կոտորածների կապակցությամբ հետապնդվող կասկածյալներն ազատ կերպով հեռանան Ստամբուլից[82]: Իզզեթ փաշայի կառավարության կազմում ներկայացված էին առնվազն չորս հայտնի իթթիհադականներ, որոնք զբաղեցնում էին ռազմավարական նշանակություն ունեցող այնպիսի պաշտոններ, ինչպիսիք էին, օրինակ, արդարադատության, ռազմածովային և ներքին գործերի նախարարների աթոռները: Դրանք էին ներքին գործերի նախարար Ալի Ֆեթհի Օքյարը, արդարադատության նախարար Հայրի

78 Նույն տեղում, էջ 388: Ինչպես իր հուշերում արձանագրում է թուրք լրագրող ու հանրապետական շրջանի պատգամավոր Ֆալիհ Ռըֆքը Աթայը. «Այն ժամանակ անձանց վրա դրված կնիքը «մարդ» բառն էր՝ Ջեմալ փաշայի մարդը, Էնվեր փաշայի մարդը, Թալեաթ փաշայի մարդը... Նրանցից ամեն մեկն էլ իր «մարդիկ» ուներ: Երբ խմբերը մեծացան, այլևս ճիշտ դարձավ ասել՝ Էնվեր փաշայի թիմը (tayfa), Թալեաթ փաշայի թիմը, Ջեմալ փաշայի թիմը», տես **Atay F.R.**, Zeytindağı, Bateş, İstanbul, 1981, s. 38.

79 **Dadrian V., Akçam T.**, "Tehcir ve Taktil", Divan-ı Harb-i Örfî Zabıtları, İttihad ve Terakki'nin Yargılanması 1919-1922, Bilgi Üniversitesi Yayınları, İstanbul, 2008, s. 6.

80 **Akçam T.**, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 390.

81 Նույն տեղում, էջ 391:

82 Նույն տեղում:

էֆենդին, որը նախկինում շեյխ-ուլ-իսլամ (կրոնական առաջնորդ) էր եղել, ռազմածովային նախարար Ռաուֆ Օրբայը և ֆինանսների նախարար Ջավիդ բեյը[83]: Ավելին՝ նախքան Իզզեթը սադրազամի պաշտոնում առաջադրված Ահմեդ Թևֆիկ փաշայի առաջ Թալեաթը պայման էր դրել, որ վերջինս իր վարչակազմում ընդգրկեր Միություն և առաջադիմություն կուսակցության երկու անդամի, հատկապես՝ Ջավիդին, սակայն Թևֆիկը չէր համաձայնվել Իթթիհադի վերնախավին պատկանող անձանց ներգրավել իր կառավարության կազմում ու չդիմանալով ճնշումներին՝ հրաժարվել էր սադրազամ դառնալու առաջարկից, և վարչապետ էր նշանակվել Ահմեդ Իզզեթը[84]:

Երիտթուրքական և հանրապետական շրջաններում պատգամավոր եղած հայտնի լրագրող և իթթիհադական Յունուս Նադի Աբալըօղլուի համաձայն՝ Թալեաթը հրաժարական տալուց առաջ ձգտում էր ապահովել երկու բան՝ Միություն և առաջադիմություն ընկերության (cemiyet) ցանցի՝ ամեն կերպ պահպանումը և իրեն հաջորդող կառավարության ոչ պատահական լինելը[85]: Դա բնականաբար պայմանավորված էր պատերազմի տարիներին կատարված ոճրագործությունների և, հատկապես, հայերի տեղահանման և ոչնչացման համար պատասխանատվության ենթարկվելուց խուսափելու նպատակով:

Մուդրոսի զինադադարի կնքումից երկու օր անց՝ 1918 թ. նոյեմբերի 1-ին, տեղի է ունենում Միություն և առաջադիմություն կուսակցության համագումարը: Մոտ 120 պատվիրակ, կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից մշակված և համագումարին առաջարկվող բանաձևից անտեղյակ, ունկնդրում են Թալեաթին: Վերջինս մանրամասն ներկայացնում է Բալկանյան պատերազմներից (1912-1913 թթ.) ի վեր կուսակցության գործունեությունը և Առաջին աշխարհամարտի ժամանակ Օսմանյան կայսրության դրությունը: Համագումարում որոշում է կայացվում Իթթիհաթ վե թերաքքի կուսակցության լուծարման և վերջինիս ողջ ունեցվածքը նոր հիմնվելիք Թեջեդդյութ (Վերածնունդ) կուսակցությանը հանձնելու մասին[86]: Ինչպես նշում է այդ ժամանակաշրջանն ուսումնասիրած թուրք

83 **Tunaya T.Z.**, Türkiye'de Siyasal Partiler, Cilt 3, İttihat ve Terakki, Bir Çağın, Bir Kuşağın. Bir Partinin Tarihi, İletişim Yayınları, İstanbul, 2000, s. 40.

84 **Selek S.**, Anadolu İhtilali, Cilt 1, Kastaş Yayınevi, İstanbul, 2000, s. 40. Ծատ չանցած Ահմեդ Թևֆիկը հաջորդում է Իզզեթին:

85 **Nadi Y.**, Kurtuluş Savaşı Anıları, Erdini Basım ve Yayınevi, İstanbul, 1978, s. 8.

86 **Kocahanoğlu O.S.**, İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması (1918-1919), Temel Yayınları, İstanbul, 1998, s. 18.

պատմաբան Օ. Ս. Քոջահանօղլուն, այս որոշումն, անշուշտ, կայացվել էր ոչ թե համագումարի պատվիրակների կողմից, այլ ընդունվել էր իթթիհադական պարագլուխների՝ օրեր տևած գաղտնի ժողովների արդյունքում, այն հավաքների, որոնց ընթացքում մանրակրկիտ կերպով քննարկվել էր իրենց և կուսակցության դրությունը, և անգամ՝ նախապատրաստվել երկրից փախչելու ծրագիրը, որից տեղյակ էին ընդամենը 5-6 հոգի[87]: 1918 թ. նոյեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը կուսակցության կենտրոնական կոմիտեի բոլոր փաստաթղթերն իր հետ էր տարել Թալեաթի հետ հեռացած կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ դոկտոր Նազըմը՝ այդպիսով մեջտեղից վերացնելով Հայոց ցեղասպանությանը վերաբերող ապացույցները[88]: Նախապես էին որոշվել նույնիսկ նոր՝ Թեջեդդյութ կուսակցության անվանումը, կանոնադրությունը և այն անձանց անունները, ովքեր կազմելու էին կուսակցության կորիզը[89]:

Մուդրոսի զինադադարի կնքումից հետո երկրի ներքաղաքական կյանքում ստեղծված տագնապալի դրության առաջացման և վատատես կանխատեսումների մեջ զգալի դեր ուներ երիտթուրքական կառավարության և կուսակցության՝ Հայոց ցեղասպանության հարցում ունեցած պատասխանատվության խնդիրը:

Հայոց ցեղասպանության պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում երիտթուրքերի չորրորդ համագումարը, որը տեղի է ունեցել 1911 թ. սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 9-ը: Այս համագումարի ժամանակ կուսակցության պատվիրակների մեծ մասն ընդունել է, որ կայսրության օսմանականացման համար գոյություն ունի միայն մեկ ճանապարհ, այն է՝ ոչ թուրք ժողովուրդների բոնի ուծացումը[90]: Նույն համագումարի փակ նիստում արդեն նախագծվել էին Օսմանյան կայսրության ժողո-

87 Նույն տեղում:

88 Դոկտոր Նազըմը, լինելով կուսակցության հիմնադիրներից մեկը և ամենահեղինակավոր անդամը, միաժամանակ կազմակերպության դիվանապահն էր: Նրա մոտ էր պահվում կուսակցության ողջ արխիվը, որի անհետացումը ևս կապում են Նազըմի անվան հետ, տե՛ս **Bleda M.Ş.**, İmparatorluğun Çöküşü, Remzi Kitabevi, İstanbul, 1979, s. 112. Կուսակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Միդհադ Ցյուբրյուն այդ փաստը հաստատում է նաև երիտթուրքական կուսակցության անդամների դատավարության երկրորդ նիստում՝ 1919 թ. մայիսի 4-ին, տե՛ս Takvîm-i Vekayi, 8 Mayıs, 1919, s. 20.

89 **Kocahanoğlu O.S.**, İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması (1918-1919), s. 18.

90 **Аванян А.**, Геноцид 1915 г., Механизмы принятия и исполнения решений, Ереван, 1999, с. 14.

վուրդների, առաջին հերթին՝ հայերի և հույների բռնի թուրքացման ծրագրի իրականացման կոնկրետ միջոցառումները, որոնց շարքում նախատեսվում էին նաև բնակչության բռնի տարագրումը և բնաջնջումը՝ աքսորի ճանապարհներին կամ վերաբնակեցման վայրերում[91]: Ինչպես ընդգծում է պատմաբան Արսեն Ավագյանը. «Արևմտյան Հայաստանի բնակչության բնաջնջման ծրագրի նախապատրաստումը, ամենայն հավանականությամբ, վերջնական տեսքի բերվեց երիտթուրքերի՝ 1913 թ. գարնանը կայացած կենտրոնական կոմիտեի նիստում»[92]:

Այս առումով շրջադարձային եղավ 1913 թ., քանի որ Բալկանյան պատերազմներում կրած պարտությունը երիտթուրքերին դրդեց, գոնե կայսրության փոքրասիական մասը, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանը չկորցնելու համար, դիմել դեռևս 1911 թ. համագումարում որպես ծայրահեղ միջոց ընդունված ոչ թուրքերի տարագրման որոշման իրագործմանը[93]: Բացի այդ՝ 1913 թ. հունվարին ռազմական հեղաշրջմամբ բացարձակ իշխանության հասած և հատկապես նույն տարվա հունիսի 11-ին սադրազամ Մահմուդ Ենքեթ փաշայի սպանությունից հետո երկրում բռնապետություն հաստատած իթթիհադականները հնարավորություն ստացան իրագործելու 1911 թ. նախանշված ծրագիրը, իսկ վերջինիս, այսինքն՝ Հայոց ցեղասպանության իրականացման համար հնարավորություն ընձեռեց Առաջին համաշխարհային պատերազմը:

Թեև հայերի առաջին տեղահանությունն սկսվել էր դեռևս 1915 թ. մարտի 2-ին՝ Դորթյոլի հայերի տարագրմամբ[94], բայց Ցեղասպանությանն «օրինականություն» հաղորդելու նպատակով ժամանակավոր հորջորջված «Տեղահանության մասին» (Tehcir Kanun-ı Muvvakat) օրենքը հրապարակվեց 1915 թ. մայիսի 27-ին[95], որն ընդունվել էր ապօրինի կերպով, քանի որ սադրազամ Սայիդ Հալիմ փաշան այն ստորագրել էր նախքան խորհրդարանի հավանությանն արժանանալը[96]: Չորս հոդվածից[97] բաղկացած սույն օրենքի ամբողջական անվանումը հետևյալն էր. «Ժամանակավոր օրենք՝ պատերազմի ընթացքում կառավարության գործադրումների դեմ դուրս եկողների նկատմամբ ռազմական գերատեսչության կողմից ձեռնարկվելիք միջոցառումների մասին» ("Vakt-i Seferde İcraât-ı Hükûmete Karşı Gelenler İçin Cihet-i Askeriyece İttihâz Olunacak Tedâbîr Hakkında Kanun-ı Muvvakat")[98]:

Ինչպես նշում է թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանը, Թալեաթի կողմից վերոհիշյալ օրենքի շտապ նախապատրաստումը պայմանավորված էր հատկապես դաշնակից 3 պետությունների՝ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունների՝ 1915 թ. մայիսի 24-ին Օսմանյան կայսրությանը հղած համատեղ նոտայով, որում խստորեն դատապարտվում էին հայերի զանգվածային կոտորածները. «Թալեաթի մոտ այն, ըստ երևույթին, առաջացրել էր մտավախություն, որ ողջ մեղքը այդ ոճրագործությունների համար կբարդվի միայն իր վրա: Փորձելով խուսափել դրանից՝ նա նախաձեռնեց մի այնպիսի գործընթաց, որի նպատակն էր խուսափել միայնակ պատասխանատու լինելու վտանգից և պատասխանատվությունը ոճրագործների համար դարձնել կոլեկտիվ՝ տարրալուծելով այն կառավարության անդամների միջև»[99]:

91 Նույն տեղում, էջ 16-17:

92 Նույն տեղում, էջ 31: Նման պնդման ապացույց է նաև Հայոց ցեղասպանության ծրագրի հիմնական մշակողներից և իրականացնողներից Բեհաեդդին Շաքիրի այցը Արևմտյան Հայաստան 1913 թ. ու նահանգապետերին հրահանգներ պարունակող գաղտնի ծրագրերի հանձնումը, տե՛ս **Ավագյան Ա.**, 1915 թ. ցեղասպանության նախապատրաստական փուլից. Բեհաեդդին Շաքիրի այցն արևելյան նահանգներ, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» IV, Ասողիկ, Երևան, 2006, էջ 245-251:

93 Երիտթուրքական կազմակերպությունում փոքրամասնությունների տեղահանման, փոխանակման և արտաքսման գաղափարներն սկսել են շրջանառության մեջ դրվել ու քննարկվել դեռևս 1909 թ. դոկտոր Նազըմի կողմից «Journal de Salonique» թերթին տված հարցազրույցով, տե՛ս **Bayur Y.H.**, Türk İnkılâbı Tarihi, Cilt 1, Giriş: Berlin Muahedesinden Trablus-Garp Savaşına Kadar, Maarif Matbaası, İstanbul, 1940, ss. 305-306.

94 Osmanlı Belgelerinde Ermeniler (1915-1920), T.C. Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü, Ankara, 1994, s. 20.

95 Հայերի տեղահանության մասին որոշման ընդունման ժամանակ կատարվել են իրավական մի շարք խախտումներ, որոնք հետագայում բացահայտվեցին ու քննադատվեցին օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնախմբի կողմից կատարված հարցաքննության ընթացքում: Հարկ է նշել, որ Էնվերի «Չկա օրենք, ստեղծի՛ր այն» («Yok kanun, yap kanun!») մոտեցմամբ պատերազմի ժամանակ հրապարակվեցին բազմաթիվ ժամանակավոր օրենքներ (Kavanin-i Muvakattiye), այդ թվում և՝ «Տեղահանության» ու «Լքյալ գույքերի» ժամանակավոր օրենքները:

96 **Տատրեան Վ.**, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, էջ 20:

97 Ցեղասպանությունից վերապրած հետազոտող Հայկազն Ղազարյանը հայտնում է, թե Տեղահանության մասին օրենքն իրականում բաղկացած է եղել 8 հոդվածներից, որոնցից 5-ը գաղտնի են պահվել, քանի որ վերաբերել են հայերի ունեցվածքի բռնագրավմանը, տե՛ս **Ղազարեան Հ.**, Ցեղասպան թուրքը, Համազգային տպարան, Պէյրութ, 1968, էջ 328:

98 **Bardakçı M.**, Talât Paşa'nın Evrak-ı Metrûkesi, Everest Yayınları, İstanbul, 2009, s. 25-26. Տե՛ս նաև՝ "Meclis-i Vükela'nın Tehcir Kararı", 30 Mayıs 1915, Osmanlı Belgelerinde Ermeniler, ss. 30-32.

99 **Սաֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագում-

«Տեղահանության մասին» օրենքի ընդունումից հետո Թալեաթը փորձում էր միաժամանակ իրականացնել երկու նպատակ. օրինական տեսք տալ հայերի տեղահանությանը և տարագրման ու կոտորածների պատասխանատվությունը դնել միայն կառավարության ու Միություն և առաջադիմություն կուսակցության վերնախավի առանձին անձանց, այլ ոչ թե կուսակցության վրա: Բացի այդ՝ Թալեաթ փաշան հետագայում պատասխանատվությունից խուսափելու և հայերի տեղահանումն «արդարացնելու» միտումով 1916 թ. Ներքին գործերի նախարարության կողմից հրատարակել էր «Հայկական կոմիտեների նպատակները և հեղափոխական գործողությունները Սահմանադրության հռչակումից առաջ ու հետո» ("Ermeni Komitelerinin Amâl ve Harekât-ı İhtilâliyyesi İlân-ı Meşrutiyetten Evvel ve Sonra", İstanbul, 1916)[100] քաղաքական բնույթ կրող եռալեզու հատորը:

Թալեաթն իր հուշերում գրում է. «Սկզբունքորեն զինվորական նախազգուշական միջոցառումից բացի՝ որևէ այլ նպատակ չունեցող տեղահանությունն անխիղճ ու թուլակամ մարդկանց շնորհիվ վերածվել է ողբերգության: Ուզում եմ նշել, որ միայն այդ դեպքերի պատճառով ողջ կառավարությանն ու Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեին, ինչպես նաև՝ այս գործի հետ ոչ մի առնչություն չունեցած անդամներին մեղադրելն անիրավացի ու կամայական երևույթ է: Միություն և առաջադիմություն կուսակցության կոմիտեի անդամներն անչափ վշտացած են հայերի դեմ կատարված գործողությունների պատճառով և դեպքերը կանխելու համար միշտ ձգտել են ազդել կառավարության վրա»[101]:

Խեղաթյուրելով «Տեղահանության օրենքի»՝ իր իսկ կողմից մշակված լինելու փաստը՝ Թալեաթն իր հուշերում փորձում է արդարացնել նաև իրեն և պատասխանատվությունը դնել բանակի Գլխավոր շտաբի վրա. «Դրանից հետո Գլխավոր շտաբում մշակվեց «Հայերի տեղահանության» մասին մի օրենք և ներկայացվեց Նախարարների կազմին: Ես դեմ էի, որ այդ օրենքը լիովին կիրառվեր: Ժանդարմները՝ ամբողջությամբ, իսկ ոստիկանները՝ մասամբ, ընդգրկվել էին բանակում, ու նրանց փոխարինել էին ռազմակառավարված ուժերը: Գիտեի, որ նթե տեղահանությունն իրականացվեր այդ պայմաններում, շատ տգեղ հետևանքների էր հանգեցնելու: Հետևաբար, ապագայի մասին մտածելով, պնդեցի, որ այդ օրենքը չգործադրվի, և հաջողացրի հետաձգել այդ օրենքի ուժի մեջ մտնելը»[102]:

Մինչդեռ փաստերը վկայում են, որ Հայոց ցեղասպանության ծրագիրը մշակվել էր Միություն և առաջադիմություն կուսակցության ու գործադրվել՝ ողջ կառավարական ապարատի կողմից: Եվ դա ոչ մեկի համար գաղտնիք չէր. ոճրագործությունն այնքան ակնհայտ էր, և հանցագործները՝ հայտնի, որ պատերազմի ժամանակ հարկադրյալ լռություն պահպանած օսմանյան մամուլը իթթիհադական կառավարության անկումից հետո սկսեց ակտիվորեն քննարկել հայերի ոչնչացման իրողությունը: Տվյալ ժամանակաշրջանի օսմանյան մամուլը, ինչպես նաև՝ Ստամբուլում լույս տեսնող այլալեզու թերթերը մեծ տեղ տվեցին հայերի տեղահանությունը և կոտորածները նկարագրող ու լուսաբանող հրապարակումներին[103]: Օսմանյան մի շարք պարբերականներում հայերի հանդեպ կատարվածը հիշվում էր սուր քննադատությամբ: Մամուլում զգալի տեղ էր հատկացված նաև ականատեսների վկայություններին, և օսմանյան թերթերը կարևոր դերակատարում են ունեցել մի շարք հանցագործների բացահայտման խնդրում[104]: Բացի այդ՝ այս հարցերը սուր վիճաբանությունների տեղիք են տվել տարբեր օրաթերթերի միջև[105]: Այս շրջանում լույս տեսան նաև Իթթիհադի հայաջինջ քաղաքականությունը մերկացնող այնպիսի աշխատություններ, ինչպիսիք են Ահմեդ Ռեֆիքի «Երկու կոմիտե, երկու ոճիրը» (**Ahmet Refik (Altınay),** İki Komite, İki Kıtal, İstanbul, 1919) և Հասան Ամջայի «Տեղահանության իրական պատկերը» (**Hasan Amca,** Tehcirin Gerçek Yüzü, Çerkes Hasan Bey'in Hatıraları, "Alemdar", 19-27 Haziran, 1919)[106]:

նաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009, էջ 174-176:

100 Միություն և առաջադիմություն կուսակցության անունը չվարկաբեկելու, տեղահանությունն արդարացնելու, տարագրյալների ոչնչացման պատասխանատվությունից խուսափելու և դա միայն մի քանի մասնավոր անձանց վրա բարդելու միտումն ակնհայտ է նաև Թալեաթ փաշայի հուշերում: Ի դեպ՝ հենց այս հանգամանքն է եղել հուշերը գրելու հիմնական դրդապատճառը, տե՛ս **Herbert A., Ben Kendim.** A Record of Eastern Travel, Hutchinson, London, 1924, pp. 323-324.

101 **Çavdar T.,** Talât Paşa, Bir Örgüt Ustasının Yaşamöyküsü, 4. Baskı, İmge Kitabevi, İstanbul, 2001, s. 402.

102 Talât Paşa'nın Hatıraları, H. Yalçın'ın Önsözüyle, Yeni Matbaa, İstanbul, 1958, s. 59.

103 Ստամբուլում հրապարակվող օսմաներեն և այլալեզու մամուլում տպագրված նյութերի որոշ մասը հրատարակել է Գրիկէրը (Գրիգոր Կերկերյան): Տե՛ս **Գրիկէր,** Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, էջ 11-67: Օրաթերթերում տպագրված հոդվածները մանրամասն վերլուծված են նաև **Ջ. Կիրակոսյանի** «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» վերնագրով աշխատության երկրորդ հատորում, Երևան, 1983:

104 **Akçam T.,** İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 397.

105 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Ալումյան Մ.,** Մեծ եղեռնը հավաստող վկայություններ օսմանյան «Ալեմդար» օրաթերթում, «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1 (107), Երևան, 2006, էջ 310-317:

106 Այս գրքերը թարգմանվել ու հրատարակվել են նաև հայերեն, տե՛ս **Ահմեդ Ռե-**

Ժամանակի օսմանյան մամուլում տպագրված բազմաթիվ հոդվածներում շեշտվում էր Հայոց ցեղասպանության հարցում Իթթիհադի պատասխանատվությունը: Այսպես՝ օսմանյան «Ալեմդար» օրաթերթի խմբագիրը՝ Ռեֆի Ջևադ Ուլունայը, 1919 թ. մարտի 28-ին վերոնշյալ պարբերականում հրատարակված «Տեղահանության և կոտորածների կապակցությամբ» վերնագրով հոդվածում ընդգծում էր կոտորածների խնդրում բոլոր իթթիհադականների՝ մեղքի բաժին ունենալու հանգամանքը, այդ թվում և նրանց, ովքեր, տեղյակ լինելով հանդերձ, չեն միջամտել. «Ավազակախըմբից (նկատի ունի Միություն և առաջադիմություն կուսակցությանը - Մ.Ա.) շատ քիչ թվով մարդ ենք ճանաչում, որ տեղահանության ու կոտորածների խնդրում չունենա իր մեղքի բաժինը: Այդ ոճիրները գործողները մեղավոր են, դրանց գործիք եղողներն էլ են մեղավոր, լռություն պահպանողները՝ նույնպես: Տեղահանությունը և կոտորածները Միություն և առաջադիմություն կուսակցության երբևէ խաղացած ամենաահասարսուռ ողբերգությունն էր: Անհնար է երկրի անունից չտխրել, մարդկության անունից այն չատել: Լռություն, սպանիչ կերպով լռություն պահպանելը միթե նույնպիսի ոճիր չէ, որպիսին կոտորելն է»[107]:

Ջինադադարի կնքումից հետո թուրքական մամուլում ու հասարակայնության մեջ բողոքների և քննադատությունների մեծ ալիք բարձրացրեց հատկապես Թալեաթի և երիտթուրքական մյուս առաջնորդների գաղտագողի փախուստը երկրից: Ինչպես նշում է ցեղասպանագետ Վահագն Դադրյանը, օսմանյան մամուլում այդ ուշացած ափսոսանքի և վշտի ցուցադրումը ոչ միայն պարտության հետևանք էր, այլև՝ իրենց ևս որպես զոհ ներկայացնելու փորձ[108]: Մինչդեռ, ինչպես իր հուշերում խոստովանում է Առաջին աշխարհամարտի ժամանակ օսմանյան խորհրդարանի նախագահի և արտաքին գործերի ու արդարադատության նախարարների աթոռները զբաղեցրած Հալիլ Մենթեշեն, «Անատոլիայում շատ քիչ թուրքեր կային, որ առնչություն ունեցած չլինեին այդ տեղահանության գործի

Ֆիկ, Երկու կոմիտե, երկու ոճիր, թարգմանությունը թուրքերենից ու առաջաբանը՝ Ս.Պ. Մուրադյանի, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 1998, **Հասան Ամջա,** Տեղահանություն և ոչնչացում (Տեղահանության իրական պատկերը), օսմաներենից թարգմանությունը, ներածականն ու ծանոթությունները՝ Ա.Գ. Ավագյանի, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2007:

107 **Անումյան Մ.**, նշվ. աշխ., էջ 312-313:

108 **Dadrian V., Akçam T.**, "Tehcir ve Taktil" s. 11.

հետ»[109]: Մեկ ուրիշ Հալիլ՝ Մենթեշեի անվանակից Հալիլ փաշան (Հալիլ Քութ), ով Էնվերի հորեղբայրն էր և վեցերորդ բանակի հրամանատար էր նշանակվել 1916 թ. ապրիլի 19-ին, հայտնում է, որ երբ «Բեքիրաղա բյուլյուղյու» կոչված կալանատանն անգլիացի հրամանատարը հարցրել է նրա կողմից 300 հազար հայերի սպանության մասին, ինքը գրավոր կերպով տվել է հետևյալ պատասխանը. «300 հազար հայ... Կարող է ավելի կամ պակաս լինել. չեմ հաշվել: Որտեղ որ հավանական է եղել նրանց ապստամբությունը, քաղաքացիական իշխանություններին հրամայել եմ տեղահանել նրանց և աքսորել եմ տվել»[110]:

Օսմանյան հասարակության մեջ իթթիհադականներին մեղադրելու և նրանցից զատվելու ցանկությունը բնորոշ էր զինադադարին հաջորդած առաջին ամիսներին, երբ Օսմանյան կայսրությունը սպասում էր դաշնակից պետությունների վճռին: Այս ժամանակ մամուլում խիստ մեղադրանքներ էին տպագրվում՝ ուղղված իթթիհադականներին, ինչպես նաև սուր քննադատությունների էր ենթարկվում վերջիններիս վարած քաղաքականությունը, հատկապես՝ հայերի նկատմամբ: Անգամ Մուստաֆա Քեմալ փաշան հայերի զանգվածային բնաջնջմանը տվել էր «անամոթություն» (fazâhat) բնորոշումը[111], իսկ նրա աջակցությունը վայելող «Միներ» օրաթերթը՝ հայերի ոչնչացման գործողությունը որակել որպես «պատմության նկատմամբ կատարված ամենամեծ և ամենաաններելի»[112] գործողություն:

Օսմանյան կայսրության, առաջին հերթին՝ Ստամբուլի հակաիթթիհադական, ընդդիմադիր իթիլաֆական զանգվածը, մամուլի միջոցով պահանջում էր ձերբակալել ու խստորեն պատժել հայերի տեղահանության և կոտորածների պատասխանատուներին: Այսպես՝ «Ալեմդար» օրաթերթը գրում էր. «...կախաղաններն արժանի չեն այս մարդկանց: Այդ գլուխները, որ պետք է ջախջախել, անհրաժեշտ է կոճղերի վրա կտրել և օրեր շարու-

109 Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları, Hürriyet Vakfı Yayınları, İstanbul, 1986, s. 239.

110 **Halil Paşa,** İttihat ve Terakki'den Cumhuriyet'e Bitmeyen Savaş, Derleyen: Taylan Sorgun, Kamer Yayınları, İstanbul, 1997, s. 274. 1919 թ. օգոստոսի 8-ին բանտից փախած Հալիլ Քութը երիտթուրքական կուսակցության անդամների դատավարության մեղադրական ակտում հիշատակվում էր որպես Հատուկ կազմակերպության անդամ, տե՛ս "Takvîm-i Vekayi", No 3540, 5 Mayıs 1919, s. 5.

111 **Dadrian V., Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 11.

112 **Akçam T.,** İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 395.

նակ պահել՝ որպես խրատ»[113]:

Օսմանյան մամուլի՝ Հայոց ցեղասպանության առնչվող խնդիրների հանդեպ ցուցաբերած մեծ հետաքրքրությունը պահպանվեց նաև հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով դատաքննությունների սկսվելուց հետո[114]: Այս առումով հատկանշական էր հատկապես «Ալեմդար» օրաթերթը, որը նաև սուլթանական պալատի բաներեն էր: Այսպես՝ օրաթերթի 1919 թ. ապրիլի 25-ի համարում տպագրվել էր սույն պարբերականի տնօրեն Ահմեդ (Փեհլիվան) Քաղրիի բաց նամակը՝ ուղղված Ռազմական ատյանի նախագահ Նազըմ փաշային[115]: «Ալեմդարի» տնօրենը բաց նամակում պատմում էր հայերի կոտորածների վայրագության մասին, նշում մի քանի պաշտոնյաների անուններ, ովքեր պաշտոնազրկվել էին կառավարության կողմից՝ կատարված չարագործությունների վերաբերյալ համապատասխան մարմիններին տեղեկացնելու պատճառով, Ռազմական ատյանի նախագահին խնդրում ավելի լուրջ վերաբերվել ականատեսների վկայություններին և պատժել բոլոր հանցագործներին[116]:

Հիշատակման է արժանի նաև «Ալեմդարի» գլխավոր խմբագիր Ռեֆի Ջևադ Ուլունայի հոդվածաշարը՝ նվիրված Հայոց ցեղասպանության խնդրին: «Ալեմդար» օրաթերթի գլխավոր խմբագիրը հայերի տեղահանությանն ու կոտորածներին, ինչպես նաև՝ դրանց վերաբերյալ հարուցված դատական գործերին անդրադարձող իր առաջնորդող հոդվածներում հատկապես շեշտում էր երիտթուրքերի դատաքննություններն արագ իրականացնելու և հանցագործներին անմիջապես պատժելու անհրաժեշտությունը: 1919 թ. փետրվարի 14-ին տպագրված «Տեղահանության և կոտորածների կապակցությամբ» վերնագրով հոդվածում նա իր մտահոգությունն էր արտահայտում այն փաստի կապակցությամբ, որ Թուրքիան հայերի կոտորածների դատաքննություններն իրականացնում էր հարկադրված, և որ դատավարությունների շարժառիթ էր ծառայել ոչ թե արդարության վերականգնումը, այլ՝ ընդամենը Եվրոպայի առջև արդա-

113 **Akşin S.**, İstanbul Hükümetleri ve Milli Mücadele, Öztürk Matbaası, İstanbul, 1983, s. 199.

114 Այս մեղադրանքով կայացած առաջին՝ Յոզղատի դատավարությունն սկսվեց 1919 թ. փետրվարի 5-ին:

115 «Ալեմդար»-ում տպագրված սույն հոդվածի ամբողջական թարգմանությունը տե՛ս՝ **Անումյան Մ.**, Յոզղատի և Տրապիզոնի տեղահանության ու կոտորածների դատավարությունները ըստ «Ալեմդար» օրաթերթի, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 9, Երևան, 2004, էջ 72-74:

116 **Ahmed Kadri**, Divan-ı Harb-i Reisi Nazım Paşa Hazretlerine Açık Mektup, "Alemdar", 25 Nisan 1919.

րադատ երևալու ցանկությունը[117]: Նույն հոդվածում Ռեֆի Ջևադն ընդգծում էր հայերի կոտորածների զանգվածային բնույթը. «Կառավարությունը տեղահանության և կոտորածների խնդրի կապակցությամբ դատարանին հանձնեց երեքից-հինգ հոգու: Միթե խնդիրն այդքանով ավարտվում է: Ինչպե՞ս կարելի է տեղահանությունն ու կոտորածները սահմանափակել նման շրջանակում»[118]: 1919 թ. փետրվարի 20-ին հրատարակված «Ինչպիսի՞ն են եղել ուղեկառքի ձիերը» հոդվածում «Ալեմդար»-ի խմբագիրը շեշտում էր այն, որ Յոզղատի դատավարության մեղադրյալներից Բողազլըյան գավառի կայմակամ (գավառապետ) Մեհմեդ Քեմալը, ոճրագործ լինելով հանդերձ, ընդամենը պարզ գործիք է եղել Հայոց ցեղասպանության հեղինակների՝ գլխավոր պատասխանատուների ձեռքում, իսկ վերջիններս ոչ միայն դեռ չեն պատժվել, այլև նույնիսկ չեն էլ կալանավորվել. «Ո՞վ է Քեմալ բեյը. եթե ճշմարտությունը որոնելու լինենք, այն բաղկացած կլինի մի արյունոտ կացնից: Արդարադատությունը պետք է կտրի այդ կացինը գործել տված ձեռքը, իսկ այդ ձեռքերը, այդ ուղեղները դեռ ազատ շրջում են մեր մեջ»[119]: «Ալեմդար» օրաթերթի խմբագիրը 1919 թ. ապրիլի 9-ի համարում տպագրված «Ի պատասխան մի պաշտպանության» վերնագրով հոդվածում ընդգծում էր հայերի կոտորածների կանխամտածված բնույթը, մտահղացողի և կատարողի միասնական լինելը. «Ենթադրենք՝ որևէ մեկը հանցագործություն է կատարել: Բնականաբար չենք կարող այդ ոճրագործությունը նյութած ուղեղը և ի կատար ածած ձեռքը միմյանցից բաժանել: Դա ո՛չ օրենքը թույլ կտա, ո՛չ էլ բանականությունը: Եթե Բևհաեդդին Շաքիրը ողբերգություններ հղացած ուղեղն էր, ապա Քեմալ բեյն ու իր հանցակիցները այդ ուղեղի չարագործությունները նախապատրաստած ձեռքերն էին: Օրենքը ձեռքն էլ է կտրում, ուղեղն էլ՝ հանգցնում»[120]: Ռեֆի Ջևադը մեկ այլ հոդվածում շեշտում էր ոճրագործներին ըստ արժանվույն պատժելու անհրաժեշտությունը. «Ընդամենը արդարություն ենք պահանջում մեր հոդվածներով: Արդարություն ասելով՝ ի նկատի ունենք՝ բռնությանը համարժեք պատիժ: Այսօր քաղաքակիրթ աշխարհն ու մարդկությունը չեն կարող անտարբեր մնալ պատռված աղիքների, հանված աչքերի, ջնջխված ուղեղների հանդեպ: Չի կարելի մեծ հայրենասեր համարել այդ ողբերգական տեսարանների հեղինակներին:

117 **Refi Cevad**, Tehcîr ve Taktil Münasebetiyle, "Alemdar" 14 Şubat 1919.

118 Նույն տեղում:

119 **Refi Cevad**, Arabanın Beygirleri Nasıl İmiş?, "Alemdar", 20 Şubat 1919.

120 **Refi Cevad**, Bir Müdafaa Karşısında..., "Alemdar", 9 Nisan 1919.

Միակ բանը, որ պարտավոր ենք անել, մի ողջ ժողովրդի դեպի բնաջնջում տարած մարդասպաններին պատժելն է»[121]:

Զինադադարի շրջանում օսմանյան հասարակության և մամուլի կողմից հնչեցված սուր քննադատությունների ճնշման տակ հայերի տեղահանության և կոտորածների խնդիրն ընդգրկվեց նաև տվյալ ժամանակաշրջանի օսմանյան խորհրդարանի[122] օրակարգ, ու վերջինս դարձավ թեժ քննարկումների թատերաբեմ[123]:

Թալեաթ փաշայի հրաժարականից հետո (1918 թ. հոկտեմբերի 7) օսմանյան խորհրդարանն իր աշխատանքները շարունակեց մինչև 1918 թ. դեկտեմբերի 21-ը[124]: Հարկ է նշել՝ քանի որ պատերազմի պատճառով հնարավոր չէր եղել խորհրդարանական ընտրություններ անցկացնել, պատգամավորների պալատի օրինական ժամկետը մեկ տարով երկարաձգվել էր՝ 1876 թ. Սահմանադրության 70-րդ հոդվածին մեկ դրույթ ևս հավելելու միջոցով[125]:

1918 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին պատգամավորների պալատում և սենատում ամենաշատ քննարկված խնդիրը դարձավ Օսմանյան կայսրությունն Առաջին աշխարհամարտի մեջ ներքաշելու և հայերի կոտորածները կազմակերպելու մեջ մեղադրվողներին դատական պատասխանատվության ենթարկելու հարցը: Իթթիհադականների՝ քաղաքական թատերաբեմից առերևույթ հեռանալու և հատկապես պարագլուխների փախուստից հետո մինչ այդ լռություն պահպանած պատգամավորները սկսեցին քննադատությունների տարափ տեղալ նախկին կառավարության հասցեին:

Թեժ քննարկումներն ու սուր վիճաբանությունները օսմանյան խորհրդարանում սկսվեցին 1918 թ. հոկտեմբերի 19-ի նիստում, որի ժամանակ իր վարչակազմի ծրագիրն էր ներկայացրել Ահմեդ Իզզեթ փաշան: Ծրագրի ընթերցումից հետո պատգամավորները խստորեն քննադատեցին կառավարության ներկայացրած ծրագիրը[126], որովհետև Իզզեթ փաշան իր

121 **Refi Cevad,** Ne Diyoruz ? Ne İstiyoruz ?. "Alemdar", 10 Nisan 1919.

122 Օսմանյան խորհրդարանը բաղկացած էր երկու պալատից՝ պատգամավորների պալատից ու սենատից:

123 Օսմանյան խորհրդարանում կայացած քննարկումների մասին ավելի մանրամասն տե՛ս **Տատրեան Վ.**, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով:

124 **Tunaya T. Z.**, Türkiye'de Siyasal Partiler, cilt III, s. 654.

125 **Kocahanoğlu O. S.**, İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması, s. 26.

126 **Ata F.**, İşgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, Türk Tarih Kurumu, Ankara, 2005, ss. 21-22.

ծրագրում չէր ընդգրկել պատերազմի ժամանակ կատարված հանցագործությունները հետաքննելու հարցը[127]: Քննադատություններին ի պատասխան՝ Ահմեդ Իզզեթը հայտարարեց. «Մենք անպայման արդարադատություն ենք խոստանում, որը գործադրելու ենք»[128]: Հարկ է նշել, որ նորանշանակ Ահմեդ Իզզեթը ծրագրում միայն անդրադարձել էր հայերի և այլ քաղաքացիների՝ հետզհետե իրենց բնակության նախկին վայրերը վերադառնալու թույլտվության և ամեն տեսակի վնասների փոխհատուցման անհրաժեշտությանը[129]:

Հայերի կոտորածների հարցով լարված քննարկումներ են եղել նաև խորհրդարանի 1918 թ. նոյեմբերի 4-ի նիստում: Թեժ վիճաբանությունների տեղիք էր տվել հատկապես 1918 թ. նոյեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը երիտթուրքական յոթ պարագլուխների փախուստը երկրից: Այս նիստում հայկական ջարդերի հարցն օրակարգ է բերվել տարբեր գրավոր առաջարկների և հարցապնդումների միջոցով: Այսպես՝ նախ Այդընի պատգամավոր Էմանուել էֆենդին բարձրացրել է խորհրդարանի վերընտրության հարցը և ընդգծել, որ այս մեջլիսը կապ է ունեցել նախկին կառավարության գործած ոճիրների հետ, և որ նրա որոշ անդամներ, այդ թվում նաև՝ խորհրդարանի խոսնակ Հալիլ Մենթեշեն, անմիջականորեն առնչվել են տվյալ հանցագործություններին[130]:

Այս սուր քննարկումներին մասնակցում էին նաև 7 հայ պատգամավորներ. Քոզանի (Սիսի) պատգամավոր Մատթեոս Նալբանդյանը, Իզմիրի (Զմյուռնիա) պատգամավոր Օննիկ Իհսանը, Էրզրումի (Կարինի) պատգամավոր Հովսեփ Մադաթյանը, Հալեպի պատգամավոր Արթին Բոշգեզենյանը, Մարաշի պատգամավոր Հակոբ Խըրլաքյանը, Մուշի պատգամավոր Գեղամ Տեր-Կարապետյանը, Սրվասի (Սեբաստիայի) պատգամավոր Տիգրան Պարսամյանը[131], որոնք բոլորն էլ ընտրվել էին Միություն և առաջադիմություն կուսակցության ընտրացուցակով[132]:

127 **Akçam T.**, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 398.

128 Նույն տեղում, էջ 399:

129 **Ata F.**, İşgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, s. 21.

130 **Akçam T.**, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 400.

131 **Տատրեան Վ.**, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, էջ 12:

132 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 21. Հայերի բնաջնջմանը նվիրված իր գրքում օսմանյան սենատի անդամ Ահմեդ Ռեֆիկը զարմանք էր արտահայտում, թե այն ժամանակ, երբ Անատոլիայի հայերը բշվում էին Դեր-Զոր և կոտորվում, հայ

Նույն նիստում Բաղդադի սանջակներից (գավառ) մեկից՝ Դիվանիեից ընտրված պատգամավոր Ֆուադ բեյը ներկայացրել է 10 կետից բաղկացած մի առաջարկ (takrir), որը հետագայում հիմք է տվել պատերազմական վարչակազմերի անդամներին հարցաքննած օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնախմբի (Beşinci Şube) ստեղծմանը: Թեև Ֆուադ բեյը վերոնշյալ առաջարկը խորհրդարանին էր հղել դեռևս 1918 թ. հոկտեմբերի 28-ին, սակայն Հայոց ցեղասպանության պատասխանատուներից մեկը հանդիսացող խորհրդարանի խոսնակ Հալիլ Մենթեշեի կողմից հարցը ձգձգելու պատճառով այն օրակարգ է բերվել միայն նոյեմբերի 2-ին, իսկ քննարկման առարկա դարձել՝ նոյեմբերի 4-ին[133]:

Անմիջականորեն հայերի կոտորածները քննարկելու մասին 1918 թ. նոյեմբերի 4-ի նիստում առաջարկ են ներկայացրել նաև Այդընի նահանգից ընտրված պատգամավոր Էմանուել էֆենդին ու ևս երկու հույն պատգամավորներ: Վեց կետից կազմված սույն առաջարկով պատգամավորները պահանջել են պատժել Թալեաթին և վերջինիս հանցակիցներին՝ հայ ժողովրդի նկատմամբ կիրառված բռնությունների համար[134]: Առաջարկի առաջին կետում նշված էր հետևյալը. «Հայ ազգին պատկանելուց բացի՝ այլ մեղք չունեցող մեկ միլիոն մարդ, այդ թվում նաև՝ կանայք ու երեխաներ, սպանվել են և ոչնչացվել», իսկ հինգերորդ կետն անդրադառնում էր հայազգի պատգամավորներ Զոհրապի և Վարդգեսի սպանությանը[135]: Առաջարկը ներկայացնելուց հետո ելույթ ունեցած Էմանուել էֆենդին ընդգծել է, որ այդ դեպքերի համար պատասխանատուների թիվը չի կարող սահմանափակվել միայն 3-4 հոգով, և որ այս հանցանքները գործվել են մի ուժեղ հոսանքի կողմից: Պատգամավորն ակնարկել է նաև, որ այդ իրադարձությունների համար պատասխանատու էր ոչ միայն հիշյալ հոսանքը, այլ նաև՝ բոլոր նրանք, ովքեր աջակցել էին այդ հոսանքին, նույնիսկ՝ ողջ ազգը[136]: Էմանուել էֆենդու ակնարկը հարուցել է թուրք պատգամավորների դժգոհությունը: 1918 թ. նոյեմբերի 4-ի նիստում նաև արձանագրվել է այս խնդրի շուրջ առաջին քաղաքական առճակատումը՝ թուրք և հայ ու այլազգի պատգամավորների միջև. «...հայ երեսփոխաններ մերթ փաղաքշելով, մերթ սաստելով, մերթ ալ երկիմաստ կամ թաքուն արտայայտութիւններով, իրենց թուրք պաշտօնակիցներուն ասպարէզ կարդացին Մեծ եղեռնի առնչութեամբ գործուած ոճրապարտ արարքներուն համար»[137]:

Վերոհիշյալ նիստում հայերի տեղահանմանն ու ոչնչացմանն առնչվող երկրորդ առաջարկ է ներկայացրել Քոզանի պատգամավոր Մատթեոս Նալբանդյանը՝ մի քանի ընկերոջ հետ միասին: Սույն առաջարկով պահանջվում էր չեղյալ հայտարարել «Տեղահանության» և «Լքյալ գույքերի» մասին ժամանակավոր օրենքները, և որպես հիմնավորում նշվում այդ օրենքների հակասահմանադրական բնույթը: Այս առաջարկին կառավարության անունից պատասխանած ներքին գործերի նախարար Ալի Ֆեթհի Օքյարը խոստանում է այդ կապակցությամբ հետաքննություն սկսել[138]:

Հայերի կոտորածների վերաբերյալ քննարկումներն օսմանյան խորհրդարանում շարունակվել են նաև Իզզեթ փաշային հաջորդած Թևֆիկ փաշայի վարչապետության օրոք: Քննարկումները վերսկսվել են 1918 թ. նոյեմբերի 18-ին, երբ խորհրդարանի հաստատմանն է ներկայացվել Թևֆիկ փաշայի կառավարության ծրագիրը: Հալեպի հայ պատգամավոր Արթին Բոշգեզենյանը շնշտել է, որ եթե կառավարությունն իրոք ակնկալում է հաշտության բանակցություններից դրական արդյունք ստանալ, ապա դրա միակ ճանապարհը հայերի կոտորածների մեղավորներին դատապարտելու ուղղությամբ ինչ-որ քայլեր ձեռնարկելն է[139], իսկ ի պատասխան ներքին գործերի նախարարի արած այն արտահայտությանը, թե հետաքննություն սկսելու համար իրենք հայցերի են սպասում, պատգամավորն ասել է, որ այդ վերաբերմունքը ճիշտ չի կարող լինել, քանի որ մարդ չի մնացել, որ կարողանա բողոքել[140]:

Հայկական ջարդերի խնդիրը քննարկման նյութ է դարձել նաև 1918 թ. նոյեմբերի 23-ի նիստում, որի ընթացքում հայ և հույն պատգամավորները չեն սահմանափակվել միայն Միության և առաջադիմության կուսակցությանը մեղադրելով, այլ նաև խոսել են թուրքերի հավաքական

պատգամավորները Ստամբուլում շարունակում էին ջերմ կապեր պահպանել Թալեաթի և հայերի ոչնչացումը կազմակերպած Իթթիհադի այլ պարագլուխների հետ, տե՛ս **Refik A.**, Kafkas Yollarında. İki Komite İki Kıtal, İstanbul, Temel Yayınları, 1998, s. 177.

133 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 21.

134 **Akçam T.**, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 401.

135 Խոսքը հայ պատգամավորներ Գրիգոր Զոհրապի և Վարդգես Սերենգուլյանի մասին է: Նույն տեղում, էջ 401-402:

136 Նույն տեղում, էջ 403-404:

137 **Տատրեան Վ.**, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, էջ 19:

138 **Akçam T.**, İnsan Hakları ve Ermeni Sorunu, ss. 405-406.

139 Նույն տեղում, էջ 409:

140 Նույն տեղում, էջ 409-410:

պատասխանատվության խնդրի մասին[141]: Նույն նիստում Տրապիզոնի պատգամավոր Մեհմեդ Էմինը կարևոր տեղեկություններ է հաղորդել հայերի կոտորածների մասին՝ հայտնելով, որ հայերին Սամսուն ուղարկելու պատրվակով նստեցրել են նավերը և ջրախեղդ արել[142]:

Հաջորդ նիստում հայ պատգամավորներից Մատթեոս Նալբանդյանը շեշտելով, թե «հայերը բնաջնջվել են», իսկ «Անատոլիան վերածվել համատարած գերեզմանոցի», ընդգծել է նաև, որ թուրքերը, որպես ազգ, չեն կարող խուսափել պատասխանատվությունից, իսկ որպես խնդրի լուծում՝ պահանջել բոլոր հանցագործների բացահայտումն ու պատժումը[143]:

Հայերի տեղահանության ու կոտորածների հարցը քննարկվել է նաև օսմանյան սենատում: Այստեղ սույն խնդրով առաջին քննարկումը տեղի է ունեցել 1918 թ. հոկտեմբերի 19-ին[144], երբ սենատի բացման առթիվ ելույթ ունեցած սենատի նախագահ (Իթթիհադի նախկին առաջնորդներից) Ահմեդ Ռըզան խոսքի մեջ հիշեցրել է «վայրենաբար սպանված հայերի» մասին[145]: Երկու օր անց Ռըզան, ավելի հեռուն գնալով, հայտարարել է, թե հայերը բնաջնջվել են «պետության ձեռքով» կիրառության մեջ դրված «պաշտոնական» քաղաքականության արդյունքում[146]: 1918 թ. նոյեմբերի 4-ի նիստում, երբ միևնույն ժամանակ հենց նույն խնդրի շուրջ թեժ քննարկումներ էին տեղի ունենում նաև պատգամավորների պալատում, Հայոց ցեղասպանության ընթացքում վարչապետ եղած Սայիդ Հալիմ փաշան, որը սենատի անդամ էր, առաջարկ է ներկայացրել սենատին, ըստ որի՝ առաջարկվում էր անհրաժեշտ հարցաքննությունն իրականացնելու համար հիմնել Գերագույն դատարան[147]: Սենատի անդամները, որպես ուղեցույց ընդունելով Չյուրյուքսուլու Մահմուդ փաշայի առաջարկը, որոշել են, տվյալ պահին սենատում առկա յոթ հանձնաժողովից բացի, սենատի 5 տարբեր մեծ հանձնաժողովների անդամների մասնակցությամբ ստեղծել նաև մի նոր՝ Հատուկ հանձնաժողով (Encümen-i Mahsus)[148]: Ութ հոգուց բաղկացած այդ հանձնաժողովի վրա դրվել են նույն պարտականություն-

141 Նույն տեղում, էջ 411-412:

142 Նույն տեղում, էջ 414:

143 Նույն տեղում, էջ 415-416:

144 **Ata F.**, İşgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, s. 30.

145 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 32.

146 Նույն տեղում:

147 Նույն տեղում, էջ 32:

148 Նույն տեղում:

ները, ինչ՝ խորհրդարանի Հինգերորդ հանձնախմբի[149], այսինքն՝ կառավարությանը հարցաքննել պատերազմի ընթացքում գործված ոճրագործությունների կապակցությամբ: Սենատի կողմից կազմված այդ հատուկ հանձնաժողովն աշխատանքներն ամփոփել է 1918 թ. նոյեմբերի 9-ին, իսկ նրա ամփոփիչ զեկույցը ներկայացվել է նոյեմբերի 14-ի նիստում: Հանձնաժողովը որոշել էր հրապարակել Չյուրյուքսուլու Մահմուդ փաշայի ձեռքի տակ գտնվող նյութերը, սակայն այս բոլոր նախաձեռնություններն անարդյունք են մնացել՝ 1918 թ. դեկտեմբերի 21-ին օսմանյան խորհրդարանի լուծարման պատճառով[150]:

Այսպիսով՝ թե՛ պատգամավորների պալատում և թե՛ սենատում տեղի ունեցած այս թեժ քննարկումների ժամանակ փաստվել է Հայոց ցեղասպանության իրողությունը, և հիմնվել օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնախումբը, որը հարցաքննության է ենթարկել պատերազմի ընթացքում երկիրը ղեկավարած Սայիդ Հալիմ ու Թալեաթ փաշաների կառավարության անդամներին՝ ի թիվս այլ հանցագործությունների և չարաշահումների, նաև հայերի տեղահանությունն ու կոտորածները կազմակերպելու կապակցությամբ:

149 Նույն տեղում:

150 Նույն տեղում, էջ 37:

1.2 Հայոց ցեղասպանության պատասխանատուների դեմ իրականացված հետաքննությունները

Զինադադարի շրջանում Օսմանյան կայսրության շատ արագ միմյանց հաջորդող կառավարությունների՝ Հայոց ցեղասպանության պատասխանատուներին բացահայտելու և դատապարտելու նախաձեռնությունն առաջին հերթին պայմանավորված էր հաշտության պայմանագրի դրույթները և հաղթանակած տերությունների դիրքորոշումը մեղմելու ցանկությամբ, քանի որ կայսրությանը վերջնական կործանում էր սպառնում: Թուրքիայի վրա մեծ ազդեցություն ունեցավ հատկապես համաշխարհային հանրության՝ մեղավորներին միջազգային դատարանին հանձնելու պահանջը: Այսպես՝ առաջիններից մեկն իր ձայնը բարձրացրեց գերմանացի ականավոր գիտնական, արևելագետ Յոզեֆ Մարկվարտը՝ Գերմանիայի ժողովրդին կոչ անելով կառավարությունից պահանջել հանձնել սեփական երկրում ապաստան գտած «Էնվերին ու Թալեաթին՝ զանգվածային սպանությունների մեղավորներին, այն հաշվով, որ նրանց դատի միջազգային դատարանը...»[151]: Նման պահանջով հանդես եկավ նաև ֆրանսիացի պատմաբան Ժակ դը Մորգանը[152]: Դատապարտող սուր հոդվածներով և աշխատություններով բողոքի ձայն բարձրացրեցին նաև տարբեր ազգությունների պատկանող ականավոր գործիչներ՝ Յոհաննես Լեփսիուսը, Արմին Վեգները, Անտուան Մեյեն, Ռընե Պինոնը, Արնոլդ Թոյնբին, Վալերի Բրյուսովը, Հենրի Մորգենթաուն ու շատ ուրիշներ[153]:

Հարկ է նշել, որ դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ արևմտահայերի զանգվածային բռնագաղթի ու կոտորածների լուրը տարածվել էր ողջ աշխարհով մեկ, դաշնակից երկրները՝ հանձինս Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի կառավարությունների, 1915 թ. մայիսի 24-ին բողոքի նոտա էին հղել Բարձր դռանը՝ հրապարակավ հայտարարելով, որ Օսմանյան կայսրության այդ նոր ոճրագործություններն ուղղված են մարդկության և քաղաքակրթության դեմ, և որ դրանց համար իրենք պատասխանատու են ճանաչելու օսմանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև՝ կոտորածներին մասնակից տեղական իշխանություններին[154]:

151 **Սահակյան Ռ.**, Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 136-137:

152 **Պողոսյան Ս.** , Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, 1988, էջ 423:

153 **Փափազեան Ա.**, Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի, Լոս Անճելես, 2005, էջ 21:

154 **Կիրակոսյան Զ.**, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1967, էջ 319:

Տեղի տալով համաշխարհային հանրության ճնշմանը՝ Օսմանյան կայսրության սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդեդդինը (1918-1922 թթ.) և հաճախ փոփոխվող կառավարությունների ներկայացուցիչները փութացին պատժել Առաջին աշխարհամարտի տարիներին այստեղ կատարված ոճրագործությունների, մասնավորապես՝ հայերի տեղահանության ու կոտորածների հեղինակներին: Այս հարցում կարևոր դեր խաղաց նաև այն, որ 1918 թ. դեկտեմբերից իշխանության եկած կառավարությունները կազմվում էին Իթթիհադի հակառակորդ ու պատերազմի տարիներին հալածված Ազատություն և համաձայնություն (Hürriyet ve İtilâf) կուսակցության անդամներից:

Ահմեդ Իզզեթ փաշան իր վարչապետության օրոք ներքին գործերի նախարար Ֆեթհի Օքյարի միջոցով 1918 թ. հոկտեմբեր ամսին հաղորդագրություն ուղարկեց կայսրության շրջաններ, որը նպատակ ուներ հետաքննել պատերազմի տարիներին հայերի դեմ կատարված հանցագործությունները: Հաղորդագրության մեջ ընդգծվում էր, որ հետաքննությունները պետք է իրականացվեն՝ «կասկածյալների պաշտոնից ու դիրքից անկախ»[155]:

Հայոց ցեղասպանության պատասխանատուների հետաքննությունը Օսմանյան կայսրությունում գրեթե միաժամանակ կատարվում էր երեք տարբեր հետաքննող հանձնաժողովների կողմից: Դրանց մեջ առավել հայտնի է օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնախմբի կողմից իրականացված հարցաքննությունը, որը կազմվեց Դիվանիհից ընտրված՝ ազգությամբ արաբ պատգամավոր Ֆուադ բեյի հղած առաջարկի հիման վրա: Օսմանյան խորհրդարանի պատգամավորների պալատի ներքին կանոնադրության դրույթների համաձայն՝ այստեղ գործում էին հինգ հանձնաժողովներ: Յուրաքանչյուր նստաշրջանի սկզբում վիճակահանությամբ կազմվող այդ հինգ հանձնաժողովներից մեկն ստանձնում էր Գերագույն դատարանի պարտականությունները[156]: Ֆուադ բեյի կողմից ներկայացված առաջարկով նախատեսվում էր Գերագույն դատարանին հանձնել Սայիդ Հալիմ ու Թալեաթ փաշաների կառավարությունների անդամներին: Խորհրդարանում անցկացված վիճակահանության միջոցով ստեղծվեց Հինգերորդ կոչվող հանձնախումբը, որն ստանձնեց այդ ուղղությամբ հարցաքննություն կատարելու պարտականությունը[157]:

155 **Dadrian V.** , **Akçam T.**, "Tehcir ve Taktil", ss. 42-43.

156 **Ata F.**, İşgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, s. 35.

157 Նույն տեղում, էջ 36:

Ֆուադ բեյի հղած առաջարկում, որը բաղկացած էր առանց հիմնավոր պատճառի երկիրը պատերազմի մեջ ներքաշելու և այլ մեղադրանքներ պարունակող 10 կետերից, հայերի տեղահանության խնդիրը շոշափված էր 5-րդ և 10-րդ կետերում: 5-րդ կետը ձևակերպված էր հետևյալ կերպ. «Իրավական ու մարդկային օրենքներին և հատկապես մեր Սահմանադրության ոգուն ու տառին ամբողջովին հակասող ժամանակավոր օրենքներ, հրամաններ և դրույթներ հրապարակելով՝ երկիրը վերածեցին ողբերգությունների թատերաբեմի», իսկ 10-րդ կետում, առանց անունը հստակ նշվելու, հիշատակվում էր հայերի տեղահանության ու ոչնչացման մեջ մեծ դեր խաղացած Հատուկ կազմակերպությունը. «Երկրի ներսում անկարգություններ իրականացրած ու կյանքի, գույքի և պատվի ազատության դեմ ոտնձգություններ գործած մի շարք ավազակախմբերի օժանդակելով՝ մասնակցեցին նրանց հեղինակած ողբերգություններին»[158]:

Իր աշխատանքները 1918 թ. նոյեմբերին սկսած Հինգերորդ հանձնախումբը նախագահ ընտրեց Արդուլլահ Ազմիին, իսկ քարտուղար՝ Շեմսեդդին բեյին: Թեև հանձնախմբի անդամների մեծ մասը թուրքեր էին, սակայն ներգրավված էին նաև հայ, հույն և արաբ պատգամավորներ[159]: Հարկ է նշել, որ հանձնաժողովի անդամների մեջ կային այնպիսի անձինք, ովքեր իրականում պետք է լինեին մեղադրյալի աթոռին[160]: Մինչև 1918 թ. դեկտեմբերի 7-ը տևած 15 նիստերի ընթացքում հարցաքննվեցին 15 նախարար, մեկ վարչապետ (Սայիդ Հալիմ փաշան) և երկու շեյխ-ուլ-իսլամ:

Հինգերորդ հանձնախմբի անդամները, որոնց մեծ մասն իթթիհադական էր[161], խուսափում էին հայերի տեղահանությանը և կոտորածներին առնչվող հարցեր ուղղելուց՝ դա թողնելով արաբ պատգամավորներին: Այնուամենայնիվ, բոլոր հարցաքննվողներին էլ տրվում էին միևնույն հարցերը, որոնք հիմնված էին Ֆուադ բեյի առաջարկի 10 կետերի վրա: Թեև պատերազմի ժամանակ իշխանության ղեկին եղած կառավարության անդամներն այս հարցաքննության ժամանակ խուսափել են ճիշտ պատասխաններից, ստել, ասել, թե իբր կառավարությունը տեղյակ չի եղել տեղահանության մասին, և փորձել հայերի տարագրությունը հիմնավորել «ռազմական միջոցառմամբ» կամ «անհրաժեշտությամբ», այնուամենայնիվ հարցաքննության ընթացքում արձանագրվել են նաև որոշ խոստովանություններ: Այսպես, օրինակ, արդարադատության նախարար Իբրահիմ բեյը նշել է, որ տեղահանության գործողությունն սկսվել է «Տեղահանության մասին» օրենքի ընդունումից շատ ավելի առաջ[162]:

Սույն հանձնախումբը հարցաքննված նախարարների մեկնաբանություններին և խոստովանություններին հավելել է նաև բազմաթիվ փաստաթղթեր, որոնց մեջ կային կոտորածներին վերաբերող խիստ գաղտնի հրահանգներ: Այս վավերագրերը հետագայում հանձնվել են Ռազմական ատյանների դատախազներին[163]: Հինգերորդ հանձնախմբի իրականացրած հարցաքննության վերջնական նպատակն էր կասկածյալներին Գերագույն դատարանին հանձնելը, որն էլ որոշվեց մեջլիսում կատարված քվեարկության միջոցով, սակայն 1918 թ. դեկտեմբերի 21-ին խորհրդարանը սուլթանի հրովարտակով լուծարվեց, և անհնար դարձավ հարցաքննության ենթարկվածներին Գերագույն դատարան ուղարկելու մասին որոշման ընդունումը մեջլիսի կողմից[164]: 1919 թ. մարտի 17-ին տվյալ ժամանակաշրջանի վարչապետ Դամատ Ֆերիդ փաշայի հրամանով՝ Հինգերորդ հանձնախմբի կողմից իրականացված հարցաքննության արձանագրությունները հանձնվել են Ռազմական ատյանի դատախազությանը[165]:

Հայոց ցեղասպանության պատասխանատուներին գտնելու ուղղությամբ կարևոր հետաքննություն է իրականացրել նաև Օսմանյան կայսրության Ներքին գործերի նախարարության կողմից ստեղծված Հանցագործությունների հետաքննիչ հանձնաժողովը (Tedkîk-i Seyyi'ât/Tahkîk-i Seyyi'ât Komisyonu), որը պատմությանը հայտնի է Մազհարի հանձնաժողով (Mazhar Komisyonu) անունով, քանի որ հանձնաժողովի նախագահն էր մինչև 1914 թ. ապրիլը Բիթլիսի (Բաղեշ) նահանգապետի պաշտոնը զբաղեցրած Հասան Մազհարը: Դատավարություններին նախորդած հետաքննությունը հիմնականում իրականացվել է հենց այս հանձնաժողովի կողմից: Թեև վերոհիշյալ հետաքննիչ հանձնաժողովի ստեղծվելու մասին օսմանյան մամուլում հրապարակումներ են եղել միայն 1918 թ. նոյեմբերի 24-ին, քանի որ հանձնաժողովը պաշտոնապես հիմնվել էր նոյեմբերի 23-ին, սակայն այն սկսել էր գործել դեռևս նոյեմբերի 13-ից:

158 **Akçam T.**, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 419.

159 **Kocahanoğlu O. S.**, İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması, s. 31.

160 **Dadrian V., Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 38.

161 Հինգերորդ հանձնախմբի բոլոր անդամներն էլ ընտրվել էին 1915 թ. Միություն և առաջադիմություն կուսակցության ընտրացուցակով, տես նշվ. աշխ. 79-րդ էջը:

162 **Akçam T.**, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 423.

163 **Dadrian V.**, Ulusal ve Uluslararası Hukuk Sorunu Olarak Jenosid, Belge Yayınları, İstanbul, 1995, s. 81.

164 **Akçam T.**, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 424.

165 Նույն տեղում, էջ 454:

Օսմանյան կառավարությունը 1918 թ. դեկտեմբերի 5-ին որոշել է վերոհիշյալ հանձնաժողովին կից ստեղծել նաև Արդարադատության ու Ներքին գործերի նախարարությունների անդամներից կազմված խառը հանձնաժողովներ, որոնք հետաքննություններ տեղում իրականացնելու նպատակով ուղարկվելու էին կայսրության շրջաններ: Սույն հետաքննիչ հանձնաժողովները թեև ընդգրկված էին լինելու ոստիկանության համակարգում, սակայն անկախ էին աշխատելու[166]:

Մազհարի ղեկավարած հանձնաժողովի անդամներն էին Արդարադատության նախարարության իրավական գործերի տնօրենի տեղակալ Հարալամբոս, վարչական տեսուչներ Էմին Հյուսնյուն և Օմերը, ինչպես նաև՝ Ստամբուլի Բողոքարկման դատարանի անդամ Արթին Մոսթիչյանը[167]:

Հանցագործությունների հետաքննիչ հանձնաժողովին, օսմանյան քրեական դատարանների օրենսգրքի համապատասխան հոդվածների համաձայն, տրված էին լայն լիազորություններ, այդ թվում նաև՝ կասկածյալներին ձերբակալելու իրավունք[168]:

Մազհարի հանձնաժողովը հանդես է եկել նաև որոշ հավելյալ նախաձեռնություններով: Այսպես՝ սույն հետաքննող հանձնաժողովը, պաշտոնապես դիմելով կառավարությանը, պահանջել է, որպեսզի վերջինս մամլո գրասենյակի միջոցով մեկտեղի զինադադարի ժամանակաշրջանի թերթերում տպագրված այն բոլոր հրապարակումները, որոնք վերաբերում էին պատերազմի ընթացքում կատարված ոճրագործություններին: Հանձնաժողովը կարևորություն էր տալիս հատկապես թուրք և այլ ազգությունների պատկանող մուսուլման ականատեսների վկայություններին[169]:

Հանձնաժողովը, երկիրը պատերազմի մեջ ներքաշելու և Հատուկ կազմակերպությանն առնչվող խնդիրները ևս ընդգրկող 10 տպագիր հարց ուղղելով, գրավոր ու բանավոր ցուցմունքներ է վերցրել բազմաթիվ անձանցից, որոնց մեջ կային նաև խորհրդարանի 26 անդամներ: Թղթապանակներ են նախապատրաստվել 130 հոգու վերաբերյալ, և պահանջվել, որ տվյալ անձինք դատաքննության ենթարկվեն[170]: Մազհարի հանձնաժողովը երկու ամսվա ընթացքում ձեռք է բերել հայերի կոտորածների վերաբերյալ բազմաթիվ մեղադրական ապացույցներ, այդ թվում՝ ծածկագիր

166 **Dadrian V., Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 44.

167 **Ata F.**, İşgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, s. 65.

168 **Akçam T.**, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 453.

169 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", ss. 44-45.

170 **Akçam T.**, İnsan Hakları ve Ermeni Sorunu, ss. 453-454.

հեռագրեր[171], պաշտոնական գրություններ, հրահանգներ ու հրամաններ, ինչպես նաև՝ ականատեսների վկայություններ: Ի դեպ՝ վկաները հանձնաժողովին ցուցմունքներ էին տալիս երդվելուց հետո միայն[172]: Մազհարի հանձնաժողովը հետաքննությունն սկսելուց 3 շաբաթ անց հայտնել է, որ արդեն իսկ ձեռք են բերվել բավարար ապացույցներ, որպեսզի սկսվի դատավարությունը: Այս փաստաթղթերը 1919 թ. հունվարին հանձնվել են Ստամբուլի ռազմական ատյանին[173]: Սակայն Առաջին ռազմական ատյանը, վերոհիշյալ հետաքննող հանձնաժողովների կողմից ձեռք բերված նյութերը թերի համարելով, հիմնել է նաև իր 5 հետաքննող հանձնաժողովները, որոնք ևս հասու են դարձել մի շարք հավելյալ տեղեկությունների[174]: Այս բոլոր հետաքննիչ հանձնաժողովների միջոցով ստացված ականատեսների վկայությունները, ձեռք բերված ծածկագիր հեռագրերը և այլ ապացույցներ տրամադրվել են հայերի տեղահանության և զանգվածային ոչնչացման մեջ մեղադրվողների դատաքննությունն իրականացնող ռազմական դատարաններին:

Պատերազմի տարիներին հայերի տեղահանությունն ու ոչնչացումը կազմակերպելու և իրականացնելու մեջ մեղադրվողների առաջին ձերբակալությունները կատարվել են 1918 թ. դեկտեմբերի սկզբներին Անկարա, Չորում և Ադանա քաղաքներում: Կալանավորներին տեղափոխում էին Ստամբուլ: Նրանց շարքերում կային երիտթուրքական կուսակցության ղեկավարներ, պատգամավորներ, շրջանային պատասխանատու քարտուղարներ, բարձրաստիճան զինվորականներ և այլ պաշտոնատար անձինք: 1919 թ. հունվար ամսվա սկզբին ձերբակալությունները դարձել են ավելի զանգվածային[175], որոնք շարունակվել են նաև 1919 թ. փետրվար ամսին: Դեռևս հունվար ամսվա ընթացքում ազատազրկվել էին մոտ 40 բարձրաստիճան պաշտոնյաներ, հունվարի վերջերին ձերբակալված կասկածյալների թիվը հասավ 112 հոգու: Փետրվարին նույնպես կալանավորվել են պատգամավորներ ու նախկին նախարարներ՝ բոլորն էլ իթթիհադա-

171 **Dadrian V.**, Histoire du génocide arménien, Stock, 1996, p. 507.

172 **Kévorkian R.**, La Turquie face à ses responsabilités. Les procés des criminels jeunes turcs (1918-1920), Revue d'histoire de la SHOAH le monde juif, N 177-178 Janvier-Août 2003, p. 189.

173 **Akçam T.**, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 454.

174 Նույն տեղում:

175 **Şimşir B.**, Malta Sürgünleri, Bilgi Yayınevi, İstanbul, 1985, s. 35.

կան[176], այդ թվում՝ ներքին գործերի նախկին նախարար Իսմայիլ Ջանփոլադը, սենատի նախկին նախագահ Հաջը Ադիլը, Միություն և առաջադիմություն կուսակցության նախկին քարտուղար Միդհադ Նյուքրյու Բլեդան, պատգամավորներ Հյուսեին Ջահիդ Յալչընը և Զիյա Գյոքալփը[177]:

Ստամբուլում ձերբակալվածներին ուղարկում էին Ռազմական նախարարությանը պատկանող «Քեքիրաղա բյոլյուղյու» անունը կրող կալանատունը: Նրանց մեջ էր նաև Բողազլըյանի կայմակամ (գավառապետ) Մեհմեդ Քեմալը, որը հետագայում դարձավ հայերի զանգվածային ոչնչացումը կազմակերպելու մեղադրանքով մահվան դատապարտված առաջին պաշտոնյան:

Այդ ընթացքում Անտանտի երկրները, ձգտելով հավատարիմ մնալ 1915 թ. մայիսի 24-ին Բարձր դռանը հղած իրենց նոտային, նախ փորձեցին համատեղ ուժերով դատապարտել պատերազմի ժամանակ գործված ոճիրների և հատկապես Հայոց ցեղասպանության հեղինակներին: Այսպես՝ 1919 թ. հունվարին Փարիզում տեղի ունեցավ նախնական համաժողով, որի արդյունքում ստեղծվեց մի հանձնաժողով, որն իրավասություն ստացավ գտնել պատերազմական հանցագործներին: «Երրորդ ենթահանձնաժողով» կոչված այդ մարմինը, որը հայտնի էր նաև «Տասնհինգի հանձնաժողով» անունով, այլ ոճրագործությունների հետ մեկտեղ քննեց նաև «պատերազմի ժամանակ կիրառված բարբարոսական և ապօրինի մեթոդները»: Հանձնաժողովը 1919 թ. մարտի 5-ին հանդես եկավ զեկուցմամբ, որում շեշտվում էին պատերազմի ժամանակ խաղաղ բնակչության հանդեպ կիրառված հետևյալ բռնարարքները՝ շարունակական բնույթ կրող ահաբեկչությունը, կոտորածները, անձնական սեփականության և հասարակությանը պատկանող գույքերի բռնագրավումն ու կողոպուտը, բռնագաղթն ու հարկադիր աշխատանքը[178]: Հանձնաժողովի վերջնական զեկուցումն ընթերցվեց 1919 թ. մարտի 29-ին: Զեկուցումը հանգեց այն եզրակացության, թե «թշնամի երկրների այն բոլոր քաղաքացիները, ովքեր խախտել են մարդկային օրենքները կամ պատերազմական ավանդույթները, ենթակա են դատական հետապնդման»: Թեև զեկուցման մեջ բացահայտ կերպով չէր նշվում, բայց և այնպես սույն հանձնաժողովը հաշվի էր առել նաև Օսմանյան կայսրության կողմից սեփական քրիստոնյա քաղաքացիների հանդեպ գործադրված ոճրագործությունները: Հենց այս հանձնաժողովի աշխատանքների շնորհիվ են Սևրի պայմանագրի մեջ ներառվել հայերի կոտորածների մեղավորներին դատական պատասխանատվության ենթարկելու դրույթները՝ 226-րդ, 228-րդ և 230-րդ հոդվածները[179]:

Մեծ Բրիտանիան սկզբում մտադրված է եղել նաև սեփական դատարանի միջոցով դատապարտել պատերազմական ոճրագործներին[180]: Այսպես՝ Մեծ Բրիտանիայի գերագույն կոմիսարը 1919 թ. հունվարի 7-ին Օսմանյան կայսրության արտգործնախարար Մուստաֆա Ռեշիդ փաշայի հետ հանդիպման ժամանակ պատերազմական հանցագործներին դասակարգել էր հետևյալ երկու խմբում. 1. պատերազմի ընթացքում անգլիացի գերիների նկատմամբ բռնություններ գործադրածներ և 2. հայերի կոտորածների պատասխանատուներ[181]: Սակայն Ֆրանսիայի կարծիքով պատերազմական ոճրագործությունները դատելու իրավասությունը պետք է պատկաներ թուրքերին, իսկ դաշնակից պետություններն ունենային միայն դատավարությունները վերահսկելու իրավունք: Հարկ է նշել, որ թե՛ երիտթուրքերի դատավարության ժամանակ, թե՛ հետագայում Ֆրանսիայի թուրքամետ դիրքորոշումը մեծապես պայմանավորված էր այն հանգամանքով, որ նրան էր պատկանում օսմանյան պարտքի մոտ 60%, և Ֆրանսիան շահագրգռված էր պահպանել միասնական Թուրքիա, որը կվերադարձներ օսմանյան պարտքը:

Չնայած Ֆրանսիայի դիրքորոշմանը՝ Մեծ Բրիտանիան չփոխեց այս հարցում իր ունեցած տեսակետը[182]: Թուրքիայի կառավարությունը, ի դեմս վարչապետ Թևֆիկ փաշայի, 1919 թ. փետրվարի վերջերին դիմելով չեզոք երկրներ Շվեյցարիային, Դանիային, Իսպանիային, Շվեդիային ու

176 Տվյալ ժամանակաշրջանում Ստամբուլում տպագրվող «Մեմլեքեթ» օրաթերթի համաձայն՝ 1919 թ. փետրվարի 16-ին Միություն և առաջադիմություն կուսակցության ձերբակալված երևելի գործիչները ոստիկանատնից ավտոմեքենաներով փոխադրվել էին Ռազմական ատյանի կալանատունը: Տեղափոխման ընթացքում ոստիկանների կողմից խիստ միջոցներ էին ձեռնարկվել՝ միջադեպերի տեղիք չտալու ուղղությամբ, տե՛ս Mevkûf İttihad Erkânı, "Memleket", 17 Şubat 1919.

177 **Şimşir B.**, Malta Sürgünleri, ss. 57-58.

178 **Dadrian V.**, Histoire du génocide arménien, p. 483.

179 Նույն տեղում, էջ 484:

180 Ուշագրավ է, որ իր հուշերում Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջը հետևյալ կերպ է ներկայացնում այդ փաստը. «Հաշտության պայմանագրի առումով ակնհայտ էր, որ մենք չէինք կարող այնպիսի պայմանագիր կնքել, որ ցրված հայ ժողովրդի բեկորները թողնվեին այն կեղեքչի քմահաճույքին, որը սերունդներ շարունակ մորթել, բռնաբարել և թալանել էր նրան ու շարունակել անարգել մինչև պատերազմի ավարտը», տե՛ս **Джордж Л.**, Правда о мирных договорах, том второй, Москва, 1957, с. 398.

181 **Şimşir B.**, Malta Sürgünleri, s. 32.

182 Նույն տեղում, էջ 41-42:

Հոլանդիային, երկուական դատավորներ խնդրեց այս երկրներից՝ հայերի զանգվածային ջարդերի պատասխանատուներին դատելու համար մի միջազգային դատարան հիմնելու նպատակով[183], սակայն Մեծ Բրիտանիան խոչընդոտեց այս նախաձեռնությանը[184]:

1919 թ. մարտի 5-ին Մեծ Բրիտանիայի գերագույն կոմիսարությունը ծովակալ Վեբի միջոցով Բարձր դռանը հաղորդեց բրիտանական կառավարության մտադրությունը՝ պատերազմական հանցագործների վերաբերյալ, որի համաձայն՝ պահանջեց ձերբակալել մեղադրյալներին[185]: 1919 թ. մարտի 9-ին վարչապետ Դամադ Ֆերիդ փաշան այցելեց Մեծ Բրիտանիայի Գերագույն կոմիսարություն և հայտնեց, որ կգործի՝ անգլիացիների ցանկությանը համապատասխան[186]: Նույն օրը անգլիացիների պահանջով ազատազրկվեցին պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունը ղեկավարած կառավարությունների անդամները[187]: Ձերբակալությունները մեծ թափով շարունակվեցին նաև հաջորդ օրը՝ մարտի 10-ին, երբ կալանավորվեցին սադրազամ Սայիդ Հալիմը, շեյխ-ուլ-իսլամ Մուսա Քյազիմը, Ստամբուլի պատգամավոր Սալահ Ջինգյոզը, սենատի նախագահ Ռըֆաթը, ներքին գործերի նախարար Ալի Մյունիֆը, հանրակրթական նախարար Ծյուքրյուն, արտաքին գործերի նախարար Ահմեդ Նեսիմին, ներքին գործերի նախարար Ֆեթհիին, Բոլուի պատգամավոր Հաբիբը, Սինոպի պատգամավոր Հասան Ֆեհմին և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ[188]: Ազատազրկվածների մեծ մասը կալանավորվում էր անգլիական կողմի կազմած ցուցակների համաձայն[189]: Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից Օսմանյան կայսրությանը ներկայացրած հանցագործների «սև» ցուցակներում հատկապես պետք է առանձնացնել այն 61 հոգուն, որոնց ցուցակը տրվել է 1919 թ. մարտի 15-ից ապրիլի 7-ը ընկած ժամանակահատվածում, քանի որ այդ անձինք կասկածվում էին հայերի տեղահանությունը և ոչնչացումը կազմակերպելու մեջ: Թուրքիայի կառավարությանը

183 **Yeghiayan V.**, Malta Belgeleri, İngiltere Dışişleri Bakanlığı "Türk Savaş Suçluları" Dosyası, Belge Yayınları, İstanbul, 2007, s. 19.

184 **Şimşir B.**, Malta Sürgünleri, ss. 62-63.

185 **Sarıhan Z.**, Kurtuluş Savaşı Günlüğü, I. Cilt, Mondros'tan Erzurum Kongresi'ne (30 Ekim 1918-22 Temmuz 1919), Öğretmen Yayınları, 1982, s. 160.

186 **Şimşir B.**, Malta Sürgünleri, s. 63.

187 **Sarıhan Z.**, Kurtuluş Savaşı Günlüğü, s. 160.

188 Yeni Tevkîfler, "Memleket", 11 Mart 1919.

189 **Şimşir B.**, Malta Sürgünleri, s. 68.

«սև» ցուցակներ էին ներկայացրել նաև ԱՄՆ-ը (5 հոգի) և Ֆրանսիան (12 հոգի): Ի դեպ՝ Ֆրանսիայի ցուցակում բոլոր կասկածյալների անունները համընկնում էին Մեծ Բրիտանիայի ցուցակում տեղ գտած անձանց հետ՝ բացառությամբ Յունուս Նադիի: Հավելենք, որ վարչապետ Դամադ Ֆերիդին հայերի ջարդերի պատասխանատուների ցուցակներ են ներկայացրել նաև ժամանակի Կ.Պոլսո հայոց պատրիարք Զավեն արքեպ. Տեր-Եղիայանը և Մխիթարյան միաբանության անդամներ[190]:

«Սև ցուցակներով» ձերբակալվածների շարքում էին Իթթիհաթ վե թերաքքի կուսակցության նշանավոր անդամներ՝ ֆինանսների նախարար Ջավիդ բեյը, լրագրողներ Յունուս Նադին ու Ջելալ Նուրին, Անկարայի պատգամավոր Հիլմին, արդարադատության նախարար Իբրահիմ Փիրիզադեն, Չանքըրըի պատգամավոր Ֆազլլ Բերքին, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Իզզեթ, արտաքին գործերի նախարար Հալիլ Մենթեշեն և այլք[191]: Հարկ է նշել, որ հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով ընդհանուր առմամբ ձերբակալվել են 300 հոգի, որոնց մեջ եղել են նախարարներ, նահանգապետեր, գավառապետեր, ոստիկաններ ու ժանդարմներ[192]:

Թեև ձերբակալվածների մեծ մասն արգելափակվում էր «Բեքիրաղա բյոլյուղյու» կոչվող զինվորական բանտում, սակայն նրանք չէին գտնվում խիստ հսկողության ներքո: Կալանավորներին շնորհված էին բանտային ռեժիմին անհամապատասխան ազատություններ: Ձերբակալվածներն ազատ ելումուտ էին անում մյուս բանտախցերը, այցի գնում միմյանց, խորհրդակցում իրար հետ, այդ թվում նաև՝ ապագա դատալսումներին հարմար պատասխաններ տալու հարցով: Նրանց այցելության եկած անձինք չէին խուզարկվում: Այցելուները, սննդից բացի, այլ իրեր պարունակող փաթեթներ էլ էին բերում կալանավորներին[193]: Ի դեպ՝ հանցագործներին հաճախ էր այցելում նաև Մուստաֆա Քեմալը[194]: Կալանավորներին մեկ անգամ այցելել է նաև 15-րդ բանակային կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը:

Հաշվի առնելով ազգայնական շարժման մեջ իթթիհադականների ու-

190 **Ertürk H.**, İki Devrin Perde Arkası, Sebil Yayınları, İstanbul, 1996, ss. 288-289.

191 **Sorgun T.**, Mütareke Dönemi ve Bekirağa bölüğü, Kamer Yayınları, İstanbul, 1998, s. 295.

192 **Kocahanoğlu O. S.**, İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması, s. 39.

193 **Akçam T.**, Ermeni Tabusu Aralanırken Diyalogtan Başka Çözüm Var mı?, Su Yayınları, İstanbul, 2002, ss. 111-112.

194 **Sorgun T.**, Mütareke Dönemi ve Bekirağa Bölüğü, s. 393.

ներեցած մեծ դերը՝ այս կալանավայրը թերևս դարձել էր նոր՝ քեմալական շարժման կենտրոններից մեկը: Կալանավորները հնարավորություն ունեին խոսելու միմյանց հետ, իրենց մոտ կանչելու ցանկացած մարդու և տեղեկություններ ստանալու նրանից: Ինչպես իր հուշերում նշում է Հալիլ Մենթեշեն, հետաքննության համար պատասխանատու պաշտոնյաները հաճախ գալիս ու քննարկումներ էին կազմակերպում մեղադրյալների հետ[195]: Կալանավորներից Ջելալ Նուրիի տվյալների համաձայն՝ նախկին Նախարարների խորհուրդը ամեն գիշեր երկու նիստ էր գումարում բանտում[196]: Այդ ազատություններն առաջին հերթին պայմանավորված էին այն հանգամանքով, որ երիտթուրքերը և նրանց կողմնակիցների մեծ մասը դեռ կարևոր պաշտոններ էին զբաղեցնում Ռազմական, Ներքին գործերի և Արդարադատության նախարարություններում, ինչպես նաև՝ ոստիկանությունում: Այսպես, օրինակ, Յունուս Նադին իր հուշերում հայտնում է, թե ոստիկանատանն աշխատող Իթթիհադի կողմնակիցներից մեկը ձերբակալությունների ժամանակ հետևել է այստեղ տեղի ունեցող դեպքերին և օրվա մեջ 3-4 անգամ զանգահարելով իրեն՝ տեղեկություններ հաղորդել նախատեսվող ազատազրկումների մասին. «Այս իրավիճակում իմ հավանական ձերբակալման առնչությամբ գաղտնաբառ էինք որոշել, ըստ որի՝ «Հիվանդը լավ է» արտահայտությունը նշանակում էր վտանգ չկա: «Հիվանդի վիճակը մի քիչ վատացել է»-ն նշանակում էր, որ պետք է ավելի զգույշ լինել, իսկ «Հիվանդի վիճակը դեպի վատն է գնում» նախադասության իմաստն այն էր, որ նախանշաններ կային մեր ձերբակալման ուղղությամբ»[197]:

Բանտային ոչ խիստ պայմանների հետևանքով գրանցվեցին նաև փախուստի մի քանի դեպքեր: Առաջինը «Բեքիրաղա բյոլյուղյու» կալանատնից փախչել հաջողվեց հայերի ջարդարարներից Դիարբեքիրի նահանգապետ, բժիշկ Մեհմեդ Ռեշիդ բեյին[198], որը նաև Իթթիհաթ վե թերաքքի կազմակերպության առաջին 4 հիմնադիրներից մեկն էր[199]: Ինչպես նշում

195 Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları, ss. 237-238.

196 «Իթթիհատը բանտին մէջ. բանտարկեալները ինչպէ՞ս կ'անցնեն իրենց ժամանակը», «Ճակատամարտ», 14 մարտի, 1919, N 105 (1926):

197 **Nadi Y.**, Kurtuluş Savaşı Anıları, s. 19.

198 **Sarıhan Z.**, Kurtuluş Savaşı Günlüğü, s. 114.

199 Մեհմեդ Ռեշիդն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նաև ատրիների ոչնչացման հիմնական կազմակերպիչներից էր: Նա այնպիսի դաժանությամբ էր իրականացնում Դիարբեքիրի վիլայեթի քրիստոնյաների սպանդը, որ անգամ Թալեաթը ստիպված էր եղել նրան զգուշացնող նամակ գրել, և Ռեշիդը Դիարբեքիրի

է Միություն և առաջադիմություն կուսակցության գլխավոր քարտուղար Միդհադ Ցյուքրյու Բլեդան, Ռեշիդի փախուստի կազմակերպիչների հիմնական նպատակն էր նրան Անատոլիայի խորքեր հասցնելը, սակայն մի շարք անփութությունների հետևանքով այդ ծրագիրը ձախողվում է[200], և 1919 թ. փետրվարի 6-ին նա ինքնասպանություն է գործում Ստամբուլի Բեշիքթաշ շրջանում, որտեղ ոստիկանների ծուղակն է ընկնում: 1919 թ. օգոստոսի 8-ին բանտից փախուստի են դիմում նաև Էնվերի հորեղբայր Հալիլը և հայտնի իթթիհադական Քյուչյուք (Փոքր) Թալեաթը[201]:

Տվյալ ժամանակարջանում Կոնստանդնուպոլսում լույս տեսնող «Ժողովուրդ» հայկական օրաթերթի համաձայն՝ 1919 թ. սեպտեմբերին զինվորական բանտից փախչելու փորձ են արել նաև իթթիհադական քարամյուրսելցի Ալին և իր ընկերները, ովքեր միտումնավոր կերպով հրդեհ են առաջացրել բանտախցում, սակայն պահակների միջամտության շնորհիվ կրակը հանգցվել է[202]:

Անմիջականորեն հայերի կոտորածների մեջ մեղադրվող ոճրագործներին դատելու համար ռազմական դատարաններ հիմնելու առաջին նախաձեռնությունը գրանցվել է 1918 թ. դեկտեմբերի 14-ին, երբ հրապարակվել է սուլթան Մեհմեդ 6-րդի հատուկ հրովարտակը[203], որում նշված էր, թե պետության տարբեր շրջաններում հիմնվելու էին ռազմական ատյաններ՝ տեղահանության հանցագործներին դատելու համար: Կայսրությունը բաժանվել է 10 դատաքննչական շրջանների.

1. Անկարա, Բոլու և Կաստամոնու շրջանները,
2. Բուրսա և Էդիրնե վիլայեթները (նահանգներն) ու Չաթալջա սանջակը (գավառը),
3. Տրապիզոն վիլայեթն ու Սամսուն սանջակը,
4. Այդընի վիլայեթը և Չանաքքալե ու Քարեսի սանջակները,
5. Կոնիա վիլայեթն ու Էսքիշեհիր, Քյութահիա, Քարահիսար և Անթալիա սանջակները,
6. Սըվաս (Սեբաստիա) վիլայեթն ու Կայսերի (Կեսարիա) և Յոզղատ լիվաները (սանջակ),

նահանգապետի պաշտոնից ազատվելով՝ նշանակվել էր Անկարայի նահանգապետի պաշտոնում, տես **Аваkян А.**, Геноцид 1915 г., с. 48-49.

200 **Bleda M. Ş.**, İmparatorluğun Çöküşü, s. 62.

201 **Akçam T.**, Ermeni Tabusu Aralanırken Diyalogtan Başka Çözüm Var mı?, s. 112.

202 «Ժողովուրդ» քաղաքական և հասարակական օրաթերթ, Կ.Պոլիս, 5 սեպտեմբեր, 1919, N 32 (278):

203 Osmanlı Belgelerinde Ermeniler (1915-1920), ss. 189-190.

7. Էրզրում (Կարին), Վան, Բիթլիս (Բաղեշ) վիլայեթները,
8. Դիարբեքիր և Մամուրեթ-ուլ Ազիզ (Խարբերդ) վիլայեթները,
9. Ադանա վիլայեթն ու Մարաշ սանջակը,
10. Ուրֆա, (Դեր) Զոր և Այնթափ սանջակները[204]:

Առաջին ռազմական ատյանն ստեղծվել է 1918 թ. դեկտեմբերի 16-ին. դատարանի նախագահ է նշանակվել Մահմուդ Հայրեթ փաշան[205]: Օսմանյան կայսրությունում ռազմական ատյանների գործունեությունը կարգավորվում էր 1910 թ. սեպտեմբերի 1-ին ընդունված «Զինված ավազակախմբերի ճնշման» ("Müsellah Çetelerin Tenkîli") մասին որոշմանը համապատասխան: Տվյալ որոշման 24-րդ հոդվածի համաձայն՝ ռազմական դատարանների կողմից կայացված վճիռները պետք է հաստատվեին ռազմական դրության հրամանատարի կարգադրությամբ, իսկ մահվան դատավճիռները՝ սուլթանի վավերացմամբ[206]: Ըստ նույն որոշման 25-րդ հոդվածի՝ ռազմական ատյանները պետք է կազմվեին մեկ նախագահից, չորս անդամներից ու մեկ դատախազից: Նախագահը և անդամներից երկուսը նշանակվելու էին Ռազմական նախարարության կողմից, իսկ մնացած երկու անդամը՝ Արդարադատության: Ռազմական դատարաններում դատավարությունները անցնելու էին դռնբաց[207]: Դատավճիռները կայացվելու էին ձայների ճնշող մեծամասնությամբ: Դատապարտյալներն իրավունք չունեին բողոքարկելու դատավճիռները[208]:

1918 թ. ստեղծված ռազմական ատյանի կազմի 7 քաղաքացիական անդամներից երեքը քրիստոնյա էին, սակայն այս դատարանների կազմերը հետագայում հաճախ էին փոփոխությունների ենթարկվելու:

Թեև, ըստ օրենքի, հանցագործները պետք է դատվեին ոճրի գործադրված վայրում, սակայն 1919 թ. փետրվարի 5-ին Ստամբուլի ռազմական

204 **Kocahanoğlu O. S.,** İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması, ss. 37-38.

205 **Dadrian V. , Akçam T.,** "Tehcir ve Taktil", s. 133.

206 **Ata F.,** İşgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, s. 75.

207 Թեև, ըստ սովորույթի, ռազմական ատյաններում իրականացվող դատաքննությունները հրապարակային չեն եղել, սակայն հայերի տեղահանության և կոտորածների դատավարությունները սկզբում բաց են եղել հասարակության առաջ, որպեսզի հանրությունը համոզվեր դրանց «անկողմնակալության» մեջ: 1918 թ. դեկտեմբերի 14-ին ռազմական դատարանների ստեղծման մասին որոշմանը կցվեց նաև դատական նիստերը դռնբաց անելու մասին որոշումը, սակայն 1920 թ. ապրիլի 23-ի որոշմամբ այդ դատաքննությունները սկսեցին փակ անցկացվել, տես **Akçam T.,** Ermeni Tabusu Aralanırken Diyalogtan Başka Çözüm Var mı?, s. 98.

208 **Ata F.,** İşgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, s. 75. 1920 թ. հոկտեմբերի 5-ին բողոքարկման վրա դրված արգելքը վերացում է, տես նշվ. աշխ., էջ 273.

ատյանը Յոզղատի տեղահանության և կոտորածների պատասխանատուների դատավարության առաջին նիստում հատուկ վճիռ է կայացնում՝ մեղադրյալներին դատել մայրաքաղաքում[209]: 1919 թ. մարտի 8-ին հրապարակված որոշմամբ դատարանները համարվում են «արտակարգ», և էական կարգավորումներ են արվում դատարանի կառուցվածքի և աշխատանքային ոճի մեջ: Հետագա ամիսներին ևս այլ փոփոխություններ են կատարվում[210]: Այսպես, օրինակ, 1919 թ. սեպտեմբերին ընդունված «Ռազմական ատյանի մասին» նոր օրենքի համաձայն՝ դատարանի կայացրած դատավճիռներն անբեկանելի են՝ բացառությամբ մահապատժի: Սովորական պատիժ նախատեսող վճիռները տրվում են Ռազմական ատյանի անդամների պարզ մեծամասնությամբ, իսկ մահապատժի համար անհրաժեշտ է դատարանի անդամների երկու երրորդի մեծամասնությունը: Մահապատժի վճիռները ենթարկվում են Զինվորական վճռաբեկ ատյանի վերաքննությանը[211]:

Այսպիսով՝ Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության կրած պարտությունից և Մուդրոսի զինադադարի կնքումից հետո երկրում առաջացած ծանր քաղաքական մթնոլորտում հիմնական նպատակներից մեկն էր խուսափել Առաջին աշխարհամարտի տարիներին Հայոց ցեղասպանության կազմակերպման և իրագործման պատասխանատվությունից, և միտում կար այն բարդելու միայն սահմանափակ քանակով անձանց (կուսակցական և կառավարական ղեկավարների) վրա: Հետաքննող հանձնաժողովները նույնպես գործում էին այդ տրամաբանությամբ:

209 **Գրիկէր,** Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, էջ 309-310:

210 **Dadrian V. , Akçam T.,** "Tehcir ve Taktil", s. 149.

211 «Պատերազմական ատեանի նոր կանոնագիրը», «Ճակատամարտ», 24 սեպտեմբեր, 1919:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻԹԹԻՀԱԴԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԾԱՎԱԼՎԱԾ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՄԱՐ

2.1 Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների դատավարությունը (1919 թ. ապրիլ-մայիս ամիսներ)

Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների[212] դատաքննությանն[213] անդրադառնալիս պետք է հաշվի առնել հետևյալ երկու հանգամանքները. նախ՝ դատավարության ժամանակ Օսմանյան կայսրության իշխանությունները, ի դեմս սուլթան Մեհմեդ 6-րդի ու վարչապետ Դամադ Ֆերիդ փաշայի վարչակազմի ներկայացուցիչների, ձգտել են հայերի զանգվածային կոտորածները կազմակերպելու մեջ մեղավոր ճանաչել միայն սահմանափակ զանգվածի՝ հանձինս Իթթիհաթ վե թերաքքի կուսակցության վերնախավի ու նրա ղեկավարած կառավարությանը, և երկրորդ. իրենք՝ երիտթուրքերը ու նրանց կողմնակիցները, ընդհակառակը, ամեն կերպ փորձել են չվարկաբեկել կուսակցության անունը՝ ձգտելով մեղքը բարդել ոչ թե կազմակերպության, այլ միայն առանձին անհատների վրա:

Այսպես՝ 1919 թ. հունվարի 28-ին Ալի Քեմալը[214] «Սաբահ» օրաթերթում գրում էր. «4 կամ 5 տարի առաջ կատարվեց պատմության մեջ նախադեպը չունեցող ոճիր, մի հանցագործություն, որը սարսափ հարուցեց համայն աշխարհում: Եթե ուզում ենք պատկերացում տալ այդ ոճրագործության մասշտաբի և պայմանների մասին, ապա պետք է խոսենք ոչ թե

212 Երիտթուրքական կուսակցության և կառավարության անդամները սկզբում դատաքննվել են միասին, սակայն դատավարության երկրորդ նիստում դատախազի պահանջով կառավարության անդամների գործի ուսումնասիրությունն առանձնացվել է: Այդպիսով՝ 1919 թ. ապրիլի 28-ից մայիսի 17-ը թվով 7 նիստում դատաքննվել են Իթթիհաթ վե թերաքքիի առաջնորդներն ու Հատուկ կազմակերպության նախագահը, իսկ 1919 թ. հունիսի 3-ից 26-ը՝ դարձյալ 7 նիստում՝ կառավարության անդամները:

213 Միություն և առաջադիմություն կուսակցության ու կառավարության անդամների դատավարությունները պատմագրության մեջ հայտնի են նաև գլխավոր դատավարություններ (Ana Davalar) անունով: Գլխավոր դատավարությունների համար 1919 թ. հուլիսի 5-ին կայացվել է մեկ ընդհանուր դատավճիռ:

214 Ալի Քեմալը 1919 թ. մարտի 4-ից մինչև մայիսի 9-ը գբաղեցրել է հանրակրթական նախարարի, իսկ 1919 թ. մայիսի 19-ից մինչև հունիսի 29-ը՝ ներքին գործերի նախարարի պաշտոնները:

5-ից 10, այլ՝ 100 հազարավոր հանցագործների մասին: Արդեն բացահայտվել է, որ իրականում էլ այդ ողբերգությունը ծրագրված է եղել Իթթիհադի կենտրոնական կոմիտեի ընդունած որոշումների հիման վրա»[215]:

1919 թ. մարտի 17-ին ներքին գործերի նախարար Ջեմալն «Ալեմդար» օրաթերթին տված հարցազրույցում արձանագրել էր, որ «իթթիհադականները 800 հազարի չափ հայեր են տեղահանել ու կոտորել», ինչպես նաև՝ փորձել առաջ քաշել թուրք հասարակ ժողովրդի և իր կառավարության անմեղության վարկածը: Ներքին գործերի նախարարը խոսում էր նաև իր կառավարության կողմից[216] իթթիհադականներին [illegible]ուժելու անհրաժեշտության մասին. «...կառավարությունը, նախ և [illegible], պարտավոր է մաքրել այն կեղտաբիծը, որ թողել է Միություն և առաջադիմություն կուսակցությունը օսմանականության վրա: Դրա համար էլ կառավարությունը տեղահանության և կոտորածների ողբերգությունների հեղինակների նկատմամբ անհրաժեշտ դատաքննություն է իրականացնելու: (...) Միություն և առաջադիմություն ասելով՝ չենք հասկանում օսմանյան ազգ: Իթթիհաթ վե թերաքքի կուսակցությունը բոլորովին այլ ավազակախմբից էր բաղկացած: Տեղահանության և կոտորածների պատճառով ոչ մի պատասխանատվություն չի ընկնում օսմանյան կառավարության և ազգի ուսերին: Կառավարությունն ու ժողովուրդը պատասխանատու կդառնան միայն այն դեպքում, եթե չդատապարտվեն տեղահանության և կոտորածների հեղինակները»[217]:

Հարկ է նշել, որ նույն Ջեմալը 1919 թ. մարտի 12-ին հանդես էր եկել հայտարարությամբ՝ շեշտելով, թե երիտթուրքերի ձերբակալություններն օրինական են, քանի որ կատարվել են Նախարարների խորհրդի կազմած օրենքի շրջանակներում, և որ «ոչ միայն Թուրքիայի, այլև ողջ մարդկության շահը պահանջում է պատժել իրենց տարօրինակ քաղաքականությամբ հայերի և հույների տարագրության պատճառ դարձած այդ չարագործներին»[218]:

Ինչ վերաբերում է իրենց՝ իթթիհադականներին, ապա վերջիններս

215 **Günel G.**, İttihat Terakki'den Günümüze Yek Tarz-ı Siyaset: Türkleştirme, Belge Yayınları, İstanbul, 2006, s. 127.

216 Խոսքը գնում է Hürriyet ve İtilâf (Ազատություն և համաձայնություն) կուսակցության անդամներից կազմված կառավարության մասին:

217 Yalnız Taktil Değil, Tehcîr de Dahil: Cemal Beyefendi'nin Beyanatı, "Alemdar", 17 Mart 1919.

218 «Ձերբակալութեանց պատճառը: Ներքին գործոց նախարարութեան յայտարարութիւնները», «Ճակատամարտ», 13-ը մարտի, 1919, N 104 (1925):

կուսակցության անդամների դատավարության ընթացքում, ըստ թուրք պատմաբան Օ. Ս. Քոջահանօղլուի, ոչ մի պայմանով չեն մատնել կուսակցության գաղտնիքները. «Իթթիհաթ վե թերաքքի կուսակցությունը հիմնվել էր որպես գաղտնի կազմակերպություն, որի անդամները Ղուրանի և վենքի վրա երդվելով՝ պատվի խոսք էին տվել մինչ մահ հավատարիմ մնալ այդ երդմանը: Նրանք կյանքի գնով անգամ չեն մատնել կուսակցության գաղտնիքները: Օրինակ՝ հարցաքննության և դատավարության ժամանակ նույնիսկ նրանք, ովքեր պետք եղածից ավելի տեղեկություններ ունեին Հատուկ կազմակերպության մասին, չեն հայտնել այդ գաղտնի կազմակերպության ոչ կազմավորմանը, ոչ էլ կողմնակիցներին վերաբերող գաղտնիքները»[219]:

Կուսակցության անդամների դատաքննության ընթացքում երիտթուրքերի բռնած այդ դիրքորոշումը չի վրիպել ականատեսների ուշադրությունից ու հարուցել հասարակության որոշ շրջանակների վրդովմունքը և քննադատվել նաև տվյալ ժամանակաշրջանի օսմանյան մամուլում: Հատկապես խիստ են արձագանքել Ստամբուլում տպագրվող «Սաբահ» և «Ժողովուրդի ձայնը» օրաթերթերը: 1919 թ. մայիսի 8-ի համարում «Սուրբ Իթթիհատ» վերնագրի տակ «Ժողովուրդի ձայնը» պարբերականը գրում էր. «Սապահ խոսելով իթթիհատական պարագլուխներու դատավարութեան մասին, կը շեշտէ, ոչ առանց զայրոյթի, այն մտայնութիւնը, որ երեւան կուգայ այդ դատավարութեան ընթացքին ամբաստանեալներու տուած պատասխաններուն մէջ, որոնցմով անոնք կը ջանան տակաւին սրբացնել Իթթիհատը, յայտարարելով, թէ ան մասնակից չէ եղած այն քստմնելի ոճիրներուն, որոնք վերածեցին ամբողջ երկիրը զարհուրելի դժոխքի մը: «Ամբաստանեալները, կը գրէ Սապահ, կրսեն թէ Իթթիհատը չէ ունեցած ոչ մէկ կապ «Միւտաֆա-ի Միլլիէ»-ի[220], «Թէշքիլաթը Մախսուսէ»-ի եւ այլ տխրահռչակ ընկերութիւններուն հետ, որոնք պատե-

219 **Kocahanoğlu O. S.**, İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması (1918-1919), s. 18.

220 1913 թ. հունվարին ազգային միասնությունն ապահովելու նպատակով հիմնված «Ազգային պաշտպանություն» ("Müdafaa-i Milliye") կազմակերպությունը 1914 թ. հանրօգուտ է համարվել Պետական խորհրդի (Şurayı Devlet) կողմից և կարևոր ծառայություններ մատուցել պատերազմի ժամանակ, տե՛ս Akçam T., İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 164. Թեև դատավարության ժամանակ իթթիհադականներն անընդհատ հերքել են իրենց կապը տվյալ կազմակերպության հետ, սակայն կուսակցության անդամների դատավարության 5-րդ նիստում մեղադրյալներից Անկարայի պատգամավոր ու Հատուկ կազմակերպության անդամ Աթիֆը խոստովանել է, որ Ազգային պաշտպանություն կազմակերպությունը դրամական օժանդակություն է ցուցաբերել Հատուկ կազմակերպությանը, տե՛ս "Takvîm-i Vekayi", No 3543, 8 Mayıs 1919, s. 31.

րազմի տարիներուն ծծեցին ոչ միայն ազգին արիւնը, այլեւ ծուծը: Անոնք կուրանան, այո՛, այս կապը, բայց ատիկա ծանօթ է ամբողջ աշխարհին: Ամբաստանեալները կըսեն նոյնպէս թէ Ընդհանուր Կեդրոնը և կամ Իթթիհատը տեղեկութիւն չունին ջարդերու եւ ժողովուրդին շահադիտութեան հետեւանքով ենթարկուած սովամահութեան մասին: (...) Կարելի՞ է միթէ գարշանք չզգալ այս լրբենի յանդգնութենէն և թանձր խաւարով պատած այս աղտոտ խղճմտանքներէն, որոնք ոչ մէկ կերպով կազդուին արդարութեան լոյսէն: Կարելի՞ է միթէ չզգալ զզվանքով լեցուն զարմանք մը, տեսնելով որ կը պաշտպանուին տակաւին այն մարդիկը, որոնք քշեցին երկիրը դէպի փորձութիւններու զարհուրելի խորխորատը: (...) Այս մարդիկը ինչ պիտի պատասխանեն արդեօք այն ծածկագիր հեռագիրներուն և փաստերուն, որ կը գտնուին ամբաստանիչ մարմնի փաստացի որոշմնագրին մէջ, և որոնք անհերքելիօրէն կը հաստատեն թէ Իթթիհատը ամենասերտ կապ ունեցած է «Թէշքիլաթը Մախսուսէ»-ին և ջարդերուն հետ: Թող ուրանան որքան կուզեն, թող պաշտպանեն ու սրբացնեն Իթթիհատը էնուոցիկ պաշտպանողականներով, արժէք չունի, որովհետեւ Իթթիհատը ալ մեռած է բարոյապէս ազգին համար»[221]:

«Ժողովուրդի ձայնը» օրաթերթի խմբագրությունը, չհամաձայնվելով «Սաբահ»-ում տպագրված վերոհիշյալ հոդվածի վերջին նախադասության հետ, անում էր հետևյալ ճիշտ դիտարկումը. «Դժբախտաբար, հակառակ Սապահի զայրոյթին ու հավաստիացումներուն, Իթթիհատը թէ՛ կապրի, եւ թէ՛ կը գործէ ամեն տեղ, նոյնիսկ հոս, Պոլսի մէջ, Սապահի քթին տակ: Որքա՜ն իրավունք ունէր կրթական նախարար Ալի Քէմալ պէյը, երբ կը գրէր Սապահին մէջ, ասկէ 1-2 ամիս առաջ, թէ՝ «որ Թուրքին մորթը քերելու ըլլաս, անոր տակէն Իթթիհատճի մը դուրս պիտի գայ»:

Բացատրութիւններն աւելորդ են»[222]:

1919 թ. մարտի 8-ին սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդեդդինի հատուկ հրամանագրով երիտթուրքական կուսակցության պարագլուխներն ու նախարարները հանձնվում են Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանին[223]: Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների դատավարությունն սկսվում է 1919 թ. ապրիլի 28-ին և շարունակվում մինչև

221 «Սուրբ Իթթիհատ», «Ժողովուրդի ձայնը» քաղաքական եւ հասարակական օրաթերթ, Կ. Պոլիս, 8 մայիս 1919, N 83-174:

222 Նույն տեղում:

223 **Փափազեան Ա.**, Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի, էջ 23:

նույն տարվա մայիսի 17-ը[224]: Դատավարության ժամանակ հեռակա կարգով մեղադրվում են 11, իսկ ներկա՝ 20 կուսակցական գործիչներ ու բարձրաստիճան պաշտոնյաներ: Դատաքննվել են ներկա հետևյալ պաշտոնյաները՝ վարչապետ Սայիդ Հալիմ փաշան, արտաքին գործերի նախարարներ Հալիլ Մենթեշեն և Ահմեդ Նեսիմին, արդարադատության նախարար Իբրահիմ Փիրիզադեն, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Քյուչյուք Թալեաթը, կուսակցության կենտրոնական կոմիտեի և Հատուկ կազմակերպության անդամ Ռըզա բեյը, կուսակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Միդհադ Ծյուքրյուն, կուսակցության կենտրոնական կոմիտեի և Հատուկ կազմակերպության անդամ Զիյա Գյորքալփը, պարենավորման նախարար և կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Քարա Քեմալը, հանրակրթական նախարար և Հատուկ կազմակերպության անդամ Ծյուքրյու բեյը, Ստամբուլի կայազորի հրամանատար և Հատուկ կազմակերպության անդամ Ահմեդ Ջևադը և Անկարայի պատգամավոր ու Հատուկ կազմակերպության անդամ Աթիֆը:

Հեռակա կարգով դատվողներն էին՝ ներքին գործերի նախարար և վարչապետ Թալեաթը, ռազմական նախարար Էնվերը, ռազմածովային նախարար Ջեմալը, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, հանրակրթական նախարար և Հատուկ կազմակերպության ղեկավարներից դոկտոր Նազըմը, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ և Հատուկ կազմակերպության Արևելյան վիլայեթների բաժանմունքի ղեկավար Բեհաեդդին Շաքիրը, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ դոկտոր Ռյուսուհին և հասարակական անվտանգության նախարար ու Հատուկ կազմակերպության անդամ Ազիզը:

Դատարանի կազմը բաղկացած էր հետևյալ անձանցից՝ նախագահ՝ ֆերիք[225] Նազըմ փաշա, անդամներ՝ գեներալ-մայորներ Զեքի, Մուստաֆա և Ալի Նազըմ փաշաներ ու գնդապետ Ռեջեփ Ֆիրդի բեյ: Դատախազ էր նշանակված Մուստաֆա Նազմի բեյը:

Առաջին նիստում (1919 թ. ապրիլի 28) դատարանի նախագահը նախ, ըստ ընդունված կարգի, հաստատում է մեղադրյալների ինքնությունը, ապա դատական քարտուղարն ընթերցում է դատարանի այն որոշումը,

224 «Թաքվիմ-ի վեքայի» պաշտոնաթերթում որպես դատավարության սկիզբ նշված 1919 թ. ապրիլի 27-ը սխալմունք է, տե՛ս **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 86.

225 Ֆերիքի զինվորական աստիճանը համապատասխանում է գեներալ-լեյտենանտի կոչմանը:

ըստ որի՝ փախուստի մեջ գտնվող և հեռակա կարգով դատվող ամբաստանյալները մեղադրվում են երկիրը պատերազմի մեջ ներքաշելու, Հատուկ կազմակերպության հետ առնչություններ ունենալու և այլ ոճրագործություններ կատարելու համար[226]: Որոշման մեջ նշվում էր նաև, որ դատարանի նախագահը վերոհիշյալ մեղադրյալներին դատարան ներկայանալու համար տվել էր 10 օր ժամանակ, բայց քանի որ չեն ներկայացել, համարվում են օրինազանցներ ու զրկվում քաղաքացիական իրավունքից, իսկ նրանց գույքը բռնագրավվում է[227]: Սույն որոշման ընթերցումից հետո նախագահը ներկայացնում է նաև մեղադրյալների դատապաշտպաններին, այնուհետև դատական քարտուղար Նեֆիքի կողմից ընթերցվում է մեղադրական ակտը[228]:

Հարկ է առանձնահատուկ անդրադառնալ 41 միավոր պաշտոնական և կիսապաշտոնական բնագիր փաստաթղթերի հիման վրա կազմված մեղադրական ակտին, քանի որ այն բաղկացած էր այնպիսի խիստ կարևոր վավերագրերից, ինչպիսիք են ծածկագիր հեռագրերն ու բարձրաստիճան պաշտոնյաների և զինվորականների տված վկայությունները[229]: Բացի այդ՝ Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների դատավարության ամբաստանագրում արձանագրված փաստերն օգտագործվել են նաև այլ դատաքննությունների ժամանակ, հանգամանք, որը մեկ անգամ ևս հաստատում է, որ հայերի կոտորածները համակարգվել են նրիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի ու կառավարության կողմից: Գլխավոր ամբաստանագրում տեղ գտած վավերագրերի մեծ մասը բաղկացած էր կուսակցության կենտրոնական կոմիտեի և կառավարության անդամների կողմից հղված գաղտնի հրահանգներից ու ծածկագիր հեռագրերից: Մեղադրական ակտում նշվում էր, որ դատական գործի հիմնական նպատակը հայերի տեղահանման ժամանակ տեղի ունեցած ողբերգության հետաքննությունն է: Մեղադրական ակտն ընդգծում էր, որ

226 "Takvîm-i Vekayi", No 3540, 5 Mayıs 1335 (1919), ss. 3-4.

227 Նույն տեղում:

228 Նույն տեղում, էջ 4-9:

229 Հարկ է նշել, որ այս վավերագրի պատմական նշանակությունը դեռ այն օրերին գիտակցվում էր ժամանակի հայկական մամուլի կողմից: «Ճակատամարտ» օրաթերթը շեշտում էր, թե սույն ամբաստանագիրը «իր չահեկան պարունակութեամբ կոչուած է շատ կարեւոր դեր մը կատարելու, իբրեւ Թուրքերու կողմէ պատրաստուած պատմական վաւերաթուղթ մը և հերքմնագիր մը բոլոր անոնց դէմ, որ յանդգնութիւն ու լրբութիւն ունեցան մասնակի քանի մը սպանութիւններ անուանելու հայկական աղէտը», տե՛ս «Եփրատ գետը կը յորդի հայոց դիակներով. պատմական կարեւոր վաւերաթուղթ մը», «Ճակատամարտ», 29 ապրիլի, 1919, N 141 (1962):

հայերի բնաջնջումը նախապես որոշվել էր Իթթիհաթ վե թերաքքի կուսակցության կենտրոնական կոմիտեի մասնրամասն քննարկումների արդյունքում: Այսպես՝ գրավոր կերպով վկայություն տված օսմանյան երրորդ բանակի հրամանատար Մեհմեդ Վեհիբ փաշան[230] հայտնել էր, թե հայերի հանդեպ կատարված վայրագություններն ու կոտորածները, ինչպես նաև՝ ունեցվածքի կողոպուտը որոշված են եղել Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից, և որ այդ ջարդերի իրականացման համար Բևհանդդին Շաքիրը[231] երրորդ բանակի շրջանում պատրաստել է հատուկ մարդասպաններ, որոնց ղեկավարել է անձամբ[232]: Ամբաստանագրում շեշտվում էր, որ Միություն և առաջադիմություն կուսակցության ղեկավարների կողմից բանտերից ազատված հանցագործներից ստեղծված Հատուկ կազմակերպության բուն նպատակն է եղել ոճրային արարքներ կատարելը, և նշվում, թե տվյալ կազմակերպությունը սերտ կապերի մեջ է եղել Իթթիհաթ վե թերաքքիի հետ, և որ սույն կազմակերպության գլխավոր պաշտոնյաները հանդիսանում էին կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամները, նաև ընդգծվում, թե Հատուկ կազմակերպության ավազակները հետագայում օգտագործվել են տեղա-

230 Ուշագրավ է, որ Մեհմեդ Վեհիբ փաշան Տրապիզոնի հայերի տեղահանության և կոտորածների դատավարության երկրորդ նիստում՝ 1919 թ. մարտի 29-ին, Բեհաեդդին Շաքիրի դեմ ցուցմունք տալու պատճառով բանտում ենթարկվել էր վերջինիս կնոջ հարձակմանը: Այդ մասին «Ճակատամարտ» օրաթերթը գրում էր. «Առջի օր թուրք կին մը բանտը երթալով Վէհիպ փաշան տեսնել կ'ուզէ: Սակայն փաշան հանրմին քովը հազիւ հասած՝ «աման, այս կինը դուրս հանեցէք, ես չեմ կրնար կնոջ մը փոխադարձել» րսելով դուրս կ'ելլէ: Այցելու կինը Պէհաէտտին Շաքիրի տիկինն է, որ վիրաւորելով փաշային՝ դատարանի մէջ, իր ամուսնի մասին ըրած մերկացումներէն, պատրաստուած է եղեր գաւազանով ծեծելու զայն», տե՛ս «Վէհիպ փաշան յարձակման կ'ենթարկուի», «Ճակատամարտ», 5 ապրիլ, 1919, N 122 (1943):

231 Հատուկ կազմակերպության անդամ Գալիբ Վարդարն իր հուշերում գրում է, թե հայերի տեղահանման մասին որոշման ընդունումից հետո Բեհաեդդին Շաքիրը դիմում է ականաւոր իթթիհադականներ Հյուսրև Սամիին և Սաբանջալր Հաքքրիին՝ առաջարկելով իր հետ մեկնել Էրզրում և մասնակցել հայերի տեղահանությանը: Նրանց հարցին, թե ինչ է լինելու հայերի ունեցվածքի և սեփականության հետագա ճակատագիրը, և թե արդյոք այդ ուղղությամբ որևէ ծրագիր կա, թե ոչ, Բեհաեդդին Շաքիրը պատասխանում է. «Ի՞նչ ծրագիր պետք է լինի, ասացինք, չէ՞, հայերին տեղահանելու ենք... մնացածը գլխի ընկեք», տե՛ս İttihat ve Terakki İçinde Dünenler, Anlatan: Galip Vardar, Yazan: Samih Nafiz Tansu, Yeni Zamanlar Yayınları, İstanbul, 2003, s. 442.

232 Հարկ է նշել, որ Վեհիբ փաշայի թղթապանակի մեծ մասը 1919 թ. սեպտեմբերին գողացվել է Ռազմական ատյանից: Այդ անհետացած փաստաթղթերը եղել են հայերի կոտորածները հաստատող պաշտոնագրեր, տե՛ս «Ժողովուրդ» քաղաքական և հասարակական օրաթերթ, 9 սեպտեմբեր, 1919, N 35 (281); «Հայկ. եղեռնին թուղթերը անյայտացած», «Ճակատամարտ», 9 սեպտեմբեր, 1919:

հանման ենթարկված հայերի բնաջնջումը կազմակերպելու նպատակով: Մեղադրական ակտը նաև անդրադառնում էր կենտրոնական կոմիտեի փաստաթղթերի վերացմանը: Ամբաստանագրում ընդգծվում էր, թե հայերի տեղահանության ընթացքում տարբեր ժամանակներում և վայրերում տեղի ունեցած հանցագործությունների հետաքննությունը բացահայտել է, որ այդ ոճիրները ոչ թե կրել են տեղական բնույթ, այլ կանխամտածվել և իրականացվել են մեղադրյալներից կազմված «հատուկ կենտրոնի» բանավոր հրահանգներով ու գաղտնի հրամաններով, և որ լիովին ապացուցվել է, թե հայերի կոտորածները կատարվել են Թալեաթի, Էնվերի և Ջեմալի անմիջական հրամաններով ու գիտությամբ: Ամբաստանագիրն անդրադառնում էր կուսակցության պատասխանատու քարտուղարների, պատվիրակների և տեսուչների այն առանցքային դերին, որ նրանք ունեցել էին Ցեղասպանության իրականացման գործում, և որպես օրինակներ մատնանշում էր Բոլուից և այլ վայրերից հայերի տեղահանությունն իրականացրած Բուրսայի պատասխանատու քարտուղար Միդհադին, ինչպես նաև՝ հայերի ջարդերի կազմակերպիչներ Բալըքեսիրի տեսուչ Նազըմին, Չանքըրըի պատասխանատու քարտուղար Ջեմալ Օղուզին, Անկարայի պատասխանատու քարտուղար Նեջաթիին և այլոց[233]: Մեղադրական ակտում ընդգծվում էր, որ իթթիհադականներն օգտվել են Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից՝ իրենց գաղտնի ծրագրերը (իմա՝ Հայոց ցեղասպանությունը) իրականացնելու համար: Ամբաստանագրում հերքվում էր նաև Մեծ եղեռնի հեղինակների և Ցեղասպանությունը ժխտող թուրք պատմաբանների այն «փաստարկը», թե տեղահանությունն իրականացվել է որպես ռազմական միջոցառում: Ըստ մեղադրական ակտի՝ հաշվի առնելով այն փաստը, որ, օրինակ, Բոլուն[234] չէր համարվում պատերազմական գոտի, անհրկբայորեն հավաստում էր, որ հայերի բռնագաղթն ուղղված էր կուսակցության նպատակների և մտադրությունների իրականացմանը. նման գործողությունները չէին բխում ռազմական անհրաժեշտությունից: Դրանք ոչ պատժիչ գործողություններ էին, ոչ էլ կարգապահական:

Մեղադրական ակտը հատուկ անդրադառնում էր նաև հայերի բնաջնջման մեթոդներին, հայերի ունեցվածքի յուրացմանը և կատարված չարա-

233 Կուսակցության պատասխանատու քարտուղարների դատաքննությունն իրականացվել է 1919 թ. հունիսի 21-ից մինչև 1920 թ. հունվարի 3-ը, դատավճիռը կայացվել է 1920 թ. հունվարի 8-ին: Տե՛ս «Թաքվիմ-ի Վաքայի» պաշտոնաթերթի 3586, 3589, 3596 և 3772 համարները:

234 Գավառ Քաստամոնուում:

շահումներին: Ամբաստանագրում շեշտվում էր, որ երիտթուրքերի կուսակցության անդամների մեծ մասը հարստացել էր հայերի անշարժ ու շարժական գույքերի կողոպտման հաշվին[235]:

Ամբաստանագրում նշվում էր, որ կուսակցությունն ու կառավարությունը բացահայտ հրաման էին արձակել հայերի կոտորածների համար: Որպես ապացույց բերվում էր այն ծածկագիր հեռագիրը, որում հրահանգվում էր ոչնչացնել հեռացված հայերին: Փաստաթղթում ընդգծվում էր, որ հայերի կոտորածների գործում, կուսակցության կազմակերպության ցանցի հետ մեկտեղ, ներգրավված են եղել նաև քաղաքացիական և ռազմական իշխանությունները, և որ ջարդերն ուղղորդվել ու վերահսկվել են Ներքին գործերի նախարարության և անձամբ նախարար Թալեաթի կողմից: Ամբաստանագրում շեշտվում էր նաև, որ հայերին պաշտպանել համարձակվող պաշտոնյաներին ու հասարակ մարդկանց սպառնացել էին պաշտոնազրկմամբ և անգամ մահապատժով: Որպես օրինակ էր մատնանշվում երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քյամիլի ստորագրությունը կրող հեռագիրը, ըստ որի բովանդակության՝ յուրաքանչյուր մահմեդական, ով կպաշտպանի որևէ հայի, կախաղան կբարձրացվի հենց իր տան դիմաց, իսկ նրա տունը հիմնովին կհրկիզվի: Եթե հային պաշտպանողը պետական պաշտոնյա է, ապա նա կհեռացվի աշխատանքից ու կհանձնվի Ռազմական դատարանին:

Գլխավոր մեղադրական ակտում բերված էին նաև տեղահանված ու սպանված հայերի թվի մասին մի շարք վիճակագրական տվյալներ: Ըստ ամբաստանագրի՝ Անկարայից տեղահանվել էր 61 հազար, իսկ Դիարբեքիրից՝ 120 հազար հայ[236]:

Ամբաստանագրում անդրադարձ կար նաև մեղադրյալների ու վերջիններիս դատապաշտպանների այն պնդմանը, թե Ռազմական դատարանն իրավասու չէր դատելու նրանց, և որ նրանք պետք է դատվեն Գերագույն դատարանի կողմից: Դատախազը համարում էր, թե նախարարների ոճրագործությունները չեն կատարվել ի պաշտոնե, այլ եղել են սովորական հանցագործություններ:

Ըստ մեղադրական ակտի՝ գլխավոր հանցագործներ էին համարվում Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Ջևադը, Բեհաեդդին Շաքիրը, դոկտոր Նազըմը, Աթիֆը, Ռըզա և Ազիզ բեյերը, իսկ մասնակիցներ՝ Միդհաթ Շյուքրյուն, դոկտոր Ռեշիտին, Քյուչյուք Թալեաթը, Ջիյա Գյոքալփը, Քարա Քեմալը, Ահմեդ Նեսիմին, Շյուքրյուն, Հալիլը և Սայիդ Հալիմը:

Հարկ է նշել, որ Ռազմական արտակարգ ատյանի՝ նախարարներին դատելու իրավասության խնդիրը մեղադրյալների դատապաշտպանների կողմից բարձրացվում է դատավարության առաջին իսկ նիստում: Փաստարանների կոլեգիայի նախագահ և Իրավարանական դպրոցի պրոֆեսոր Ջելալեդդին Արիֆի[237] գլխավորությամբ ամբաստանյալների շահերը պաշտպանող 16 դատապաշտպաններն այդպիսով ձգտում էին ժամանակ շահել և դատը հետաձգել : Մեղադրյալների փաստարաններն էին Հասան Հայրի Թանը և Ջելալեդդին Արիֆը, ովքեր պաշտպանում էին ամբաստանյալ Սայիդ Հալիմին, Էսադը, Քյազըմը և Թահսինը՝ Հալիլ Մենթեշեին, Սաքին ու Էսադ Մուհլիսը՝ Ահմեդ Նեսիմիին, Սադեդդին Ֆերիդը՝ Շյուքրյուին, Մահմուդ Մահիրը, Յուսուֆ Ջեմալն ու Քադրին՝ Իբրահիմ Փիրիզադեին, Սադեդդին Ֆերիդը, Ահմեդ Ռամիզը և Մահմուդ Մահիրը՝ Միդհաթ Շյուքրյուին, Հայդար Ռըֆաթն ու Իսմայիլ Թևֆիկը՝ Ջիյա Գյոքալփին, Միշոն Վենտուրան՝ Ջևադին և Ալի Հայդարը՝ Մուսա Քյազիմին և Հաշիմին[238]:

Դատապաշտպանները դատավարության և՛ առաջին, և՛ երկրորդ նիստերի ընթացքում հարցականի տակ են դնում ռազմական արտակարգ ատյանների՝ նախարարների նկատմամբ դատաքննություն իրականացնելու իրավասությունը՝ այն վերապահելով Գերագույն դատարանին և իրենց առարկությունները փորձելով հիմնավորել օսմանյան Սահմանադրության մի շարք կետերով: Պաշտպանող կողմը մասնավորապես վկայակոչում էր Սահմանադրության 31-րդ հոդվածը, համաձայն որի՝ հանցագործությունն ի պաշտոնե կատարելու դեպքում նախարարներին իրավազոր էր դատելու միայն Գերագույն դատարանը: Ըստ պաշտպանող կողմի՝ հանցագործության՝ անձնական բնույթ ունենալու դեպքում անգամ ընդդատությունը պետք է անցներ քրեական և ոչ թե ռազմական դատարաններին: Որպես փաստարկ բերվում էր նաև այն հանգամանքը, թե 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին նախարարներին հարցաքննած օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնախումբը որոշում էր կայացրել նրանց գործերն ուղարկել Գերագույն դատարան[239]:

235 Թուրք հայտնի պատմաբան Թարըք Զաֆեր Թունայան նույնպես նշում է, թե հայերի ունեցվածքի զգալի մասն անցել էր երիտթուրքական կուսակցությանը, տես **Tunaya T. Z.**, Türkiye'de Siyasal Partiler, cilt III, s. 264.

236 "Takvîm-i Vekayi", No 3540, 5 Mayıs 1335 (1919), s. 7.

237 Հետագայում քեմալական շարժմանը մասնակցած Ջելալեդդին Արիֆը դարձել է Անկարայի Միլլի մեջլիսի (Ազգային ժողովի) պատգամավոր, ապա՝ Միլլի մեջլիսի երկրորդ նախագահր, ավելի ուշ՝ նաև՝ արդարադատության նախարար:

238 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 70.

239 "Takvîm-i Vekayi", No 3540, 5 Mayıs 1335 (1919).

Ռազմական ատյանը գլխավոր դատավարության առաջին (1919 թ. ապրիլի 28) և երկրորդ (1919 թ. մայիսի 4) նիստերի ժամանակ հերքեց դատապաշտպանների փաստարկները՝ Ռազմական ատյանի անհրաժեշտության վերաբերյալ: Նախ մերժվում էր հանցագործությունների՝ պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված լինելու փաստարկը. ընդգծվում էր, որ մեղադրյալները դատվում են ոչ թե որպես նախարարներ, այլ՝ գաղտնի ու դավադիր կազմակերպության անդամներ[240]:

Ի պատասխան պաշտպան փաստաբանների՝ քրեական (և ոչ թե ռազմական) ատյանի իրավասությունը պաշտպանող փաստարկի՝ Ռազմական դատարանը նշում էր, որ շարունակում է գործել դեռևս Իթթիհադի իշխանության տարիներին հայտարարված ռազմական դրությունը, որի դեպքում, ըստ Սահմանադրության՝ ռազմական դրության վերաբերող 113-րդ հոդվածի՝ բոլոր քաղաքացիական օրենքները ժամանակավորապես կասեցվում են[241]:

Դատարանը նմանապես մերժում է ամբաստանյալների այն փաստարկը, ըստ որի, օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնախումբը որոշել էր նախարարների գործերն ուղարկել Գերագույն դատարան: Ռազմական ատյանի հերքման համաձայն՝ սուլթանի կողմից խորհրդարանի լուծարման պայմաններում (1918 թ. դեկտեմբերի 21) Հինգերորդ հանձնախմբի անդամների քվեարկությունը չէր կարող օրինական համարվել: Եվ ի վերջո՝ Ռազմական ատյանին մեղադրյալներին դատելու իրավունք էր շնորհվել սուլթանի հատուկ ֆերմանով (հրովարտակով)[242]:

Կուսակցության անդամների դատավարության երկրորդ նիստում ևս (1919 թ. մայիսի 4) դատարանը հերքում է Ռազմական ատյանի իրավասության խնդիրը հարցականի տակ դնող փաստարկները՝ ընդգծելով, որ այդ որոշումն ընդունվել է «առանց շեղվելու Ղուրանի փառապանծ օրենքներից և լի է Աստծո հանդեպ երկյուղածությամբ»[243]:

Ռազմական ատյանների՝ կուսակցության անդամ նախարարներին դատելու իրավասության խնդիրն արծարծվել է նաև տվյալ ժամանակաշրջանում Ստամբուլում հրապարակվող թերթերում: Հիշատակման է արժանի հատկապես «Ժողովուրդի ձայնը» քաղաքական-հասարա-

240 Նույն տեղում:

241 Նույն տեղում:

242 Նույն տեղում:

243 "Takvîm-i Vekayi", No 3543, 8 Mayıs 1335 (1919).

կական օրաթերթը, որի էջերում տպագրվել են խնդիրը լուսաբանող մի շարք հոդվածներ: 1919 թ. մայիսի 3-ի համարում այս հարցի շուրջ իրենց տեսակետն են արտահայտում երկու հայտնի եվրոպացի իրավագետներ: Առաջինը, որը չի ցանկացել հրապարակել իր անունը, շեշտում է մեղադրյալների ոչ թե որպես նախարար, այլ իբրև գաղտնի կազմակերպության անդամ դատվելու հանգամանքը: Նույն կերպ է խնդիրը մեկնաբանում նաև երկրորդ մասնագետը՝ ֆրանսիացի ճանաչված փաստաբան Սեզար Բոնիեն[244]:

Նշված պարբերականի հաջորդ համարում հայ իրավաբան Հմայակ Խոսրովյանը այս հարցի առնչությամբ զուգահեռներ է անցկացնում ֆրանսիական օրենսդրության հետ: Մասնագետը նշում է, թե նախարարներին դատելու իրավասությանը վերաբերող համանման օրենք առկա է նաև Ֆրանսիայի Սահմանադրության մեջ, սակայն վերոհիշյալ օրենքը ոչ թե պարտադրում է, այլ՝ կարելիություն ենթադրում: Անդրադառնալով երիտթուրքերի կուսակցության անդամների դատավարությանը՝ հայ իրավաբանը պաշտպան փաստաբաններից պահանջում է մատնանշել որևէ բացառիկ օրենք, որը կհաստատի, թե սովորական դատարաններն իրավասու չեն դատելու նախարարներին: Որպես վերջնական փաստարկ՝ Խոսրովյանը հղում է կատարում դատարանի կողմից արդեն նշված այն փաստարկին, թե իթթիհադականների օրոք հայտարարված ու դեռևս շարունակվող ռազմական դրությունը կասեցնում է քաղաքացիական, այդ թվում և՝ սահմանադրական բոլոր օրենքները[245]:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ դատապաշտպանների բերած այն փաստարկը, թե նախարարները հանցավոր էին ի պաշտոնե, համապատասխանում էր իրականությանը. թեև հայերի բնաջնջման որոշումն ընդունվել էր Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի գաղտնի նիստերում, սակայն Հայոց ցեղասպանության պատասխանատվությունն ընկնում էր նաև տվյալ ժամանակաշրջանի օսմանյան կառավարության ամբողջ պետական ապարատի վրա, քանի որ «Տեղահանության մասին» որոշումը հաստատվել էր Նախարարների և Պետական խորհուրդների կողմից, իսկ հայերի տեղահանությունն ու ոչնչացումն՝ իրականացվել պետական օղակների և իշխանության միջոցով:

Կուսակցության և կառավարության անդամների երկրորդ նիստում՝

244 «Պատերազմական Ատեանը իրաւասո՞ւ է դատելու իթթիհատական բորենիները (մեր հետաքննութիւնը)», «Ժողովուրդի ձայնը», 3 մայիս, 1919, N 79-170:

245 «Պատերազմական Ատեանը իրաւասո՞ւ է դատելու իթթիհատական բորենիները (մեր հետաքննութիւնը)», «Ժողովուրդի ձայնը», 4 մայիս, 1919, N 80-171:

1919 թ. մայիսի 4-ին, գլխավոր դատախազ Մուստաֆա Նազմին հայտարարում է, որ նախարարների հարցաքննությունը դեռևս ավարտված չէ, և պահանջում հետաձգել վերջիններիս դատաքննությունը[246]: Դատարանի կազմն առանձնացնում է կառավարության անդամ եղած մեղադրյալների դատական գործերը և դրանք հետ ուղարկում դատախազություն: Այս մեղադրյալները պետք է դատվեին այն նախարարների հետ, որոնց հարցաքննությունը դեռ չէր ավարտվել, կամ ովքեր դեռ չէին ձերբակալվել[247]: Այդպիսով՝ մինչև 1919 թ. մայիսի 17-ը ներկա կարգով քննվում են միայն Միդհաթ Շյուքրյուի, Զիյա Գյոքալփի, Քյուչյուք Թալեաթի, Ռըզայի, Աթըֆի ու Զևադի, իսկ հեռակա կարգով՝ բժիշկներ Նազըմի, Բեհաեդդին Շաքիրի, Ռյուստիիի, ինչպես նաև՝ Ազիզի գործերը:

Կուսակցության անդամների դատավարության ժամանակ մեղադրյալները դատարանի նախագահին տված հարցերին պատասխանելիս տալիս են միանման ցուցմունքներ: Այս առումով մեծ դեր էր խաղացել այն, որ, ինչպես արդեն նշել ենք, ամբաստանյալներին բանտում հնարավորություն էր տրվել իրար հետ զրուցել ու քննարկել իրավիճակը և համադրել ապագայում իրենց կողմից տրվելիք ցուցմունքները: Հատկապես առաջին նիստերի ընթացքում ամբաստանյալները տալիս են խուսանավող պատասխաններ, միաբերան ասում, թե տեղյակ չեն եղել հայերի կոտորածների մասին, ձևացնում, թե չեն հասկանում նախագահի հարցերը, ասում, թե բոլորովին չեն հիշում այն ժամանակվա դեպքերը[248]:

Սակայն դատավարության հետագա նիստերի ժամանակ ամբաստանյալները չեն կարողանում շարունակել այդ ռազմավարությունը: Ռազմական ատյանի կազմը, տարբեր մեթոդների դիմելով, կարողանում է կոտրել նրանց համառությունը: Կուսակցության անդամների դատավարության վերջին նիստերում դատարանը կիրառում է խաչաձև հարցաքննության մեթոդը, անսպասելիորեն որպես փաստ ընթերցել է տալիս մեղադրյալների սեփական ստորագրությունը կրող ծածկագիր հեռագրեր կամ բանավոր ու գրավոր վկայություններ: Այս բոլոր մեթոդներն արդյունավետ են լինում, և մեղադրյալները, հրաժարվելով կոշտ ժխտողական դիրքորոշումից, սկսում են հայտնել որոշ կարևոր տեղեկություններ:

Այսպես՝ դատավարության վեցերորդ նիստի ժամանակ (1919 մայիսի

246 "Takvîm-i Vekayi", No 3543, 8 Mayıs 1335 (1919).

247 **Akçam T.**, Ermeni Tabusu Aralanırken Diyalogtan Başka Çözöm Var mı?, s. 99.

248 Դատավարության ընթացքում բազմաթիվ հայեր հեռագրեր են հղել Ռազմական դատարանին՝ հայտնելով, որ որոշ ամբաստանյալներ սուտ են խոսում, տես **Tunaya T. Z.**, Türkiye'de Siyasal Partiler. , cilt III, s. 676.

14) Հատուկ կազմակերպության անդամ Աթիֆը խոստովանում է, որ կուսակցության կենտրոնական կոմիտեն օժանդակել է Թեշքիլյաթ-ը մահասուսային[249]: Նույն նիստում վերոնշյալ մեղադրյալը հաստատում է նաև Հատուկ կազմակերպության ջոկատների՝ բանտից հանված հանցագործներից կազմավորված լինելու փաստը[250]:

1919 թ. ապրիլի 10-ին Յոզղատի հայերի տեղահանության և կոտորածների դատավճռով կախաղան բարձրացված Բողազլրյան գավառի կայմակամ Մեհմեդ Քեմալի մահապատժից հետո Թուրքիայում լարվում է ներքաղաքական մթնոլորտը: 1919 թ. մայիսի 15-ին, երբ Հունաստանը գրավում է Իզմիրը, արդեն իսկ լարված մթնոլորտն ավելի է շիկանում: 1919 թ. մայիսի 20-ից մինչև 23-ը զանգվածային ցույցեր են կազմակերպվում Ստամբուլում: Քաղաքում անգամ լուրեր էին տարածվել, թե այն կալանատունը, որում արգելափակված էին բարձրաստիճան պաշտոններ զբաղեցրած մեղադրյալները, այսինքն՝ «Բեքիրաղա բյուլյուղու» կոչված բանտը, զինված հարձակման էր ենթարկվելու ճիշտ այնպես, ինչպես Բաստիլը՝ ժամանակին[251]: Ի դեպ՝ 1919 թ. մայիսին այս բանտում արդեն կալանավորված էին առնվազն 250 հոգի[252]: 1919 թ. մայիսի 23-ին Ստամբուլում տեղի է ունենում դատավարության դեմ ուղղված ամենազանգվածային ցույցը, որին, ըստ որոշ տվյալների, մասնակցում են 200 հազար հոգի. նրանց մեծ մասը իթթիհադական էր[253]: Այս ցույցերը վկայում են, որ երիտթուրքերը դեռ շարունակում են մեծ ուժ ներկայացնել երկրում: Այդ մասին օսմանյան «Փեյամ» օրաթերթը գրել է. «Իթթիհատը մեռնելու վրա էր, եթե չլինեին Իզմիրի դեպքերը»[254]: Վարչապետ Դամադ Ֆերիդի կա-

249 "Takvîm-i Vekayi", No 3557, 25 Mayıs 1335 (1919), s. 102.

250 Նույն տեղում, էջ 103: Այդ մասին իր հուշերում վկայում է նաև Ֆալիհ Ռըֆքը Աթայը, որը տեղեկանալով, թե Իթթիհադի կենտրոնական կոմիտեին կից կազմվում են քաղաքացիական անձանցից բաղկացած խմբեր, և որ այդ գործը վերահսկվում է դոկտոր Նազըմի կողմից, վերջինիս խնդրում է իրեն էլ ներգրավել այդ հրոսակախմբերի կազմում: Սակայն Նազըմը մերժում է՝ պատասխանելով. «Մենք հրոսակախմբերի համար բանտերից ենք մարդ վերցնում: Դա քեզ պես երիտասարդ տղաների տեղը չէ»: «Ես որևէ բան չհասկացա մարդասպանների այդ բանակից»,-նշում է Ֆ. Ռ. Աթայը, տես **Atay F. R.**, Zeytindağı, s. 38.

251 **Dadrian V.**, Ulusal ve Uluslararası Hukuk Sorunu Olarak Jenosit, s. 67. «Բեքիրաղա բյուլյուղու» կալանավայրը հսկվում էր նաև բրիտանացիների և ֆրանսիացիների կողմից, տես **Şimşir B.**, Malta Sürgünleri, s. 113.

252 **Şimşir B.**, Malta Sürgünleri, s. 96.

253 **Sarıhan Z.**, Kurtuluş Savaşı Günlüğü, s. 263.

254 «Իթթիհատը յարութիւն կ'առնէ», «Ճակատամարտ», 14 օգոստոս 1919, N 232

ռավարությունը լարվածությունը մեղմելու նպատակով ազատ է արձակում վերոհիշյալ կալանավայրում արգելափակված 41 բանտարկյալների, ովքեր կասկածվում էին հատկապես հայերի կոտորածների հետ առնչություն ունենալու մեջ[255]: Դամադ Ֆերիդը նաև որոշում է ժամանակավորապես դադարեցնել կուսակցության անդամների դատաքննությունը:

Այս բոլոր իրադարձությունների ազդեցության տակ Մեծ Բրիտանիայի գերագույն կոմիսարի տեղակալ, ծովակալ Վեբը որոշում է «Բեքիրաղա բյոլյուղյու» բանտում արգելափակված մյուս կալանավորներին տեղափոխել ավելի ապահով մի վայր[256], քանի որ Մեծ Բրիտանիան սկսել էր չվընտահել թուրքական դատարաններին, բացի այդ՝ մտադիր էր սեփական դատարանի միջոցով դատապարտել պատերազմական հանցագործներին: Ծովակալ Վեբը շատ շտապ պատրաստում է ամենավտանգավոր հանցագործների ցուցակը: 59 հոգուց բաղկացած այդ ցուցակում տեղ են գտնում առաջինը Մալթա աքսորվելիք անձանց անունները[257]: 1919 թ. մայիսի 28-ին անգլիացիները 67 բանտարկյալի «Բեքիրաղա բյոլյուղյու» բանտից նավով տեղափոխում են Մալթա կղզի[258]: Վերջին պահին գեներալ Միլնը (Մեծ Բրիտանիա) նավ է նստեցնում ևս 11 հանցագործի[259]: Աքսորյալների առաջին խումբը մեծ մասամբ բաղկացած է լինում իթթիհադական հանցագործներից: Մեծ Բրիտանիային հանձնված ամբաստանյալների մեջ էին նախկին վարչապետ Սայիդ Հալիմ փաշան, հանրային գործերի նախկին նախարար Աբբաս Հալիմ փաշան, նախկին շեյխ-ուլ-իսլամ Հայրի էֆենդին, արտաքին գործերի նախկին նախարար Ահմեդ Նեսիմին, արդարադատության նախկին նախարարներ Հալիլը և Իբրահիմը, ներքին գործերի նախկին նախարար Իսմայիլ Ջանփոլադը, հանրային գործերի նախկին նախարար Ալի Մյունիֆը, հանրակրթական նախկին

(2053):

255 **Dadrian V.**, Ulusal ve Uluslararası Hukuk Sorunu Olarak Jenosit, s. 170.

256 Մեծ Բրիտանիան սկզբում մտադրություն ուներ Մալթայից բացի որպես աքսորավայր օգտագործել նաև Հնդկաստանն ու Եգիպտոսը, տես **Şimşir B.**, Malta Sürgünleri, s. 133.

257 Նույն տեղում, էջ 96.

258 Բրիտանացիների կողմից պատերազմական հանցագործների աքսորը Մալթա սկսվել է դեռևս 1919 թ. մարտին, երբ այստեղ էր արգելափակվել վեցերորդ բանակի նախկին հրամանատար Ալի Իհսան փաշան: Թուրք բարձրաստիճան պաշտոնյաների աքսորը Մալթա շարունակվել է մինչև 1920 թ. նոյեմբեր: 20 ամսվա ընթացքում այստեղ են տեղափոխվել ընդհանուր թվով 144 հանցագործներ, տես նշվ. աշխ. 89-րդ և 197-րդ էջերը:

259 Նույն տեղում, էջ 102:

նախարար Ծյուքրյուն և պարենավորման նախկին նախարար Քարա Քեմալը[260]:

Հարկ է նշել, որ Մալթա աքսորյալների մեջ են լինում նաև տվյալ պահին Ռազմական արտակարգ ատյանի կողմից դատաքննվող մի քանի մեղադրյալներ: Վերջիններիս՝ անգլիացիներին հանձնվելու մասին դատարանին է հայտնում Ստամբուլի պահնորդ, գեներալ-մայոր Սեյիդ փաշան, որի՝ Ռազմական ատյանին հղած տեղեկագրում նշված էր, թե ամբաստանյալները 1919 թ. մայիսի 28-ին՝ չորեքշաբթի օրը՝ ժամը 2:30-ին, հանձնվել են Մեծ Բրիտանիայի հրամանատարությանը[261]: Վերոնշյալ գրությունը դատարանում ընթերցվում է կառավարության անդամների դատաքննության առաջին նիստում՝ 1919 թ. հունիսի 3-ին: Դատարանի նախագահը հարցնում է դատախազի կարծիքը: Վերջինս առաջարկում է առանձնացնել Մալթա աքսորված մեղադրյալների դատական գործերը[262]:

Այդպիսով՝ վերոհիշյալների թղթապանակներն առանձնացվում են՝ հետագայում քննվելու նպատակով, սակայն նրանք այդպես էլ մնում են անպատիժ: Թեև Մեծ Բրիտանիան սկզբում իրոք վճռականորեն մտադրված է լինում դատապարտել Մալթա աքսորված պատերազմական հանցագործներին, այդ թվում նաև՝ Հայոց ցեղասպանության պատասխանատուներին, սակայն հետագայում նրա վճռականությունը հետզհետե թուլանում է, և Մեծ Բրիտանիան Ցեղասպանության ոճրագործներին ի վերջո փոխանակում է անգլիացի ռազմագերիների հետ: Դեպքերի այդ զարգացումը պայմանավորված է եղել նախ Թուրքիայում ազգայնական շարժման ծավալման հետ: Բացի այդ, Մեծ Բրիտանիային անհանգստացնում էին թե՛ թուրք-բոլշևիկյան կապերը, և թե՛ այն, որ քեմալականների հետ փորձում էր գաղտնի կապեր հաստատել և Մեծ Բրիտանիայի թիկունքում նրանց հետ համաձայնության գալ նաև իր դաշնակից Ֆրանսիան: Այսպես, թուրքական «Աքշամ» օրաթերթը 1921 թ. մայիսի սկզբին գրում էր, թե Ֆրանսիայում Անկարայի դեսպան Բեքիր Սամիին Լոնդոնում հաջողվել էր ազատ արձակել տալ Մալթայի աքսորյալներին, իսկ Հռոմում Թուրքիայի ներկայացուցիչ Օսման Նիզամի փաշան հեռագրել էր, որ Մալթայի կալանավորներն աքսորավայրից հասել են Իտալիա: Ազատ արձակվածների այդ առաջին քարավանը բաղկացած էր 40 հոգուց, որոնցից 33-ը

260 **Ata F.**, İşgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, s. 206.

261 Նույն տեղում, էջ 205-206:

262 "Takvîm-i Vekayi", No 3571, 13 Haziran 1919, s. 128.

գնացել էր Տարանտո, իսկ 7-ը՝ Սիցիլիա[263]: 1921 թ. մայիսի 19-ին Մալթայի 21 աքսորյալներ «Ֆրանց Ֆերդինանդ» շոգենավով վերադարձել էին Կոնստանդնուպոլիս[264]:

Մեծ Բրիտանիայի կողմից դատավարություն կազմակերպելու խնդրում ի հայտ եկած արգելքները չէին կրում միայն քաղաքական բնույթ: Հիմնական խնդիրներից մեկն էր նաև ոճրագործությունները հաստատող ապացույցներ գտնելու հարցը: Այսպես՝ 1920 թ. կեսերին Ստամբուլում Մեծ Բրիտանիայի Գերագույն կոմիսարության քաղաքական իրավունքի մասնագետ Լամբը մի բացատրագիր է ներկայացնում, որում մեկ առ մեկ նշվում են Հայոց ցեղասպանության պատասխանատուներին պատժելու համար անհրաժեշտ ապացույցներ գտնելու հարցում առաջացած դժվարությունները՝ 1. կենտրոնական կառավարության կամ նահանգապետարանների իրավասուների կողմից տրված հրամանների կամ հրահանգների վերաբերյալ փաստաթղթեր գտնելու անկարելիությունը, 2. դաշնակից պետությունների վարանումը՝ կոտորածների կազմակերպիչներին դատապարտելու հարցում, 3. վիլայեթներում հասուն հայ տղամարդկանց մեծ մասի և գրեթե բոլոր մտավորականների սպանված լինելը և այլ հանգամանքներ[265]:

Անգլիացիները անհրաժեշտ փաստաթղթերը գտնելու հույսով դիմում են նաև ԱՄՆ-ին, քանի որ վերջինս տիրապետում է կարևոր արխիվային նյութերի, սակայն Միացյալ Նահանգները ևս չի ցանկանում աջակցել Մեծ Բրիտանիային[266]:

Թուրք ամբաստանյալների՝ Մալթա աքսորվելուն հաջորդած ամիսներին քաղաքական մթնոլորտը Թուրքիայում սկսում է փոխվել հօգուտ քեմալականների: Վերջիններս հետզհետե ավելի հզորանում են, իսկ Ստամբուլի կառավարությունը՝ թուլանում:

Քեմալական շարժումն իրականում առաջնահերթ ուղղված է եղել ոչ թե մեծ տերությունների, Օսմանյան կայսրությունը մասնատել և գրավել ցանկացող օտար ուժերի դեմ, այլ՝ Թուրքիայի ազգային փոքրամասնությունների, ինչն առաջինն ապացուցում է Դողան Ավջըօղլուն[267]: Այս

263 «Մալթայի աքսորականները կը վերադառնան», «Ճակատամարտ», 6 մայիս, 1921:

264 «Լուսաբանութիւններ Մալթայի աքսորեալներու ազատ արձակման մասին», «Ճակատամարտ», 21 մայիս, 1921:

265 **Dadrian V.**, Ulusal ve Uluslararası Hukuk Sorunu Olarak Jenosit, ss. 69-70.

266 **Hür A.**, Malta Sürgünleri'ni Nasıl Bilirsiniz, "Taraf", 28 Şubat 2010.

267 **Avcıoğlu D.**, Millî Kurtuluş Tarihi 1835den-1995e, I. Cilt,Tekin Yayınları, İstanbul, 1996.

տեսակետին են նաև թուրք պատմաբաններ Ֆիքրեթ Բաշքայան, Բասքըն Օրանը և Թաներ Աքչամը[268]: Ինչպես, օրինակ, նշում է Թ. Աքչամը. «Դա բացահայտ երևում է թուրք ազգային պայքարի ջատագովը եղած «Իրավունքի պաշտպանության» ընկերությունների (Müdafaa-i Hukuk Cemiyetleri) ստեղծման ակունքներում ու կայացրած որոշումներում: Եթե հայացք գցենք այն շրջանների վրա, որտեղ հիմնվել են վերոհիշյալ կազմակերպությունները, ապա կտեսնենք, որ դրանք հիմնվել են այնտեղ, որտեղ եղել է հայկական կամ հունական վտանգ: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարի կնքումից հետո մինչև նույն տարվա վերջը հիմնված առաջին 5 կազմակերպություններից 3-ը ստեղծվել են ընդդեմ հայկական փոքրամասնության, 2-ն էլ՝ հունական»[269]:

Ազգայնական շարժումը նախաձեռնվել է Միություն և առաջադիմություն կուսակցության կողմից: Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Իթթիհաթ վե թերաքքի կուսակցության կենտրոնական կոմիտեն մանրամասն ծրագրեր է մշակել՝ պատերազմը տանուլ տալու դեպքում ձեռնարկվելիք քայլերի մասին[270]: Այդ ծրագրերից մեկն էլ նախատեսում էր, որ պարտության դեպքում զինված պայքարը շարունակվելու էր Թուրքիայի ներքին շրջաններում: Խոսքը երկարատև դիմադրության մասին էր[271]: Թալեաթ փաշան 1918 թ. սեպտեմբերին Գերմանիա կատարած այցից վերադառնալիս սեփական աչքով է ականատես դառնում բուլղարական բանակի կործանմանը: Թալեաթը Ստամբուլ է վերադառնում՝ լիովին վստահ, որ պատերազմն արդեն տանուլ է տրված, և անցնում դեռևս պատերազմի սկզբին մշակված ծրագրի իրագործմանը: Մուդրոսի զինադադարի կնքումից մեկ օր անց՝ 1918 թ. հոկտեմբերի 31-ի գիշերը, Թալեաթն իր տուն է հրավիրում իթթիհադականներ Քարա Քեմալին ու Քարա Վասըֆին և ասում. «Տեսե՛ք, ձեզ ինձ մոտ կանչելու հիմնական պատճառը Մուստաֆա Քեմալն է: Պայմանները շատ ծանր են: Այս խիստ պայմանների դեմ պետք է ինչ-որ քայլեր ձեռնարկել, բայց ով է դա անելու: Պետք է մի ամուր ձեռք: Օրինակ՝ Մուստաֆա Քեմալ փա-

268 **Авакян А.**, Черкесский фактор в Османской империи и Турции, (вторая половина XIX-первая четверть XX вв.), Ереван, "Гитутюн", 2001, сс. 250-251.

269 **Akçam T.**, Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu, Su Yayınları, İstanbul, 2001, ss. 195-196.

270 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Zürcher E.**, The Unionist Factor. The Role of Committee of Union and Progress in Turkish National Movement 1906-1926, Brill, Leiden, 1984.

271 **Akçam T.**, İnsan Hakları ve Ermeni Sorunu, ss. 223-224.

շան... Նա մաքուր անցյալ ունի: Ժողովուրդն էլ է սիրում նրան: Կարծում եմ, որ Մուստաֆա Քեմալ փաշան մի կարևոր գործ է ձեռնարկելու: Նրան պետք է օգնել»[272]:

Թալեաթը նրանց հաղորդում է, որ իրադրության մասին տեղյակ է նաև կուսակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Միդհադ Նյուբրյուն, որը հետևելու է իրավիճակին: Այս հանդիպումից որոշ ժամանակ անց հիմնվում է ազգայնական շարժման մեջ կարևոր դերակատարում ունեցած Քարաքոլ գաղտնի կազմակերպությունը[273]:

Դարձյալ նույն ժամանակաշրջանում փոխվում է նաև Հատուկ կազմակերպության անվանումը, և Թեշքիլյաթ-ը մահմուսան վերածվում է Ընդհանուր իսլամական աշխարհի հեղափոխական կոմիտեի (Umumi İslam Alemi İhtilal Komitesi), որի կազմավորման հիմնական նպատակն է դառնում Հայոց ցեղասպանության պատճառով հետաքննության մեջ գտնվող Հատուկ կազմակերպության անդամների պաշտպանությունը[274]:

Իրավունքի պաշտպանության առաջին կազմակերպությունները հիմնվել են անմիջականորեն Թալեաթ փաշայի ու Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ[275]:

Քանի որ ազգայնական շարժման ձևավորման ժամանակ թուրքերը, ի դեմս իթթիհադականների, մեղադրվում են քրիստոնյա բնակչության նկատմամբ ցուցաբերած բռնությունների և հատկապես հայերի կոտորածների մեջ, քեմալականները սկզբնական փուլում ձգտում են դաշնակից պետություններին ամեն կերպ համոզել, թե իբր իրենք ոչ մի կապ չունեն Միություն և առաջադիմություն կուսակցության հետ: Դա նկատելի է նաև Մուստաֆա Քեմալի՝ այդ ժամանակաշրջանում տված հարցազրույցներից[276]: Բացի այդ՝ «իթթիհադական» բառը շատերի մոտ գրեթե վերածվել էր հայրենիքի դավաճանի հոմանիշի: Սակայն իրականում ազգայնական շարժումը նախաձեռնողների մեջ մեծ թիվ են կազմում Հայոց ցեղասպանության պատասխանատուները, իսկ այդ շարժման կորիզը՝ Հատուկ կազմակերպության անդամները: Հետագայում քեմալականների շարքերն են անցնում նաև Մալթա աքսորվածները, ովքեր հանրապետական շրջա-

272 **Sorgun T.**, Mütareke Dönemi ve Bekirağa Bölüğü, ss. 44-45.

273 Քարաքոլ կազմակերպությունն իր անվանումը ստացել է հիմնադիրների՝ Քարա Քեմալի և Քարա Վասըֆի անուններից, տե՛ս **Sorgun T.**, Mütareke Dönemi ve Bekirağa Bölüğü, s. 47.

274 **Akçam T.**, İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 491.

275 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս նշվ. աշխ. 488-489 էջերը:

276 Նույն տեղում, էջ 197:

նում զբաղեցնում են կարևոր պետական պաշտոններ: Այսպես, օրինակ, Հայոց ցեղասպանության ժամանակ Բիթլիսի և Հալեպի նահանգապետը եղած և այստեղի հայերի կոտորածների համար պատասխանատու Աբդուլհալիք Ռենդան Մալթայի աքսորից վերադառնալուց հետո զբաղեցրել է Իզմիրի նահանգապետի, 1924-1930 թթ.՝ ֆինանսների, ազգային պաշտպանության և ռազմածովային նախարարների պաշտոնները, իսկ 1935 թ.՝ ընտրվել Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ, հետագայում եղել է նաև պետնախարար: Հալեպ և Ադանա վիլայեթներում կատարված տեղահանության ու կոտորածների պատասխանատու Ցյուբրյու բեյը Մալթայից փախչելուց հետո որոշ ժամանակ գտնվել է Իտալիայում և Գերմանիայում, իսկ Թուրքիա վերադառնալուց հետո՝ դարձել պատգամավոր, ինչպես նաև՝ գյուղատնտեսության, արտաքին ու ներքին գործերի նախարար: Տեղահանության ժամանակ Վանի և Էրզրումի նահանգապետը եղած Հասան Թահսին Ուզերը, ով հայերի դեմ կոտորածները ղեկավարած լինելու մեղադրանքով աքսորվել էր Մալթա, Թուրքիա վերադառնալուց հետո եղել է Արդահանի, Էրզրումի ու Կոնիայի պատգամավոր: Միություն և առաջադիմություն կուսակցության գլխավոր քարտուղար Միդհադ Ցյուբրյու Բլեդան պատգամավոր է ընտրվել հանրապետական շրջանում: Իթթիհադի իշխանության տարիներին պատգամավորների պալատի նախագահի, ինչպես նաև՝ ներքին գործերի, արդարադատության և արտաքին գործերի նախարարի պաշտոնները զբաղեցրած Հալիլ Մենթեշեն նույնպես պատգամավոր է ընտրվել հանրապետական շրջանում: Ահմեդ Մուամմեր Ջանքարդեշը, ով Հայոց ցեղասպանության ժամանակաշրջանում եղել է Սըվասի և Կոնիայի վալիճ, հանրապետական շրջանում դարձել է պատգամավոր: Ալի Մյունիֆ Եղենաղան, ով Մալթա էր աքսորվել Լիբանանում հայերի կոտորածները կազմակերպելու մեղադրանքով, քեմալական շրջանում դարձել է քաղաքապետ ու պատգամավոր: Այնթապի հայության սպանդի կազմակերպիչներից Միություն և առաջադիմություն կուսակցության ներկայացուցիչ Ալի Քենանը, ով Հայոց ցեղասպանության տարիներին մեծ հարստություն էր դիզել՝ հայերի լքյալ գույքը յուրացնելով, եղել էր Ռազմական արտակարգ ատյանի կողմից կալանավորվածների և Մալթա աքսորվածների շարքում: Ալի Քենանը 1923 թ. նշանակվել է Թուրքիայի Հանրապետության առևտրի նախարար[277]: Ինչպես նշում է Վարդգես Եղիայանի «Մալթայի վավերագրերը. Անգլիայի արտաքին գործերի նախարարության «Թուրք պատերազմա-

277 **Üngör U. Ö. and Polatel M.**, Confiscation and Distruction, Continuum International Publishing Group, London, 2011, p. 127.

կան հանցագործները» թղթապանակը» գրքի առաջաբանի հեղինակ Ալի Սայիդ Չեթինօղլուն, 1934 թ. ընդունված «Ազգանունների մասին» օրենքի հրապարակումից հետո նրանցից շատերը թաքնվել են նոր անվան տակ և այդպիսով կորցրել իրենց հետքը[278]:

Երիտթուրքերի դատապարտումը քեմալական իշխանության կողմից ընկալվել է որպես Թուրքիայի մասնատման ծրագրի մի մաս: Երբ անգլիացի գործակալ Ֆրյուն Մուստաֆա Քեմալի ուշադրությունն է հրավիրում քեմալականների կողմից իթթիհադականների հանցագործությունները դատապարտելու անհրաժեշտության վրա՝ ասելով, թե «Նախ և առաջ պարտավոր եք ընդունել Իթթիհաթ վե թերաքքիի ոճրագործությունները», Քեմալը մերժում է երիտթուրքերի ոճիրները դատապարտելու առաջարկը. «Ես Միություն և առաջադիմություն կուսակցության ներկայացուցիչը չեմ... Սակայն Ձեր թույլտվությամբ պետք է ասեմ, որ Իթթիհաթ վե թերաքքին հայրենասեր կազմակերպություն էր»[279]:

278 **Yeghiayan V.**, Malta Belgeleri, s. 12.

279 **Akşin S.**, İstanbul Hükümetleri ve Milli Mücadele, s. 192.

2.2 Պատերազմի տարիներին կառավարած երիտթուրքական վարչակազմերի անդամների դատավարությունը (1919 թ. հունիս-հուլիս ամիսներ)

Ռազմական արտակարգ ատյանը գլխավոր դատավարությունը վերսկսում է 1919 թ. հունիսի 3-ին: Նիստում թեև ընթերցում են նաև Մալթա աքսորված մեղադրյալների անունները, սակայն Ստամբուլի պարետ, գեներալ-մայոր Սեյիդ փաշայի կողմից տվյալ ամբաստանյալներին անգլիացիներին հանձնելու մասին տեղեկագրի ընթեցումից հետո նրանց գործերն առանձնացվում են:

Այդպիսով՝ գլխավոր դատավարության երկրորդ փուլում կամ կառավարության անդամների դատաքննության ժամանակ ներկա կարգով քննվում են նախկին շեյխ-ուլ-իսլամ Մուսա Քյազիմի, փոստի և հեռագրատան նախկին նախարար Հյուսեին Հաշիմի ու սենատի նախկին նախագահ Ռըֆաթի գործերը: Այս դատավարության ժամանակ հեռակա կարգով շարունակում են դատվել նախկին վարչապետ Թալեաթ փաշան, նախկին ռազմական նախարար Էնվեր փաշան, նախկին ռազմածովային նախարար Ջեմալ փաշան ու հանրային կրթության նախկին նախարար դոկտոր Նազըմը:

Դատարանի կազմը հետևյալն էր. նախագահ՝ Մուստաֆա Նազըմ փաշա, անդամներ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա, գեներալ-մայոր Մուստաֆա փաշա, գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա, գնդապետ Ռեջեփ Ֆերդի բեյ[280]:

Դատարանի նախագահը, ըստ ընդունված կարգի, նախ հաստատում է ամբաստանյալների ինքնությունը, որից հետո դատախազի տեղակալ Ֆերիդուն բեյը ներկայացնում է 1919 թ. մայիսի 22-ին կազմված մեղադրական ակտը[281], որի սկզբում անդրադարձ է կատարվում կուսակցության թույլ տված օրինախախտումներին և չարաշահումներին[282]:

Այս ամբաստանագրում շեշտվում է, որ Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներն ընդգրկված են եղել կուսակցության առաջնորդների գաղտնի խմբավորման կազմում: Ըստ մեղադրական ակտի՝ ամբաստանյալներից ներքին գործերի նախարար Իսմայիլ Ջանփոլադը ցուցմունք է տվել առ այն, որ կառավարությանը վե-

280 "Takvîm-i Vekayi", No 3571, 13 Haziran 1919, s. 127.

281 Սույն մեղադրական ակտը կազմվել էր որպես կուսակցության անդամների դատաքննությանը կից ամբաստանագիր:

282 "Takvîm-i Vekayi", No 3571, 13 Haziran 1919, ss. 128-129.

րաբերող հարցերը հաճախ են քննարկվել կուսակցության կենտրոնական կոմիտեում[283]: Ամբաստանագրի համաձայն՝ տարագրված հայերի քարավանները ենթարկվել են հատուկ կազմավորված հրոսախմբերի հարձակումներին, ովքեր բնաջնջել են նրանց ու կողոպտել նրանց պատկանող գույքը և ունեցվածքը[284]: Մեղադրական ակտում ընդգծվում է նաև, որ կառավարությունը ոչ միայն չի պատժել այդ հանցագործներին, այլև պաշտոնազրկել է այն բոլոր նահանգապետերին ու գավառապետերին, ովքեր հրաժարվել են իրականացնել տեղահանություններն ու կոտորածները[285]:

Այս ամբաստանագրում ևս ընդգծվում է, որ հայերի կոտորածները նախապես ծրագրվել և իրագործվել են կուսակցության վերոհիշյալ գաղտնի խմբավորման անդամների կողմից: Մեղադրական ակտում նշվում է նաև, որ այդ գաղտնի խմբավորման առաջնորդներն են եղել կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ դոկտոր Բեհաեդդին Շաքիրը, դոկտոր Նազըմը, ինչպես նաև՝ Ռըզա և Աթիֆ բեյերը, իսկ կոմիտեի հիմնական ծրագրերն իրագործվել են վարչապետ Թալեաթի, ինչպես նաև՝ ռազմական նախարար Էնվերի ու ռազմածովային նախարար Ջեմալի կողմից[286]:

Մեղադրական ակտում ընդգծվում է նաև, որ կուսակցության որոշումների իրականացմանը ողջ էությամբ նվիրվել են կառավարության այնպիսի անդամներ, ինչպիսիք են՝ նախկին վարչապետ Սայիդ Հալիմ փաշան, նախկին շեյխ-ուլ-իսլամ Հայդար էֆենդին, հանրակրթական նախկին նախարար Ծյուքրյու բեյը, արդարադատության նախկին նախարար Հալիլը (Մենթեշե), Պետական խորհրդի նախկին նախագահ Իբրահիմ բեյը, արտաքին գործերի նախկին նախարար Նեսիմին և պարենավորման նախկին նախարար Քարա Քեմալը[287]:

Գլխավոր դատավարության երկրորդ փուլի նիստերի ընթացքում մեղադրյալների հարցաքննությունը հիմնականում կատարվում է պատերազմի ժամանակ Միություն և առաջադիմություն կուսակցության ունեցած գործունեության, պատերազմին մասնակցություն ցուցաբերելու նախաձեռնության ու տեղի ունեցած չարաշահումների ուղղությամբ:

Գլխավոր դատավարությունների ամենանշանակալի առանձնահատկությունն այն է, որ դատաքննությունների ընթացքում ոչ մի վկա չի հրավիրվում և վկայություն չի տալիս: Ի տարբերություն այս մեղադրանքով հարուցված մյուս դատական գործընթացների՝ սույն դատաքննությունների ընթացքում հարցաքննվում են միայն մեղադրյալները: Մեր կարծիքով դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ այս դատավարությունների մեղադրական ակտերը կազմվել էին խիստ մանրակրկիտ հետաքննության, բազմաթիվ ապացույցների, պաշտոնական ծածկագիր հեռագրերի ու վկաների ցուցմունքների հիման վրա:

Կուսակցության և կառավարության անդամների դատաքննությունների կամ գլխավոր դատավարությունների ընդհանուր դատավճիռը կայացվում է 1919 թ. հուլիսի 5-ին:

Դատին ներկա գտնվող մեղադրյալներն էին նախկին շեյխ-ուլ-իսլամ Մուսա Քյազիմը, սենատի նախկին նախագահ Ռըֆաթը, փոստի և հեռագրատան նախկին նախարար Հյուսեին Հաշիմը, իսկ հեռակա կարգով դատավճիռ է կայացվում նախկին վարչապետ Թալեաթ փաշայի, ռազմական նախկին նախարար Էնվերի, ռազմածովային նախկին նախարար Ջեմալի, հանրային կրթության նախկին նախարար դոկտոր Նազըմի, ֆինանսների նախկին նախարար Ջավիդի, փոստի ու հեռագրատան նախկին նախարար Օսքանի, առևտրի և հողագործության նախկին նախարարներ Սուլեյման Էլբիստանի ու Մուստաֆա Ներեֆի վերաբերյալ:

Դատավճռում նշվում է, թե իրականացված հարցաքննությունը, գործի մանրամասն հետաքննությունը և դատավճռում բերված Ռազմական ատյանի 5 հոդվածները հաստատում են Միություն և առաջադիմություն կուսակցության կատարած ոճրագործությունները: Վերոհիշյալ հոդվածներից առաջինում շեշտվում է, թե Ռազմական ատյանի իրականացրած դատաքննության արդյունքում բացահայտվել է, որ Տրապիզոնում, Յոզղատում, Բողազլըյանում և այլ վայրերում տեղի ունեցած կոտորածներր կազմակերպվել և ուղղորդվել են Միություն ու առաջադիմություն կուսակցության պարագլուխների կողմից[288]:

Դատավճռի համաձայն՝ հայերի կոտորածների որոշումը հիմնականում

283 Նույն տեղում, էջ 129:

284 Նույն տեղում:

285 Նույն տեղում: Այսպես, օրինակ, Դիարբեքիրի նահանգապետ Ռեշիդ բեյը (Մեհմեդ Շահինգիրայ) մեղադրվել է Լիջե և Բեշիրի շրջանների կայմակամների սպանությունը կազմակերպելու մեջ, քանի որ վերջիններս հրաժարվել են իրականացնել հայերի տեղահանման ու ոչնչացման հրամանը, տե՛ս İttihat ve Terakki'nin Kurucu Üyelerinden Dr. Reşid Bey'in Hatıraları. "Sürgünden İntihara". Yayına Hazırlayan: Ahmet Mehmetefendioğlu. Arba Yayınları, İstanbul, 1993, ss. 45-46.

286 "Takvîm-i Vekayi", No 3571, 13 Haziran 1919, s. 129.

287 Նույն տեղում:

288 "Takvîm-i Vekayi", No 3604, 22 Temmuz 1919, s. 218.

համաձայնեցվել է եռյակի միջև[289]: Դատավճռում նշվում է, թե նկատի առնելով այն, որ Թալեաթի, Էնվերի, Ջեմալի ու դոկտոր Նազըմի կատարած հանցագործությունները չափազանց ծանր են եղել, որոշվել է նրանց դատապարտել կայսերական քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի առաջին կետով, իսկ Ջավիդի, Մուստաֆա Շերեֆի, Մուսա Քյազիմի համար ի նկատի է առնվել վերոհիշյալ հոդվածի երկրորդ և նույն կայսերական օրենսգրքի 55-րդ հոդվածի վերջին մասերը[290]:

Ըստ դատավճռի՝ դատին այդպես էլ չեն ներկայացել հեռագրատան նախկին նախարար Օսքանը և առևտրի նախկին նախարար Սուլեյման Էլբիստանը, քանի որ նրանք գտնվում են Եվրոպայում[291]:

Այդպիսով՝ 1919 թ. հուլիսի 5-ին կայացված դատավճռով Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և դոկտոր Նազըմը դատապարտվում են մահվան, Ջավիդը, Մուստաֆա Շերեֆը և շեյխ-ուլ-իսլամ Մուսա Քյազիմը՝ 15 տարվա աքսորի, իսկ Ռըֆաթ ու Հաշիմ բեյերն արդարացվում են[292]:

Հարկ է արձանագրել, որ ընդհանրապես հայերի տեղահանության ու կոտորածների մեղադրանքով իրականացված դատաքննությունների արդյունքում Ռազմական արտակարգ ատյանների դատական կազմերը մահվան դատավճիռներ արձակելիս ավելի «շռայլ» են եղել փախուստի մեջ գտնվող դատապարտյալների հանդեպ:

Հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված մոտ 63 դատական գործերի արդյունքում կայացվել է ընդհանուր թվով 20 մահապատժի դատավճիռ: Հատկանշական է, որ այդ մահապատիժներից միայն 3-ն են ի կատար ածվել, իսկ մնացած 17-ն ընդունվել են հեռակա կարգով, քանի որ դատապարտյալները գտնվել են փախուստի մեջ: Մահապատժի ենթարկված դատապարտյալներ հետևյալ անձինք են՝ Բողազլըյանի գավառապետ Մեհմեդ Քեմալը (Յոզղատի դատավարություն), Երզնկայի ժանդարմերիայի հրամանատար, Հայրան Բաբա մականունը կրող Հաֆըզ Աբդուլլահ Ավնին (Երզնկայի դատավարություն) և Բաբերդի կառավարիչ, հետագայում՝ Ուրֆայի գավառապետ Բեհրամզադե Նուսրեթը (Բաբերդի դատավարություն):

Ռազմական ատյանները խուսափել են մահվան դատապարտել դա-

289 Թերևս ի նկատի ունի Թալեաթ-Էնվեր-Ջեմալ եռապետությունը:

290 "Takvîm-i Vekayi", No 3604, 22 Temmuz 1919, s. 218.

291 Ի դեպ, դատարանը, տեղյակ լինելով հանդերձ վերոհիշյալ մեղադրյալների գտնվելու վայրի մասին, այդպես էլ որևէ բան չի ձեռնարկել նրանց դեմ հետաքննություն սկսելու ուղղությամբ:

292 "Takvîm-i Vekayi", No 3604, 22 Temmuz 1919, s. 218.

տարանում ներկա մեղադրյալներին, քանի որ հենց առաջին՝ Յոզղատի դատաքննության արդյունքում կախաղան բարձրացված Բողազլըյանի գավառապետ Մեհմեդ Քեմալի մահապատիժը (1919 թ. ապրիլի 10) խիստ վրդովմունքի տեղիք է տվել թուրք հասարակության մեջ: Նախ՝ մահապատժի արարողությունն ինքնին կատարվել է ոչ ընդունված կարգով: Ըստ օրենքի՝ կախաղանի դատապարտվածը մահապատժի էր ենթարկվում նախքան արևածագը, դատապարտյալի մարմինը հրապարակում էր մնում ևս 5-6 ժամ, ապա՝ անշուք կերպով թաղվում: Մինչդեռ Քեմալի մահապատիժն ի կատար է ածվել կեսօրից հետո՝ ժամը 19:20-ին[293]: Արարողությանը մասնակցել են բարձրաստիճան պաշտոնյաներ ու հոծ բազմություն: Մահապատժից հետո Քեմալի դիակը դրվել է Բայազետ մզկիթի լվացարանում. գործողություն, որն անթույլատրելի էր մահապատժի դեպքում[294]: Մահապատժի հաջորդ օրը մեծ շուքով կազմակերպվել է Քեմալի թաղման արարողությունը, որին մասնակցել են առավել քան 10 հազար ցուցարարներ: Ոճրագործը հռչակվել է «ազգային նահատակ», նրա այրին ու զավակները՝ վերցվել ազգային խնամակալության տակ, և, ինչպես նշում է Արամ Անտոնյանը. «Այն թուրք ժողովուրդը որ հանրային հանգանակութեանց իր քսակը այն ատեն միայն կը բանայ, երբ վիզը կը սեղմեն, ինքնաբերաբար, 5-10 օրուան ընթացքին 20 հազար օսմ. ոսկի գումար մը հանգանակելով, յանձնեց Քէմալ պէյի այրիին»[295]:

Ներկա գտնվող ամբաստանյալների վերաբերյալ մահապատժի դատավճիռներ կայացնելուց խուսափելը պայմանավորված էր նաև դատավարությունների ձևական բնույթով: Սուլթանական կառավարությանը հայերի տեղահանության ու կոտորածների պատասխանատուներին դատելուն է մղել առավելապես ոչ թե արդարադատություն գործադրելու ցանկությունը, այլ պատերազմում հաղթանակած պետությունների վրա նման տպավորություն թողնելու ձգտումը[296]: Դա է ապացուցում նաև Հայոց ցեղասպանության ոճրագործներին մահապատժի ենթարկելու ժամանակացույցը: Այսպես՝ Յոզղատի դատաքննության արդյունքում դատին ներկա գտնված մեղադրյալի վերաբերյալ մահապատժի որոշում է կայացվել, քանի որ Յոզղատի դատավարությունն առաջինն էր հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված դատական գործերի

293 Kemal Bey İdam Olundu, "Alemdar", 11 Nisan 1919.

294 **Գրիկէր,** Եոզղատի Հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, էջ 330:

295 **Արամ Անտոնյան,** Մեծ ոճիրը, Պօսթըն, 1921, էջ 272:

296 Նույնը չի կարելի ասել մյուս մեղադրանքների դեպքում:

շարքում, և անհրաժեշտ էր Եվրոպայի առաջ արդար դատավարություններ կազմակերպելու տպավորություն թողնել: Ինչ վերաբերում է Հաֆըզ Արդուլլահ Ավնիի և Բեհրամզադե Նուսրեթի մահապատիժներին, ապա նրանց մահվան դատավճիռները արձակվել են Սևրի դաշնագրի (1920 թ. օգոստոսի 10) կնքման նախօրեին և հաղթանակած տերությունների դիրքորոշումը մեղմելու նպատակ են հետապնդել:

Սուլթանական կառավարությունն այդպես էլ ոչ մի քայլ չի ձեռնարկել՝ հեռակա կարգով մահվան դատապարտվածներին գտնելու և վերջիններիս մահապատիժները ի կատար ածելու ուղղությամբ: Գլխավոր դատավարության արդյունքում մահապատժի դատապարտվածների շարքում Թալեաթը 1921 թ. մարտի 15-ին Բեռլինում սպանվում է հայ վրիժառու Սողոմոն Թեհլիրյանի կողմից, Էնվերը՝ 1922 թ. օգոստոսի 4-ին Միջին Ասիայում Կարմիր բանակի զորամասերից մեկի հետ ընդհարման ժամանակ (ի դեպ՝ զորամասի հրամանատարն էր ազգությամբ հայ Հակոբ Մելքումովը), Ջեմալը՝ վրիժառուներ Պետրոս Տեր-Պողոսյանի և Արտաշես Գևորգյանի կողմից 1922 թ. հուլիսի 25-ին Թիֆլիսում, վարչապետ Սայիդ Հալիմը սպանվում է Հռոմում 1921 թ. Արշավիր Շիրակյանի կողմից, նույն Շիրակյանը 1922 թ. ապրիլի 17-ին Բեռլինում սպանում է Ջեմալ Ազմիին ու Բեհաեդդին Շաքիրին, իսկ դոկտոր Նազըմը 1926 թ. Անկարայում կախաղան է բարձրացվում Մուստաֆա Քեմալի դեմ մահափորձ կազմակերպելու մեղադրանքով:

2.3 Միություն և առաջադիմություն կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների դատավարությունը

Միություն և առաջադիմություն կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների դատաքննությունը Ստամբուլի ռազմական դատարանում սկսվել է 1919 թ. հունիսի 21-ին ու տևել մոտ 7 ամիս, քանի որ 1919 թ. հունիսի 28-ի նիստից հետո Ռազմական արտակարգ ատյանում կատարված փոփոխությունների պատճառով դատաքննությունն ընդմիջվել է մինչև 1919 թ. հոկտեմբերի 6-ը:

Դատավարության սկզբում մեղադրյալները եղել են 7 հոգի, բայց երրորդ նիստում նրանցից մեկի դեմ հարուցված դատական գործը կարճվել է: Հետագա նիստերում ամբաստանյալների թիվը հասել է 12-ի, և դատավճիռ է կայացվել 12 մեղադրյալների վերաբերյալ:

Ամբաստանյալներն էին Մանիսայի պատասխանատու քարտուղար Ավնին, Բեյօղլուի պատասխանատու քարտուղար Հասան Սալահադդինը, Էսքիշեհիրի պատասխանատու քարտուղար դոկտոր Բեսիմ Զյուհդին, Բուրսայի պատասխանատու քարտուղար դոկտոր Միդհադը, Միրգյունի պատասխանատու քարտուղարի տեղակալ Զևդեդը, Հալեպի պատասխանատու քարտուղար Ջեմալը, Էդիրնեի տեսուչ Արդուլ Գանիին, Կոնիայի պատասխանատու քարտուղարի տեղակալ Աբդուլ Քադիրը, Քաստամոնուի պատասխանատու քարտուղարի տեղակալներ Մյունիրը և Հասան Ֆեհմին, Աֆիոն-Կարահիսարի ձեռնարկությունների լուծարման հարցերով նախկին պաշտոնյա Հայրեդդինը:

Երիտթուրքերի կուսակցության պատասխանատու քարտուղարների դատավարությունն սկսվել է դատարանի նախագահ Մուստաֆա Նազըմ փաշայի նախագահությամբ, իսկ ավարտին հասցվել՝ նախագահ Էսադ փաշայի պաշտոնավարման ժամանակ:

Դատավարության սկզբում դատարանի կազմը հետևյալն էր. նախագահ՝ Մուստաֆա Նազըմ փաշա, անդամներ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա, գեներալ-մայոր Մուստաֆա փաշա (հայտնի է նաև Նեմրութ կամ Քուրթ մականվամբ), գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա, գնդապետ Ռեջեփ Ֆերդի բեյ: Դատախազի պարտականությունը կատարել է դատախազի տեղակալ Ֆերիդուն բեյը[297]:

Դատաքննության առաջին նիստում (1919 թ. հունիսի 21) դատարանի նախագահը հաստատում է մեղադրյալների ինքնությունը, որից հետո ընթերցվում է 1919 թ. հունիսի 19-ին կազմված մեղադրական ակտը, ըստ

297 "Takvîm-i Vekayi", No 3586, 28 Haziran 1919, s. 161.

որի՝ ամբաստանյալները մեղադրվում են Իթթիհաթ վե թերաքքի կուսակցության անօրինական նպատակների իրագործման համար գործիք լինելու և երկրի անվտանգությունը խախտելու մեջ[298]: Դատախազը պահանջում է ամբաստանյալներին պատժել՝ քրեական օրենսգրքի 45-րդ և 56-րդ հոդվածների համաձայն[299]: Մեղադրյալները դատապաշտպան են պահանջում, և նիստը հետաձգվում է:

Հաջորդ նիստում, որը կայանում է 1919 թ. հունիսի 23-ին, բոլոր մեղադրյալները փորձում են հերքել իրենց մեղսագրվող մեղադրանքները, նույնիսկ նրանցից մի քանիսը պնդում են, թե իրր չեն լսել հայերի տեղահանության մասին, «իրենց շրջաններից տեղահանություն չի եղել» և «դրա մասին տեղեկացել են միայն հետագայում»[300]:

Երրորդ նիստում, որը տեղի է ունենում 1919 թ. հունիսի 28-ին, դատարանի նախագահի հրահանգով արձանագրող քարտուղարն ընթերցում է մի քանի հայ վկաների՝ Կարապետ Յազըջյանի, Թադևոսի և այլոց՝ դատարանին հղած հեռագիրը: Վկաները հայտնում են դատարանին, որ մեղադրյալներից Էդիրնեի տեսուչ Աբդուլ Գանիի տված ցուցմունքները չեն համապատասխանում իրականությանը, քանզի առկա են բազմաթիվ ապացույցներ, որոնք հաստատում են նրա մասնակցությունը Էդիրնեի հայերի տեղահանությանը: Հեռագրում նշվում է նաև, թե տարագրված 100 հայերից միայն 30-ն են հետ վերադարձել[301]: Վկաները խնդրում են նաև մի արդարադատ հանձնաժողով ուղարկել Էդիրնե՝ ճշմարտությունը բացահայտելու նպատակով[302]:

Դատախազի տեղակալ Սաքիբ բեյը հայտնում է դատարանին, որ նման հանձնաժողով ուղարկելու անհրաժեշտություն չկա:

Միևնույն նիստում հարցաքննված մեղադրյալ Զյուհդին նշում է, որ տեղահանության առնչվող հանցագործությունների մեղքն ընկնում է կառավարության վրա, քանի որ հենց վերջինս էր «Տեղահանության մասին» օրենքն ընդունել[303]:

298 Նույն տեղում, էջ 163-164:

299 «Իթթիհատական քարտուղարներուն դատավարութիւնը», «Ճակատամարտ», 22 հունիս, 1919, N 187 (2008):

300 "Takvîm-i Vekayi", No 3589, 5 Temmuz 1919, ss. 165-175.

301 «Իթթիհատական պատուիրակներուն դատավարութիւնը», «Ճակատամարտ», 29 հունիս, 1919:

302 "Takvîm-i Vekayi", No 3596, 13 Temmuz 1919, s. 205.

303 Նույն տեղում, էջ 210:

Այս նիստից հետո Ռազմական արտակարգ ատյանում կատարված փոփոխությունների պատճառով դատաքննությունը երկար ժամանակով ընդմիջվում է ու վերսկսվում միայն 1919 թ. հոկտեմբերի 6-ին: Պատասխանատու քարտուղարների դատավարությունն այդուհետ շարունակվում է Ալի Ռըզա փաշայի վարչապետության օրոք (1919 թ. հոկտեմբերի 2-ից մինչև 1920 թ. մարտի 8-ը): Երկարատև ընդմիջումից հետո վերսկսված դատաքննության ժամանակ փոխված են լինում նաև դատարանի կազմն ու նախագահը[304]:

Հոկտեմբերի 6-ի նիստում մեղադրյալների դատապաշտպանները դատարանից պահանջում են անհրավասու հայտարարել իրեն՝ այս գործր քննելու առումով, սակայն դատարանը մերժում է նրանց պահանջը[305]:

Նմանատիպ նախաձեռնությամբ են հանդես գալիս նաև մեղադրյալները: 1919 թ. հոկտեմբերի 18-ին ամբաստանյալները դիմում են ռազմական նախարար Ջեմալ փաշային՝ խնդրելով իրենց դատաքննությունը հանձնել մեկ այլ դատարանի: Ջեմալ փաշան խնդրագրի մասին հաղորդում է դատարանին, բայց ատյանը պատասխանում է, թե դատավարությունն ավարտին է մոտենում, և որ դրա կարիքը բոլորովին չկա[306]:

Պատասխանատու քարտուղարների դատավարության հինգերորդ նիստը տեղի է ունենում 1919 թ. հոկտեմբերի 27-ին: Այս նիստում մյուս մեղադրյալների գործերին է կցվում նաև Չանքըրըի պատասխանատու քարտուղար Ջեմալ Օղուզի[307] թղթապանակը[308]: Վերջինս մեղադրվում է

304 **Ata F.**, İşgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, s. 226.

305 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", 153.

306 **Ata F.**, İşgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, s. 226.

307 Ջեմալ Օղուզը հիշատակվում է նաև Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների մեղադրական ակտում, տե՛ս "Takvîm-i Vekayi", No 3540, 5 Mayıs 1919, s. 7.

308 Ջեմալ Օղուզը հայ մեծանուն բանաստեղծներ Դանիել Վարուժանի և Ռուբեն Սևակի, ինչպես նաև՝ Օննիկ Մաղազաջյանի, Դյոթմեջի Վահանի և հացավաճառ Արթին աղայի սպանության կազմակերպիչն էր: Ջեմալ Օղուզը մաս առ մաս տեղեկանալ էր Ստամբուլից Չանքըրը աքսորված հայերին և նրանց հանձնել Անկարայի նահանգապետ Աթրֆին: Նրան Քասթամոնուի իր պաշտոնակցի հետ հաջողվել է պաշտոնանկ անել Քասթամոնուի նահանգապետ Ռեշիդ փաշային և բեկանել այստեղի հայերին տեղահանությունից զերծ պահելու կուսակալի որոշումր: «Ճակատամարտ» օրաթերթի տված բնորոշմամբ՝ Ջեմալ Օղուզը «Իթթիհատի հին մեկ բարակն էր» (որսաշունը), ով որպես ծածկագրության պաշտոնյա՝ ներկա էր գտնվել նաև Աղանայի 1909 թ. ջարդին», տե՛ս «Դանիէլ Վարուժանի եւ Ռ. Սեւակի սպանիչը ձերբակալուած», «Ճակատամարտ», 5 ապրիլ, 1919, N 122 (1943):

Ստամբուլից Չանքըրը աքսորված հայերի սպանության մեջ[309]: Նիստում ընթերցվում է աքսորյալների շարքում եղած քահանա Կարապետյանի գրավոր ցուցմունքը, որում նշվում է, թե Ջեմալ Օղուզը կազմակերպել է Անկարայից Այաշ տարագրված 5 նշանավոր հայերի սպանությունը[310]: Դարձյալ նույն նիստում ընթերցվում է Կաստամոնուի նահանգապետ Ռեշիդ փաշայի վկայությունը, որը վերաբերում է Կաստամոնուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմիին: Կաստամոնուի վալին վկայում է, թե ինքը Հատուկ կազմակերպության նախագահի ստորագրությամբ մի գրություն է ստացել Բեհաեդդին Շաքիրից, որը հաղորդում էր Կաստամոնուի հայերին տեղահանելու անհրաժեշտության մասին, և քանի որ ինքը չի ենթարկվել այդ հրամանին, պաշտոնից հեռացվել է: Նահանգապետը նաև տեղեկացնում է, թե Կաստամոնուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմին քարոզչություն է ծավալել իր դեմ՝ ասելով. «Ռեշիդ փաշան ոչ թե թուրքերի վալին է, այլ՝ հայերի»: Մեղադրյալ Հասան Ֆեհմին ոչ մի պարզաբանում չի կարողանում տալ վերոհիշյալ վկայության առնչությամբ[311]:

Դատաքննության վեցերորդ նիստում, որը կայանում է 1919 թ. նոյեմբերի 3-ին, ընթերցվում են Չանքըրըի պատասխանատու քարտուղար Ջեմալ Օղուզի դեմ ուղղված գրավոր ցուցմունքները, և ունկնդրության են արժանանում մի շարք վկաներ: Նիստում դատական քարտուղարն ընթերցում է Չանքըրըում հայ ու թուրք վկաների տված գրավոր ցուցմունքները, որոնք բոլորն էլ ուղղված են լինում վերոնշյալ ամբաստանյալի դեմ. Վկաներից մասնավորապես Թերլեմեզյանը հայտնում է, թե երբ 700 հոգով հայերը տեղահանվել են դեպի Տավրոս, գնդակահարվել են բոլոր նրանք, ովքեր փորձել են խուսափել տարագրությունից[312]: Մեղադրյալը փորձում է հերքել բոլոր մեղադրանքները[313]:

Դատավարության յոթերորդ (1919 թ. նոյեմբերի 12) և ութերորդ (1919 թ. նոյեմբերի 22) նիստերում ունկնդրության են արժանանում կոտորածներից մազապուրծ հայերը: Այսպես՝ դեղագործ Գրիգորը վկայում է, որ Ստամբուլից Չանքըրը տարագրված 180 հայերից միայն 30-ն են ողջ

309 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", 153.

310 Նույն տեղում:

311 Նույն տեղում, էջ 154:

312 «Վարուժանի սպանիչներուն դատավարութիւնը», «Ճակատամարտ», 5 նոյեմբեր, 1919:

313 **Dadrian V., Akçam T.**, "Tehcir ve Taktil", 154.

մնացել, և որ հայերի կոտորածներն իրագործել է Ջեմալ Օղուզի ենթակայության տակ գտնվող Թեշքիլյաթ-ը մահուսայի ավազակախումբը, իսկ Չանքըրըում մնացած վերջին 5 հայերին դուրս են հանել քաղաքից ու ճանապարհին հանձնել մի հրոսակախմբի, որն էլ սպանել է նրանց:

Ութերորդ նիստում ջարդերից մազապուրծ հայ ճարտարապետ Սիմոնը, որն աքսորված է եղել Չանքըրը, դատարանին վկայում է, թե վերոհիշյալ 5 հայերի սպանության ժամանակ ինքը եղել է Չանքըրըում, և որ ժանդարմերիայի հրամանատարը հայերի կոտորածների վերաբերյալ իրեն ասել է, թե «դա կառավարության գործն է», ու այդ ուղղությամբ հետաքննություն չի կատարել[314]:

Ամբաստանյալներից Ջեմալ Օղուզը 1919 թ. դեկտեմբերի ու 1920 թ. հունվարի դատական նիստերի ընթացքում ձնացնում է, թե խելագարվել է, անընդհատ վիճաբանում դատարանի նախագահի հետ և նույնիսկ ինքնասպանության փորձ կատարում: Ի վերջո, համոզում է դատարանի կազմին, որ իրեն ուղարկեն հոգեբուժարան: Թեև սկզբում ատյանը մերժում է նրա դիմումը, սակայն տասներորդ նիստում (1919 թ. դեկտեմբերի 29) նրա դատական գործն «առողջական խնդիրների» պատրվակով առանձնացվում է[315] պատասխանատու քարտուղարների դատական գործընթացից:

Ջեմալ Օղուզի առանձին դատաքննությունը վերսկսվում է 1920 թ. հունվարի 27-ին: 1920 թ. փետրվարի 3-ի նիստում մեղադրյալի դեմ վկայություն է տալիս հայ փաստաբան Գասպար Չերազը, ով դատարանին հայտնում է, թե ինքը Չանքըրը աքսորված լինելու պատճառով քաջատեղյակ է Դանիել Վարուժանի և Ռուբեն Սևակի սպանության մանրամասներին: Ըստ վկայի՝ Ջեմալ Օղուզն ինքն էր ուղարկել հայ մեծանուն բանաստեղծներին՝ այդպիսով կազմակերպելով նրանց սպանությունը: Գասպար Չերազը վկայություն է տալիս՝ բոլոր փաստերի մասին դատարանին հայտնելով ճշգրիտ թվականներ և անուններ[316]:

Հաջորդ նիստում, որը կայանում է 1920 թ. փետրվարի 5-ին, Ջեմալ Օղուզի դեմ ուղղված վկայությամբ է հանդես գալիս Միքայել Նամդանճյանը, որը հաստատում է, թե հայ աքսորյալների երկու խմբերի ցանկերը (24 և 52 հոգանոց) կազմվել են Չանքըրըում Ջեմալ Օղուզի կողմից, ով ավելի զորավոր էր, քան Չանքըրըի մութասարիֆ (կառավարիչ) Ասաֆ բեյը[317]:

314 Նույն տեղում:

315 Նույն տեղում, էջ 155:

316 «Ո՞վ սպաննեց երկու բանաստեղծները», «Ճակատամարտ», 4 փետրվար, 1920:

317 «Ճէմալ Օկուզի դատը», «Ճակատամարտ», 6 փետրվար, 1920, N 373 (2194):

Ջեմալ Օղուզր 1920 թ. մայիսին դատաքննվում է հարյուրապետ Նուրեդդինի հետ միասին: 1920 թ. մայիսի 27-ին նրան դուրս են գրում հիվանդանոցից և նորից բերում կենտրոնական բանտ, քանի որ դատարանը նրան դատապարտում է 5 տարի և 4 ամիս ազատազրկման, ապա Մեծ Բրիտանիայի Գերագույն կոմիսարության պահանջով, 1920 թ. օգոստոսի 2-ին նա հանձնվում է անգլիացիներին, ովքեր 1920 թ. սեպտեմբերի 30-ին հայերի կոտորածների մեջ մեղադրվող մի շարք այլ թուրք պաշտոնյաների հետ նրան էլ են աքսորում Մալթա[318]:

Կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների դատաքննության տասնմեկերորդ (1920 թ. հունվարի 1) և տասներկուերորդ (1920 թ. հունվարի 3) նիստերում ունկնդրության է արժանանում պաշտպանող կողմը՝ ի դեմս դատապաշտպանների և մեղադրյալների:

Դատավճիռը կայացվում է 1920 թ. հունվարի 8-ին: Դատավճռում արձանագրվում է, որ Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղարների և պատվիրակների դատաքննության արդյունքում պարզվել է, թե կուսակցությունը ողջ երկրի իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելուց հետո կատարել է տեղահանություններ, կոտորած ու կողոպուտ: Աքսորված հայերից մի քանիսի տները վերածվել են կուսակցության ակումբների և կահավորվել լքված գույքով[319]:

Դատավճռում ընդգծվում է նաև, թե Կաստամոնուի հայերը քիչ են եղել ընդհանուր բնակչության թվի համեմատ, և «Տեղահանության օրենքի» համաձայն՝ նրանք չպետք է աքսորվեին: Ըստ դատավճռի՝ երբ այստեղի նահանգապետ Ռեշիդը չի ենթարկվել իր շրջանի հայերին տեղահանելու հրահանգին՝ ասելով՝ «Ես ձեռքերս արյան մեջ չեմ թաթախի», Քաստամոնուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմին անմիջապես հեռացրել է նրան պաշտոնից ու վալի նշանակել Աթիֆին, որը փութաջանորեն իրականացրել է տեղահանությունը և տեղիք տվել ողբերգական դեպքերի[320]:

Դատավճռի մեջ նշվում է, որ բոլոր ապացույցներն ու փաստերը լիովին հաստատում են, որ հայերի ջարդերն իրագործել է Միություն և առաջադիմություն կուսակցության կողմից հիմնված Հատուկ կազմակերպությունը, իսկ կուսակցության պատասխանատու քարտուղարներն օժանդակել և դյուրացրել են այդ գործը[321]:

318 **Dadrian V., Akçam T.**, "Tehcir ve Taktil", 88.

319 "Takvîm-i Vekayi", No 3772, 10 Şubat 1920, s. 3.

320 Նույն տեղում, էջ 4:

321 Նույն տեղում:

Կուսակցության պատասխանատու քարտուղարների վերաբերյալ կայացված դատավճռի համաձայն՝ ամբաստանյալներից Կաստամոնուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմին մահմեդական բնակչությանը շարունակաբար հայերի դեմ հրահրելու, սեփական նախաձեռնությամբ նահանգապետին պաշտոնազրկելու, հայերի գույքը յուրացնելու, իր կողմից նշանակված նոր նահանգապետ Աթիֆի հետ հայերի տեղահանությունն իրականացնելու համար դատապարտվում է 10 տարվա տաժանակիր աքսորի:

Ըստ դատավճռի՝ չնայած Բոլուի հայության թիվը քիչ է եղել, և նրանք, ըստ օրենքի, չպետք է ենթարկվեին տեղահանության, սակայն մեղադրյալներից Բոլուի նախկին պատասխանատու քարտուղար Միդհադը հրահրել է տեղի բնակիչներին, որպեսզի վերջիններս ցույց անեն՝ ասելով՝ «Չենք ուզում հայերին»: Ապա վերոհիշյալ ամբաստանյալը պաշտոնից հեռացնել է տվել Բոլուի գավառապետի տեղակալ Ալի Իլմի բեյին, քանի որ վերջինս ընդդիմացել է տեղահանությանը: Այդպիսով՝ վերոնշյալ մեղադրյալը նպաստել է տեղահանության իրականացմանը: Դատարանն այս հանցագործությունների համար Բոլուի պատասխանատու քարտուղար Միդհադին նույնպես դատապարտում է 10 տարվա տաժանակիր աքսորի:

Ամբաստանյալներից Էդիրնեի պատվիրակ Արդուլ Գանիին, դատավճռի համաձայն, մեծ ազդեցություն է գործել տեղահանության գործի վրա, գինված հրոսակախմբերի հետ շրջել ամենուր, բռնագրավել հայերի դրամը, դիզել մեծ հարստություն: Դատավճռում նշվում է նաև, որ թեև վերոհիշյալ մեղադրյալը ցուցմունք է տվել առ այն, թե իբր տեղահանությունն Էդիրնեում կատարվել է ընդամենը մեկ գիշերվա ընթացքում, և հայերի միայն մեկ քարավան է աքսորվել, սակայն դատարանը հարցում է արել Էդիրնե ու պատասխան ստացել, որ հայերի տարագրությունն այստեղ իրականացվել է երեք քարավաններով, որոնք ուղարկվել են Դեր Զոր: Քանի որ Արդուլ Գանիի դեմ նույն մեղադրանքով դատական գործ էր հարուցվել նաև Էդիրնեի տեղահանության դատական գործի շրջանակներում, դատարանը որոշում է նրա դատավճիռն ըստ այդմ կայացնել:

Պատասխանատու քարտուղարների վերաբերյալ դատավճռով մեղադրյալներից Մանիսայի պատասխանատու քարտուղար Ավնի բեյը որոշ անձանց անօրեն կերպով բանտարկել տալու համար դատապարտվում է 9 ամսվա ազատազրկման:

Դատարանն ազատ է արձակում մնացած ամբաստանյալներին[322]:

322 "Takvîm-i Vekayi", No 3772, 10 Şubat 1920, ss. 4-6.

2.4 Հայերի տեղահանության և կոտորածների դատավարություններն ըստ շրջանների. առանձին անհատների դատաքննություններ

Հայերի կոտորածների կազմակերպիչների պատասխանատվության խնդիրը Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանների կողմից քննվել է նաև՝ ըստ Օսմանյան կայսրության տարբեր շրջանների: Գլխավոր դատավարությունները ներառյալ՝ կարելի է արձանագրել շուրջ 63 առանձին դատական գործերի դեպքեր, որոնք բոլորն էլ հարուցվել էին հայերի տեղահանման ու կոտորածների (Tehcir ve Taktil) մեղադրանքով: Խոսքը միայն Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանում կայացած դատավարությունների մասին է, քանի որ 1919-1921 թթ. նման դատաքննություններ են իրականացվել ոչ միայն Օսմանյան կայսրության մայրաքաղաքում, այլ նաև՝ տարբեր նահանգներում ու գավառներում[323]:

Օսմանյան կայսրության տարբեր նահանգների և գավառների հայության տեղահանության և կոտորածների դատավարությունների մասին տեղեկություններ են պահպանվել տվյալ ժամանակաշրջանում Ստամբուլում հրատարկվող ինչպես օսմաներեն, այնպես էլ հայալեզու, ֆրանսալեզու, հունալեզու և անգլալեզու մամուլում[324]: Շատ օրաթերթեր ամենայն մանրամասնությամբ ներկայացրել են Ռազմական ատյանում կայացած դատական նիստերի ընթացքը: Եղել են նաև պարբերականներ, որոնցում տպագրվել են միայն դատաքննության կարևոր հատվածների մասին հրապարակումներ:

Յոզղատի դատավարությունն առաջինն էր հայերի տեղահանության և զանգվածային սպանությունների մեղադրանքով հարուցված դատական գործերի շարքում: Դատը (18 նիստ) տեղի է ունեցել 1919 թ. փետրվարի 5-ից մինչև ապրիլի 7-ը: Կարծես թե ճակատագրի հեգնանքով, որպես դատարանի դահլիճ էր ընտրվել հենց այն վայրը, որտեղ 10 տարի առաջ Աբդուլ Համիդի ներկայությամբ հանդիսավոր կերպով բացվել էր օսմանյան խորհրդարանը[325]:

Մեղադրյալները սկզբնապես 3 հոգի են եղել՝ Յոզղատի մութասարիֆ, Բողազլըյանի կայմակամ Քեմալը, Յոզղատի ժանդարմերիայի գումարտակի հրամանատար Թևֆիկը և Յոզղատի վաքֆային վարչության նախկին պաշտոնյա Ֆեյյազ Ալիհն: 17-րդ նիստում վերջինիս գործն առանձնացվել է՝ հետագայում քննելու նպատակով, բայց մնացել է թղթի վրա[326]: Դատավճիռը կայացվել է ապրիլի 8-ին, համաձայն որի՝ ամբաստանյալներից Բողազլըյանի կայմակամ Քեմալը դատապարտվել է մահվան[327], իսկ ժանդարմերիայի գումարտակի հրամանատար Թևֆիկը՝ 15 տարվա տաժանակիր աքսորի[328]:

Հարկ է նշել, որ Յոզղատի դատական նիստերի ժամանակ և, հատկապես, 1919 թ. փետրվարի 22-ի նիստում ընթերցվել են բազմաթիվ պաշտոնական փաստաթղթեր, հատկապես՝ ծածկագիր հեռագրեր, որոնց վավերականությունը հաստատելուց հետո է միայն ռազմական դատարանը մահվան դատապարտել Քեմալին[329]:

Դեռևս 1918 թ. դեկտեմբերի 12-ին Յոզղատի կառավարիչ (մութասարիֆ) Ջեմալ բեյը գրավոր ցուցմունքներ էր տվել հետաքննող հանձնաժողովին, համաձայն որոնց՝ տեղահանության գործի մեջ ընդգրկված էին եղել նաև տեղի ոստիկանները: Յոզղատ քաղաքից ու շրջակա գյուղերից տարագրված հայերը կոտորվել և բնաջնջվել էին ոստիկանների, հրոսակախմբերի ու բնակչության կողմից[330]:

Սույն դատաքննության առաջին նիստում (1919 թ. փետրվարի 5) դատախազն արձանագրել է, թե տեղի հայ բնակչության 1800 հոգուց ընդամենը 80 հոգին է ողջ մնացել[331]:

Յոզղատի դատավարության երրորդ նիստում հաստատվել է, որ Յոզղատի հայերի կոտորածներին տեղի բնակչության մասնակցությունն ապահովվել ու խրախուսվել էր մեղադրյալներ Քեմալի և Թևֆիքի կող-

323 **Dadrian V., Akçam T.,** "Tehcir ve Taktil", s. 149.

324 Սույն դատավարությունների մասին տեղեկություններ հաղորդած բոլոր թերթերի անվանումները տես **Գրիկէր,** Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, էջ 34:

325 **Փիլիպոսեան Ն., Քէստէքեան Ա. (Կապենց Ա.),** Յուշարձան եօզղատցիներու (Եօզկատ), Ֆրէզնօ, 1955, էջ 405:

326 Ֆեյյազ Ալիհն բանտից ազատ էր արձակվել, որպեսզի հնարավորություն ունենար ներկայանալ մեկ այլ շրջանում գտնվող դատարանին, որը պետք է քններ իր գործը, սակայն նա ուղևորվել է Անկարա և պատգամավոր ընտրվել այստեղի նորաբաց Ազգային ժողովում, տես **Dadrian V., Akçam T.,** "Tehcir ve Taktil", s. 194.

327 Հարկ է նշել, որ Քեմալը մասամբ ընդունել էր իր մեղքը՝ ասելով, թե ինքն ընդամենը բարեխղճորեն կատարել է կառավարությունից ստացված հրահանգը, տես Tehcir ve Taktil Muhakemesi, "Alemdar", 28 Mart 1919. Նա կախաղան բարձրանալուց անմիջապես առաջ ևս փորձել է արդարանալ նույն փաստարկով, տես **Գրիկէր,** Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, էջ 1:

328 "Takvîm-i Vekayi", No 3617, 7 Ağustos 1919 ss. 1-2.

329 **Գրիկէր,** Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, էջ 66:

330 Նույն տեղում, էջ 125:

331 «Թուրքերուն աչքկապուկը. դահիճները դատել կ'ընացնեն հայերը ամբաստանելու համար», «Ճակատամարտ», 7 փետրվար, 1919:

մից: Այսպես՝ քաղհայցվորի ներկայացուցիչ Լևոն Ֆերիդը վկայել է. «Քեմալը հայոց ողբերգության թատերաբեմերից Գյոլլեր գավառակում (Նահիեում)[332] կատարված կոտորածի առնչությամբ ասել էր. «Թատերական ներկայացման ենք գնում»: Մեղադրյալը, Գյոլլերի մահմեդական բնակչության ֆանատիկ զգացմունքները գրգռող ելույթ ունենալով, ապահովել էր, որպեսզի ջարդերին մասնակցեր նաև տեղի բնակչությունը: Քեմալը, տառապող ժողովրդի հեծեծանքները և տանջանքները դիտելով, նարգիլե էր ծխել, իսկ ժանդարմերիայի հրամանատար Թևֆիկը, ելույթ ունենալով, խրախուսել էր բնակչության մասնակցությունը կոտորածին և հրացանով անձամբ սպանել երեք հոգու»[333]:

Միևնույն նիստում Լևոն Ֆերիդը նշել է. «Կոտորածի թատերաբեմ դարձած Գյոլլերում 6000 հոգու սպանությունը հայտնի է այն դիակների շնորհիվ, որոնցից յուրաքանչյուրի մարմնի անդամները կտրատված են եղել որևէ տեղից: Դա հայտնաբերվել է բժշկական հանձնաժողովի կողմից կատարված դատաբժշկական զննումների շնորհիվ»[334]:

Նույն նիստի ժամանակ անդրադարձ է եղել նաև բողոքական հայերի տեղահանությանը, ովքեր, ըստ օրենքի, չպետք է ենթարկվեին աքսորի: Քաղհայցվոր Հայկի համածայն՝ «...երբ իր մայրը Քեմալ բեյին ասել էր, թե ինքը բողոքական է, և խնդրել տեղահանության չենթարկել իրեն, Քեմալը պատասխանել է, թե իր կարծիքով բոլորը մեկ են՝ բողոքական, թե կաթոլիկ. բոլորը հայ են և հեռանալու են»[335]:

1919 թ. փետրվարի 11-ին տեղի ունեցած չորրորդ նիստում հանդես է եկել վկա Արթինը, որը հայտնել է. «...հայերին ութ-ութ կապել են իրար և Յոզղատից դուրս տարել, խլվել են հայերի մոտ գտնվող թանկարժեք իրերը, դրամը, կողոպտիչները կանանց հարբեցրել են Օսման փաշա դերվիշների մենաստանի մոտակայքում, Յոզղատի մութասարիֆի տեղակալ, Բողազլըյանի կառավարիչ Քեմալ բեյը 500 հեծյալ ավազակախմբով եկել է Գյոլլեր, մահապատժի են ենթարկել նախ՝ քահանայի փոքրիկ երեխային, ապա՝ կնոջը և այնուհետև՝ քահանային, որից հետո Քեմալը, սուլիչ փչելով, քաջալերել է մարդասպաններին՝ ասելով՝ «Դուք չգիտեք՝ ինչպես կոտորել»: Չեթեները (ավազակախմբերը) Քեմալ բեյի այս խոսքերից հետո սկսել են ամենայն դաժանությամբ կոտորել ամեն պատահածի»[336]:

Միևնույն նիստում, որպես վկա, ցուցմունքներով հանդես է եկել նաև Յոզղատի նախկին պատգամավոր Նաբիր բեյը, որը դատարանին հայտնել է, թե ինքը տեղի կառավարչին դիմել էր հայերի կոտորածները դադարեցնելու համար, սակայն՝ ապարդյուն[337]:

Յոզղատի դատաքննության 1919 թ. փետրվարի 12-ի նիստում դատարանին տրված վկայությունների շարքում հիշատակման են արժանի հատկապես հայ վկա Օժենի Վառվառյանի ցուցմունքները, որոնք առնչվում էին նաև բռնի կրոնափոխման դեպքերին. «...Այդպես բերվեցինք Օսման փաշա դերվիշների մենաստան, այնտեղ էր գտնվում նաև յոզղատցի ոստիկան Նուման էֆենդին, և ահա այստեղ գտնվող Ֆեյյազ բեյն ու Նուման էֆենդին վերցրին մեզ մոտ գտնվող դրամները և հրամայեցին մեզ ուղարկել Ֆեներ: Գիշերը ինձ և մեկ-երկու աղջկա ևս ասացին՝ «Ձեզ մահմեդական ենք դարձնելու. մնացե՛ք այստեղ», և պահեցին: Մյուսներին տարան 50-60 սայլերով: Այդ օրն այնտեղ էր նաև մեղադրյալ Քեմալ բեյը: Ձնռքին թուր՝ եկավ մեզ մոտ և հետևյալն ասաց իր մարդկանց. «Եթե դուք սրանց բոլորին էլ, ինչպես որ հարկն է, չսպանեք, ես ձեզ կսպանեմ: Միթե մեր մայրերն այսօրվա համար չեն ծնել մեզ: Դեհ, ինչ եք կանգնել, գնացե՛ք, կոտորե՛ք: 6 տարեկանից մինչև 70 տարեկան՝ բոլորի՛ն կոտորեք»: Այնտեղ հենց իմ աչքի առաջ կոտորեցին բոլոր մարդկանց՝ ցորեն հնձելու պես, իսկ ինձ խլեցին մորս գրկից՝ սպանելու համար, ապա հարվածեցին գլխիս: Սպանվածների գրպանները դատարկեցին, երեկոյան մեզ տարան ուղիղ կայմակամություն (գավառապետարան): Այդ կառավարիչ Քեմալ բեյն այնտեղ մեկ անգամ ևս ծեծեց ինձ և սեփական ձեռքերով խլեց զգեստիս տակ գտնվող 1 լիրայի հասնող գումարը, ապա ուղեկցորդներին հրամայեց սպանել ինձ, սակայն վերջիններս ինձ փախցրեցին ու տարան Փոլ գյուղը, որտեղ Աղըգյուզել անվամբ մի ժանդարմ, ինձ իր հետ վերցնելով, տարավ Ինջիրլի գյուղը, այստեղ տասնապետ Ահմեդն ինձ 6 ամիս պահեց իր տանը, ապա ես փախա այն ախոռից, որտեղ ինձ փակել էին»[338]: Դատախազի այն հարցմանը, թե Օժենին ինչպես է ազատվել կոտորածից, վերջինս պատասխանեց, թե իսլամ է ընդունել և այդպիսով փրկվել մահից[339]:

332 Գավառակ, որը գտնվում էր Յոզղատից 12 ժամ հեռավորության վրա:

333 Tarihî Muhakeme, "Alemdar", 10 Şubat 1919.

334 Նույն տեղում:

335 Նույն տեղում: 1915 թ. մարտի 2/15-ի գաղտնի հրահանգի համածայն՝ Դեր Զոր աքսորմանը ենթակա էին նաև օտարահպատակ հայերը, տե՛ս **Ավագյան Ա.**, 1915 թ. Օսմանյան Թուրքիայում օտարահպատակ և վատառողջ հայերի տեղահանման խնդրի վերաբերյալ (թուրքական արխիվի մեկ փաստաթղթի հիման վրա), Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 2 (106), Երևան, 2005, էջ 194-197:

336 Tarihî Muhakeme, "Alemdar", 12 Şubat 1919.

337 Նույն տեղում:

338 Tarihî Muhakeme, "Alemdar", 13 Şubat 1919.

339 Նույն տեղում:

Նույն նիստում հանդես եկած վկա Ազնիվ Իբրահոսյանը Ռազմական ատյանին հայտնել է, թե մոտ 860 տուն ոչ մահմեդական բնակչություն էր բռնագաղթեցվել, ինքն էլ էր եղել նրանց մեջ, մի մասն ուղարկվել էր Թաշփրնար և այստեղ կոտորվել, իսկ մեղադրյալ Քեմալ բեյն իր գործած ոճիրների համար վաստակել էր «մսագործ գավառապետ» ("kasap kaymakam") մականունը[340]:

1919 թ. փետրվարի 15-ին կայացած 6-րդ նիստում վկա Ստեփանը ցուցմունքներ է տվել առ այն, որ նախ՝ Գյուլլեր, ապա՝ Էլեքչիլեր աքսորված հայերը կացիններով, քյուրգներով և գերանդիներով սպանվել են տեղի գյուղացիների կողմից[341]: Վկան հայտնել է, որ ջարդին ներկա են եղել նաև ամբաստանյալները, և որ կոտորվել է իրենց ողջ գյուղը[342]: Նույն նիստում հայերի կոտորածների փաստը հաստատող վկայություններ է տվել նաև տիկին Աննիկը, որը նշել է, թե առաջին և երկրորդ քարավաններից առանձնացվել են տղամարդիկ, իսկ երրորդից՝ գեղեցիկ կանայք, և մնացած հայերը՝ կոտորվել[343]:

1919 թ. փետրվարի 18-ին կայացած 7-րդ նիստում հանդես եկած վկաներից Անկարայի 15-րդ կորպուսի հրամանատար, գնդապետ Հալիլ Ռեջային վկայել է, որ «ըստ մայոր Նահաբ բեյի[344] ստացած ծածկագիր-հեռագրի՝ Բողազլրյանում բնաջնջվել էին 2-ից 3 հարյուր հայեր»[345].

«**Հալիլ Ռեջայի-** Հանցագործությունների հետաքննիչ հանձնաժողովում էլ են ինձ հարցրել, թե Բողազլրյանից հեռագիր ստացել եմ, թե ոչ: Կարծեմ՝ նման մի հեռագիր է ստացել Նահաբ բեյը, այն վերաբերել է 2-3 հարյուր հայերի բնաջնջմանը: Հեռագիրն ինձ մոտ չէ: Այն պետք է որ Կայսերիից հղված լինի Անկարա:

Դատախազ- Ինչ պատճառներից ելնելով է Ռազմական գերատեսչությունը զբաղվել տեղահանության խնդիրներով:

Հալիլ Ռեջայի- Տեղյակ չեմ: Ինձ նման հեռագիր հասավ, ես էլ այն հանձնեցի գլխավոր հրամանատարությանը: Նահաբ բեյից չեմ հարցրել պատճառների մասին: (...)

Դատախազ- Որտեղից է Նահաբ բեյը նման տեղեկություն ստացել:

340 Նույն տեղում:

341 Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 16 Şubat 1919.

342 Նույն տեղում:

343 Նույն տեղում:

344 Նահաբ բեյը եղել է Կեսարիայի 15-րդ կորպուսի հրամանատարը:

345 Tarihî Muhakeme, "Alemdar", 19 Şubat 1919.

Հալիլ Ռեջայի- Բողազլրյանից»[346]:

Նույն նիստում լսել են նաև ազգությամբ հույն վկա Հրիսթաքի Անդրեյադիսին, որը հանդես է եկել հետևյալ վկայությամբ. «331 թ. (1915) հուլիսի 24-ին՝ ուրբաթ առավոտյան, հրաման նկավ, և Ջեմալ բեյը[347] տեղահանությունն սկսեց: Աքսորյալների առաջին խումբը հաջորդ օրը տարագրվեց Սրվաս: Երկրորդ խումբը նույնպես Սրվաս ուղարկվեց: Հայերի երրորդ խումբն աքսորվեց Կայսերի: Այդ ժամանակ Միություն և առաջադիմություն կուսակցության պատվիրակը[348] հայերին բնաջնջելու վերաբերյալ բանավոր հրամաններ տվեց: Ջեմալ բեյը չհամաձայնեց դրան: Գնաց Չորում: Լսեցինք, որ պաշտոնից հեռացվել է. նրան փոխարինեց Քեմալը: Լսեցինք, որ բնաջնջվել են միայն Բողազլրյանի հայերը: (...)

Այնուհետև ժողովրդին գույգ-գույգ տարել են Բաղլրջայի և Բեզլիհանի կողմերը: Լցրել են մի փարախի մեջ, որի շուրջը ճահճոտ է եղել, և այնտեղից երեք-երեք կամ հինգ-հինգ հանելով՝ սպանել: Փախած-թաքնվածներին էլ բացահայտելու նպատակով ասել էին, թե իսլամ ընդունածները փրկվելու են, սակայն երբ փախածները դուրս էին եկել իրենց թաքստոցներից, նրանց էլ էին կոտորել»[349]:

Յոզղատի դատաքննության 9-րդ նիստում, որը տեղի է ունեցել 1919 թ. փետրվարի 22-ին, դատարանի նախագահ Հայրեթ փաշան դատական քարտուղարին խնդրել է ընթերցել մի շարք ծածկագիր հեռագրեր, որոնցից մեկում դիվիզիոնի հրամանատարը կորպուսին էր հաղորդում Բողազլրյանում 1500 հայերի սպանության մասին, իսկ մյուսում, որը կրում էր 207 համարը, նշվում էր, որ Բողազլրյանում և շրջակա բնակավայրերում բնաջնջվել էին 360 հայեր[350]:

Սույն դատական գործընթացի 10-րդ նիստում, որը կայացել է 1919 թ. մարտի 5-ին, վկաներից ունկնդրության է արժանացել Թոքաթի մութասարիֆը, որն ասել է, թե հայերի սպանությունների փաստը հայտնի է եղել բոլորին[351]:

346 Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 19 Şubat 1919.

347 Յոզղատի մութասարիֆը:

348 Յոզղատում Միություն և առաջադիմություն կուսակցության պատվիրակը եղել է Նեջաթի բեյը:

349 Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 19 Şubat 1919.

350 Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 23 Şubat 1919. Սույն նիստում ընթերցված մյուս ծածկագիր հեռագրի մասին տե՛ս **Գրիկէր**, Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, էջ 61:

351 Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 6 Mart 1919.

Նույն նիստում, որպես վկա, ունկնդրության է արժանացել նաև վարչական տեսուչ Նեդիմ բեյը, որը հայտնել է, թե ըստ իրեն հասած խոսակցությունների՝ տարագրված 140 հոգանոց հայկական քարավանին գիշերը փակել են մի փարախում և գավազաններով ոչնչացրել: Վկան նաև շեշտել է, որ հայերին աքսորել են որոշ գյուղերից, և որ ճանապարհին նրանք են-թարկվել են ավազակախմբերի (çete) հարձակումներին[352]:

Այս նիստում ևս ընթերցվել է Շահաբ բեյի ցուցմունքը, ըստ որի՝ Բողազլըյանի տեղահանության ժամանակ կատարվել են սպանություններ և չարաշահումներ: Ներկայացվել են ևս երկու ցուցմունք: Դրանցից առաջինում, որը հաղորդվել էր ժանդարմերիայի կողմից, նշվում էր, թե 36 հայերից 11-ը սպանվել էին հրոսակախմբերի կողմից, և մյուսները կոտորվել էին հետագայում, իսկ երկրորդը, որի վրա նշված էր «գաղտնի» բառը, վերաբերում էր Բողազլրյանի տեղահանությանը[353]:

Յոզղատի դատավարության ընթացքում բացահայտվել է, որ հայերի քարավանները հսկելու նպատակով պետության կողմից ուղարկված մարդիկ ևս տեղի բնակչությանը հրահրել են հայերի դեմ: Այսպես՝ 1919 թ. մարտի 24-ի նիստում դատախազ Հարալամբո Էֆենդին ամբաստանյալ Քեմալին հարցրել է, թե հայերի քարավանները հսկելու և կարգուկանոնը պահպանելու նպատակով ուղարկված Արդուլլահր ինչու էր խառնակչություններ հրահրել բնակչության մեջ: Դատախազը եզրակացրել է, թե պետական պաշտոնյաների առկայության պայմաններում պետության կողմից նման անձանց ևս ուղարկելը հատուկ նպատակ էր հետապնդել[354]:

Ամբաստանյալ Քեմալ բեյի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքի համաձայն՝ ինքը ստորադասներին հրամայել էր տեղահանության վերաբերող հրամանների մի մասն ընթերցելուց հետո այրել: Այդ մասին Քեմալին հիշեցվել է նաև 1919 թ. մարտի 24-ի նիստում: Թեև Քեմալ բեյը փորձել է հերքել իր իսկ ցուցմունքը, սակայն դատախազ Հարալամբո էֆենդին հաստատել է այդ փաստը[355]:

Միևնույն նիստում դատարանի նախագահի կողմից հիշատակվել է Յոզղատի հոգևոր առաջնորդի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքը, համաձայն որի՝ մյուֆթին փորձել էր հանդիմանել Քեմալին, իսկ

352 Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 7 Mart 1919.

353 Նույն տեղում

354 Divan-ı Harb'de Tehcîr Muhakemesi Başladı, "Alemdar", 25 Mart 1919.

355 Նույն տեղում:

վերջինս ասել էր. «Դու կառավարությունից բարեգութ ես»[356]:

Սույն դատաքննության ընթացքում ամբաստանյալները փորձում էին իրենց արդարացնել՝ վկայակոչելով կառավարության կողմից ստացված հրամանները: Դատալսումների ընթացքում նրանց տված ցուցմունքների համաձայն՝ կառավարությունը գոյության միջոցներ չէր տրամադրել հայերի քարավաններին[357]:

Յոզղատի դատավարության 1919 թ. մարտի 27-ի նիստի ժամանակ նույն փաստարկով է իրեն փորձում արդարացնել ամբաստանյալներից Քեմալ բեյը[358]:

Միևնույն նիստում դատարանին ցուցմունքներ տված վկա Մեհմեդ բեյը, որն անգլոհպատակ գնդապետ էր, հայտնել է, թե ինքն անձամբ է տեսել, թե ինչպես են կացիններով ու դաշույններով հայերին կոտորում[359]: Մեհմեդ բեյը նշել է, որ հայերին կոտորել են Քարաքուշ լեռնահովտում[360]:

Դարձյալ 1919 թ. մարտի 27-ի նիստում հանդես եկած վկա Սկյուտարի մութասարիֆ Մեհմեդ Ալի բեյը չի բացառել հայերի կոտորածներին պաշտոնյաների և տեղի բնակչության մասնակցության հավանականությունը, սակայն ըստ վկայի ցուցմունքի՝ դա հնարավոր էր կառավարության կողմից տրված գաղտնի հրամանի դեպքում միայն[361]:

Նույն նիստում նաև ընթերցվել է ամբաստանյալ Թևֆիկի ստորագրությունը կրող մի տեղեկագիր, որում մասնավորապես առկա էր «Հայերի արմատը չորացնել» արտահայտությունը[362]:

Տրապիզոնի դատական գործը (20 նիստ) տեղի է ունեցել 1919 թ. մարտի 26-ից մինչև մայիսի 20-ը: Դատավճիռը կայացվել է մայիսի 22-ին: Դատին ներկա գտնվող ամբաստանյալները 7 հոգի էին՝ Մուստաֆա Նուրին, Մեհմեդ Ալին, Յուսուֆ Ռըզան, կայմակամ Թալեաթը, Ալի Սայիբը, Նիազին և Նուրին: Տրապիզոնի դատավարության 16-րդ նիստում Յուսուֆ Ռըզայի գործն առանձնացվել է ու հետագայում քննվել Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների

356 Նույն տեղում:

357 Նույն տեղում:

358 Tehcîr ve Taktil Muhakemesi, "Alemdar", 28 Mart 1919.

359 Նույն տեղում:

360 Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 28 Mart 1919.

361 Tehcîr ve Taktil Muhakemesi, "Alemdar", 28 Mart 1919.

362 ««Պէտք է Հայերուն արմատը չորցնել» ըսեր է ամբաստանեալ Թէվֆիկ», «Ճակատամարտ», 28 մարտ, 1919, N 115 (1936):

դատական գործում: Տրապիզոնի դատավարության ընթացքում հեռակա կարգով քննվել են նաև Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիի և կուսակցության պատասխանատու քարտուղար Նայիլ բեյի գործերը: Դատավճռի համաձայն՝ Ջեմալ Ազմին և Նայիլը հեռակա կարգով դատապարտվել են մահվան, Մեհմեդ Ալին՝ 10, իսկ Մուստաֆան և Նուրին՝ մեկական տարվա ազատազրկման[363]: Դատարանի կազմը, Նիազիի և Թալեաթի մեղավորությունը հաստատող փաստերը շրջանցելով, արդարացրել է նրանց[364], իսկ առողջապահության տեսուչ Ալի Սայիբի դատաքննությունը, իբրև թե «որոշակի հանցանշան չլինելու պատճառով», կարճվել է: Հարկ է նշել, որ Ալի Սայիբը մեղադրվում էր ոչ միայն հայ երեխաների սպանության, այլ նաև՝ տիկին Արսլանյանի զարդեղենը հափշտակելու մեջ: Ալի Սայիբին ներկայացված մեղադրանքների մեջ կար նաև մեկ այլ՝ շատ ուշագրավ մեղադրանք, ըստ որի՝ Ալի Սայիբը հիվանդանոցում թունավորել էր Վարդան անվամբ ռուսահպատակ մի հայի[365]: Հետագայում նրա դեմ առանձին դատաքննություն է կատարվել՝ Տրապիզոնի Կարմիր մահիկ հիվանդանոցում գազի և այլ միջոցներով հայերի թունավորման մեղադրանքով[366]:

1920 թ. հոկտեմբերին ավարտվել է Տրապիզոն նահանգի Յոմրա գավառի հայերի տեղահանության և կոտորածների դատավարությունը[367]: Սույն դատական գործի մեղադրյալներն են եղել հարյուրապետ Թևֆիքը, կրտսեր լեյտենանտ Սալիմը և ստամբուլցի Մուհլիսը: Ըստ մամուլում հրապարակված տեղեկությունների՝ Թևֆիքը դատապարտվել է 10 տարվա տաժանակիր աքսորի: Մյուս մեղադրյալների դատավարությունը շարունակվել է: Յոմրայի դատավճռում նշվել է, որ Թևֆիքը 1915 թ. հունիսի 15-ին տեղահանության մասին 19 կետից բաղկացած մի հրահանգագիր է ստացել Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիից: Հարկ է ընդգծել, որ Յոմրա գավառի դատավարության ժամանակ հանդես եկած վկաների մեծ մասը եղել են թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ, ովքեր վկայել են, թե այստեղ հայերին լցրել են մակույկները և Սև ծովում խեղդամահ արել[368]:

Տրապիզոնի դատավարության մեղադրյալներից բժիշկ Ալի Սայիբի առանձնացված գործը քննվել է 1919 թ. հուլիսի 8-ից դեկտեմբերի 21-ը: Ալի Սայիբը մեղադրվում էր Տրապիզոնի Կարմիր մահիկ հիվանդանոցում գազի և այլ միջոցներով հայերի թունավորման մեջ[369]: Սույն դատաքննության նիստերում ունկնդրության արժանացած վկաները հայտնել են, թե ըստ իրենց հասած տեղեկությունների՝ ամբաստանյալը մորֆինով թունավորել է հայ երեխաներին և պարկերի մեջ լցնելով՝ սպանել նրանց: Ավելին՝ դեռևս դատի առաջին նիստում (1919 թ. հուլիսի 8) մեղադրյալի դեմ ուղղված զեկուցմամբ հանդես եկած բժիշկ Զիյա բեյը վկայել է, որ Ալի Սայիբը մանուկներին սպանել էր ներարկման միջոցով, ապա պարկերը լցնելով՝ ոչնչացրել: Չնայած այս բոլոր վկայություններին՝ դատարանն արդարացրել է մեղադրյալին՝ վերոնշյալ մեղադրանքները հաստատող ականատես վկա չգտնվելու հիմքով[370]: Բժիշկ Ալի Սայիբի արդարացումը Ռազմական ատյանի կողմից մեկն է այն բազմաթիվ օրինակներից, երբ դատարանն ազատ է արձակել մեղադրյալին՝ չնայած վերջինիս մեղավորությունը հաստատող փաստերին ու վկաներին: Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիի հրահանգով Ալի Սայիբի կատարած թունավորումների և սպանությունների մասին իրենց ուսումնասիրություններում վկայում են նաև հայ հետազոտողներ Ս. Ակունին, Մ. Գուշակճյանը և ուրիշներ: Այսպես՝ Ակունին Ալի Սայիբին տալիս է մանկասպան բնորոշումը[371], իսկ Գուշակճյանը հայտնում, որ Տրապիզոնի հույների մետրոպոլիտի խնդրանքով նրա մոտ հավաքված մոտ 600 որբացած հայ երեխաներ մանկատներում տեղավորվելու պատրվակով խլվել են մետրոպոլիտի ձեռքից, նրանցից 150-ին

363 "Takvîm-i Vekayi", No 3616, 6 Ağustos 1919, ss. 1-3.

364 Օրինակ՝ Տրապիզոնի դատաքննության 1919 թ. ապրիլի 26-ի նիստում ընթերցվել է տրապիզոնցի Մուրադի գրավոր վկայությունը՝ Նիազիի կողմից լքված գույքի յուրացման վերաբերյալ, տե՛ս Divan-ı Harb-i Örfi'de Trabzon Tehcîr ve Taktil Muhakemesi, "Alemdar", 27 Nisan, 1919.

365 Ռուսահպատակ Վարդանին Տրապիզոնում ջրասույզ էին արել 40 հայ կուսակցական գործիչների և մտավորականների հետ մեկտեղ, սակայն Վարդանը, լինելով շատ ճարպիկ լողորդ, կարողացել էր կապված ձեռքերով լողալով՝ ափ հասնել: Դա այնքան էր զարմացրել հայերի ոչնչացումը իսկող ոստիկաններին, որ վերջիններս որոշել էին չսպանել նրան, այլ տանել Կարմիր մահիկ հիվանդանոց: Սակայն, 1919 թ. ապրիլի 7-ին դատարանին ցուցմունքներ տված վկա ֆրանսահպատակ Վիտալիի խոսքերով, այստեղ Վարդանին թունավորելով սպանել էր բժիշկ Ալի Սայիբը, տե՛ս Trabzon Tehcir ve Taktil Muhâkemesi, "Alemdar", 8 Nisan, 1919. Թեև Ալի Սայիբի՝ հիվանդանոցում կատարած թունավորումները հաստատող վկայություններ են տվել նաև Տիգրան Նարդիյանը, տիկին Մանիկը, Տրապիզոնի վերաքննիչ դատարանի նախագահ Հիլմին և ուրիշներ, սակայն դատարանը թունավորումների մասին Ալի Սայիբի դեմ եղած վկայությունները «բավարար» չի համարել:

366 **Akçam T.**, Ermeni Tabusu Aralanırken Diyalogtan Başka Çözüm Var mı?, s. 90.

367 Նույն տեղում, էջ 91:

368 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 179.

369 **Akçam T.**, Ermeni Tabusu Aralanırken Diyalogtan Başka Çözüm Var mı?, s. 90.

370 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 168.

371 **Ակունի Ս.**, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ.Պոլիս, 1920, էջ 179:

անձամբ թունավորել է բժիշկ Ալի Սայիբը, իսկ մնացածները հանձնվել են մակույկավարների պետ Բայրաքթարօղլի Ռահմիին, որը երեխաներին լցրել է պարկերը և ծովում խեղդամահ արել[372]: Բացի այդ՝ Տրապիզոն նահանգի տեղահանության և կոտորածների դատաքննության համար կազմված մեղադրական ակտում նշվում էր, որ Ալի Սայիբին պետք է մեղավոր ճանաչել «հայ երեխաներին մեծ կողովներով տեղափոխողների հանցագործ գործողություններին աջակից լինելու մեջ»[373]: Ինչ վերաբերում էր թունավորման դեպքերին, սույն ամբաստանագիրը կազմած դատախազ Ֆերիդունը թույների տեսակը պարզելու համար առաջարկում էր կատարել դատաբժշկական փորձաքննություն՝ տեղում դիազննություն կատարելով[374]:

Հարկ է նշել, որ Տրապիզոնի հիվանդանոցում հայերի թունավորման դեպքերի կապակցությամբ 1921 թ. հունվարին դատական գործ է հարուցվել նաև բժիշկ Ավնիի դեմ, որի դատավարության ընթացքի վերաբերյալ մամուլում տեղեկություններ չեն հաղորդվել[375]:

Տրապիզոնի դատական նիստերի ընթացքում լսված վկայությունների շնորհիվ լիովին հաստատվել է, որ այստեղ տեղի ունեցած ջարդերը, թունավորումները, ջրախեղդ անելու գործողություններն ուղղորդվել են Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիի կողմից, որն իր հերթին հրահանգներ էր ստացել կենտրոնական կառավարությունից[376]:

Սույն դատավարության ընթացքում մեղադրյալներն անգամ չէին թաքցնում, որ հայերի կոտորածների կազմակերպիչների մեծ մասը դեռ չէր ձերբակալվել, և հազարավոր հայասպաններ դեռևս գտնվում էին ազատության մեջ: Օրինակ՝ ամբաստանյալներից Նիազին Տրապիզոնի դատաքննության 1919 թ. մարտի 26-ի նիստում հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ. «Ձեզ ավելի հարմար է բոլոր գավառներում մեկական

372 **Գուշակճեան Մ.**, Տրապիզոնի եւ Սամսոնի նահանգներու տեղահանութիւնն ու ջարդերը, Գերսամ Ահարոնեան (խմբագրապետ «Ջարթօնքի»), Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), Պէյրութ, Ատլաս տպարան, 1965, էջ 472: Տրապիզոնի առողջապահական տեսուչ Ալի Սայիբի՝ հայ երեխաներին թունավորելու մասին տե՛ս նաև՝ **Կիրակոսյան Ջ.**, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք երկրորդ, Երևան, 1983, էջ 216:

373 Trabzon Taktil ve Tehciri. İddianamenin Kıraatı, "Alemdar", 16 Nisan, 1919.

374 Նույն տեղում:

375 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 183.

376 Երիտթուրքական կառավարության կողմից Հայոց ցեղասպանության որոշման ընդունման մասին մանրամասն տե՛ս **Աֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), էջ 168-189:

հետաքննիչ հանձնաժողով կազմել և մեզ պես անմեղների դատել՝ այն դեպքում, երբ հազարավոր մարդասպաններ ազատ թրև են գալիս»[377]:

Տվյալ դատաքննության ընթացքում բազմաթիվ վկայություններ են եղել հայերի քարավանների՝ ճանապարհներին կոտորածների ենթարկված լինելու և ծովում ջրահեղձ արվելու մասին: Մասնավորապես 1919 թ. ապրիլի 1-ին կայացած նիստում հանդես եկած վկաներից Նևարեթի ցուցմունքների համաձայն՝ հայերի քարավանները «պաշտպանելու» նպատակով որպես ուղեկցորդ էր նշանակվել 50 ժանդարմ, որոնք, սակայն, ճանապարհին սպանդի էին ենթարկել անդամալույծ և ուժասպառ հազարավոր մարդկանց, իսկ պարկերի մեջ լցված երեխաներին՝ գետերում խեղդել[378]:

Դատաքննության 1919 թ. ապրիլի 3-ի նիստում ընթերցվել է քաղհայցվոր Սիրանուշի գրավոր ցուցմունքը, ըստ որի՝ Միություն և առաջադիմություն կուսակցության որոշ անդամներ կոտորել էին հայ տղամարդկանց[379]: Միևնույն նիստում ներկայացվել է նաև մեկ այլ քաղհայցվոր կնոջ ցուցմունքները, համաձայն որոնց՝ Ջեմալ Ազմիի հրահանգով Քումքալե ուղարկելու պատրվակով ձերբակալված տղամարդկանց ոչնչացրել էին՝ մի մասին գնդակահարելով, իսկ մյուսներին՝ ջրախեղդ անելով[380]: Քաղհայցվորը նշում էր նաև, որ ռուսահպատակ Վարդանին թունավորել էին հիվանդանոցում, հայ երեխաների մի մասին ուղարկել Դեյիրմենդերե գետի ուղղությամբ, իսկ մյուս մասին, Նիազիի ղեկավարությամբ նավակներով հեռացնելուց հետո, ծովն էին նետել[381]: Նույն նիստում մեղադրյալներից գավառապետ Թալեաթն իր զարմանքն է արտահայտել այն փաստի կապակցությամբ, որ վերոհիշյալ քաղհայցվորը տեղյակ է եղել նման կարևոր որոշումների մասին, քանի որ, ըստ ամբաստանյալի, «այդ գործը խիստ գաղտնի բնույթ է կրել»[382]:

Դատավարության 1919 թ. ապրիլի 7-ի նիստում ունկնդրության արժանացած ֆրանսահպատակ վկա Վիտալիի ցուցմունքների համաձայն՝ Տրապիզոնից բռնագաղթեցվել էր մոտ 18.000 հայ[383]: Այս նիստում նույն

377 Trabzon Tehcîri, "Alemdar", 27 Mart 1919.

378 Divan-ı Harb-i Örfi'de Trabzon Tehcîr Muhakemesi, "Alemdar", 2 Nisan 1919.

379 Divan-ı Harb-i Örfi: Trabzon Taktil ve Tehcîr Muhâkemesi, "Alemdar", 4 Nisan 1919.

380 Նույն տեղում:

381 Նույն տեղում:

382 Նույն տեղում:

383 Trabzon Tehcîr ve Taktil Muhâkemesi, "Alemdar", 8 Nisan 1919.

վկան դատարանին հայտնել է, որ ինքը սեփական աչքերով էր տեսել, թե ինչպես էին հայ երեխաներին, տակառների մեջ լցնելով, ծովը թափում: Ըստ Վիտալիի՝ ծովի ալիքները երբեմն ցամաք էին բերում այդ անմեղ մանուկների դիակները: Ափ նետված երեխաների դիակները հավաքող մի հույն կին, որը նրանց վզերից խաչեր էր կախել և թաղել նրանց, հետապնդվել էր տեղի իշխանությունների կողմից: Վերջիններս հրամայել էին բացել հողը և դուրս հանել մանուկների դիակները, իսկ հույն կինը նույնիսկ ձերբակալվել և խոշտանգման էր ենթարկվել իր արարքի համար[384]:

Հաջորդ նիստում, որը կայացել է 1919 թ. ապրիլի 8-ին, ազգությամբ ֆրանսիացի վկա Փերլորանը հայտնել է, որ տեղահանությունը Տրապիզոնում կատարվել է 5 օրվա ընթացքում և թաղամաս առ թաղամաս, և հայերի իրերը խլվել են նրանցից՝ սահմանից դուրս գալուն պես[385]:

1919 թ. ապրիլի 12-ի նիստում վկայությամբ հանդես եկած ժանդարմերիայի ավագ լեյտենանտ, հայերի տեղահանության համար պատասխանատու հրամանատար Մյունիբը ցուցմունքներ է տվել առ այն, որ Պետական պարտքի գրասենյակի տրապիզոնյան մասնաճյուղի պաշտոնյայից իրեն հասած տեղեկությունների համաձայն՝ հայերին բեռնավորել են լաստանավերը և ծովը նետելով՝ խեղդել[386]:

1919 թ. ապրիլի 19-ի նիստում վկաներից ցուցմունքներ է տվել Վիրժին Օդաբաշյանը (Նայիլե)[387], որը վկայել է. «Հայերը տարագրուելէն յետոյ, 30-40-ի չափ 2-3 ամսու և 2-4 տարեկան տղաք Ամերիկեան վարժարանը լեցուցին և զիս ալ հսկող կարգեցին: Այս քառասուն պզտիկներուն օրական միայն երկու տուփ կաթ կուտային, այնպէս որ շատերը անօթութենէ մեռան: Օր մը Տոքթ. Ալի Սաիպ եկաւ և ըսաւ թէ «ես գիտեմ ասոնցմէ ազատուելու ճարը» ու անմիջապէս երկու քիւֆէ[388] բերել տալով, պզտիկները խամսի ձուկի պէս իրարու վրայ լեցուց և հրամայեց որ տանին ծով թափեն: Հազիւ 2-3 հոգի լեցուած, ես հեռացայ, չկրնալով դիմանալ անօթի ու անսուաղ պզտիկներու լաց ու կոծին»:

Ինչպես իրավամբ նկատում էր «Ճակատամարտ» թերթը, դատարանի նախագահն այս վկայության առնչությամբ հանդես էր եկել տարօրինակ

384 «Մանուկներ կողովներով ծովը կը թափուին», «Ճակատամարտ», 8 ապրիլ, 1919, N 124 (1945):

385 Trabzon Tehcîr ve Taktil Muhâkemesi, "Alemdar", 9 Nisan 1919.

386 Divan-ı Harb-i Örfi'de Trabzon Tehcîri Muhâkemesi, "Alemdar", 13 Nisan 1919.

387 «Ծծկեր տղաներ խամսի ձուկի պէս սթիֆ ըրած ծովը կը թափեն», «Ճակատամարտ», 20 ապրիլ, 1919, N 135 (1956):

388 Թուրքերեն՝ մեծ կողով:

դիտողությամբ. «Ի՞նչ պէտք կար պզտիկները ծովը թափելու, միթէ չէի՞ն կրնար անօթութենէ մեռցնել զանոնք»[389]:

Սույն դատաքննության ընթացքում որպես վկա ցուցմունքներով հանդես եկած բարձրաստիճան պաշտոնյաներից պետք է հատկապես առանձնացնել Վանի նախկին նահանգապետ Նազըմ բեյին և Օսմանյան կայսրության ռազմածովային նախարար Ավնի փաշային: Վանի կուսակալը 1919 թ. ապրիլի 30-ի նիստում դատարանին տեղեկություններ է տվել Ջեմալ Ազմիի կատարած բռնությունների, ինչպես նաև՝ Նուրի և Մեհմեդ Ալի բեյերի՝ մի հայ կնոջ ու երեխաներին ջրահեղձ անելու մասին[390]: Ըստ Նազըմ բեյի՝ 18 հայ ծերունի էլ ջրախեղդ էին արվել Օրդուի գավառապետ Ֆայիքի հրամանով[391]:

Նույն նիստում վկայություններ է տվել նաև Տրապիզոնի Վերաքննիչ դատարանի նախագահ, Լքված գույքի հանձնաժողովի անդամ Հիլմի բեյը, ըստ որի՝ տարագրված հայերը բնաջնջվել են ճանապարհներին և խեղդամահ արվել ծովում[392]: Միևնույն նիստում դատարանի նախագահը շեշտել է «ողբերգական դեպքերին» տեղի դատախազի միջամտության անհրաժեշտությունը, որին ի պատասխան՝ վկա Հիլմի բեյը նշել է, որ դատախազը չէր կարող միջամտել[393]:

Նույն օրը հայերի՝ մակույկավարների պետ Յահյայի[394] կողմից ջրախեղդ արվելու մասին վկայություններ է տվել Տրապիզոնի Ռազմական առաքումների հանձնաժողովի նախագահ Էթհեմը[395]:

1919 թ. մայիսի 5-ին ընթերցվել է ռազմածովային նախարար Ավնի փաշայի գրավոր վկայությունը, համաձայն որի՝ Ջեմալ Ազմին հայերին կոտորելու նպատակով հատուկ ավազակախմբեր էր կազմել ու սպանել տվել հայ բժիշկներին և առողջապահական պաշտոնյաներին[396]:

389 «Ծծկեր տղաներ խամսի ձուկի պէս սթիֆ ըրած ծովը կը թափեն», «Ճակատամարտ», 20 ապրիլ, 1919, N 135 (1956):

390 Trabzon Tehcîr Muhâkemesi, "Alemdar", 1 Mayıs 1919.

391 «Ժողովուրդի ձայնը», Կ.Պոլիս, 1-ը մայիսի, 1919, N 77-168:

392 Նույն տեղում:

393 Նույն տեղում:

394 Էնվերի համախոհներից Յահյա Քահյան հետագայում դարձել է ազգայնական շարժման ակնառու գործիչներից մեկը: Սպանվել է մեկ այլ ականավոր ներկայացուցիչ Թուրքալ Օսմանի կողմից՝ Մուստաֆա Քեմալի հրահանգով, տե՛ս **Авакян А.**, Черкесский фактор в Османской империи и Турции, сс. 344-345.

395 «Ժողովուրդի ձայնը», 1-ը մայիսի, 1919, N 77-168:

396 «Երկու «մավունա» կին ու տղայ ծովը կը թափեն», «Ժողովուրդի ձայնը», 6

Տրապիզոնի դատավարության ընթացքում գրանցվել է մեկ այլ հետաքրքիր վկայություն, որը վերաբերում էր Կովկասից գաղթած մահմեդական և քրիստոնյա վրացիների՝ հայերի կոտորածներին մասնակցելուն: Ըստ «Ժողովուրդի ձայնը» օրաթերթի՝ Տրապիզոնի դատավարության 14-րդ նիստում (1919 թ. մայիսի 5) ընթերցված ռազմածովային նախարար Ավնի փաշայի գրավոր վկայության համաձայն՝ Կովկասից Տրապիզոն գաղթած քրիստոնյա և մահմեդական վրացիներից այստեղ կազմվել է «Légion géorgienne» («Վրացական լեգեոն») անունը կրող հատուկ մի գունդ, որը ճանապարհներին հարձակումներ է գործել հայերից բաղկացած քարավանների վրա[397]:

Նույն նիստում ցուցմունքներ տված Հյուսեյինի խոսքերով՝ Տրապիզոնի գլխավոր բանտապահ Սուլեյմանը հրոսակախմբեր էր կազմել՝ հայերին կոտորելու նպատակով, իսկ Օրդուի գավառապետ Ֆայիքը 2 «մավունա»[398] կին ու երեխա ջրախեղդ անելու հրաման էր տվել: Ականատեսը հայտնում էր, որ նրանց լաստանավ էին նստեցրել իբրև թե Սամսուն ուղարկելու պատրվակով, մինչդեռ հաջորդ օրը ծովեզերքը լցված էր եղել նրանց դիակներով[399]: Հայերին և հույներին ջրահեղձ անելու միջոցով ոչնչացնելու մասին վկայություններ է տվել նաև Լազիստանի, Ջանիկի և Տրապիզոնի շրջանների հետաքննությամբ զբաղված դատական քննիչ Քենանը, ըստ որի համոզմունքի՝ վերոնշյալ դեպքերի հեղինակն է եղել հենց ինքը՝ նահանգապետը[400]:

1919 թ. մայիսի 13-ի նիստում վկաներից ունկնդրության է արժանացել Հատուկ կազմակերպության ղեկավարներից գերմանացի փոխգնդապետ Նթանգեի համիարզն ու թարգմանիչը եղած հեծելազորային լեյտենանտ Հարուն բեյը, որը ցուցմունք է տվել այն մասին, թե ինքը լսել է հիվանդանոցում հայերի թունավորման դեպքերի և Սամսունում ու շրջակայքում հայերի ոչնչացման մասին[401]:

մայիս, 1919, N 81-172:

397 Նույն տեղում:

398 Թուրքերենից թարգմանաբար՝ բեռնանավ, լաստանավ:

399 «Երկու «մավունա» կին ու տղայ ծովը կը թափեն», «Ժողովուրդի ձայնը», 6-ը մայիս, 1919, N 81-172:

400 Divan-i Harb-i Örfide Trabzon Tehcîri Muhâkemesi, "Alemdar", 11 Mayıs, 1919. Այդ մասին նաև տես՝ «ԺՋ դատավարութիւն Տրապիզոնի ջարդարարներուն», «Ժողովուրդի ձայնը», 11 մայիս, 1919, N 86-177:

401 Divan-ı Harb-i Örfide Trabzon Tehcîri Muhakemesinde İsticvâbâtının Hitamı, "Alemdar", 14 Mayıs, 1919.

«Ալեմդար» օրաթերթի 1919 թ. ապրիլի 16-ի համարում հրապարակված՝ Տրապիզոնի հայերի տեղահանությանն ու կոտորածներին վերաբերող ամբաստանագրում ընդգծվում էր տվյալ նահանգում կատարված ահասարսուռ կոտորածների զանգվածային բնույթը.

«...Տրապիզոն վիլայեթում Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կառավարության կողմից հայերի տեղահանության վերաբերյալ ընդունված որոշումների գործադրման ընթացքում նախ՝ հայ տղամարդկանց և ապա՝ կանանց ու երեխաներին նշանակված վայրեր տեղափոխելիս նրանց մի մասն անգթաբար սպանվել է Դեյիրմենդերեի[402] կողմերում, իսկ կանայք ու երեխաներն էլ բռնավորվել են նավակները և ջրախեղդ արվել: Հայերի մի մասին էլ, իբր բուժման նպատակով, թունավորել են տարբեր միջոցներով Կարմիր մահիկ հիվանդանոցում, որից հետո կողոպտվել են նրանց գույքը, դրամը և թանկարժեք իրերը: Ողջ մարդկության կողմից անեծքով ու նողկանքով հիշվելու արժանի նման անամոթ արարքների ու հանցագործությունների հանդգնած և այժմ փախուստի մեջ գտնվող Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիի և կուսակցության պատասխանատու քարտուղար Յենիբահչելի Նայիլի, ինչպես նաև՝ դատարանում ներկա գտնվող Մեհմեդ Ալիի, Մուստաֆայի, Նիազիի, Նուրիի և մյուս հանցակիցների մասնակցությունն այդ վիթխարի կոտորածին հիմք են տալիս պատիժ սահմանելու համար: Նրանց հետաքննությունը, նախ և առաջ, բխում է օրենքի անհրաժեշտությունից: Եվ ի վերջո՝ ովքե՞ր են Ազմին ու Նայիլը: Սրանք ոչ թե պետական կամ վարչական պաշտոնյաներ են, այլ՝ ինը տարի առաջ պետության ղեկը պատահաբար ձեռք գցած, առանձին կամ միասին կատարված բռնությունների, կոտորածների, անօրինականությունների, անհատնում չարաշահումների արդյունքում սուլթանական կառավարությանն այսօրվա ողբալի վիճակին հասցրած կործանիչ ձեռքերից ու վայրենի ուղեղներից բաղկացած Միություն և առաջադիմություն կոչված ավազակախմբի հանցագործ ներկայացուցիչներն են Տրապիզոնում»[403]:

«...Բնականաբար, միայն Ջեմալ Ազմին ու Նայիլը չէին կարող այդ ահռելի սպանդն իրականացնել: Վերոհիշյալ ավազակախմբի ոճրային մտահղացումները կյանքի կոչելու համար բազմաթիվ գործիքների կարիք էր զգացվում: Գաղափարը և կիրառվող մեթոդն էլ այն էր, որ որպես գործիք ընտրվեն պրիմիտիվ, սահմանափակ, արագ ազդեցության տակ ընկ-

402 Գետ Տրապիզոնում:

403 Trabzon Taktil ve Tehcîri. İddianamenin Kıraatı, "Alemdar", 16 Nisan, 1919.

նող, սեփական ջանքերով առաջընթաց գրանցելուն անկարող մարդիկ: Անկասկած է, որ քիչ թե շատ զարգացած մեկը չէր կարող ողջ մարդկությանը հուզած այդ ոճիրների մասնակիցը դառնալ...»[404]:

Բյույուք Դերեի կամ Բողազիչիի դատավարությունը[405] տեղի է ունեցել 1919 թ. մարտի 23-ից մինչև մայիսի 24-ը: Մեղադրյալներն էին Բյույուք Դերեի ոստիկանապետ Աբդուլ Քերիմը, Բաքերի խանութպան սալոնիկցի Ռեֆիք Հրֆզր բեյը և թաղապետ (muhtar) Ջելալ էֆենդին: 1919 թ. մայիսի 6-ի նիստում մեղադրյալների թիվն ավելացել է ևս մեկով՝ ի դեմս Հաֆըզ Մահմուդի: Դատավճիռն ընդունվել է 1919 թ. մայիսի 24-ին, ըստ որի՝ Աբդուլ Քերիմը դատապարտվել է 1, իսկ Ռեֆիքը՝ 2 տարվա ազատազրկման: Մյուս մեղադրյալներն արդարացվել են[406]:

Մամուրեթ-ուլ Ազիզի կամ Խարբերդի դատաքննությունն իրականացվել է 1919 թ. հուլիսի 28-ից մինչև 1920 թ. հունվարի 10-ը: Խարբերդի դատը հարուցվել էր հետևյալ մեղադրյալների նկատմամբ՝ Խարբերդի նախկին նահանգապետ Սաբիթի, Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Բեհաեդդին Շաքիրի, կուսակցության պատվիրակ Ռեսնելի Նազըմի, Խարբերդի նախկին գավառապետ Ասըմի, Խարբերդի նախկին պատգամավորներ Սաֆվեթի ու Հաջե Սայիդի, Դերսիմի պատգամավոր Մեհմեդ Նուրիի և Մամուրեթ-ուլ Ազիզի հանրակրթական տեսուչ Ֆերիդի: Խարբերդի հայերի տեղահանության և կոտորածների մեղադրական ակտում նշվում էր, թե փախուստի մեջ գտնվող Բեհաեդդին Շաքիր և Ռեսնելի Նազըմ բեյերը 1915 թ., ինչպես այլուր, այնպես էլ Խարբերդ նահանգում տարագրել են հայերին և Դերսիմի քրդերին ու շրջակա գյուղերի մահմեդական բնակչությանը գիտենալով՝ տեղահանության ճանապարհին սպանել տվել բոլոր հայերին: Ըստ ամբաստանագրի՝ Խարբերդի գավառապետ Ասըմը կտտանքների է ենթարկել և տանջամահ արել հայ բանտարկյալներին, Խարբերդի պատգամավոր Սավֆեթը մասնակցել է հայ տարագիրների խմբերը կազմելուն և պահակազորին նրանց վրա կրակելու հրաման արձակել, նահանգապետ Սաբիթը թույլ է տվել յուրացնել հայերի ինչքը, իսկ Դերսիմի պատգամավոր Մեհմեդ Նուրին Մոլովանք գյուղի հայության տեղահանության ժամանակ ժանդարմներին դրդել է կոտորել հայերին[407]:

Խարբերդի դատաքննության 1919 թ. օգոստոսի 20-ի նիստում վկայություն է տվել նաև ազգությամբ ասորի Ժորժիոն, ըստ որի՝ Խարբերդի տեղահանության ժամանակ տեղի բոլոր քրիստոնյաները բանտարկվել են, խոշտանգվել, ապա՝ խումբ-խումբ տարագրվել[408]:

Խարբերդի տեղահանության և կոտորածների դատավճիռը կայացվել է 1920 թ. հունվարի 13-ին, համաձայն որի՝ Բեհաեդդին Շաքիրը հեռակա կարգով դատապարտվել է մահվան, իսկ Ռեսնելի Նազըմը, դարձյալ հեռակա կարգով, 15 տարվա տաժանակիր աքսորի: Դատարանն արդարացրել է դատին ներկա գտնվող մեղադրյալներին[409]: Մինչդեռ, դատախազը պահանջել էր ամբաստանյալներից Մեհմեդ Նուրիին Խարբերդ ուղարկել՝ վերջինիս գործը տեղում քննելու նպատակով, քանի որ մի շարք հայեր այնտեղ դատական գործ էին հարուցել նրա դեմ՝ կողոպուտի մեղադրանքով: Սակայն ամբաստանյալի փաստաբանը պատճառաբանել է, թե իր պաշտպանյալի դեմ հարուցված այս երկու դատական գործերը հնարավոր չէ միացնել, քանի որ Ստամբուլում կայացած դատավարությունը տեղահանության և կոտորածների մեղադրանքով էր, իսկ Խարբերդում հարուցվածը՝ գույքի հափշտակության: Ռազմական դատարանը մերժելով դատախազի պահանջը՝ ազատ է արձակել Մեհմեդ Նուրիին[410]:

Բաբերդի դատավարությունը տեղի է ունեցել 1920 թ. մարտի 15-ից մինչև հուլիսի 4-ը: Տվյալ դատական գործը հարուցվել էր Ուրֆայի նախկին գավառապետ Բեհրամզադե Նուսրեթի և Փիրե Մեհմեդ անվամբ հայտնի լեյտենանտ Մեհմեդ Նեջաթիի նկատմամբ: Վերջինս դատաքննության ժամանակ փախուստի մեջ էր գտնվում: Ըստ դատավճռի՝ երկու ամբաստանյալներն էլ դատապարտվել են մահվան: Բաբերդի դատավճիռը չի արձանագրվել «Tâkvim-i Vekayi» օրաթերթում. պաշտոնաթերթում հրապարակվել է միայն սուլթանի կողմից դատավճռի վավերացումը, իսկ դատավճիռն ամբողջությամբ տպագրվել է «Tercüman-ı Hakikat» («Ճշմարտության մեկնաբան») օրաթերթի՝ 1920 թ. օգոստոսի 5-ի համարում, որը թարգմանել և հրապարակել է Հայկազն Գ. Ղազարյանը: Բաբերդի դատավճռում դարձյալ ընդգծվում էր այն փաստը, որ հայերի կոտորած-

404 Նույն տեղում:

405 Ստամբուլի թաղամասերից է: Մամուլում հանդիպում է նաև որպես Յենիքյոյի և Խարաբիայի տեղահանության դատավարություն:

406 "Takvîm-i Vekayi", No 3618, 9 Ağustos 1919, ss. 1-2.

407 «Ճակատամարտ», 31 հուլիս, 1919, N 220 (2041):

408 «Խարբերդի ջարդարարներում դատավարութիւնը», «Ճակատամարտ», 21 օգոստոս, 1919:

409 "Takvîm-i Vekayi", No 3771, 9 Şubat 1919, ss. 3-6.

410 «Խարբերդի ջարդարարներում դատը», «Վերջին լուր», 30 հոկտեմբեր, 1919:

ների հրամանը տվել էր Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեն և հատուկ սուրհանդակների միջոցով ուղարկել շրջաններ. «...բազմազան վայրերու մէջ տեղի ունեցած ողբերգական ջարդերու շուրջ մինչեւ հիմա Պատերազմական ատեանին կողմէ կատարուած դատավարութեանց եզրակացութիւնը եղած է այն, թէ յիշեալ ոճիրները նախ եւ առաջ Իթթիհատ վե Թերագգը ճեմիյէթին Ընդհանուր Կեդրոնին մէջ կանխամտածուած եւ որոշուած են»[411]: Բաբերդի դատավճռում նշվում էր նաև, որ մեղադրյալը կազմակերպել էր շուրջ 20.000 հայերի կոտորածը, ինչի համար նրա պաշտոնը բարձրացրել էին[412]: Ըստ «Ճակատամարտ» օրաթերթի, դատավճռի համաձայն՝ մի շարք անձանց վկայությամբ հաստատվել էր, որ Բաբերդի հայերի տեղահանության ու ջարդի իրագործումը կազմակերպել են Նուսրեթը և Մեհմեդ Նեջաթին: Նուսրեթի հրամանով մի գիշեր տեղի ոստիկաններն ու ժանդարմները ծեծով և բռնությամբ հավաքել են Բաբերդի հայերին և աքսորել նրանց ամենավայրագ պայմաններում, որից հետո խուզարկել են հայերի տները և բռնագրավել նրանց ողջ ունեցվածքը: Աքսորի ճանապարհին հայերին խմբերի են բաժանել և գրեթե բոլորին կոտորել: Նուսրեթը 150 հայ երեխաների լցրել է Բինբաշը հանը կոչված վայրը և թույլ տվել, որ բոլորը տանեն իրենց ուզած մանկանը[413]: Քեհրամզադե Նուսրեթը մահապատժի է ենթարկվել 1920 թ. օգոստոսի 5-ին Ստամբուլի Բայազետ հրապարակում[414]:

Բաբերդ գավառի և շրջակա բնակավայրերի տեղահանության պատճառով մեղադրվել է նաև այստեղի գավառապետ Յուսուֆ Ջիյան, որի առանձին դատաքննությունն սկսվել է 1921 թ. հունվարին և ավարտվել փետրվարին՝ ամբաստանյալի արդարացման մասին դատավճռով[415]:

Երզնկայի դատական գործը հարուցվել է «տեղահանության ընթացքում հայերի սպանությունների և բնաջնջման», ինչպես նաև՝ նրանց ունեցվածքի կողոպտման մեղադրանքներով[416]: Երզնկայի տեղահանության և կոտորածների գործով սկզբում դատական հետապնդման են ենթարկվել Երզնկայի նախկին գավառապետ Մեմդուհը, ժանդարմերիայի հրամանատար, նաև հյուրանոցատեր Հաֆրզ Արդուլլահ Ավնիի[417], Երզնկայի նախկին պատգամավոր Հալեթը, Հաջի Վահիդզադե Ռըզան, Դերսիմի ցեղապետերից Քըրմո Յուսուֆը, ժանդարմերիայի ենթասպա Արսլանը և Դանգիկ նահիեի (գավառակ) կառավարիչ, ցեղապետ Քյաքոն[418]:

Սակայն, ինչպես նշվում է սուլթանի կողմից դատավճռի վավերացման մեջ, Հաջի Վահիդզադե Ռըզան դատաքննության ընթացքում վախճանվել էր, ինչի պատճառով նրա դեմ հարուցված դատական գործը կարճվել էր, իսկ Երզնկայի գավառապետ Մեմդուհն աքսորվել էր Մալթա, և նրա գործն առանձնացվել էր՝ հետագայում քննվելու նպատակով: Երզնկայի դատավճռով քաղաքացիական քրեական օրենսգրքի 170-րդ և զինվորական քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածներով հեռակա կարգով մահապատժի են դատապարտվել Երզնկայի պատգամավոր Սաղըրզադե Հալեթը, ավազակապետ Քրրմո Յուսուֆը և Երզնկայի ոստիկանության ենթասպա Արսլանը:

Երզնկայի ժանդարմերիայի հրամանատար Հաֆրզ Արդուլլահ Ավնիի ներկայությամբ անցկացված դատաքննության արդյունքում վերջինիս նկատմամբ մահվան դատավճիռ է կայացվել, որն ի կատար է ածվել Ստամբուլի Բայազետ հրապարակում 1920 թ. հուլիսի 22-ին[419]: Մահապատժի ժամանակ մահապարտի վզից կախված թղթի վրա գրված էր, թե նա մահապատժի է դատապարտվել Երզնկայի հայերի ջարդն ու բնաջնջումը կազմակերպելու համար[420]:

Չաթալջայի փոստի և հեռագրատան տնօրեն Օսման Նուրիի դատավարությունն սկսվել է 1919 թ. օգոստոսի 4-ին: Ամբաստանյալը մեղադրվում էր հայերի տեղահանությանը և կոտորածներին վերաբերող փաստաթղթերն այրելու մեջ[421]: Հաջորդ նիստում գլխավոր դատախազը դատարանից խնդրել է ազատ արձակել մեղադրյալին, քանի որ վերջինս վերոհիշյալ փաստաթղթերը այրել էր իր ղեկավարի հրամանով[422]:

411 **Ղազարեան Հ.**, Ցեղասպան թուրքը, էջ 298:

412 Նույն տեղում:

413 «Բաբերդի Հայոց ջարդարարը կախուեցաւ», «Ճակատամարտ», 6 օգոստոս, 1920, N 521 (2342):

414 "Alemdar", 6 Ağustos 1919.

415 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 179.

416 Mahkumiyet, "Takvîm-i Vekayi", N 3917, 31 Temmuz 1920.

417 Հաֆրզ Արդուլլահ Ավնին Էդիրնեում երիտթուրքերի պատվիրակ Արդուլ Գանիի եղբայրն էր, տե՛ս «Երզնկայի ջարդարարը կախաղան հանուած», «Ճակատամարտ», 30 հուլիս, 1920:

418 Mahkumiyet, "Takvîm-i Vekayi", N 3917, 31 Temmuz 1920.

419 Bir Caninin İdamı, "Peyâm-ı Sabah", 30 Temmuz, 1336 (1920).

420 «Երզնկայի ջարդարարը կախաղան հանուած», «Ճակատամարտ», 30 հուլիս, 1920:

421 «Ժողովուրդ» քաղաքական եւ հասարակական օրաթերթ, Կ.Պոլիս, 6 օգոստոս, 1919, N 7 (253):

422 «Ժողովուրդ», 7 օգոստոս, 1919, թիւ 8 (254):

Չանքըրրում Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղար Ջեմալ Օղուզի և հարյուրապետ Նուրեդդինի դեմ դատական գործ է հարուցվել Ստամբուլից Չանքըրը տարագրված հայերի սպանության մեղադրանքով: Ջեմալ Օղուզն ընդգրկված է եղել նաև կուսակցության պատասխանատու քարտուղարների դատաքննության մեղադրյալների ցանկում: Նրա գործը պատասխանատու քարտուղարների դատավարությունից՝ տասներորդ նիստում (1919 թ. դեկտեմբերի 29) «հիվանդության» պատճառով առանձնացվել է, և 1920 թ. հունվարի 27-ից սկսվել է նրա առանձին դատաքննությունը: Դատավճիռը կայացվել է 1920 թ. փետրվարի 8-ին, համաձայն որի՝ Ջեմալ Օղուզը հանցավոր է ճանաչվել հայ բժիշկ Չիլինգիրյանի և վերջինիս 4 ընկերների սպանության մեջ: Ըստ դատավճռի՝ Ջեմալ Օղուզը դատապարտվել է 5 տարի և 4 ամիս, իսկ փախուստի մեջ գտնվող մեղադրյալ Նուրեդդինը՝ 6 տարի և 8 ամիս տաժանակիր աքսորի[423]:

Նահիեների (գավառակների) կառավարիչների[424] դատական գործը հարուցվել էր Դերբենդ նահիեի կառավարիչ Վեջիհիի, Բահչեջիք նահիեի կառավարիչ Ալի Նուուրիի, Իզմիթի (Նիկոմեդիա) նախկին բանտապետ Իբրահիմի և վերջինիս ընկերների դեմ՝ «թալանի, կողոպուտի, տեղահանության ու կաշառակերության» մեղադրանքներով: Ընդհանուր թվով 6 ամբաստանյալների սույն դատաքննությունն սկսվել է 1919 թ. նոյեմբերի 27-ին: 1919 թ. դեկտեմբերի 3-ին կայացած նիստում վկա սերժանտ Սյուլեյմանը հանդես է եկել բանտապետ Իբրահիմի դեմ ուղղված մանրամասն ցուցմունքներով, ըստ որոնց՝ Իբրահիմը զենքեր գտնելու պատրվակով հայերին հավաքել է մի դպրոցում և ծեծել բոլոր նրանց, ովքեր ասել են, թե զենք չունեն: Հենց առաջինն էլ ծեծի է ենթարկվել հայ քահանան[425]: Հարկ է նշել, որ բանտի նախկին տնօրեն Իբրահիմի հանցագործությունները հաստատող վկայություն է գրանցվել նաև Ադաբազարի անվանիներից Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղար Համիդ բեյի դատաքննության ժամանակ: Մեղադրյալ Համիդը տվյալ դատավարության 1919 թ. օգոստոսի 6-ի նիստում վկայել է, թե տեղահանության ժամանակ ինքը գտնվել է Ադաբազարում, այդ ընթացքում «զենք գտնելու» մտադրությամբ Ստամբուլից այստեղ է ժամանել բանտապետ Իբրահիմը, որը հայերին հավաքել է եկեղեցում և այստեղ

423 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 160-161.

424 Մամուլում հանդիպում է նաև որպես Իզմիթի, Բահչեջիքի կամ Դերբենդի դատավարություն:

425 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 165.

սկսել զենք հավաքել գավազանի հարվածներով[426]:

Նահիեի կառավարիչների դատաքննության չորրորդ նիստում, որը տեղի է ունեցել 1919 թ. դեկտեմբերի 7-ին, ամբաստանյալների մեղավորությունը հաստատող ցուցմունքներ են տվել ոչ միայն հայ, այլ նաև թուրք վկաներ, ովքեր հայտնել են, որ բանտապետ Իբրահիմն ու Բահչեջիք գավառակի կառավարիչ Ալի Նուուրին կտտանքների են ենթարկել հայերին և կողոպտել նրանց գույքը: [427]: Իզմիթի հայերի տեղահանության և կոտորածների պատասխանատուների դատավճիռը կայացվել է 1920 թ. մարտի սկզբին: Ըստ Իզմիթի դատավճռի՝ բանտի նախկին տնօրեն Իբրահիմը դատապարտվել է 15 տարվա թիապարտության և աստիճանազրկության, Ֆայիք Չավուշը՝ 3 ու կես տարվա ազատազրկման, Ալի Նուուրին՝ 1, իսկ Վեջիհին՝ 2 տարվա բանտարկության, Ահմեդ Չավուշը և Հասանը՝ չորսական ամսվա ազատազրկման ու գավազանի քսանական հարվածի: Մեղադրյալներից արդարացվել են և ազատ արձակվել Սյուլեյման Չավուշը, Հաջը Հալիթը և Սալիհը[428]:

Ադաբազարի երևելիներից Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղար Համիդ բեյի դատի առաջին նիստը կայացել է 1919 թ. օգոստոսի 4-ին: Համիդ բեյի դեմ դատական գործ էր հարուցվել՝ Ադաբազարի հայերի տեղահանության և վերջիններիս գույքի կողոպտման մեղադրանքով: Սույն դատաքննության շրջանակներում ուշագրավ վկայություններ է տվել Ադաբազարի կայմակամ Ռեջայի Նյուզհեթ բեյը, ով դատարանին հայտնել է, թե ինքը հետաքննություն է կատարել այստեղ, և պարզել, որ Համիդը և ուրիշներ սպառնալիքներով յուրացրել են հայերի գույքը: Ըստ Նյուզհեթի՝ այդ մասին բողոքներ էին հասել տեղի անգլիական հրամանատարության թարգմանչի և 130-ից ավել հայերի կողմից[429]: Չնայած գավառապետ Ռեջայի Նյուզհեթի՝ ամբաստանյալի մեղավորությունը հաստատող ցուցմունքներին՝ դատաքննության վերջին նիստում, որը կայացել է 1920 թ. փետրվարի 16-ին, դատախազը պահանջել է արդարացնել մեղադրյալին: Դատարանն ազատ է արձակել Համիդին[430]:

426 Divan-i Harp'te Hamid Bey'in Muhakemesi, "Tasvir-i Efkâr", 7 Ağustos 1919.

427 **Dadrian V., Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 165.

428 «Իզմիտի ջարդարարներուն պատժավճիռը», «Ճակատամարտ», 2 մարտի, 1920, N 392 (2213):

429 Ճակատամարտ, 15 օգոստոս, 1919, N 233 (2054):

430 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 168.

Ամասիայի դատական գործը հարուցվել է Ամասիայի կառավարիչ (մութասարիֆ) Սըրրըի, ժանդարմերիայի գումարտակի հրամանատար Թևֆիկի, Ամասիայի երևելիներից Հասանի դեմ: Տվյալ ժամանակաշրջանում հրապարակվող թերթերի համաձայն՝ սույն դատավարության շրջանակներում հեռակա կարգով քննվել են նաև բազմաթիվ այլ մեղադրյալների գործեր: Դատարանի կազմում կատարված փոփոխությունների պատճառով Ամասիայի դատավարությունը երկար է տևել և ավարտվել ամբաստանյալների արդարացմամբ[431]:

Դեր Զորում հայերի կոտորածների առնչությամբ Ստամբուլի ռազմական արտակարգ ատյաններում կայացել են երեք տարբեր դատավարություններ: Դրանցից մեկը հարուցվել էր Դեր Զորի ոստիկանապետ Մուստաֆա Օքքեշի դեմ, որի դատաքննությունն սկսվել է 1921 թ. հունվարի 20-ին: Նույն տարվա մարտին մեղադրյալն արդարացվել է՝ «նրան հասցեագրվող մեղադրանքները չհաստատվելու» հիմքով[432]:

Դեր Զորում կազմակերպված հայերի ջարդերի հաջորդ դատական գործը հարուցվել է փախուստի մեջ գտնվող, Դեր Զորի նախկին կառավարիչ (մութասարիֆ) Սալիհ Զեքիի դեմ[433]: Բավականին կարճ տևած սույն դատաքննության արդյունքում մեղադրյալը հեռակա կարգով դատապարտվել է մահվան: 1920 թ. ապրիլի 28-ին ընդունված դատավճռում ընդգծվում էր, որ «դատաքննության ժամանակ հարցաքննված բազմաթիվ վկաների ցուցմունքների համաձայն՝ Դեր Զորի կառավարիչ Զեքին Օսմանյան կայսրության տարբեր շրջաններից դեպի Դեր Զորի սանջակ տեղահանված բազմաթիվ հայերի, դարձյալ տեղահանության պատրվակով, աքսորել է այլ շրջաններ՝ իր իսկ կողմից հրոսակներից կազմված հեծյալ ու հետիոտն չեթեների միջոցով, և որ նրա պարտադրանքով այս հրոսախմբերը ճանապարհին մեղադրյալի ներկայությամբ հարձակվել են հայերի վրա, հափշտակել վերջիններիս մոտ գտնվող դրամները և իրերը, շատերին դաժանաբար սպանել ու ոչնչացրել Խաբուր գետի ավազանի

431 Նույն տեղում, էջ 169:

432 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 170.

433 Դեր Զորի կառավարիչ Սալիհ Զեքիի կատարած ոճրագործությունների մասին հիշատակվում էր նաև երիտթուրքերի կուսակցության անդամների մեղադրական ակտում, տես "Takvîm-i Vekayi", No 3540, 5 Mayıs 1919, s. 6. Զեքիի կողմից այստեղ հայերի զանգվածային ոչնչացման կազմակերպումը և իրագործումը մանրամասն նկարագրված են Արամ Անտոնյանի «Մեծ ոճիրը» գրքում, տես **Արամ Անտոնյան**, Մեծ ոճիրը, էջ 105-112:

հեղեղատներում»[434]:

Դեր Զորում կազմակերպված հայերի կոտորածների առնչությամբ երրորդ դատական գործը հարուցվել է կոմիսար Իբրահիմի դեմ: 1921 թ. փետրվարի 27-ին սկսված այս դատի հետագա ճակատագրի մասին մամուլում տեղեկություններ չեն հրապարակվել[435]:

Էդիրնեի (Ադրիանապոլիս) հայերի տեղահանության մեղադրանքով դատական գործ է հարուցվել նաև կուսակցության պատասխանատու քարտուղարների դատավարության ժամանակ դատված Էդիրնեի տնօրեն Արդուլ Գանիի[436], վաքֆային վարչության տնօրեն Սադրեդդինի, գյուղատնտեսության հարցերով տնօրեն Ավնիի, Ռրֆաթի և Հայրուլլահի դեմ: Մեղադրյալների շարքում է եղել նաև Սերվեթը, որը դատավարության ընթացքում մահացել է, և նրա գործը կարճվել է: Այս դատի վերջին նիստը կայացել է 1921 թ. հունվարի 1-ին: Դատավարությունն ավարտվել է բոլոր մեղադրյալների, այդ թվում նաև՝ Էդիրնեի տնօրեն Արդուլ Գանիի արդարացման մասին դատավճռով[437]: Այնինչ կուսակցության պատասխանատու քարտուղարների դատավճռի համաձայն՝ վերջինս մեծ ազդեցություն էր ունեցել տեղահանության գործի վրա, զինված հրոսակախմբերի հետ շրջել ամենուր, բռնագրավել հայերի դրամը, դիզել մեծ հարստություն[438]:

Էդինի[439] (Ակն) հայերի տեղահանության առնչությամբ 1921 թ. հարուցվել են երկու տարբեր դատական գործեր: Դրանցից առաջինը վերաբերել է Մեհմեդօղլու Իբրահիմին, իսկ երկրորդը՝ Քասափ Մուստաֆային: Այս երկու դատաքննությունները էլ տեղի են ունեցել գրեթե միաժամանակ: Երկու ամբաստանյալներն էլ արդարացվել են[440]:

Կրետացի Նեջաթի էֆենդու դատավարությունն սկսել է 1919 թ. հուլիսի 13-ին: Միություն և առաջադիմություն կուսակցության անդամ Նեջաթին մեղադրվում էր Դիարբեքիրի շրջակայքում կազմակերպված հայերի կոտորածներին մասնակցելու և Հատուկ կազմակերպությանն անդամակ-

434 **Dadrian V., Akçam T.**, "Tehcir ve Taktil", ss. 715-716.

435 Նույն տեղում, էջ 180:

436 Թեև Արդուլ Գանիին երիտթուրքերի կուսակցության պատասխանատու բարտուղարների վերաբերյալ դատավճռով մեղավոր էր ճանաչվել, սակայն վճռվել էր նրա գործը կցել Էդիրնեի դատավարությանը, և ըստ այդմ վճիռ կայացնել, տես "Takvîm-i Vekayi", No 3772, 10 Şubat 1920, s. 6.

437 **Dadrian V., Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 171.

438 "Takvîm-i Vekayi", No 3772, 10 Şubat 1920, ss. 5-6.

439 Խարբերդի վիլայեթի Ակն գավառակը, ներկայիս Քեմալիյեն:

440 **Dadrian V., Akçam T.**, "Tehcir ve Taktil", ss. 171-172.

ցելու մեջ[441]: Մեղադրյալն արդարացվել է և ազատ արձակվել[442]:

Խարբերդի կայմական Ասըմ բեյի դատն սկսվել է 1920 թ. դեկտեմբերի 30-ին և ավարտվել 1921 թ. մարտի վերջերին՝ մեղադրյալի արդարացմամբ[443]:

1920 թ. հունվարի 20-ին Քարամյուրսելի տեղահանության ժամանակ հայերի գույքի կողոպտման մեղադրանքով սկսվել է Ռըֆաթի, փախուստի մեջ գտնվող բանտապետ Իբրահիմի[444], քարամյուրսելցի Ալիի, գործակալ Իսմայիլի և իմամ Սելահեդդինի դատաքննությունը: Քանի որ մեղադրյալներից Ռըֆաթը եղել է Մալթա աքսորված ոճրագործների շարքում, նրա գործն առանձնացվել է: Դատին ներկա ամբաստանյալներին դատարանն արդարացրել է[445]:

Քըղիի հայերի տեղահանության և կոտորածների կապակցությամբ Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանում իրականացվել են երկու տարբեր դատաքննություններ: Առաջին դատական գործը հարուցվել է Թիմուր բին Իսմայիլի դեմ՝ Հակոր անվամբ հայի սպանության մեղադրանքով: Սույն դատավարության վերջին նիստում, որը կայացել է 1921 թ. փետրվարի 28-ին, ամբաստանյալն արդարացվել է՝ վկաների ցուցմունքներում առկա հակասությունների և բավարար չափով ապացույցների բացակայության հիմքով[446]: Քըղիի հայերի տեղահանությանն առնչվող հանցագործությունների կապակցությամբ դատական գործ է հարուցվել նաև Դեմիրի և Զիլելի Դուրսունի դեմ: Դատաքննության վերջին նիստում (1921 թ. մարտի 6) Զիլելի Դուրսունն արդարացվել է, իսկ Դեմիրի հանդեպ սահմանված պատժի մասին մամուլում տեղեկություններ չեն հրապարակվել[447]:

Մոսուլի նախկին գլխավոր հրամանատար Նևզաթի դատավարությունն սկսվել է 1919 թ. ապրիլի 8-ին: Առաջին նիստում ընթերցվել է հետաքննիչ ատյանի տեղեկագիրը, ըստ որի՝ ամբաստանյալը մեղադրվում

441 **Akçam T.**, Ermeni Tabusu Aralanırken Diyalogtan Başka Çözüm Var mı?, s. 92.

442 **Dadrian V., Akçam T.**, "Tehcir ve Taktil", ss. 172-173.

443 Նույն տեղում, էջ 173:

444 Բանտապետ Իբրահիմի գործը հետագա կարգով քննվել է նաև նահիեի (գավառակ) կառավարիչների կամ Իզմիթի դատաքննության ժամանակ, որի արդյունքում ամբաստանյալը դատապարտվել է 15 տարվա թիապարտության, տե՛ս «Իզմիտի ջարդարարներուն պատժավճիռը», «Ճակատամարտ», 2 մարտ, 1920, N 392 (2213):

445 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", s. 174.

446 Նույն տեղում:

447 Նույն տեղում, էջ 174-175:

էր Մոսուլի հայ աքսորյալների ունեցվածքի կողոպտելու, հազար հոգուց բաղկացած հայկական քարավանը կոտորելու և Մոսուլում բազմաթիվ հայեր սպանելու մեջ[448]: Նևզաթի դատաքննության շրջանակներում վկայություններ են արձանագրվել մեղադրյալի՝ աքսորյալ հայերի մոտից մետաղյա դրամներ խլելու մասին: Մոսուլի քաղաքապետի խորհրդական Չերքեզ Բեքիրի տված ցուցմունքի համաձայն՝ Նևզաթը փակել է տվել հայերին պատկանող բոլոր խանութները, նրանց աքսորել դեպի անապատները և կոտորել տվել նրանց: 1919 թ. ապրիլի 22-ի նիստում մի շարք վկաներ հաստատել են, որ սույն մեղադրյալը ամեն կերպ կեղեքել է ժողովրդին[449]: 1919 թ. ապրիլի 26-ին տեղի ունեցած նիստում ընթերցվել է Ստամբուլի մաքսատան վարչության վիճակագրական գրասենյակի քարտուղարներից Ջեմալի գրավոր ցուցմունքը, ըստ որի՝ Մոսուլում «հայ կանայք ծեծի են ենթարկվել ողջ գիշեր»: Քանի որ Նևզաթը 1919 թ. մայիսի 28-ին բրիտանացիների կողմից Մալթա աքսորված մեղադրյալների շարքում է եղել, նրա դատավարությունը հետաձգվել է և այլևս չի շարունակվել: Վերոհիշյալ մեղադրյալը հետագայում՝ 1921 թ. սեպտեմբերի 6-ին, փախել է աքսորավայրից[450]:

Մոսուլում հայերի հանդեպ կատարված բռնությունների կապակցությամբ դատական գործ է հարուցվել նաև հարյուրապետեր Ֆերիդի և Զեքերիայի դեմ, որոնց դատն սկսվել է 1919 թ. հունիսի 2-ին: Մեղադրյալներից Զեքերիան դատավարության ժամանակ գտնվել է փախուստի մեջ, որի պատճառով նրա դատավարությունը կայացել է հեռակա կարգով: Երկու ամբաստանյալներն էլ արդարացվել են[451]: Մոսուլի տեղահանության կապակցությամբ դատական գործ է հարուցվել նաև Մոսուլի պատգամավոր Ֆևզիի դեմ, որն ավարտվել է 1920 թ. հունվարի 30-ին՝ մեղադրյալի արդարացմամբ[452]:

1921 թ. հունվարի 20-ին սկսվել է Սըվասի և Քոչհիսարի հայերի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Սույն դատական գործով մեղադրվում էին Քոչհիսար գավառի նախկին կայմական Նաբին, Սըվասի ժանդարմերիայի հրամանատար, հարյուրապետ Ալի Շեֆիքը և

448 «Իթթիհատի եղեռններուն մէկ գործիքը Պատերազմական ատեանին առջեւ», «Ճակատամարտ», 9 ապրիլ, 1919:

449 «Նէվզատի դատավարութիւնը», «Ճակատամարտ», 23 ապրիլի, 1919, N 136 (1957):

450 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", ss. 175-177.

451 Նույն տեղում, էջ 178:

452 Նույն տեղում:

առևտրական Բալրզադե Օմեր Ռաուֆը: Դատավճիռը կայացվել է 1921 թ. փետրվարի 1-ին, ըստ որի՝ մեղադրյալներն արդարացվել են[453]:

Հայերի տեղահանության գործին մասնակցության մեղադրանքով դատական գործ է հարուցվել Սիրիայի փոխնահանգապետ Թևֆիքի դեմ, որն ավարտվել է 1921 թ. փետրվարի 24-ին: Մեղադրյալը դատապարտվել է 6 ամիս ազատազրկման[454]:

Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում կատարված հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով 1919-1921 թթ. Ստամբուլի ռազմական արտակարգ ատյաններում կայացել են նաև նահանգների և գավառների կառավարիչների ու առանձին անհատների այնպիսի դատավարություններ, որոնց հանգուցալուծման մասին մամուլում տեղեկություններ չեն հրապարակվել[455]:

Նման դատաքննությունների շարքում հիշատակման են արժանի Բիլեջիքի[456], Չանաքքալեի, Դիարբեքիրի, Գիրեսունի (Կերասուն), Կաստամոնուի, Քըրքքիլիսեի, Կոնիայի, Մուշի և Յալովայի դատական գործերը[457]:

Կայսրության տարբեր շրջանների հայության տեղահանության և կոտորածների դատական գործերի առնչությամբ կարելի է արձանագրել հետևյալ օրինաչափությունը. եթե առաջին դատավարությունների դեպքում դատարանը համեմատաբար խիստ պատիժներ է սահմանել մեղադրյալների նկատմամբ, ապա հետագա դատաքննությունների ժամանակ նկատելի է ամբաստանյալների ազատ արձակման դեպքերի աճ: Այս առումով, բնականաբար, նշանակալի դեր են կատարել երկրում ազգայնական շարժման ծավալումը և պարտվողական տրամադրությունների թոթափումը:

Ժամանակաշրջանի մամուլը ևս հետզհետե կորցրել է սկզբնական մեծ

453 Նույն տեղում:

454 Նույն տեղում, էջ 179:

455 Քեմալական զորքերի՝ Ստամբուլ մտնելուց հետո դատավարությունների ընթերցն առգրավվել են, և դրանց հետագա ճակատագիրն անհայտ է: Ըստ որոշ տեղեկությունների՝ ներկայում դրանք պահպանվում են Թուրքիայի վինված ուժերի Գլխավոր շտաբի ATASE փակ և գաղտնի արխիվում, որտեղ գիտնականների մուտքն արգելված է:

456 Բիլեջիքի հայերի բնաջնջման մեղադրանքով ձերբակալվել էր նաև թուրք հայտնի գրող Օրհան Քեմալի հայրը՝ Աբդուլքադիր Քեմալը, որը բանտից սպառնացել էր հայերի տեղահանության և ոչնչացման մասին «Ալեմդար» օրաթերթում հուշեր տպագրած Հասան Ամջային (Չերքեզ Հասան): Այդ սպառնալիքի ազդեցությամբ վերջինս դադարեցրել էր իր հուշերի հրատարակումը, տե՛ս **Հասան Ամջա**, Տեղահանություն և ոչնչացում (տեղահանության իրական պատկերը), էջ 14-15:

457 **Dadrian V. , Akçam T.**, "Tehcir ve Taktil", ss.179-183.

հետաքրքրությունը դատական գործերի հանդեպ, դատավարություններ, որոնք օսմանյան օրաթերթերի կողմից 1919 թ. սկզբներին ստացել էին «պատմական» որակումը: Մամուլի հետաքրքրության նվազումը պայմանավորված էր ոչ միայն քեմալականների հաղթանակի ակնկալիքով, այլ նաև այն հանգամանքով, որ 1920 թ. ապրիլի 23-ի որոշմամբ՝ հայերի տեղահանության և կոտորածների դատավարություններն սկսել էին դոնփակ անցկացվել, որոնցից մամուլն ու հանրությունը անտեղյակ էր մնում:

Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում կատարված հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով կայացած վերոնըշյալ դատավարությունների մեջ առավելապես կարևորվում են առաջինը կայացած Յոզղատի և Տրապիզոնի դատական գործերը, քանի որ այս դատաքննությունների ընթացքում ամենաշատ վկայություններն ու ապացույցներն են բերվել կառավարությունից հրահանգներ ստացած տեղական իշխանությունների կողմից հայերի տեղահանման ու ոչնչացման համակարգման ու վերահսկման վերաբերյալ: Բացի այդ՝ տվյալ դատավարությունների ժամանակ հանդես եկած վկաները եղել են նաև թուրքեր և այլ ազգությունների պատկանող մահմեդականներ, և ոչ թե՝ «միայն հայեր»[458], ինչպես փորձում են ներկայացնել թուրք պատմաբան ու դիվանագետ Բիլալ Շիմշիրը[459] և թուրքական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչ Ֆերուդուն Աթան[460]: Ավելին՝ Տրապիզոնի դատավարության ընթացքում մեղադրյալների դեմ վկայություններ են տվել բարձրաստիճան այնպիսի պաշտոնյաներ, ինչպիսիք են Վանի նախկին նահանգապետ Նազըմը, Էրզրումի նախկին նահանգապետ Թահսինը, ռազմածովային նախարար Ավնին, դատական քննիչ Քենանը, Տրապիզոնի և Լազըստանի զորքերի շտաբի պետ, գնդապետ Մուհթարը, լեյտենանտ Ահմեդը և շատ ուրիշներ[461]:

Այսպիսով՝ 1919-1921 թթ. Ստամբուլի ռազմական արտակարգ ատյաններում հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով

458 Տրապիզոնի դատաքննության ժամանակ լսվել են նաև ֆրանսիացի վկաներ, տե՛ս Trabzon Tehcîr ve Taktil Muhâkemesi, "Alemdar", 8 Nisan 1919; Trabzon Tehcir ve Taktil Muhâkemesi, "Alemdar", 9 Nisan 1919.

459 **Şimşir B.**, Malta Sürgünleri, İstanbul, Bilgi Yayınevi, 1985.

460 **Ata F.**, İşgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, Ankara, 2005.

461 **Дадрян В.**, Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян: характер и значимость четырех основных серий судебного разбирательства, "Геноцид-преступление против человечества (Материалы I Московского международного симпозиума 18-19 апреля 1995 г.)", отв. ред. академик НАН Республики Армения В. А. Микаелян, Москва, 1997, сс. 33-34.

քննվեցին շուրջ 63 տարբեր դատական գործեր: Թեև հայերի կոտորածների հետաքննությունը շրջան առ շրջան իրականացնելը գործնական տեսանկյունից ավելի նպատակահարմար էր, սակայն, ըստ էության, տեսականորեն այդ դատավարությունները կարող էին ամփոփվել նաև մեկ դատական գործի շրջանակներում և ավարտվել մեկ ընդհանուր դատավճռով, քանի որ խնդրո առարկան միևնույն ոճրագործությունն էր: Ուշագրավ է, որ մեկ ընդհանուր դատաքննություն իրականացնելու առաջարկներ հնչել են նաև ժամանակի մամուլում: Այսպես, օրինակ, «Ալեմդար» օրաթերթի խմբագիր Ռեֆի Ջևադ Ուլունայը 1919 թ. մարտի 28-ին վերոնշյալ պարբերականում հրատարակված «Տեղահանության և կոտորածների դատավարությունները» հոդվածում գրում էր. «Դատավարության՝ Յոզղատին վերաբերող հատվածն ավարտվելու է, ապա սկսվելու է Տրապիզոնի խնդիրը, այնուհետև՝ Դիարբեքիրը և այլն, և այլն: Քանի որ տեղահանություն և կոտորածներ են կատարվել Օսմանյան կայսրության բազմաթիվ վիլայեթներում, դեմ պատկերացրեք՝ երբ կավարտվեն դրանք ամբողջությամբ: Այդ դեպքում անհրաժեշտ է որևէ բանական, օրինական և տրամաբանական ելք գտնել: Այդ ելքը կա: Ավելի ճիշտ՝ այն ընկալում ենք ոչ թե ելք, այլ՝ միակ օրինական ճանապարհը, որին մինչ այժմ էլ պետք է հետևած լինենինք: Տեղահանություններն ու կոտորածները կրում են համընդհանուր բնույթ: (...) Այդ իսկ պատճառով առանձին-առանձին հետաքննություններն անհրաժեշտ չենք համարում: Պետք է կազմակերպել մի դատավարություն, որը կլինի հասարակական հայցի հիման վրա: Խնդիրը պետք է լուծվի ընդհանուր դատավճռով»[462]:

Մինչդեռ հայերի կոտորածների կազմակերպիչների դատաքննությունները շրջան առ շրջան իրականացնելը Ռազմական արտակարգ ատյանին ժամանակ շահելու և դատավարությունները դաշնակից պետությունների առաջ շահարկելու հնարավորություն էր տալիս, հանգամանք, որը չէր վրիպել նաև հակահթթիհադական մամուլի ուշադրությունից: Նույն Ռեֆի Ջևադը «Ինչպիսին են եղել ուղեկառքի ձիերը» հոդվածում շեշտում էր, որ 1913 թ. Մահմուդ Ենքեթ փաշայի սպանության հեղինակներին դատապարտելու և վերջիններիս մեջ նաև թագավորական ընտանիքի անդամին կախաղան բարձրանելու համար ընդամենը մի քանի օր էր պահանջվել երիտթուրքական կառավարությունից, իսկ Յոզղատի դատավարության ժամանակ Ռազմական ատյանը ձգձգում էր դատը՝ անիմաստ հարցեր ուղղելով մեղադրյալներին, որոնց հանցավորությունն ապացուցված էր

462 **Refi Cevad,** Tehcîr ve Taktil Muhakemeleri, "Alemdar", 28 Mart 1919.

բազմաթիվ փաստաթղթերով ու վկայություններով[463]:

Դատավարությունների ընթացքում երկրում փոխվեց նաև քաղաքական մթնոլորտը: Արդեն հիմնականում ազգայնականներով ներկայացված վերջին օսմանյան խորհրդարանի պատգամավորները 1920 թ. փետրվարի 20-ին հանդես եկան Դամադ Ֆերիդ փաշայի դեմ դատական գործ հարուցելու առաջարկով, քանի որ վերջինս բավականին հետևողական էր հայերի կոտորածների պատասխանատուներին բացահայտելու առումով[464]: Քեմալականների ճնշումների պատճառով Դամադ Ֆերիդը 1920 թ. հոկտեմբերի 17-ին հարկադրված եղավ հրաժարական տալ: Նրան փոխարինեց քեմալականների հանդեպ բայրացակամ տրամադրված Թևֆիկ փաշան: Վերջինիս պաշտոնավարման ընթացքում՝ 1920 թ. նոյեմբերի 8-ին, ձերբակալվեցին Բարերդի դատավճիռն արձակած դատավորները:

Հարկ է նշել, որ մինչ այդ էլ Ռազմական արտակարգ ատյանի դատավորները, դատախազները և դատարանում որպես վկա հանդես եկած անձինք ահաբեկումների էին ենթարկվում երիտթուրքերի կողմից, որոնց մեծ մասը դեռ շարունակում էր պաշտոններ զբաղեցնել Ռազմական, Ներքին և Արդարադատության նախարարություններում, սակայն դատավորների ձերբակալման դեպքն աննախադեպ էր: Նրանց դեմ քրեական գործ հարուցվեց՝ Բեհրամզադե Նուսրեթին մահվան դատապարտելու կապակցությամբ: 1921 թ. փետրվարի 2-ին դատավոր Նեմրութ Մուստաֆա փաշան դատապարտվեց 7, դատարանի անդամներից Ռեջեփ փաշան և Ռեջեփ բեյը՝ 5-ական, իսկ Ֆեթթահ բեյը՝ 3 ամիս ազատազրկման: Ըստ Գրիկերի՝ դատավոր Մուստաֆա փաշան դատապարտվել էր՝ ռազմածովային նախարար Ավնի փաշային խստորեն հարցաքննելու համարձակություն ունենալու պատճառով[465]:

Իսկ հայերի բնաջնջման համար մահապատժի ենթարկված ընդամենը 3 ոճրագործներից 2-ը՝ Մեհմեդ Քեմալը և Բեհրամզադե Նուսրեթը, հերոսացվեցին քեմալականների կողմից: Այսպես, Բեհրամզադե Նուսրեթի մահապատժի օրը՝ 1920 թ. օգոստոսի 5-ին, Անկարայի մեջլիսը, ի նշան

463 **Refi Cevad,** Arabanın Beygirleri Nasıl İmiş?. "Alemdar", 20 Şubat 1919.

464 **Akçam T.,** İnsan Hakları ve Ermeni Sorunu. s. 585.

465 **Գրիկեր,** Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, էջ 307: Ըստ Ֆերուդուն Աթայի՝ Նեմրութ Մուստաֆա փաշան և դատարանի անդամները մեղադրվում էին Բեհրամզադե Նուսրեթի վերաբերյալ երկու միմյանցից տարբեր դատական արձանագրություններ կազմած լինելու մեջ: Նեմրութ Մուստաֆան չէր ընդունել իրեն հասցեագրվող այդ մեղադրանքը և բողոքարկել էր այն, տե՛ս **Ata F.,** İşgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, ss. 284-285.

հարգանքի, 10 րոպեով դադարեցրեց իր աշխատանքը: Դարձյալ Անկարայի մեջլիսի 1920 թ. դեկտեմբերի 9-ին ընդունած որոշման համաձայն՝ թոշակ տրամադրվեց Քեմալի ընտանիքին, նույն տարվա դեկտեմբերի 25-ին որոշում կայացվեց Բեհրամզադե Նուսրեթի ընտանիքին թոշակ նշանակելու մասին[466]:

Ամփոփելով նշենք, որ երիտթուրքերի դատավարությունները ուղղված են եղել ոչ թե Իթթիհադի, այլ միայն կուսակցության վերնախավի դեմ, որի վրա է բարդվել թե՛ հայերի ոչնչացման և թե՛ Օսմանյան կայսրությունն Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու մեղքը: Ընդ որում՝ այդ ծրագիրը մշակվել էր հենց Իթթիհադի կողմից, որպեսզի անհաջողության դեպքում կուսակցությունը փրկվեր, և պատասխանատվություն կրեին միայն նրա ղեկավարները: Դա է հաստատում նաև այն փաստը, որ Թեջեդդյուդ կուսակցության կազմավորման որոշման մեջ նշված էր, թե Իթթիհադի բարձրաստիճան պաշտոնյաները չեն կարող անդամագրվել տվյալ կուսակցությանը:

Հարկ է նաև նշել, որ երիտթուրքերի կուսակցության՝ 1919 թ. կայացած դատավարությունն ուղղված էր ոչ այնքան Իթթիհադի հանցագործություններն ամբողջությամբ բացահայտելուն, այլ՝ որոշ չափով կոծկելուն, և որ հայերի ոչնչացման համար պատասխանատվության խնդիրը և Թուրքիայի հարցում բրիտանացիների վարած քաղաքականությունը նպաստեցին ազգայնական շարժման ձևավորմանը:

466 **Akçam T.,** İnsan Hakları ve Ermeni Sorunu, s. 556. Այսօր ևս Բոզազլըյանում կարելի է հանդիպել հերոսի կոչմանն արժանացած հայասպան Քեմալի արձանը, ինչ վերաբերում է մյուս ոճրագործին՝ Բեհրամզադե Նուսրեթին, ապա Ուրֆայում նրա անվամբ է անվանակոչվել տարրական դպրոց ու պողոտա:

ԳԼՈՒԽ 3
ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ 1926 Թ. ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Քաղաքական զարգացումները Թուրքիայում 1923-1926 թթ., Իթթիհադի ղեկավարներն ընդդիմության ճակատում և Իզմիրի մահափորձը

Օսմանյան կայսրության՝ Առաջին աշխարհամարտում կրած պարտությունից հետո իթթիհադականները բաժանվել էին մի շարք խմբավորումների: Մի խումբը համագործակցում էր սուլթանական պալատի հետ, Իթթիհադի պարագլուխներից բաղկացած մյուս խումբը փախել էր արտասահման, իսկ երրորդը՝ կազմել ազգայնական շարժման կորիզը: Վերջին խումբն իր հերթին բաժանվում էր ենթախմբավորումների, որոնցից մեկը լիովին կողմնակից էր ազգային պետության հիմնմանը, իսկ մյուսը ցանկանում էր, որ ազգայնական շարժման հաղթանակից հետո վերականգնվեր նախկին համակարգը[467]: Իթթիհադի վերնախավը նպատակ ուներ պահպանել սահմանադրական միապետությունը, այնինչ Մուստաֆա Քեմալն ու վերջինիս համախոհները հանրապետության կողմնակից էին:

Ազգայնական շարժման հաղթանակից հետո իթթիհադականները մտադիր էին ամեն գնով մնալ քաղաքական թատերաբեմում՝ անկախ բոլոր պայմաններից ու պետական կարգից: Երիտթուրքերից Քարա Քեմալը դոկտոր Նազըմի, Ռահմի և Ջավիդ բեյերի, Հյուսեին Ջահիդի, Իսմայիլ Ջանփոլադի և մյուսների հրահրմամբ փորձում էր Մուստաֆա Քեմալին ներշնչել այն միտքը, թե նոր քաղաքական կուսակցություն ստեղծելու կարիք բոլորովին էլ չկա, և որ բոլոր քաղաքական կազմավորումները Թուրքիայում կարող են հիմնվել Իթթիհաթ վե թերաքքիի վրա[468]: Նույն Քարա Քեմալը[469] 1922 թ. հունվարին գաղտնի աշխատանքներ էր տարել Ստամբուլում՝ Միություն և առաջադիմություն կուսակցությունը վերականգնելու

467 **Murat Çulcu,** Spekülatif Marjinal Tarih Tezleri, E Yayınları, İstanbul, 2000, s. 284.

468 Նույն տեղում, էջ 286:

469 Օսմանյան կայսրության տնտեսությունն ազգայնացնողներից մեկը եղած Քարա Քեմալը, որը Հայոց ցեղասպանության ժամանակ լինելով պարենավորման նախարարը՝ մեծ դեր էր խաղացել հայերի ունեցվածքի կողոպուտն օրինականացնելու հարցում, ինչպես նաև՝ ազգայնական պայքարը կազմակերպելու գործում առանցքային դերակատարություն ունեցած Քարաքոլ կազմակերպության հիմնադիրներից մեկն էր. Մալթա աքսորավայրից վերադառնալուց հետո, հոգարարձուի կարգավիճակով, դարձյալ անցել էր երիտթուրքերի ազգային արտահանման ընկերությունների գլուխ, տես Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, Derleyen: Hulâsi Turgut, İstanbul, 2005, s. 414.

ուղղությամբ[470]: 1922 թ. նոյեմբերի 29-ին Ստամբուլում կայացել էր նախկին իթթիհադականների գաղտնի հավաքը: Երիտթուրքերի կուսակցությունը վերակենդանացնելու փորձը կանխելու համար Մուստաֆա Քեմալն իր մտերիմ շրջապատից Իսմանին և Անկախության դատարանի անդամ Քըլըչ Ալիին ուղարկել էր Ստամբուլ՝ Քարա Քեմալի հետ բանակցելու: Սակայն իթթիհադականները դրանից հետո էլ չէին դադարեցրել իրենց գաղտնի գործունեությունը[471]:

Իր հերթին Մուստաֆա Քեմալը ձգտում էր իր կողմը գրավել իթթիհադականներին և հատկապես երիտթուրքական կուսակցության շարքային անդամներին[472]:

Աթաթուրքի կենսագիր Ֆալիհ Ռըֆքը Աթայն այդ մասին գրում է. «Մուստաֆա Քեմալը կասկածներ չի ունեցել, որ Միություն և առաջադիմություն կուսակցությունը հայրենասերների կուսակցություն է եղել: Պատասխանատուները կուսակցության ղեկավարներն էին: Վերջիններս էլ մահացել էին օտարության մեջ: Արդյոք մնացածները նախկին իթթիհադական Մուստաֆա Քեմալին ճանաչելո՞ւ էին որպես իրենց ղեկավար: Շարքային կադրերի համար դա խնդիր չէր, սակայն ինչ էին մտածում այդ մասին կենտրոնական կոմիտեի՝ գրեթե Թալեաթի կշիռն ունեցող այնպիսի ազդեցիկ անդամներ, ինչպիսիք էին դոկտոր Նազըմը և Քարա Քեմալը»[473]:

Նախքան Թուրքիայի Հանրապետության հռչակումը Մուստաֆա Քեմալն արդեն իսկ սկսել էր մի շարք նշանակալի և արմատական բարեփոխումներ կատարել, որոնք վերաբերում էին երկրի տնտեսական, սոցիալական և քաղաքական ոլորտներին: Հարկ է նշել, որ երբ քեմալականները իշխանության եկան, Թուրքիան մի հետամնաց երկիր էր, որը փաստորեն գտնվում էր արևմտյան պետություններից տնտեսապես կախյալ վիճակում: Քեմալականների հաղթանակից հետո միջազգային կապիտալը Թուրքիայում դեռևս պահպանում էր իր գրեթե բոլոր արդյունաբերական կոնցեսիաները, երկաթուղային և ծովային փոխադրամիջոցները, բանկերը, առևտրային ընկերությունները. թուրքական նորաստեղծ կառավարությունը պարտավորվել էր արտասահմանյան բանկերին մի հսկայական գումար

470 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, İstanbul, 1998, s. 384.

471 **А. Авакян,** Черкесский фактор в Османской империи и Турции, с. 369

472 **Аралов С.И.,** Воспоминания советского дипломата 1922-1923, Москва, 1960, с 145.

473 **Falih Rıfkı Atay,** Çankaya-Atatürk'ün doğumundan ölümüne kadar-, İstanbul, 1969, s. 346.

վճարել, որպեսզի մարեր սուլթանական պարտքը[474]: Լոզանի պայմանագրի կնքումից հետո (1923 թ. հուլիսի 23) Թուրքիայի տնտեսության գրեթե բոլոր առանցքային բնագավառները դեռ գտնվում էին եվրոպացի կապիտալիստների ձեռքում. 1924 թ. այստեղ գործում էին 94 արտասահմանյան ընկերություններ, այդ թվում՝ 7 երկաթուղային և 23 բանկային[475]: Տնտեսական խնդիրների լուծմանն էր ուղղված Իզմիրի տնտեսական խորհրդաժողովի հրավիրումը 1923թ.: Վերջինիս մասին հետևյալն է հայտնում տվյալ ժամանակաշրջանում Թուրքիայում գտնված խորհրդային դիվանագետ Ս. Արալովը. «Ընդդիմության պարագլուխներն առաջ էին քաշել այն տեսակետը, թե Իզմիրի խորհրդաժողովը ոչ թե ուղղված էր լինելու տնտեսական խնդիրների քննարկմանը, այլ այն գումարվելու էր Մուստաֆա Քեմալի կողմից՝ ինքնագովազդի և նոր կուսակցություն հիմնելու նպատակով: (...) Պայքարը քաղաքական խմբավորումների միջև արդեն այն ժամանակ սուր բնույթ էր ստացել»[476]:

Տնտեսական բարեփոխումների հետ մեկտեղ քեմալականները Թուրքիայի ներքին քաղաքական կյանքում իրականացնում էին նաև քաղաքական արմատական փոփոխություններ: Վերջիններիս շարքում հիշատակման է արժանի հատկապես սուլթանության և խալիֆայության վերացումը: Մուստաֆա Քեմալը, նկատի առնելով, որ խալիֆայության լուծարման մասին առաջարկը կարող էր հուժկու բացասական արձագանք հարուցել երկրի ներսում, նախ բարձրացրեց միայն սուլթանության վերացման և սուլթանի աքսորման հարցերը[477]:

Թուրքիայի Ազգային մեծ ժողովը (այսուհետ՝ ԹԱՄԺ) 1922 թ. նոյեմբերի 1-ին օրենք ընդունեց սուլթանության վերացման մասին[478]: Սուլթանության լուծարումից հետո իրականացվեցին մի շարք միջոցառումներ՝ ուղղված պետական իշխանության ամրապնդմանը և սուլթանական շրջանակների ազդեցության թուլացմանը: 1923 թ. հոկտեմբերի 29-ին Մուստաֆա Քեմալը խորհրդարանի քննարկմանը ներկայացրեց երեք կետից բաղկացած մի նախագիծ, որը մշակել էր Իսմեթ Ինոնյուի հետ համատեղ.

1. թուրքական պետության պետական կարգը՝ հանրապետություն,
2. թուրքական պետությունը գլխավորում է ԹԱՄԺ-ը,

474 **Новичев А. Д.,** Турция, Краткая история, Москва, 1965, с. 170.

475 Новейшая история Турции, отв. ред. А. М. Шамсутдинов, Москва, 1968, с. 68.

476 **Аралов С.И.,** Воспоминания советского дипломата 1922-1923, с. 208.

477 Նույն տեղում, էջ 142:

478 Նույն տեղում:

3. թուրքական պետությունը կառավարվում է Նախարարների խորհրդի միջոցով:

Սույն նախագիծը հենց նույն օրն ընդունվեց ԹԱՄԺ-ի կողմից: Ընդ որում՝ խորհրդարանում ոչ մի ընդդիմադիր բացահայտ հանդես չեկավ դրա դեմ[479]:

Ինչ վերաբերում է խալիֆայության վերացմանը, ապա 1924 թ. մարտի 3-ին մի խումբ պատգամավորներ՝ շեյխ Սավֆեթ էֆենդու գլխավորությամբ, ԹԱՄԺ-ի քննարկմանը ներկայացրեցին խալիֆայության լուծարման և օսմանյան դինաստիայի բոլոր անդամներին Թուրքիայից վտարելու մասին օրինագիծը: Չնայած որոշ պատգամավորների առարկություններին՝ ԹԱՄԺ-ը 1924 թ. մարտին հաստատեց այն[480]:

1923 թ. ապրիլի 8-ին Մուստաֆա Քեմալը հրապարակեց նորաստեղծ Ժողովրդական կուսակցության[481] (Halk Fırkası) 9 սկզբունքները, որոնք դարձան այս կուսակցության նախընտրական ծրագրի հիմքը և մեծ դեր խաղացին հանրապետության քաղաքական համակարգի կազմավորման հարցում: Թուրքիայի ներքաղաքական կյանքում ակտիվ դերակատարում ունենալ ցանկացող նախկին երիտթուրքերը ևս վերոհիշյալ ծրագրի դեմ մշակեցին «9 հողվածներից» բաղկացած մի նախագիծ[482], որի գլխավոր պահանջն էր սուլթանության ու խալիֆայության վերականգնումը: Իթթիհադականները գիտակցելով, որ Միություն և առաջադիմություն կուսակցությունն այնքան է վարկաբեկվել, որ նրա նույնությամբ վերականգնումը միայն ընդվզում կառաջացնի երկրի բնակչության շրջանում, համախմբվեցին Առաջադիմական հանրապետական կուսակցության (Terakkiperver Cumhuriyet Fırkası) շուրջ[483]: Թեև սույն կուսակցության ծրագիրը մշակվել էր Քարա Քեմալի կողմից, սակայն կուսակցության նախագահ էր ընտրվել Քյազիմ Կարաբեքիրը, իսկ տեղակալներ՝ Հյուսեին Ռաուֆ Օրբայը և Ալի Ֆուադ Ջեբեսոյը:

Հարկ է նշել, որ Մուստաֆա Քեմալն իթթիհադականների շարքում սկսել էր ընդդիմության հանդիպել դեռևս 1919 թ.՝ Էրզրումի և Սըվասի համագումարների ընթացքում[484]: Հանրապետության հռչակումից հետո ընդդիմությունը հիմնականում ուղղված էր սուլթանության և խալիֆայության վերացման դեմ: Առաջին ընդհարումներն արտացոլվեցին Ստամբուլի և Անկարայի մամուլի էջերում[485]: Ժողովրդական կուսակցությունից՝ շատերի համար ոչ անսպասելի տարանջատումը տեղի ունեցավ 1924 թ. նոյեմբերի 9-ին, երբ վարչապետի պաշտոնից հրաժարական տվեց Ռաուֆ Օրբայը[486]: Վերջինս 9 ընկերների հետ միասին 1924 թ. նոյեմբերի 17-ին Ներքին գործերի նախարարությանը ներկայացրեց Առաջադիմական հանրապետական կուսակցություն հիմնելու մասին դիմումը և կուսակցության ծրագիրը, որը հրապարակվեց կուսակցության վավերացումից անմիջապես հետո[487]: ԹԱՄԺ-ում առաջին քաղաքական խմբավորման կազմավորումը սկսվել էր դեռևս «Անատոլիայի և Ռումելիի իրավունքների պաշտպանության խմբի» ստեղծման ժամանակ: Մուստաֆա Քեմալի ղեկավարության տակ գտնվող այս խումբը ստացել էր «Առաջին խումբ» անվանումը, իսկ ընդդիմադիր «Երկրորդ խմբի» առաջադեմ պարագլուխներից էր «Թան» թերթի գլխավոր խմբագիր և Տրապիզոնի պատգամավոր Ալի Շյուքրյուն: Առաջադիմական հանրապետական կուսակցության շարքերն անցան «Երկրորդ խմբի» անդամները[488]: Կուսակցության հիմնադիրների մեջ էին նաև Իթթիհադի այնպիսի ղեկավարներ, ինչպիսիք էին հանրակրթական նախկին նախարար Շյուքրյու Բլեդան, ներքին գործերի նախկին նախարար Իսմայիլ Ջանփոլադը, պատգամավորներ Արիդինն ու Հալիս Թուրգութը և այլք[489]:

Ինչպես նշվեց, նոր կուսակցության շարքերում մեծ թիվ էին կազմում նախկին իթթիհադականները: Առաջադիմական հանրապետական կուսակցությունն իրականում ընդհատակ անցած Միություն և առաջադիմություն կուսակցության գոյատևման օրինական երկարաձգումն էր, որը մի նոր «ռազմական թև» էր ստեղծում Մուստաֆա Քեմալի դեմ[490]:

Առաջադիմական հանրապետական կուսակցության ծրագրի դրույթ-

479 Новейшая история Турции, с. 83.

480 Նույն տեղում, էջ 84:

481 Հետագայում վերանվանվեց Ժողովրդա-հանրապետական կուսակցություն (Cumhuriyet Halk Fırkası):

482 **Tarık Zafer Tunaya,** Türkiye'de Siyasal Partiler, cilt III, s. 707.

483 **А. Авакян,** Черкесский фактор в Османской империи и Турции, с. 369.

484 **Аралов С.И.,** Воспоминания советского дипломата 1922-1923, с. 141.

485 **Tarık Zafer Tunaya,** Türkiye'de Siyasal Partiler, cilt III, s. 707.

486 **Yılmaz Gülcan,** Cumhuriyet Halk Partisi 1923-1946. Alfa Yayınları, 2001, s. 93.

487 Նույն տեղում, էջ 94: Հարկ է նշել, որ կուսակցության ծրագիրը մշակվել էր իթթիհադական Քարա Քեմալի կողմից, տես **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 385.

488 **Uğur Mumcu,** Gazi Paşa'ya Suikast, Ankara, 1999, s. 12.

489 Նույն տեղում:

490 **Murat Çulcu,** Spekülatif Marjinal Tarih Tezleri, s. 293.

ների շարքում նշվում էր. «Կուսակցությունը հարգալից է կրոնական հավատքի հանդեպ»: Հենց այս կետն էլ շուտով խնդիրներ էր հարուցելու կուսակցության համար, քանի որ Ժողովրդական կուսակցությունն այս հոդվածը մնկնաբանելու էր որպես սպառնալիք՝ ուղղված աշխարհիկության (լաիցիզմ) սկզբունքին[491]: Առաջադիմական հանրապետական կուսակցությունը, բացի այնպիսի մեծ քաղաքներից, ինչպիսիք էին Անկարան, Ստամբուլը և Իզմիրը, մասնաճյուղ էր բացել նաև Ուրֆայում և սկսել կազմակերպվել Սրվասում[492]:

Մուստաֆա Քեմալի իրականացրած վերոհիշյալ արմատական փոփոխությունները հանդիպեցին հետադիմականների կատաղի դիմադրությանը: 1925 թ. տեղի ունեցավ Շեյխ Սայիդի ապստամբությունը, որն իրականում քրդական ապստամբություն լինելով՝ արտաքուստ հանդես էր գալիս հանրապետության և վերջինիս սկզբունքների դեմ՝ թեոկրատական կարգ հիմնելու կոչով: Ապստամբներն աջակցություն էին ստացել Առաջադիմական հանրապետական կուսակցության որոշ անդամների կողմից, որն էլ առիթ դարձավ, որպեսզի կառավարությունն ավելի խիստ միջոցներ ձեռնարկեր նրա դեմ:

Այսպես՝ խորհրդարանն այդ կապակցությամբ 1925 թ. մարտի 4-ին ընդունեց մի օրենք, ըստ որի՝ արգելվում էր սուլթանության և խալիֆայության օգտին քարոզչությունը[493]: Միաժամանակ հրապարակված Կարգուկանոնի ամրապնդման մասին օրենքը (Takrir-i Sükun Yasası) լայն իրավունքներ ընձեռեց կառավարությանը՝ ընդդիմադիր կազմակերպությունների դեմ պայքար մղելու հարցում: Սույն օրենքի վրա հիմնվելով՝ Իսմեթ փաշայի կառավարությունը 1925 թ. հունիսի 3-ին արգելեց Առաջադիմական հանրապետական կուսակցության գործունեությունը և փակեց գրեթե բոլոր ընդդիմադիր մամլո օրգանները[494]: ԹԱՄԺ-ում այս կուսակցության ներկայացուցիչները դարձան անկախ պատգամավորներ[495]: Օրենքի կիրառմանը զուգահեռ՝ վերակազմավորվեցին Անկախության

491 **Yılmaz Gülcan,** Cumhuriyet Halk Partisi 1923-1946, s. 96.

492 Նույն տեղում, էջ 98:

493 Новейшая история Турции, с. 86.

494 Նույն տեղում, էջ 86-87: Փակվեց նաև Իթթիհադի կիսապաշտոնական օրգան «Թանինը», որի խմբագիրն էր Հյուսեին Ջահիդը, տե՛ս **А. Авакян,** Черкесский фактор в Османской империи и Турции, с. 370.

495 **Seyhun Tunaşar,** Gizemli Bir Devrimci Osmanlı'nın Dahiliye Vekili Cumhuriyetimizin İstanbul Milletvekili İsmail Canpolat (Janbulet), Piramit Yayıncılık, Ankara, 2004, s. 84.

դատարանները (İstiklal Mahkemeleri)[496]: Արևելյան անկախության դատարանը (Şark İstiklal Mahkemesi), 1925 թ. մայիսի 25-ին մի գրություն հղելով շրջանի բոլոր նահանգներին, պահանջեց փակել Առաջադիմական հանրապետական կուսակցության՝ տվյալ շրջանների մասնաճյուղերը: Այդ պահանջն անմիջապես իրագործվեց նահանգապետերի կողմից, ովքեր կուսակցության մասնաճյուղերի փակման մասին արձանագրություններն ուղարկեցին դատարան[497]: 1925 թ. հունիսի 3-ին Առաջադիմական հանրապետական կուսակցության գործունեությունն արգելվեց Անկախության դատարանի կողմից[498]: Սակայն կուսակցության փակումից հետո երիտթուրքերն անցան ընդհատակյա գործունեության և սկսեցին ծրագրեր մշակել՝ Աթաթուրքին ֆիզիկապես ոչնչացնելու ուղղությամբ[499]: Ինչպես իրավամբ նկատում է թուրք պատմաբան Մուրադ Չոլջուն, իթթիհադականներին հատկապես վրդովեցնում էր այն, որ Մուստաֆա Քեմալը նոր կարգ հիմնելիս ցանկանում էր իրենց ամբողջովին դուրս մղել քաղաքականությունից[500]:

1926 թ. երիտթուրքերը, հրահրելով հետադիմական ուժերին, զանգվածային ցույցեր կազմակերպեցին Էրզրումում, Սրվասում և Կայսերիում, ինչպես նաև՝ պետության այլ քաղաքներում[501]: Նրանք ենթադրում էին, թե քանի որ այս բոլոր փոփոխությունները կապված էին Քեմալի անվան հետ, ապա վերջինիս սպանության դեպքում հնարավոր կլիներ վերադարձնել նախկին կարգը[502]: Իթթիհադականներին հուսադրում էր այն փաստը, որ Մուստաֆա Քեմալի նախկին զինակիցները՝ Քյազիմ Կարաբեքիրը, Ալի Ֆուադը և Ռաուֆ Օրբայը, հայտնվել էին ընդդիմադիրների ճակատում[503]: Թուրք պրոֆեսոր Էրգյուն Այրարսի բնորոշմամբ՝ 1925-1926 թթ. դարձել էին Թուրքիայի ամենաճգնաժամային տարիները, քանի որ Կարգուկանոնի ամրապնդման մասին օրենքը (Takrir-i Sükun Yasası) և

496 6 ամիս ժամկետով հիմնված այս երկու Անկախության դատարաններն օժտվեցին արտակարգ իրավասություններով: Նրանց ժամկետները երկարաձգվում էին 6 ամիսը մեկ անգամ, տե՛ս **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 406.

497 **Yılmaz Gülcan,** Cumhuriyet Halk Partisi 1923-1946, s. 100-101.

498 **А. Авакян,** Черкесский фактор в Османской империи и Турции, с. 370.

499 Նույն տեղում, էջ 371:

500 **Murat Çulcu,** Spekülatif Marjinal Tarih Tezleri, s. 285.

501 Новейшая история Турции, с. 88.

502 Նույն տեղում:

503 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 357.

Անկախության դատարանների՝ ընթացքի մեջ գտնվող աշխատանքները, Շեյխ Սայիդի ապստամբության հետևանքով առաջացած մթնոլորտը, հեղափոխական շարժման ծավալումը, Առաջադիմական հանրապետական կուսակցության փակումը, Գլխարկի մասին օրենքը (Şapka Kanunu) և այլ իրադարձություններ մեծ ազդեցություն էին թողել երկրի հասարակական կառուցվածքի վրա[504]:

Թուրքիայի Հանրապետության նախագահի դեմ ծրագրվող մահափորձի մասին անձամբ Մուստաֆա Քեմալին ու կառավարությանը հայտնի էր դարձել դեռևս 1926 թ. սկզբներին: Ընդ որում՝ այն ժամանակ այդ մասին նրանց տեղեկացրել էր արգելված Առաջադիմական հանրապետական կուսակցության անդամներից մեկը՝ Սարը Էդիփ Էֆեն[505], սակայն քեմալական կառավարությունը որոշել էր օգտագործել այդ մահափորձը՝ ընդդիմության հետ հաշվեհարդար տեսնելու նպատակով[506]: Հենց այդ պատճառով էլ կառավարությունը 1926 թ. սկզբներին դեռ միջոցներ չէր ձեռնարկել մահափորձի հեղինակներին ձերբակալելու ուղղությամբ:

Մուստաֆա Քեմալ փաշան 1926 թ. մայիսի 7-ին շրջայցի էր դուրս եկել դեպի Թուրքիայի արևելյան և արևմտյան շրջաններ: Քեմալը 1926 թ. հունիսի 14-ին Բալըքեսիրից ճանապարհ էր ընկնելու Իզմիր, որտեղ էլ, ծրագրի համաձայն, հունիսի 15-ին պետք է իրականացվեր մահափորձը: Ըստ ծրագրի՝ մահափորձն ի կատար էր ածվելու Իզմիրի Քեմերալթը պողոտայից դեպի շուկա բացվող հատվածում, որտեղ Գյուրջյու Յուսուֆը, Լազ Իսմայիլը և Չոփուր Հիլմին կրակելու էին Քեմալի վրա[507]: Սակայն կրետացի մաքսանենգ Շևքին, որի տանն էր կայացել մահափորձի նախապատրաստական աշխատանքների վերջին ժողովը, մտավախություն ունենալով, թե հունիսի 15-ի երեկոյան անմիջապես Ստամբուլ ուղևորված Սարը Էդիփ Էֆեն և Աբիդինը կառավարությանը կհայտնեն մահափորձի

504 Նույն տեղում:

505 Ըստ Ալի Ֆուադ Զեբեսոյի՝ խոսակցություններ էին շրջում առ այն, թե Սարը Էդիփ Էֆեն իրականում թուրքական կառավարության գործակալն էր, տե՛ս **Erik Jan Zürcher**, Milli Mücadelede İttihatçılık, İletişim Yayınları, İstanbul, 2008, s. 218. Թեև Սարը Էդիփը դատական նիստերի ընթացքում անընդհատ պնդել է, թե առաջինն ինքն է իշխանություններին հայտնել մահափորձի մասին, բայց և այնպես դատարանը նրա դեմ մահվան դատավճիռ է կայացրել՝ հակառակ պնդմամբ և մեղադրանքով, քանի որ սույն ամբաստանյալը եղել է Հատուկ կազմակերպության անդամներից մեկը, և նրան մեղադրելն ու դատապարտելն անհրաժեշտ էր, որպեսզի մահափորձը կապվեր Իթթիհադի անվան հետ:

506 **А. Авакян**, Черкесский фактор в Османской империи и Турции, с. 371.

507 **Uğur Mumcu**, Gazi Paşa'ya Suikast, ss. 1-2.

մասին, շտապեց Իզմիրի նահանգապետ Քյազըմ Դիրիքի մոտ՝ մահափորձի մասին տեղեկացնելու[508]:

Մահափորձի կազմակերպիչների խմբի ղեկավարն էր Լազիստանի պատգամավոր Զիա Հուրշիդը[509]՝ ԹԱՄԺ-ում ընդդիմադիր «Երկրորդ խմբի» անդամներից մեկը[510]: Նա մահափորձի հեղինակներին «Գյուլջեմալ» շոգենավով բերել էր Իզմիր և Գաֆֆարզադե հյուրանոցում նրանց ծանոթացրել Սարը Էդիփ Էֆեի հետ: Զիա Հուրշիդը նախկին իթթիհադական, Հատուկ կազմակերպության հիմնադիրներից գնդապետ Ռասիմից մի ծածկագիր նամակ էր բերել Սարը Էդիփ Էֆեին[511]:

1926 թ. հունիսի 16-ի առավոտյան թուրքական թերթերը հրապարակեցին մի կարճ լուր, ըստ որի՝ բացահայտվել էր հանրապետության նախագահ Մուստաֆա Քեմալի դեմ ծրագրված մահափորձը, իսկ կազմակերպիչները՝ ձերբակալվել[512]: Կառավարությունը 1926 թ. հունիսի 18-ին մահափորձի նախաձեռնության մասին հասարակայնությանը հաղորդեց նաև «պաշտոնական հաղորդագրությամբ», որում նշվում էր, թե պարզվել է, որ Քեմալի դեմ մահափորձ է ձեռնարկվել նրա ուղևորության ընթացքում, հանցագործները ձերբակալվել են հանրապետության նախագահի՝ Իզմիր հասնելուց մեկ օր առաջ և խոստովանել իրենց հանցանքը, խնդիրը վստահվել է Անկախության դատարաններին, և դատարանի կազմը մեկնել է Իզմիր՝ գործը տեղում հետաքննելու համար[513]:

508 Նույն տեղում, էջ 2-3:

509 Հենց նա էլ դարձավ այս գործով առաջին ձերբակալվածը, տե՛ս **Ergün Aybars**, İstiklal Mahkemeleri, s. 365.

510 **Uğur Mumcu**, Gazi Paşa'ya Suikast, s. 2.

511 Նույն տեղում, էջ 3:

512 **Tarık Zafer Tunaya**, Türkiye'de Siyasal Partiler, cilt III, s. 710.

513 **Ergün Aybars**, İstiklal Mahkemeleri, s. 359.

3.2 1926 թ. Իզմիրի և Անկարայի դատավարությունները

Իզմիրի և Անկարայի դատաքննությունների բնույթը և ընթացքը ճիշտ ըմբռնելու համար հարկ է համառոտ վերլուծել Անկախության դատարանների լիազորություններն ու դատավարության սկզբունքները: Անկախության դատարանները (İstiklâl Mahkemeleri) հիմնվել են 1920 թ.՝ որպես սուլթանական կառավարությանը ծառայող լրտեսների և ազգայնական ուժերից դասալիքների դեմ ուղղված արագ և ազդեցիկ միջոց: Սույն դատարանները ենթակա էին ԹԱՄԺ-ին: Անկախության դատարաններին վերաբերող գործերի քննությունը նախ տարվում էր կառավարության կողմից, ապա տվյալ գործի թղթապանակը հանձնվում էր դատարանին[514]: Դատավարությունը դռնբաց էր հասարակության առջև. թերթերը մեկ օր առաջ տեղեկացնում էին նախատեսվող դատական նիստերի մասին: Անկախության դատարանների կայացրած դատավճիռներն անբեկանելի էին[515]: Դատավճիռների կատարման հարցում պատասխանատու էին քաղաքացիական ու զինվորական բոլոր պաշտոնյաները[516]: Սույն դատարանները վարույթների ընթացակարգով տարբերվում էին մյուս դատարաններից. մեղադրյալը դատարանում հարցաքննվում էր թե՛ դատավորի և թե՛ դատախազի կողմից: Ամբաստանյալը վկա հրավիրելու կամ դատական ակտը բողոքարկելու իրավունք չուներ[517]: Ավելին՝ խորհրդարանն անմիջապես վավերացնում էր դատարանի կայացրած մահվան դատավճիռը[518]: Թեև Անկախության դատարանների մասին օրենքը (İstiklal Mehâkimi Kanunu) փաստաբան վարձելն արգելող ոչ մի դրույթ չէր պարունակում, սակայն ամբաստանյալներին, ընդհանուր առմամբ, թույլ չէր տրվում դատապաշտպան ունենալ[519]:

Այս դատարանները 1921 թ. հետո չէին գործում, սակայն 1923 թ. դեկտեմբերին խալիֆայության մասին մի գրության տարածման պատճառով Ստամբուլ էր ուղարկվել մի նոր Անկախության դատարան, իսկ 1925 թ. մարտին հրապարակված Կարգուկանոնի ամրապնդման մասին օրենքի (Takrir-i Sükun Yasası) ընդունումից հետո հիմնվել էին ևս երկու Անկախության դատարաններ, որոնցից մեկն աշխատում էր Անկարայում, իսկ մյուսը՝ շրջում Թուրքիայի արևելյան շրջաններում՝ ապստամբներին դատելու նպատակով: Անկախության դատարանները միայն 1925 թ. դատապարտել են 800 հոգու, որոնցից 70-ի վերաբերյալ կայացվել է մահվան դատավճիռ[520]: Այս շրջիկ դատարանները քննել են ամենատարբեր բնույթի գործեր, որոնց մեջ հատկապես հիշատակման է արժանի դարձյալ Մուստաֆա Քեմալի դեմ մահափորձ ձեռնարկելու մեղադրանքով դատաքննված ազգությամբ հայ Մանուկ Մանուկյանի գործը[521]: 1923-1927 թթ. Անկախության դատարանների քննած գործերն իրենց բնույթով որոշ չափով տարբերվում էին 1920-1923 թթ. քննված գործերից: Ըստ պրոֆ. Էրգյուն Այբարսի՝ 1923-1927 թթ. այս դատարաններում դատավարություններ են կայացել հիմնականում հետևյալ մեղադրանքներով՝ ապստամբության (խոսքը վերաբերում է հատկապես Շեյխ Սայիդի ապստամբությանը և Գլխարկի մասին օրենքի դեմ ուղղված ըմբոստություններին), Աթաթուրքի դեմ մահափորձի և իթթիհադականության, դասալքության, լրտեսության, կառավարությանն ընդդիմության, զրպարտանքի և այլն[522]: Դատարանի դահլիճի այն մասում, որտեղ սովորաբար նստում էր դատարանի կազմը, նկատելի էր մի մեծ պաստառ՝ հետևյալ մակագրությամբ. «Անկախության դատարանն իր պայքարում ահ ունի միայն Ալլահից»[523]: Այս դատարանն իրավասություններ ուներ հանրապետության մյուս դատարանների և վարչական մարմինների նկատմամբ: Անկախության դատարանն անհրաժեշտության դեպքում դիմում էր նման ատյանների՝ վերջիններիս կողմից ներբակալված կասկածյալների թղթապանակներն իրեն ուղարկելու հարցով, և այդ պահանջներն անմիջապես բավարարվում էին[524]: Տվյալ ժամանակաշրջանում ԱՄՆ-ի գերագույն կոմիսար, ծովակալ Մարկ Բրիստոլը ԱՄՆ-ի դեսպանությանը գրում էր, թե Անկախության դատարանի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այստեղ դատախազի և դատավորների միջև տարակածություններ գրեթե չեն լինում[525]:

514 Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, s. 367.

515 Նույն տեղում:

516 Նույն տեղում:

517 **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, s. 219.

518 Նույն տեղում, էջ 220:

519 **Mete Tunçay,** Türkiye Cumhuriyeti'nde Tek-Parti Yönetimi'nin Kurulması (1923-1931), Tarih Vakfı Yurt Yayınları, İstanbul, 1999, s. 174.

520 **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, s. 219.

521 **Mete Tunçay,** Türkiye Cumhuriyeti'nde Tek-Parti Yönetimi'nin Kurulması (1923-1931), s. 165.

522 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 404.

523 Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, s. 370.

524 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 398.

525 **Seyhun Tunaşar,** Gizemli Bir Devrimci Osmanlı'nın Dahiliye Vekili Cumhuriyetimizin İstanbul Milletvekili İsmail Canpolat (Janbulet), s. 93.

Իզմիրի և Անկարայի դատական գործերը քննած Անկախության դատարանը կազմված էր Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը ներկայացնող ԹԱՄԺ-ի պատգամավորներից: Ռաուֆ Օրբայն իր հուշերում հետևյալ բնութագիրն է տալիս սույն Անկախության դատարանին. «Ոչ թե դատարան է, այլ ավազակների օջախ»[526]: Դատարանի պաշտոնյաները նշանակվում էին հենց դատարանի կողմից[527]: Դատարանի գրեթե բոլոր անդամները երիտասարդ էին և հավատարիմ՝ Մուստաֆա Քեմալին[528]: Որպես Անկախության դատարանի անդամներ հայտնի պաշտոնյաները դեռևս 1920 թ. սեպտեմբերի 7-ին ԹԱՄԺ-ում հավաքվելով՝ որոշել էին «սեփական խղճի մտոք վճիռ կայացնել՝ առանց որևէ օրենքի ենթարկվելու»[529]: Անկախության դատարանների գործունեությունը փաստորեն դադարեցվել է 1927 թ., իսկ 1949 թ. Ջիհադ Բաբանի և Աղնան Ադրվարի առաջարկով վերացվել է Անկախության դատարանների մասին օրենքը (İstiklal Mehâkimi Kanunu)[530]:

1926 թ. հունիսի 16-ի երեկոյան Մուստաֆա Քեմալը ժամանեց Իզմիր և իջևանեց Նայիմ Փալաս հյուրանոցում: Այստեղ կասկածյալ Ջիա Հուրշիդի[531] հետ դեմ առ դեմ հանդիպելուց հետո Քեմալը վարչապետին և ներքին գործերի նախարարին ուղարկած ծածկագիր հեռագրերով հրամայեց կալանավորել Սարը Էդիփ Էֆեին և Իզմիթի պատգամավոր Նյուքրյուին, իսկ Ստամբուլի ոստիկանապետ Էքրեմին հղած ծածկագիր հեռագրով առաջին ազդանշանը տվեց՝ իթթիհադականներին ձերբակալելու ուղղությամբ[532]: Ջիա Հուրշիդը ձերբակալվել էր Գաֆֆարզադե հյուրանոցում, Լազ Իսմայիլն ու Գյուրջյու Յուսուֆը՝ Ռագըփփաշա հյուրանոցում, իսկ Չոփուր Հիլմին և վերջինիս եղբայրը՝ Քարշըյաքայում[533] գտնվող իրենց տանը[534]:

526 Նույն տեղում, էջ 92:

527 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 400.

528 Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, s. 375.

529 **Mehmet Barlas,** İstiklal Mahkemesi belgeleri niye gizli kalsın ki?, "Sabah", 11.02.2010.

530 Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, s. 373.

531 Ջիա Հուրշիդը մահափորձի կազմակերպման մասին խոստովանել էր ոստիկաններին տված իր առաջին իսկ ցուցմունքներում, տես Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, s. 442.

532 **Uğur Mumcu,** Gazi Paşa'ya Suikast, ss. 5-6.

533 Թաղամաս Իզմիրում:

534 Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, s. 442.

1926 թ. հունիսի 17-ին Անկարայի Անկախության դատարանը՝ ամբողջական կազմով և Աֆիոնի պատգամավոր Ալի Չեթինքայայի (Քել Ալի) նախագահությամբ, Անկարայից մեկնեց Իզմիր[535]: Ինչպես նշվում էր ԽՍՀՄ-ի դեսպանության ամփոփագրում, հունիսի 17-ին Իզմիրում, Ստամբուլում և Անկարայում բազմաթիվ ձերբակալություններ էին կատարվել ընդդիմադիրների շրջանում[536]: Ըստ պատմաբան Ա. Ավագյանի՝ ուշագրավ փաստ է, որ Առաջադիմական հանրապետական կուսակցության անդամներն Անկախության դատարանի հրահանգով սկսել էին ձերբակալվել դեռ նախքան վերջինիս՝ Իզմիր մեկնելը, այսինքն՝ երբ դեռ չէր պարզվել սույն կուսակցության անդամների մեղսակցությունը մահափորձին[537]:

Ինքը՝ Մուստաֆա Քեմալ փաշան, այդ օրերին գտնվում էր զարմանալիորեն հանգիստ վիճակում, և չէր երևում, թե այս դեպքը հոգևարհորեն ճնշել էր նրան[538]: Սա ևս փաստում է, որ կառավարությունը և Քեմալը բավականին վաղուց են տեղյակ եղել կազմակերպվող մահափորձի մասին, սակայն այն ավելի շուտ չեն կանխել՝ ընդդիմադիրների և հատկապես իթթիհադականների հետ հաշվեհարդար տեսնելու նպատակով:

Ինչպես 1926 թ. հունիսի 20-ին հաղորդում էր ՏԱՍՍ գործակալությունը, մահափորձի կապակցությամբ Ստամբուլում արդեն իսկ ձերբակալվել էին 40 հոգի, այդ թվում՝ ռազմական նախկին նախարար Ջեմալ փաշան, Օսմանյան կայսրության հանրակրթական նախկին նախարար Ահմեդ Նյուքրյուն, Ստամբուլի նախկին պատգամավոր Նյուքրյուն և Առաջադիմական հանրապետական կուսակցության մի շարք պատգամավորներ[539]:

Ուշագրավ հանգամանք էր նաև այն, որ թեև ապստամբ[540] շրջանի Անկախության դատարանի անդամները հունիսի 22-ին ուղարկած հեռագրում, անդրադառնալով այն հարցին, որ մեղավորների մեջ կային նաև պատգամավորներ, առաջարկել էին ԹԱՄԺ-ին նիստ գումարել՝ նրանց անձեռնմխելիությունից զրկելու համար, սակայն դեպքի հետաքննումն ստանձնած մյուս Անկախության դատարանը, բոլորովին նման անհրաժեշտություն

535 АВП РФ, Ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 79, д. 38, 1926 г., л. 56.

536 АВП РФ, Ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 79, д. 37, 1926 г., л. 49.

537 **А. Авакян,** Черкесский фактор в Османской империи и Турции, с. 372.

538 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 361.

539 АВП РФ, Ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 78, д. 34, 1926 г., л. 20.

540 Խոսքը վերաբերում է Շեյխ Սայիդի ապստամբությանը, որը ճնշելուց հետո սույն Անկախության դատարանը գործում էր Դիարբեքիրում:

չզգալով, սկսել էր կալանքի տակ առնել Առաջադիմական հանրապետական կուսակցության նախկին անդամները եղած պատգամավորներին[541]: Կալանավորվել էին սույն կուսակցության՝ ԹԱՄԺ-ում ներկայացված և անձեռնմխելիությամբ օժտված 29 պատգամավորներից 21-ը[542]:

Ձերբակալվել էին Առաջադիմական հանրապետական կուսակցության ներկայացուցիչ հետևյալ պատգամավորները՝ Ալի Ֆուադ Ջեբեսոյը, Քյազիմ Կարաբեքիրը, Ռեֆեթ Բելեն, Ջաֆեր Թայար Էղիլմեզը, գնդապետ Արիֆը, Ռյուշթյուն, Բեքիր Սամին, Սաբիհ Սադրրօղլուն, Հալիս Թուրգութը, Նեջաթի Քուրթուլուշը, Հալեթ Սադրրօղլուն, Մյունիր Հյուսրևը, Հալիլ Ըշըքը և ուրիշներ[543]:

Չնայած ձերբակալվել էին Առաջադիմական հանրապետական կուսակցության գրեթե[544] բոլոր առաջատար անդամները[545], սակայն Անկախության դատարանը հունիսի 22-ին հերքում էր մամուլում տարածված այն տեղեկությունը, թե նշյալ կուսակցության բոլոր գործիչներն էին կալանավորվելու[546]: Իրենց առաջատար անդամների ձերբակալման լուրն ստացած Առաջադիմական հանրապետական կուսակցության առաջնորդները ժողով էին գումարել Ռեֆեթ (Բելե) փաշայի տանը, որպեսզի քննարկեն դրա դեմ իրենց բողոքն արտահայտելու հարցը: Նրանք բողոքի մի տեքստ մշակեցին, որը ներկայացրեցին ԹԱՄԺ-ի նախագահ Քյազըմ Օզալփին, սակայն դա ոչ միայն որևէ օգուտ չտվեց, այլև հետագայում՝ դատավարության ժամանակ, մեկնաբանվեց որպես հանցանքի խոստովանում[547]:

1926 թ. հունիսի 26-ի դրությամբ ձերբակալվածների թիվն անցնում էր 100-ից: Ազատազրկումները շարունակվել են նաև դատավարության

541 **Mete Tunçay,** Türkiye Cumhuriyeti'nde Tek-Parti Yönetimi'nin Kurulması (1923-1931), s. 167.

542 **Seyhun Tunaşar,** Gizemli Bir Devrimci Osmanlı'nın Dahiliye Vekili Cumhuriyetimizin İstanbul Milletvekili İsmail Canpolat (Janbulet), ss. 84-85.

543 **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, ss. 221-222.

544 Նրանցից երկուսը՝ Արդուլհար Աղնան Աղրվարը և Հյուսնին Ռաուֆ Օրբայը, չէին ձերբակալվել զուտ այն պատճառով, որ գտնվում էին արտասահմանում: Ինչպես 1926 թ. հունիսի 26-ին հաղորդում էր ֆրանսիական «Լա ռևփյուբլիք» օրաթերթը, Անկախության դատարանը հրահանգել էր Թուրքիայի արտգործնախարարությանը, որպեսզի վերջինս բայլեր ձեռնարկեր՝ այն ժամանակ Լոնդոնում գտնվող այս երկուսին գտնելու ուղղությամբ, տե՛ս ԱՎՊ ՌՖ, Ֆ. 132, оп. 11, д. 35, 1926 г., л. 358.

545 **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık,s. 221.

546 АВП РФ, Ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 79, д. 38, 1926 г., л. 57.

547 **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, s. 221.

ընթացքում[548]: Ինչպես հունիսի 29-ին հաղորդում էր «Թայմս» օրաթերթը, սպասվում էին բազմաթիվ նոր ձերբակալություններ[549]: Նույն օրը Անկախության դատարանի նախագահ Ալի Չեթինքայան մամուլին տված հարցազրույցում մահափորձի կազմակերպման մեջ մեղադրեց երիտթուրքական կուսակցությանը[550], որից հետո՝ հունիսի 30-ին, սկսվեցին իթթիհադական առաջնորդների և գործիչների ձերբակալությունները[551]:

Երիտթուրքական կուսակցության կալանավորված անդամների մեջ հիշատակման են արժանի հատկապես Մեհմեդ Ջավիդը, Հաֆրզ Մեհմեդը, Իթթիհադի գլխավոր քարտուղար Միդհաթ Շյուքրու Բլեդան, դոկտոր Նազըմը, Յենիբահչելի Նայիլը, Ֆիլիբելի Հիլմին, ներքին գործերի նախկին նախարար Իսմայիլ Ջանփոլադը, Քարա Վասֆը, Ազմին, Ահմեդ Նեսիմին և այլք[552]:

Ձերբակալվածների վերջին խումբը գլխավորում էր Միություն և առաջադիմություն կուսակցության հայտնի գործիչ և ֆինանսների նախարար Ջավիդը[553]: Ի դեպ՝ անգլիական «Դեյլի թելեգրաֆ» օրաթերթը 1926 թ. հունիսի 28-ի համարում նշում էր, թե «Քեմալ փաշայի մահափորձին մեղսակցություն ունենալու մեղադրանքով ձերբակալված Ջավիդի կալանավորման մասին լուրը, այն Ջավիդի, որը ֆինանսների նախարար էր եղել երիտթուրքերի իշխանության ժամանակաշրջանում, իսկ ներկայում Թուրքիայի պատվիրակն է «Օսմանյան պարտքի» հանձնաժողովում, մեծացրել է դիվանագիտական շրջանակների հետաքրքրությունը սույն դատական գործի նկատմամբ»[554]: Նույն աղբյուրը հուլիսի 26-ին հայտնում էր, թե Եվրոպայի և Ամերիկայի նշանավոր քաղաքական գործիչներն Անկարայի առաջ բարեխոսել էին՝ ձերբակալված Ջավիդին ազատ արձակելու հա-

548 Նույն տեղում:

549 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 369.

550 **А. Авакян,** Черкесский фактор в Османской империи и Турции, с. 376.

551 РФ, Ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 79, д. 37, 1926 г., л. 49. Հենց այդ օրն է ձերբակալվել նաև Միդհաթ Շյուքրյու Բլեդան, տե՛ս **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, s. 220.

552 Նույն տեղում, էջ 222:

553 **Kandemir,** İzmir Suikastinin İç Yüzü, Birinci Cilt, Ekiciğil Matbaası, İstanbul, 1955, s. 21.

554 АВП РФ, Ф. 132, оп. 11, папка 78, д. 35, 1926 г., л. 358. Ջավիդի ձերբակալման մասին լուրը նաև մեծ անհանգստություն էր հարուցել Եվրոպայի մասնական շրջանակներում, տե՛ս **А. Авакян,** Черкесский фактор в Османской империи и Турции, с. 376.

մար[555]:

Ինչ վերաբերում է Միություն և առաջադիմություն կուսակցության իշխանության տարիներին Օսմանյան կայսրության պարենավորման նախարարը եղած Քարա Քեմալին, ապա վերջինս ինքնասպանություն գործեց՝ այդպիսով կանխելով իր ձերբակալությունը: Դատական ատյանները ոչ մի կերպ չէին կարողացել գտնել նրան՝ չնայած բազմաթիվ խուզարկություններին: Քարա Քեմալի՝ արտասահման փախած լինելը բացառվում էր, քանի որ ի սկզբանե միջոցներ էին ձեռնարկվել դրա դեմ[556]: Կառավարությունը նրա թաքստոցի տեղը մատնողներին 10 հազար լիրա էր խոստանում[557]: Քարա Քեմալը ապաստանել էր փոստի նախկին տնօրեն Իհսան բեյի տանը, որի հավանոցում էլ 1926 թ. հուլիսի 28-ին ինքնասպան եղավ՝ տուն ներխուժած ոստիկանների ձեռքը չընկնելու համար[558]:

Դարձյալ հետաքննության մեջ գտնվող մեկ այլ կասկածյալ՝ Անկարայի նահանգապետ Արդյուլքադիր բեյը, որն Իզմիրի դատաքննության շրջանակներում հեռակա կարգով մահապատժի էր դատապարտվել, ձերբակալվել էր 1926 թ. օգոստոսի 23-ին Բուլղարիա փախչելու ճանապարհին, և նրա մահապատիժն ի կատար էր ածվել 1926 թ. օգոստոսի 31-ին[559]:

Անկարայի Անկախության դատարանը դատաքննությունն Իզմիրում սկսել է 1926 թ. հունիսի 26-ին՝ ներկայում գրադարանի վերածված Էլհամրա կինոթատրոնի շենքում: 49 ամբաստանյալների մեծ մասը պատգամավոր էր: Անկարայում, Ստամբուլում, Իզմիրում, Էսքիշեհիրում և այլուր ձերբակալված բազմաթիվ կասկածյալներից դատարանի առջև էին կանգնել հետևյալ 3 խմբերի ներկայացուցիչները՝ 1. մահափորձի կազմակերպիչները, 2. Առաջադիմական հանրապետական կուսակցության անդամները, 3. նախկին իթթիհադականները[560]:

Դատարանի կազմը հետևյալն էր. նախագահ՝ Ալի Չեթինքայա[561], անդամներ՝ Ռիզեի պատգամավոր Լազ Ալի (Ջըրհ), Այդընի պատգամավոր Ռեշիդ Գալիփ, դատախազ՝ Նեջիփ Ալի (Քյուչյուքա)[562]:

Իզմիրում դատաքննությունն սկսվել է գլխավոր մեղադրյալ Ջիյա Հուրշիդի հարցաքննությամբ: Սույն մեղադրյալը դրական պատասխան է տվել դատարանի նախագահի հետևյալ հարցին. «Ընդունո՞ւմ եք, որ մահափորձը ցանկացել եք կատարել քաղաքական նպատակներով»[563]: Ուշագրավ է, որ դատարանի կազմը Ջիյա Հուրշիդին և վերջինիս հանցակիցներին երբեք չի հարցրել նրանց՝ այս մահափորձը կատարելու դրդապատճառների մասին: Ջիյա Հուրշիդի այն ցուցմունքը, թե մահափորձը կազմակերպվել է քաղաքական պատճառներով, բավարար է համարվել դատարանի կողմից՝ դրա հետևում ավելի մեծ քաղաքական կազմավորումներ տեսնելու առումով: Մինչդեռ Ջիյա Հուրշիդն ընդամենը ցանկացել է ասել, թե հանրապետության նախագահի դեմ կազմակերպվող բոլոր մահափորձերն էլ քաղաքական բնույթ են կրում[564]:

Իզմիրի դատաքննության ժամանակ հատկապես մանրամասն են անդրադարձել երիտթուրքական իշխանության տարիներին Օսմանյան կայսրության հանրակրթական նախարարը եղած Ահմեդ Ծյուբրյուի հանցակցությանը, քանի որ վերջինս Մալթայի աքսորավայրից վերադառնալուց հետո՝ 1924 թ., անդամագրվել էր Առաջադիմական հանրապետական կուսակցությանը, և մահափորձին նրա մեղսակցությունն ապացուցվելու դեպքում այս հանցագործությունը կապվելու էր թե՛ Միություն և առաջադիմություն և թե՛ Առաջադիմական հանրապետական կուսակցությունների հետ: Ահմեդ Ծյուբրյուն, ի տարբերություն Ջիյա Հուրշիդի, հերքել է բոլոր մեղադրանքները:

Թեև Ծյուբրյուն համառորեն ժխտել է Իզմիրի մահափորձի հետ իր կապ ունենալը, սակայն նրան առերեսել են մահափորձի հետ անմիջականորեն առնչված մեղադրյալների հետ, ովքեր պնդել են, թե նա եղել է մահափորձի կազմակերպիչներից մեկը, և որ իրենք գենքերը ստացել են նրանից[565]:

Հարկ է նշել, որ Իզմիրի դատաքննության ընթացքում թե՛ դատարանի

555 АВП РФ, Ф. 132, оп. 11, папка 79, д. 38, 1926 г., л. 64.

556 **Kandemir,** Cumhuriyet Devrinde Siyasî Cinayetler, Ekiciğil Matbaası, İstanbul, 1955, s. 95.

557 **Uğur Mumcu,** Gazi Paşa'ya Suikast, s. 82.

558 **Kandemir,** Cumhuriyet Devrinde Siyasî Cinayetler, ss. 99-100. Դատարանն այդ ժամանակ արդեն մահված էր դատապարտել նրան:

559 **Tarık Zafer Tunaya,** Türkiye'de Siyasal Partiler, cilt III, s. 714.

560 **Mete Tunçay,** Türkiye Cumhuriyeti'nde Tek-Parti Yönetimi'nin Kurulması (1923-1931), s. 167.

561 Ալի Չեթինքայան նախկինում եղել է երիտթուրքական կուսակցության անդամ: Ավելին՝ նա գտնվել է անգլիացիների կողմից Մալթա աքսորված իթթիհադականների շարքում և 2 տարի եղել Իսմայիլ Ջանփոլադի բանտային ընկերը, տե՛ս **Seyhun Tunaşar,** Gizemli Bir Devrimci Osmanlı'nın Dahiliye Vekili Cumhuriyetimizin İstanbul Milletvekili İsmail Canpolat (Janbulet), s. 86.

562 **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, s. 220.

563 **Uğur Mumcu,** Gazi Paşa'ya Suikast, s. 27.

564 **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, s. 224.

565 Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, s. 475.

նախագահր և թե՛ դատախազը շատ են անդրադարձել նաև 1923 թ. ապրիլին Ջավիդի տանը կայացած նախկին իթթիհադական պարագլուխների հավաքին, և դատարանը ձգտել է անմիջական կապ տեսնել այդ ժողովի և Իզմիրի մահափորձի միջև[566]՝ այն համարելով առաջին քայլը մահափորձի նախաձեռնության մեջ[567]:

Դատարանի նախագահն ու դատախազը կենտրոնացած էին հատկապես 3 իթթիհադականների վրա՝ պարենավորման նախարար Քարա Քեմալի, ֆինանսների նախարար Ջավիդի և հանրակրթական նախարար Ահմեդ Ծյուքրյուի: Այս երեքից բաղկացած խումբը դատարանի կողմից ստացավ «Սև ավազակախումբ» ("Kara Çete") անվանումը[568]:

Դատարանի անդամները «Սև ավազակախմբին» առաջին անգամ անդրադարձան Ջավիդի հարցաքննության ժամանակ՝ 1926 թ. հուլիսի 6-ին, որից ցուցմունքներ պահանջեցին այդ հարցի առնչությամբ: Անկախության դատարանը վերջինիս հարցաքննության նիստում, դարձյալ առաջին անգամ, բարձրացրեց 1918 թ. Թալեաթ փաշայի կառավարության հրաժարականի դրդապատճառների հարցը՝ զարմանք հարուցելով ունկնդիրների մոտ[569], քանի որ այդ խնդիրը ոչ մի տրամաբանական կապ չուներ Մուստաֆա Քեմալ փաշայի դեմ մահափորձի գործի քննության հետ: Հետևելով նախապես գրված սցենարին՝ նախագահը դատարանում հանդես եկավ հետևյալ մեկնաբանությամբ. «Ահավասիկ այն ժամանակ ձեր մի խումբը փախավ՝ հայրենիքը դժբախտության մեջ ձգելով, իսկ մյուս խումբն էլ հանձնվեց անգլիացիներին: (...) ապա ձեզ հնարավորություն տրվեց վերադառնալ Անատոլիա: Եկաք, բայց հանգիստ չմնացիք. ժողով գումարեցիք՝ որպես Միություն և առաջադիմություն կուսակցության երևելիներ...»[570]:

Ուշագրավ է, որ այս նույն հարցը բարձրացվեց նաև դոկտոր Նազըմի՝ Անկարայի դատավարության շրջանակներում կատարված հարցաքննության ժամանակ, և վերջինս խոստովանեց, որ Իթթիհադի պարագլուխների փախուստի պատճառ է եղել Հայկական հարցը՝ քրիստոնյաների ոչնչացումը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, և այդ հարցի համար պատասխանատվությունից խուսափելու ցանկությունը[571]:

Ապա դատախազ Նեջիփ Ալին հայտնելով, թե Իզմիրում հանրապետության նախագահի դեմ մահափորձից բացի՝ եղել է նաև կառավարությունը տապալելու ծրագիր, նշեց, որ վերջինս իրագործելու էր նախկին երիտթուրքերից բաղկացած «Սև ավազակախումբ» ("Kara Çete") կոչեցյալ գաղտնի խումբը: Դատախազը տեղեկացնելով, որ որոշվել է նրանց դատաքննությունն իրականացնել Անկարայում, պահանջեց առանձնացնել նշյալ հանցախմբի անդամների գործը: Դատախազի պահանջը բավարարվեց, և սույն դատական գործը բաժանվեց երկու փուլի՝ 1. Իզմիրի մահափորձի դատաքննության և 2. Իթթիհադականների դատավարության[572]:

Ջավիդից հետո հարցաքննվեց Իսմայիլ Ջանփոլադը[573], որին դատախազ Նեջիփ Ալին պահանջեց դատապարտել 10 տարվա թիապարտության՝ նշելով, թե «Իսմայիլ Ջանփոլադն ու Քարա Քեմալը, Ծյուքրյու բեյի հետ մեկտեղ, եղել են կուսակցության ամենագործուն և ամենանշանավոր անդամները: Մահափորձի առնչությամբ անհնար է նրան առանձնացնել Ծյուքրյուից»[574]: Իսմայիլ Ջանփոլադը շեշտեց, թե Քարա Քեմալը դեր չի ունեցել Առաջադիմական հանրապետական կուսակցության ծրագրի մշակման գործում[575]:

1926 թ. հուլիսի 11-ին դատարանում ընթերցվեց դատախազ Նեջիփ Ալիի կազմած մեղադրական ակտը, ըստ որի՝ ամբաստանյալները 1926 թ. հունիսի 17-ին մտադիր են եղել մահափորձ իրականացնել հանրապետության նախագահի դեմ: Թեև մեղադրական ակտում նշվում էր, որ Նեջաթին, Չոլաք Սելահադդինը, Հյուսեին Ավնին և Քարա Վասֆը կապ չեն ունեցել մահափորձի հետ, բայց և այնպես դատախազը պահանջում էր նրանց դատաքննել Անկարայում՝ Քարա Քեմալի հետ սերտ առնչություններ ունեցած լինելու պատճառով: Մեղադրական ակտում նաև շեշտվում էր, որ Միությունն և առաջադիմությունը մասնակից է եղել

566 **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, s. 226.

567 **Tarık Zafer Tunaya,** Türkiye'de Siyasal Partiler, cilt III, s. 712.

568 **Uğur Mumcu,** Gazi Paşa'ya Suikast, s. 55. «Սև ավազակախումբ» անվան տակ հիմնականում շեշտվում էր Քարա Քեմալի, Քարա Վասրֆի, ինչպես նաև վերջիններիս անվամբ ստեղծված Քարաքոլ կազմակերպության միասնությունը: «Kara» թուրքերեն նշանակում է սև: Տե՛ս նաև երկրորդ գլխի առաջին ենթագլխի բացատրությունը:

569 **Kandemir,** İzmir Suikastinin İç Yüzü, Birinci Cilt, s. 81.

570 Նույն տեղում, էջ 82:

571 **Doç. Dr. Ahmet Eyicil,** İttihat ve Terakki Liderlerinden Doktor Nazım Bey, Gün Yayıncılık, Ankara, 2004, ss. 321-322.

572 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 376.

573 **Kandemir,** İzmir Suikastinin İç Yüzü, Birinci Cilt, s. 82.

574 **Seyhun Tunaşar,** Gizemli Bir Devrimci Osmanlı'nın Dahiliye Vekili Cumhuriyetimizin İstanbul Milletvekili İsmail Canpolat (Janbulet), s. 86.

575 **Uğur Mumcu,** Gazi Paşa'ya Suikast, s. 55.

մահափորձին, սույն կուսակցության անդամները կործանման են հասցրել Օսմանյան կայսրությունը և, չնայած լուծարել են կուսակցությունը, սակայն մտադրվել են դարձյալ վերադառնալ իշխանության[576]: Ըստ դատախազի՝ բացահայտվել էր, որ նախքան Առաջադիմական հանրապետական կուսակցության պաշտոնապես հիմնումը՝ հիշյալ կուսակցության ծրագիրը մշակվել էր Քարա Քեմալի գրասենյակում և Ջավիդի՝ Շիշլիում[577] գտնվող տանը՝ իրենց իթթիհադականության մարմնավորումը համարող անձանց կողմից[578]: Մեղադրականում նաև ընդգծվում էր, թե Առաջադիմական հանրապետական կուսակցության որոշ առաջատար անդամներ միաբանվել էին Միություն և առաջադիմություն կուսակցությունը վերստին իշխանության բերել ձգտողների հետ և մահափորձի նպատակով մի քաղաքական ցանց ստեղծել՝ իշխանությունը միասին զավթելու համար: Բացահայտվել էր, որ այդ ցանցը գտնվել էր Քարա Քեմալի, Ծյուքրյուի, Ջավիդի, Հալիս Թուրգութի, Իսմայիլ Ջանփոլադի, գնդապետ Արիֆի, Նայիլի, Հիլմիի, Անկարայի նախկին նահանգապետ Արդուլքադիրի ղեկավարության տակ[579]: Ըստ դատախազի՝ երիտթուրքերն ըմբռնելով, որ օրինական ճանապարհով չեն կարող իշխանության գալ, անցել են Առաջադիմական հանրապետական կուսակցության շարքերը և օգտագործել վերջինիս: Ամբաստանագրում շեշտվում էր նաև իթթիհադականների՝ Շեյխ Սայիդի ապստամբությանը և Գլխարկի մասին օրենքի դեմ ըմբոստություններին ունեցած մասնակցությունը: Մեղադրական ակտի համաձայն՝ Առաջադիմական հանրապետական կուսակցության փակվելուց հետո երիտթուրքերը, որպես վերջին միջոց, որոշել էին սպանել հանրապետության ղեկավարին[580]:

Իզմիրի գործով մեղադրյալների պաշտպանական ճառերը դատարանն ունկնդրության արժանացրեց 1926 թ. հուլիսի 12-ին: Ահմեդ Ծյուրքյուն իր պաշտպանական ելույթում պնդեց, թե ոչ մի կապ չի ունեցել մահափորձի հետ, անդրադարձավ այն ծառայություններին, որ ինքը մատուցել էր երկրին՝ հանրակրթական նախարարի պաշտոնին եղած ժամանակ, և բոլոր մեղադրանքները հերքելուց հետո բողոքեց, որ իրեն թույլ չեն տվել օգտվել պաշտպանության իր իրավունքից[581], այսինքն՝ փաստաբան վարձել և վկաներ ներկայացնել:

Իսմայիլ Ջանփոլադր պաշտպանական ճառում նշելով, թե «վերջին տարիներին ինքը, ըստ էության, անտարբեր է դարձել քաղաքականության նկատմամբ»՝ ժխտեց մահափորձի հետ իր առնչությունը[582]: Նա շեշտեց, թե Ջավիդ բեյի տանը կայացած ժողովում քննարկվել է Մուստաֆա Քեմալ փաշային ներկայացվելիք առաջարկությունը, իսկ հետագա հավաքի նպատակն է եղել՝ տեղեկանալ Քարա Քեմալի և Մուստաֆա Քեմալի միջև կայացած բանակցությունների արդյունքների մասին[583]:

Իզմիրի դատաքննությունն ավարտվեց 1926 թ. հուլիսի 13-ին, երբ հրապարակվեց դատարանի կայացրած դատավճիռը, ըստ որի՝ մահվան դատապարտվեցին 15 հոգի[584]: Դատաքննությանը ներկա գտնված և մահվան դատապարտված ամբաստանյալներն էին պաշտոնաթող գնդապետ Ռասիմը, Չոփուր Հիլմին, Սարր Էֆե Էդիփը, Գյուրջյու Յուսուֆը, Լազ Իսմայիլը, Տրապիզոնի պատգամավոր Հաֆրզ Մնհմեդը, Ջիա Հուրշիդը, Իզմիթի պատգամավոր Ծյուքրյուն, Սարուխանի պատգամավոր Արիֆին, Էսքիշեհիրի պատգամավոր, գնդապետ Արիֆը, Էրզրումի պատգամավոր Ռյուշթյուն, Ստամբուլի պատգամավոր Իսմայիլ Ջանփոլադր և Սրվասի պատգամավոր Հալիս Թուրգութը[585]: Ուշագրավ է, որ թեև դատախազը ամբաստանագրով վերջին երեքի համար մահապատիժ չէր պահանջել, սակայն դատարանը նրանց նույնպես մահվան դատապարտեց, որովհետև նրանք բոլորն էլ եղել էին Միություն և առաջադիմություն կուսակցության երևելի անդամներից: Հատկանշական է, որ Առաջադիմական հանրապետական կուսակցության ներկայացուցիչները՝ Քյազիմ Կարաբեքիրը, Ջաֆեր Թայար Էղիլմեզը, Ալի Ֆուադ Ջեբեսոյը, Ռեֆեթ Բելեն, Բեքիր Սամին և մյուսները, ազատ արձակվեցին[586], իսկ երիտթուրք կալանավորները տեղափոխվեցին Անկարա՝ «Սև ավազակախմբի» դատական գործի շրջանակներում դատաքննվելու նպատակով:

576 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 378.

577 Ընթան Ստամբուլում:

578 Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, ss. 459-460.

579 Նույն տեղում, էջ 460:

580 **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, s. 229.

581 **Uğur Mumcu,** Gazi Paşa'ya Suikast, s. 57.

582 **Seyhun Tunaşar,** Gizemli Bir Devrimci Osmanlı'nın Dahiliye Vekili Cumhuriyetimizin İstanbul Milletvekili İsmail Canpolat (Janbulet), s. 86.

583 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 376.

584 Մեղադրյալներից երկուսը՝ Քարա Քեմալը և Արդուլքադիրը, մահվան դատապարտվեցին հեռակա կարգով:

585 **Mete Tunçay,** Türkiye Cumhuriyeti'nde Tek-Parti Yönetimi'nin Kurulması (1923-1931), s. 168.

586 **А. Авакян,** Черкесский фактор в Османской империи и Турции, с. 379.

Անկախության դատարանն Իզմիրում աշխատանքներն ավարտելուց հետո՝ 1926 թ. հուլիսի 17-ին, վերադարձավ Անկարա և իրեն հատկացված շենքում սկսեց երկրորդ դատաքննության նախապատրաստությունը: Հետաքննության շրջանակներում առաջին հարցաքննությունը կայացավ հուլիսի 20-ին[587]:

Իզմիրի մահափորձի դատաքննության երկրորդ փուլը՝ Անկարայի դատավարությունը կամ «Սև ավազակախմբի» դատական գործը, մեկնարկեց 1926 թ. օգոստոսի 2-ին՝ ժամը 14:00-ին: Դատարանի դահլիճը լեփ-լեցուն էր ունկնդիրներով, որոնց մեջ կային նաև պատգամավորներ[588]: Մեղադրյալի աթոռին էին 50-ից ավելի հայտնի երիտթուրքեր, որոնց շարքում հիշատակման են արժանի Մեհմեդ Ջավիդը, դոկտոր Նազըմը, Հյուսեինզադե Ալի Թուրանը, Յենիբահչելի Նայիլը, Ֆիլիբելի Հիլմին, Հյուսեին Ջահիդ Յալչընը, Քյուչյուք Թալեաթ Մուշքարան, Հյուսեին Ավնի Ուլաշը, Քարա Վասֆը, Միդհադ Ծյուքրյու Բլեդան և Ահմեդ Նեսիմի Սայմանը[589]: Էրգյուն Այբարսի բնորոշմամբ՝ «հերթ հասել էր Միություն և առաջադիմություն կուսակցությունը թուրք քաղաքական կյանքից զտելուն»[590]: Ուշագրավ է, որ թեև Անկախության դատարանը հուլիսի 27-ին հայտարարել էր, թե Իթթիհադը, որպես կուսակցություն, չէր դատվելու[591], քանի որ «շատ բարիք էր բերել» երկրին, սակայն ընդամենը մեկ օր անց՝ հուլիսի 28-ին, հակասելով իր նախկին հայտարարությանը, հաղորդել էր, որ Միություն և առաջադիմություն կուսակցությունը նույնպես մեղավոր էր համարվում, որովհետև երկիրը ներքաշել էր Համաշխարհային պատերազմի մեջ, որի ընթացքում պարենային ծանր կացություն օգտագործել՝ ի նպաստ կուսակցության անդամների հարստացմանը[592]:

Նախքան դատավարության մեկնարկը՝ գործի հետաքննության ընթացքում, մամուլում արդեն իսկ քարոզչություն էր տարվում Միություն և առաջադիմություն կուսակցության դեմ: Թերթերում բավականին ծանր մեղադրանքներով տեղեկատվություն էր հաղորդվում երիտթուրք ամ-

587 **Osman Selim Kocahanoğlu,** Atatürk'e Kurulan Pusu. İzmir Suikasti'nin Perde Arkası 1926. İddianame/Duruşmalar/Hüküm, Temel Yayınları, İstanbul, 2003, s. 375.

588 **Kandemir,** İzmir Suikastinin İç Yüzü, İkinci Cilt, Ekiciğil Matbaası, İstanbul, 1955, s. 8.

589 **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, s. 231.

590 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 385.

591 АВП РФ, Ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 79, д. 38, 1926 г., л. 64.

592 АВП РФ, Ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 79, д . 38, 1926 г., л. 65. Տե՛ս նաև **А. Авакян,** Черкесский фактор в Османской империи и Турции, с. 380.

բաստանյալների վերաբերյալ[593]: Պարբերական մամուլում տպագրվող լուրերում ու հոդվածներում նշվում էր, թե նախկին իթթիհադականներն ապագա ցուցմունքներում շատ կարևոր տեղեկություններ էին հաղորդելու, որոնք լույս էին սփռելու պատմության վրա[594]:

Հարկ է նշել, որ պատահական չէր սույն դատաքննությունը Թուրքիայի Հանրապետության մայրաքաղաքում իրականացնելու որոշումը. Անկարան խորհրդանշում էր Մուստաֆա Քեմալի և Թուրքիայի նոր ղեկավարների գերիշխանությունը երիտթուրքերի նկատմամբ, քանի որ վերջիններս միշտ դեմ են եղել մայրաքաղաքը Անկարա տեղափոխելու որոշմանը:

Անկարայի դատավարության ժամանակ Անկախության դատարանի կազմի անդամներն ավելի խստացրին իրենց դիրքորոշումը իթթիհադականների հանդեպ՝ նպատակ ունենալով հասարակայնության առաջ հիմնավորել նրանց պատմական պատասխանատվությունը[595]: Գործը քննող դատարանն Աթաթուրքի դեմ մահափորձի նախաձեռնության հետ ոչ մի կապ չունեցած երիտթուրքերին ևս դատապարտելու հնարավորություն ունենալու համար իրեն լրիվ ազատ էր զգում՝ մեղադրյալներին ամեն տեսակի հարց ուղղելու և գրեթե ամեն բանի համար հաշիվ պահանջելու առումով[596]՝ սկսած Առաջին աշխարհամարտի մեջ երկիրը ներքաշելուց մինչև պատերազմի ընթացքում կատարված հանցագործությունները:

Առաջին նիստում դատախազ Նեջիբ Ալին ընթերցեց իր կազմած մեղադրական ակտը, որում Իզմիրի մահափորձի նախաձեռնության և Իթթիհաթ վե թերաքքիի՝ մահափորձի հետ ունեցած առնչության մասին շեշտելուց հետո մանրամասն անդրադառնում էր ազգայնական շարժման ընթացքում երիտթուրքերի կատարած աշխատանքներին և Քարա Քեմալի՝ իթթիհադական կուսակցությունը վերակենդանացնելու փորձերին[597]: Դատախազը մեղադրյալներին պատասխանատու էր համարում Իզմիրի մահափորձի համար և ընդգծում, որ այն պետք էր գնահատել ոչ թե որպես վրեժխնդրության գործողություն, այլ՝ հեղաշրջման փորձի նախապատրաստություն: Մեղադրական եզրակացության մեջ շոշափվում էին երեք գլխավոր հարցեր՝ 1. Միություն և առաջադիմություն կուսակ-

593 **Osman Selim Kocahanoğlu,** Atatürk'e Kurulan Pusu, s. 375.

594 Նույն տեղում, էջ 376:

595 **Tarık Zafer Tunaya,** Türkiye'de Siyasal Partiler, cilt III, s. 714.

596 **Kandemir,** İzmir Suikastinin İç Yüzü, İkinci Cilt, Ekiciğil Matbaası, İstanbul, 1955, ss. 7-8.

597 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 387.

ցության առաջնորդների կողմից իշխանության չարաշահումը հատկապես Համաշխարհային պատերազմի տարիներին, 2. 1921 թ. իթթիհադականների՝ Մուստաֆա Քեմալի տեղը գրավելուն ուղղված փորձերը, 3. 1923 թ. կայացած երիտթուրքերի համագումարը[598]: Մեղադրական ակտում նաև շեշտվում էր, թե Քարա Քեմալն էր Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության կրած պարտությունից հետո Թալեաթ, Էնվեր և Ջեմալ փաշաներին համոզել լքել երկիրը[599]: Դա հետագայում հաստատվեց նաև դոկտոր Նազըմի ցուցմունքով[600]: Դատախազը ենթադրում էր, թե անհնար էր, որ դոկտոր Նազըմն առնչություն ունեցած չլիներ այն «մահափորձի հետ, որ ցանկանում էր իրագործել գաղտնի ընկերությունը», իսկ Ջավիդ բեյը մեղադրվում էր Քարա Քեմալի ցանցում ընդգրկված լինելու մեջ[601]:

Անկախության դատարանի կողմից բարձրացված հարցերի մի մասը, ինչպես, օրինակ, առանց հիմնավոր պատճառի երկիրը պատերազմի մեջ ներքաշելու, Առաջին աշխարհամարտի տարիներին տնտեսական չարաշահումներ կատարելու խնդիրները քննվել էին նաև 1919 թ. երիտթուրքերի դատավարությունների ժամանակ՝ Ռազմական արտակարգ ատյանների կողմից[602]:

Անկարայի դատավարության ընթացքում դատարանը Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների մեջ ամենամեծ ուշադրությունը հատկացրել է Ջավիդին ու դոկտոր Նազըմին[603]: Ջավիդ բեյը մեղադրվում էր զինադադարից հետո արտերկիր փախչելու և Էնվեր փաշայի հետ հանդիպելու մեջ, իսկ դոկտոր Նազըմ բեյը՝ Էնվեր փաշայի հետ համագործակցելու[604]: Մեղադրական ակտում նշվում էր, թե, ըստ Ջավիդի ցուցմունքների՝ դոկտոր Նազըմի տանը գտնվել է երիտթուրքերի գաղտնի հավաքների արդյունքում կազմված 9 կետից բաղկացած մի ծրագիր, որի հոդվածները մեկ առ մեկ քննարկվել և միաձայն կերպով ընդունվել են

598 **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, s. 231.

599 **Osman Selim Kocahanoğlu,** Atatürk'e Kurulan Pusu, s. 379.

600 **Doç. Dr. Ahmet Eycil,** İttihat ve Terakki Liderlerinden Doktor Nazım Bey, s. 323.

601 Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, s. 485.

602 **Tarık Zafer Tunaya,** Türkiye'de Siyasal Partiler, cilt III, s. 715.

603 Դատարանի նախագահ Ալի Չեթինքայան դեռ այն ժամանակ, երբ ձերբակալությունները նոր էին սկսվել, իր մտերիմներին ասել էր՝ «Ջավիդին և Նազըմին անպայման կախելու ենք», տես **Kandemir,** İzmir Suikastinin İç Yüzü, İkinci Cilt, s. 50.

604 Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, s. 485.

մասնակիցների կողմից[605]:

Դատական նիստերի ժամանակ հաճախ է անդրադարձ եղել Միություն և առաջադիմություն կուսակցության վարած քաղաքականությանը, և յուրաքանչյուր մեղադրյալի հարց է տրվել, թե ներկա դրությամբ Իթթիհաթ վե թերաքքին պաշտոնապես գոյություն ունի, թե ոչ[606]:

Առաջին նիստում մեղադրական ակտի ընթերցումից հետո հարցաքննվեց Քյուչյուք Թալեաթը, որից Միություն և առաջադիմություն կուսակցության անցյալի համար հաշիվ պահանջած դատարանի նախագահ մանրամասն կանգ առավ Առաջին աշխարհամարտի ժամանակ կատարված չարաշահումների, ազգայնական շարժման ընթացքում Էնվեր փաշայի՝ Թուրքիա անցնելու ջանքերի և հետագա տարիներին իթթիհադականների՝ ամեն գնով իշխանության գալու ձգտումների վրա: Մեղադրյալը հերքեց հիշյալ փաստերի հետ իր առնչությունը[607]:

Քյուչյուք Թալեաթից հետո հարցաքննվեց Միություն և առաջադիմություն կուսակցության գլխավոր քարտուղար Միդհաթ Շյուքրյու Բլեդան, որին դատարանի նախագահը հարցեր ուղղեց երկիրը Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու, պատերազմի տարիներին առաջացած սննդի խնդրի, կատարված չարաշահումների, զինադադարի կնքումից հետո երիտթուրքական պարագլուխների փախուստի և այլ խնդիրների վերաբերյալ: Միդհաթ Շյուքրյուի հարցաքննության ժամանակ անդրադարձ եղավ նաև Միություն և առաջադիմություն կուսակցության փաստաթղթերի անհետացման հարցին, և կուսակցության գլխավոր քարտուղարը նշեց, թե դրանք վերցրել է Բեհաեդդին Շաքիրը[608], այդպիսով հակասելով ինքն իրեն, քանի որ երիտթուրքերի 1919 թ. դատավարության ժամանակ Միդհաթ Շյուքրյուն Ռազմական արտակարգ ատյանին հաղորդել էր, որ փաստաթղթերը տարել էր դոկտոր Նազըմը: Այս հակասությունը պայմանավորված էր ոչ թե Շյուքրյու Բլեդայի վատ հիշողությամբ, այլ այն հանգամանքով, որ փաստաթղթերի անհետացման հեղինակ դոկտոր Նազըմը տվյալ պահին գտնվում էր մեղադրյալի աթոռին, իսկ Բեհաեդդին Շաքիրին վաղուց արդեն վերացրել էին հայ վրիժառուները: Այստեղ ուշագրավ է, որ ինքը՝ Նազըմը, դատավարության ընթացքում հերքելով կուսակցությանը վերաբերող մի շարք պնդումներ՝ հղում է արել Իթթիհա-

605 **Osman Selim Kocahanoğlu,** Atatürk'e Kurulan Pusu, s. 380.

606 **Tarık Zafer Tunaya,** Türkiye'de Siyasal Partiler, cilt III, s. 716.

607 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 388.

608 **Osman Selim Kocahanoğlu,** Atatürk'e Kurulan Pusu, s. 404.

դի համագումարների արձանագրություններին՝ շատ լավ տեղյակ լինելով, որ դրանք ոչնչացվել էին իր կամ Բեհաեդդին Շաքիրի կողմից: Այդ պատճառով Նազըմն օգտագործում է «...եթե այնտեղի տղագրությունները գտնել տաք...» (...oradaki tutanakları buldurursanız...) արտահայտությունը[609]:

Շյուքրյու Բլեդայից հետո հարցաքննվեցին նաև Ազմին, Ահմեդ Նեսիմին[610], դոկտոր Հյուսեինզադե Ալին, Էյուփ Սաբրին, դոկտոր Ռուստիին և Համդի Բաբան[611]:

1926 թ. օգոստոսի 10-ին կայացավ Ջավիդի հարցաքննությունը, որի ժամանակ դատարանի դահլիճն աննախադեպ կերպով լեփ-լեցուն էր ունկնդիրներով, որոնց մեծ մասը սույն մեղադրյալին մոտիկից ճանաչող անձինք էին, ովքեր թեև նախկինում եղել էին երիտթուրքական կուսակցության անդամներ, սակայն անցել էին Ժողովրդական կուսակցության շարքերը: Նրանց մեջ կային նաև պատգամավորներ[612]: Մեղադրյալին հարցեր ուղղեցին 1923 թ. իր տանը կայացած իթթիհադականների ժողովի վերաբերյալ[613]: Ըստ դատարանի անդամների՝ Ջավիդ բեյը, մահափորձի նախաձեռնությունից բացի, ղեկավարել էր այն խմբին, որն «ամեն գնով մտադրվել էր վերակենդանացնել» Իթթիհաթ վե թերաքքին[614]: Դատարանի անդամներից մեկը եղած Քրլըչ Ալին իր հուշերում հայտնում է, թե Ջավիդն անվրդով է պատասխանել դատարանի նախագահի հարցերին[615]: Մեղադրյալը նշեց, թե Դամադ Ֆերիդ փաշայի կառավարության հիմնումից հետո Միություն և առաջադիմություն կուսակցության իշխանության տարիներին երկիրը ղեկավարած բոլոր նախարարներն ազատազրկվում էին, որի պատճառով էլ ինքը նախ՝ 6 ամիս թաքնվել էր երկրում, ապա՝ փախել Շվեյցարիա: Նա հայտնեց նաև, որ լսել էր, թե Էնվեր փաշան մտադիր էր Թուրքիա անցնել, որից ելնելով էլ նամակ էր հղել Թալեաթ փաշային, որպեսզի վերջինս համոզեր Էնվերին՝ հրաժարվել այդ գաղափարից[616]: Դատարանի նախագահ Ջավիդին մեղադրեց երկրի համար օրհասական պահին այն լքելու մեջ[617]:

Սույն ամբաստանյալն Իզմիրի դատաքննության ժամանակ հերքել էր երիտթուրքերի կազմած և 9 հոդվածից բաղկացած ծրագրի գոյության փաստը, սակայն Անկարայի դատավարության ընթացքում նախագահը նրա առջև դրեց այդ ծրագիրը՝ ասելով. «(Իզմիրի դատավարության ժամանակ) չցանկացար ասել, քանի որ ենթադրում էիր, թե այն մեր ձեռքը չի ընկնի, այնպես չէ՞»[618]: Ջավիդը փորձեց արդարանալ, թե շատ ժամանակ էր անցել այդ դեպքերից, և չէր հիշել դրա մասին: Այս ծրագրում դատարանի ուշադրությունն էր գրավել հատկապես երկրորդ կետը, որն ուներ հետևյալ ձևակերպումը. «Իշխանություններ և սուլթանություններ բացառապես ազգինն են»[619]: Դատարանը Ջավիդից բացատրություն պահանջեց հատկապես այդ կետի շուրջ, քանի որ սուլթանությունը վերացվել էր Մուստաֆա Քեմալի կողմից: Դատարանի կողմից հիշատակվեց նաև հինգերորդ կետը, որում ասվում էր, թե «Կառավարության կենտրոնը պետք է լինի Ստամբուլը»[620]: Երբ ամբաստանյալը շեշտեց, թե օսմանյան մայրաքաղաքը բոլոր տեսակետներից էլ հարմար էր բաղաքամայր լինելուն, նախագահը հակադարձեց նրան՝ որպես փաստարկ բերելով Ստամբուլի անհարմար աշխարհագրական դիրքը[621]: Հարցաքննության ժամանակ Ջավիդը նաև հերքում էր, թե 1923 թ. իր տանը կայացած երիտթուրքերի հավաքը գաղտնի նպատակ էր հետապնդել[622]: Դատախազը պնդում էր, թե այդ ժողովում պետության դեմ դավադրություն էր նյութվել, իսկ դատարանի նախագահը՝ ենթադրում, որ տվյալ հավաքում ընդունված 9 հոդվածից կազմված ծրագիրը մերժում էր 1923 թ. ապրիլի 8-ին Մուստաֆա Քեմալի հրապարակած Ժողովրդական կուսակցության 9 սկզբունքները[623]: Դատարանի նախագահը հայտարարեց, թե Ջավիդի բերած փաստարկները համոզիչ չեն[624]:

609 **Doç. Dr. Ahmet Eycil,** İttihat ve Terakki Liderlerinden Doktor Nazım Bey, s. 303.

610 Դատարանը նրան ազատ արձակելու որոշում կայացրեց, տե՛ս АВП РФ, Ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 78, д. 34, 1926 г., л. 1.

611 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 388.

612 **Kandemir,** İzmir Suikastinin İç Yüzü, İkinci Cilt, s. 29.

613 **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, s. 232.

614 **Tarık Zafer Tunaya,** Türkiye'de Siyasal Partiler, cilt III, s. 716.

615 Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, s. 485.

616 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 388.

617 **Kandemir,** İzmir Suikastinin İç Yüzü, İkinci Cilt, s. 30.

618 **Osman Selim Kocahanoğlu,** Atatürk'e Kurulan Pusu, s. 507.

619 **Mete Tunçay,** Türkiye Cumhuriyeti'nde Tek-Parti Yönetimi'nin Kurulması (1923-1931), s. 169.

620 **Osman Selim Kocahanoğlu,** Atatürk'e Kurulan Pusu, s. 508.

621 Նույն տեղում:

622 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 389.

623 **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, s. 232.

624 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 389.

Դոկտոր Նազրմի հարցաքննության ժամանակ դատարանի նախագահի կողմից հնչեցին Իզմիրի մահափորձի հետ ոչ մի կապ չունեցող հարցեր: Դատարանի նախագահ Ալի Չեթինքայան, որպեսզի հասարակայնությանը համոզեր, որ այս մեղադրյալն արժանի էր մահապատժի, մի բան, որը որոշված էր անգամ նախքան Նազրմի ազատազրկումը և դատական գործընթացի մեկնարկը, սկսեց մեղադրյալին հարցեր ուղղել տարիներ առաջ կատարված դեպքերի վերաբերյալ. «Այս երկիրը զուր տեղը ներքաշեցիք պատերազմի մեջ: Հետևանքը հայտնի է բոլորին: Հիմա ասեք, թե Համաշխարհային պատերազմի մեջ մտնել կարողանալու համար ո՞ր պետությունների հետ եք պայմանավորվել և ինչ հիմքերով»[625]:

Այս հարցին ի պատասխան՝ ամբաստանյալն ասաց, թե ինքը «տեղեկություններ չի ունեցել: Դրա մասին տեղյակ են եղել միայն Սայիդ Հալիմ, Թալեաթ և Էնվեր փաշաները»[626]: Նա նաև պնդեց, թե ինքը «բաց ճակատով» է դուրս եկել պատերազմից[627]:

Դոկտոր Նազրմի հարցաքննության ընթացքում դատարանի նախագահը հարկադրեց ամբաստանյալին ընդունել, որ կուսակցության լուծարումից հետո նրա անդամների գործունեությունը ոչ օրինական էր համարվում[628]: Ալի Չեթինքայան ընդգծելով, որ երիտթուրքերն ընդհանուր պատասխանատվություն էին կրում այդ պատմական իրադարձությունների համար, անդրադարձավ նաև իթթիհադական պարագլուխների՝ երկրից ճողոպրելու փաստին, որին ի պատասխան՝ դոկտոր Նազրմը հայտնեց, որ փախուստի որոշումը կայացվել էր կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից, ըստ որի՝ Թալեաթը, Էնվերը, ինքը՝ Նազրմը, և Բեհաեդդին Շաքիրը, իրենց իսկ անվտանգությունից ելնելով, պետք է լքեին երկիրը, քանի որ «քրիստոնյաները՝ հույներն ու հայերը, ատելություն էին տածում իրենց հանդեպ»[629]:

Այնուհետև նախագահն անդրադարձավ Ջավիդի տանը կայացած ժողովին և այդ ժամանակ մշակված 9 հոդվածներ ունեցող ծրագրին, որը գտնվել էր Նազրմի տանը՝ խուզարկության ժամանակ[630]:

Աթաթուրքի կենսագիր Ֆալիհ Ռըֆքը Աթայը նշում է, թե Նազրմը Մուստաֆա Քեմալին համարում էր Թալեաթի մարդասպանը՝ պնդելով, որ եթե Քեմալը Թալեաթին թույլ տար վերադառնալ Թուրքիա, հայերը նրան չէին սպանի: Նույն Նազրմը, ծաղրի ենթարկելով մեջլիսի կողմից Մուստաֆա Քեմալին շնորհված «գազի»[631] տիտղոսը, Իզմիրի տրամվայներում Քեմալին անվանում էր «gazoz paşa» («գազավորված ըմպելիքի փաշա»)[632]: Ազգայնական շարժման տարիներին Նազրմը նամակագրության մեջ Մուստաֆա Քեմալին կոչում էր «sarı kul» («դեղին ստրուկ»)[633]:

Ուշագրավ է, որ իրենց իշխանության տարիներին միակուսակցական համակարգ ստեղծած երիտթուրքերը Իզմիրի և Անկարայի դատական գործերի նիստերում խոսում էին ժողովրդավարությունից և շեշտում, թե ընդդիմություն կազմելը դեմոկրատական սկզբունքներից մեկն է: Այսպես՝ երբ դատարանը Նազրմին մեղադրեց հիշյալ ծրագրի մշակման մեջ, որը կարծես ուղղված լիներ Մուստաֆա Քեմալի կուսակցության 9 սկզբունքների դեմ, Նազրմն ընդգծեց, թե «կուսակցություն հիմնելը քաղաքացու իրավունքն է»[634]: Այդ փաստարկին ի պատասխան՝ դատախազը հարկադրված եղավ միջամտել՝ ասելով. «Բազմաթիվ քաղաքացիներ են ընդգրկվել Առաջադիմական հանրապետական կուսակցության շարքերը: Նրանք ազատ էին այդ հարցում: Ոչ ոք ասելիք չունի դրա դեմ: Սակայն դոկտոր Նազրմին մեղադրյալի աթոռին է հասցրել իր գաղտնի քաղաքական գործունեությունը»[635]:

Հարցաքննության վերջում դատախազը հայտարարեց, թե իր կարծիքով՝ անկեղծության նշույլ անգամ չէր եղել Նազրմի պատասխաններում[636]:

1926 թ. օգոստոսի 23-ին դատախազը հանդես եկավ մեղադրական ճառով, ըստ որի՝ պահանջում էր Ջավիդին, Նազրմին, Հիլմիին և Նայիլիին,

625 **Kandemir,** İzmir Suikastinin İç Yüzü, İkinci Cilt, s. 53.

626 **Osman Selim Kocahanoğlu,** Atatürk'e Kurulan Pusu, s. 482.

627 Նույն տեղում, էջ 485:

628 **Kandemir,** İzmir Suikastinin İç Yüzü, İkinci Cilt, s. 58.

629 **Osman Selim Kocahanoğlu,** Atatürk'e Kurulan Pusu, s. 488.

630 **Kandemir,** İzmir Suikastinin İç Yüzü, İkinci Cilt, s. 63.

631 «Գազի» թուրքերեն նշանակում է «հաղթանակ տանող»: Այս տիտղոսը կրում էին օսմանյան առաջին սուլթանները, օրինակ՝ «Գազի Օսման»: «Գազի» տիտղոսը շնորհվում էր նաև պատերազմի դաշտում վիրավորված զինվորներին: Մուստաֆա Քեմալը մարտի ժամանակ վիրավորված լինելու պատճառով էր ստացել այն:

632 Այդ մասին տե՛ս **Falih Rıfkı Atay,** Çankaya. Mustafa Kemal'in Çankaya'sı, İstanbul, 1998, s. 346. Նազրմը Մուստաֆա Քեմալին «դեղին» էր անվանում՝ Աթաթուրքի չնչ մազերի պատճառով:

633 **Arsen Avagyan,** Dr. Nazım'ın Milli Mcadele hakkında bir mektubu, "Toplumsal Tarih", N 125, İstanbul, Mayıs 2004, ss. 30-32.

634 **Kandemir,** İzmir Suikastinin İç Yüzü, İkinci Cilt, s. 64.

635 Նույն տեղում, էջ 65:

636 **Osman Selim Kocahanoğlu,** Atatürk'e Kurulan Pusu, s. 501.

55-րդ հոդվածի համաձայն (մահապատիժ՝ կախաղանի միջոցով), դատապարտել մահվան, իսկ Ալի Իհսանին, Վեհբիին, Էթհեմին, Հյուսնյուին, Համդիին, Ռաուֆ Օրբայիին և Ռահմիին, 57-րդ (ցմահ թիապարտություն) և 58-րդ հոդվածների համաձայն, դատապարտել ազատազրկման[637]: Դատախազը նաև պահանջեց ազատ արձակել մնացած 26 մեղադրյալներին, որոնց շարքում էր Միդհադ Ծյուքրյու Բլեդան[638]:

1926 թ. օգոստոսի 25-ին Անկախության դատարանն ունկնդրեց ամբաստանյալների պաշտպանական ճառերը: Քանի որ մեղադրյալներին հնարավորություն չէր տրվել փաստաբան վարձել, հենց իրենք էլ ներկայացրեցին իրենց գրած պաշտպանական ելույթները: Ամբաստանյալների մեջ հատկապես փայլուն ելույթ էր պատրաստել Ջավիդ բեյը, որի ճառը բաղկացած էր երկու մասից՝ ընդհանուրից և մասնավորից[639]: Գրեթե 40 րոպե[640] տևած պաշտպանական ելույթում Ջավիդն արդարանում էր, թե ինքը միշտ դեմ էր դուրս եկել պատերազմի մեջ ներքաշվելու գաղափարին և այդ մասին ամեն պատեհ առիթի հայտնել կառավարությանը: Նա նաև պնդում էր, թե որևէ առնչություն չէր ունեցել պատերազմի տարիներին թույլ տրված չարաշահումների հետ[641]: Ջավիդը պաշտպանական ճառում չէր ժխտում 9 հոդվածներից բաղկացած ծրագրի առկայության փաստը՝ շեշտելով, որ նման ծրագրերը բխում են քաղաքական կյանքի պահանջներից[642]:

Ջավիդից հետո պաշտպանական ճառերով հանդես եկան նաև մյուս ամբաստանյալները՝ Յենիբահչելի Նայիլը, դոկտոր Նազրմը, Հիլմին, Ալի Իհսանը և այլք[643]:

Անկարայի դատավարության դատավճիռը հրապարակվեց 1926 թ. օգոստոսի 26-ին: Դատավճռում նշվում էր, թե «...ազգն ու երկիրը թշնամու ոտքերի տակ ձգած և փախչելուց զատ՝ այլ ելք չգտած Միությունն և առաջադիմություն կուսակցության անդամները մտադիր են եղել վերստին

637 АВП РФ, Ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 78, д. 34, 1926 г., л. 18.

638 **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, s. 232.

639 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 390.

640 Ըստ Յուրխների՝ Ջավիդի պաշտպանական ելույթը տևել է 75 րոպե, տե՛ս **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, s. 232.

641 **Osman Selim Kocahanoğlu,** Atatürk'e Kurulan Pusu, ss. 561-566.

642 **Tarık Zafer Tunaya,** Türkiye'de Siyasal Partiler, cilt III, s. 718.

643 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 390.

իշխանության գալ Ազգային-ազատագրական պայքարի վերջում: Լոզանի բանակցությունների ընթացքում Ջավիդ բեյի տանը կայացած գաղտնի ժողովներում նախկինում իթթիհադական եղած այնպիսի անձինք, ինչպիսիք են Քարա Քեմալը, Ծյուքրյուն և Իսմայիլ Ջանփոլադը, Մուստաֆա Քեմալին հղված իրենց դիմումի մերժումից հետո շարունակել են քաղաքական գործունեությունը՝ ի տարբերություն երիտթուրքերի մի մասի, որի մեջ էր նաև Ջիյա Գյոքալփը, և ովքեր հեռացել էին քաղաքականությունից: Բացահայտվել է, որ այդ գաղտնի հավաքներում որոշվել էր ԹԱՄԺ-ում ընդդիմադիր «Առաջին» և «Երկրորդ» խմբերը միավորելով՝ դրանց մեջ ներգրավել նաև նախկին իթթիհադականներին և այս հարցում ապահովել Ռաուֆ Օրբայի[644] աջակցությունը: Դրա չստացվելու դեպքում իթթիհադականներից 15-20 հոգանոց պատգամավորների ցուցակ ընդունել տալ՝ դարձյալ Ռաուֆ բեյի օգնությամբ, եթե դա էլ չհաջողվեր՝ բացահայտ կերպով հանդես գալ Միություն և առաջադիմություն կուսակցության անունից: Սակայն այդ բոլոր ծրագրերն էլ չհաջողվեցին, որից հետո նրանք հանդես եկան Ժողովրդական կուսակցությունը մասնատելու նախաձեռնությամբ, որին գործիք էր դարձել նաև Ռաուֆ բեյը: Այնուհետև Առաջադիմական հանրապետական կուսակցության հիմնումը նախաձեռնելով՝ ձգտել են խլել իշխանությունը»[645]:

Դատարանի կազմը կայացրած դատավճռում հետևյալ կերպ էր հիմնավորում երիտթուրքերի՝ նախկինում կատարած հանցագործությունները Իզմիրի մահափորձի հետ կապելու փաստը. «Սակայն եթե ուշադրություն դարձնենք մինչ այժմ թվարկված հանցագործություններին, ապա կտեսնենք, որ դրանք բոլորն էլ միավորվում են այն կետերի շուրջ, որոնք են՝ Համաշխարհային պատերազմի մեջ ներգրավվելը, այդ պատերազմի ընթացքում սննդի հարցով կատարված չարաշահումները և, ի վերջո, երկիրը պատերազմի մեջ ներքաշածների գործունեությունն այն վայրերում, որ նրանք փախել էին, ինչպես նաև՝ հետագայում երկրում իշխանությունը խլելու համար կուսակցություն հիմնելուն ուղղված փորձերը»[646]:

Ապա դատավճիռը մեկ առ մեկ անդրադառնում էր մեղադրյալներին: Ջավիդ բեյը մեղավոր էր համարվում Իզմիրի մահափորձը նախապատրաստող անձանց հետ սերտ հարաբերություններ ունենալով՝ նրանց ուղղորդելու և աջակցելու, դոկտոր Նազրմ բեյը՝ Ջավիդի տանը կայացած

644 Թուրքիայի Հանրապետության վարչապետը նշված ժամանակաշրջանում:

645 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 391.

646 **Kandemir,** İzmir Suikastinin İç Yüzü, İkinci Cilt, s. 112.

գաղտնի հավաքներին և այստեղ ընդունված որոշումներին մասնակից լինելու, Նայիլն ու Հիլմին՝ Էնվեր փաշայի՝ Ռուսաստանում գտնվելու տարեթվից սկսած Միություն և առաջադիմություն կուսակցության՝ իշխանության գալն ապահովելու ուղղությամբ աշխատանքներ տանելու և գաղտնի ժողովներին մասնակցելով՝ հանցագործությանը մեղսակցելու մեջ[647]:

Դատավճռի համաձայն՝ ֆինանսների նախկին նախարար Ջավիդը, դոկտոր Նազըմը, Արդահանի պատգամավոր Հիլմին և Նայիլը դատապարտվեցին մահվան, իսկ Ալի Օսման Վեհբին, Հյուսնյուն, Իբրահիմ Էդհեմը, Ռաուֆ Օրբայը և Ռահմին՝ 10 տարվա աքսորի[648]: Անկախության դատարանն ազատ արձակեց մյուս 37 մեղադրյալներին:

1926 թ. սեպտեմբերի սկզբներին Անկարայի Անկախության դատարանը քննեց Իթթիհադի դատավարությանը վերաբերող ևս մի քանի մանր գործեր: Այսպես՝ 1926 թ. սեպտեմբերի 1-ին դատարանը 5 տարվա աքսորի դատապարտեց Էսքիշեհիրի մի շարք բնակիչների՝ փաստաբան Հյուսեին Ավնիին, ԹԱՄԺ-ի նախկին պատգամավոր Նեջաթիին, վերջիններիս ազգականներ Հասան Թահսինին և Մուստաֆայիին[649]: Ապացուցվել էր, որ հիշյալ անձինք բոլորն էլ կապ էին պահպանել Ջիյա Հուրշիդի հետ՝ Մուստաֆա Քեմալի դեմ մահափորձի նախապատրաստման ժամանակ[650]:

Այստեղ հարկ է նշել, որ 1926 թ. կախաղան բարձրացված Նայիլը 1919 թ. Տրապիզոնի հայերի տեղահանության և կոտորածների դատավարության ժամանակ արդեն իսկ հեռակա կարգով դատապարտվել էր մահվան՝ հայերի ոչնչացումը կազմակերպելու մեղադրանքով[651]:

647 **Ergün Aybars,** İstiklal Mahkemeleri, s. 391.

648 Նույն տեղում, էջ 391-392:

649 АВП РФ, Ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 78, д. 33, 1926 г., л. 34.

650 АВП РФ, Ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 78, д. 33, 1926 г., л. 35.

651 "Takvîm-i Vekayi", No 3616, 6 Ağustos 1919, ss. 1-3.

3.3 Իթթիհադական ավանդույթի պահպանումը Թուրքիայի Հանրապետությունում. երիտթուրքերի 1919-1921 թթ. և 1926 թ. դատավարությունների համեմատական վերլուծություն

1919-1921 թթ. երիտթուրքերի դատավարությունները, որոնք համարվում էին նաև հայերի տեղահանության և կոտորածների դատական գործեր, քննվեցին Օսմանյան կայսրության Ռազմական արտակարգ ատյաններում: Այս դատավարությունները կայացան միջազգային ճնշման շնորհիվ, ինչպես նաև՝ Միություն և առաջադիմություն կուսակցությանն ընդդիմադիր Ազատություն և համաձայնություն (Hürriyet ve İtilaf) կուսակցության ներկայացուցիչների՝ վերստին իշխանության գալու արդյունքում:

1926 թ. տեղի ունեցած երիտթուրքերի դատավարությունները՝ Իզմիրի մահափորձի և Անկարայի կամ «Սև ավազակախմբի» դատական գործերը, քննվեցին Անկախության դատարանում: Այս դատաքննությունների դեպքում ոչ թե ճնշում, այլ միջամտության փորձեր գրանցվեցին մի շարք պետությունների կողմից: Այսպես՝ Մեծ Բրիտանիան ենթադրում էր, թե ԽՍՀՄ-ի հետ կապերի սերտացման դեմ հանդես նկած Քյազիմ Կարաբեքիրի, Ալի Ֆուադ Ջերեսոյի և Բեքիր Սամիի՝ Թուրքիայում ազդեցության ամրապնդումից անհանգստացած Ռուսաստանը որոշակի դեր էր խաղացել Մուստաֆա Քեմալի դեմ մահափորձի բացահայտման գործում: Այդ մասին անգլիական «Դեյլի թելեգրաֆ» պարբերականը 1926 թ. հունիսի 23-ի համարում գրում էր. «...Ըստ երևույթին ռուսական ՀԱՀ-ր (Համառուսաստանյան հատուկ հանձնաժողով) էական դեր է կատարել «այդ կոնսպիրացիայի բացահայտման» և Անկարային նախազգուշացնելու հարցում: Ինչպես հայտնի է, Թուրքիայի Հանրապետության նախագահի և Խորհրդային Միության դեսպանատան հարաբերությունները մտերիմ ու ջերմ են: Բանն այն է, որ Մոսկվան ատամ ունի մեղադրյալներից մի քանիսի դեմ: Նրա ազդեցությունը Թուրքիայում անրնդհատ հանդիպել է գեներալ Քյազիմ Կարաբեքիր փաշայի դիմադրությանը: Երբ որոշ ժամանակ առաջ Մոսկվան առաջարկեց ստանձնել Թուրքիայի արևելյան նահանգների ոստիկանական պահպանությունը, բոլորից շատ Քյազիմ Կարաբեքիր փաշան առարկեց դրա դեմ՝ այն հիմնավորմամբ, թե հենց Մոսկվան մուտք գործի տվյալ շրջաններ, ապա շատ դժվար կլինի հետո նրան ստիպել հեռանալ այդ կողմերից: Նմանապես խորհրդային կառավարությունը մեծ դժվարությունների հանդիպեց, երբ իր բարոգչության և առևտրի մեթոդների դեմ հակազդեցություն ցուցաբերեցին Բեքիր Սամի բեյը և Ալի Ֆուադ Ջերեսոյ փաշան, դժվարություններ, որոնք նա չմոռա-

ցավ ու չներեց»[652]:

Նույն աղբյուրր 3/VI համարում արձանագրում էր, թե մահափորձը Անկարայի կառավարության համար պատրվակ դարձավ, որպեսզի վերջնականապես հաշվեհարդար տեսներ ընդդիմության հետ, իսկ Ռուսաստանի համար՝ պատեհ առիթ՝ իր դեմ թշնամարար տրամադրված թուրք քաղաքական գործիչներին չեզոքացնելու համար[653]:

Իր հերթին ԽՍՀՄ-ր մտավախություն ուներ, թե Իզմիրի և Անկարայի դատաքննությունների ժամանակ կրացահայտվեին բոլշևիկների և նրիտթուրքերի համագործակցությունը, ինչպես նաև՝ Ռուսաստանի և Աֆղանստանի միջև պայմանագրի կնքման մանրամասները[654]: 1926 թ. նրիտթուրքերի դատավարությունների ժամանակ Անկարայում ԽՍՀՄ-ի արտակարգ և լիազոր դեսպան Յակով Սուրիցը մասնավոր զրույցներում հայտնել էր Թուրքիայի իշխանություններին, որ մեղադրյալները, հատկապես՝ դոկտոր Նազըմը, բաջատեղյակ են եղել Ռուսաստանի և Աֆղանստանի միջև պայմանագրի կնքման մանրամասներին և խնդրել, որ ամբաստանյալներին հարցեր չտրվեն այդ թեմայի առնչությամբ: Սուրիցը 1926 թ. սեպտեմբերի 15-ին ԽՍՀՄ-ի արտաքին գործերի նախարար Վ. Չիչերինին ուղղված հույժ գաղտնի զեկույցում գոհունակությամբ նշում էր, թե թուրք իշխանություններն այդ առումով օժանդակել են իրեն, և դատարանի նախագահն ու անդամները ոչ մի հարց չեն ուղղել հիշյալ թեմայի վերաբերյալ. «...Մեզ համար իրավիճակը փոքր-ինչ զգայուն դարձավ, երբ դատարանն անցավ մեր տարածքներում իթթիհադականների կատարած դերի բացահայտմանը: Արտաքուստ կարող էր տպավորություն ստեղծվել, թե պատի էր եղել, երբ մենք հույս էինք դրել Քեմալի հակառակորդների վրա, և որ մենք եթե չէինք խրախուսել, ապա չէինք էլ խոչընդոտել Քեմալի դեմ ուղղված այդ աշխատանքին: Անհնար էր խուսափել որոշ տհաճ նստվածքից, երբ մեղադրական ակտում որպես իթթիհադականների գործունեության գլխավոր կենտրոններ էին թվարկվում Մոսկվան, Բաքուն և Բաթումը: Ես այդ վտանգն զգացի Անկարայի դատական գործընթացից

652 АВП РФ, Ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 78, д. 35, 1926 г., л. 346.

653 АВП РФ, Ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 78, д. 34, 1926 г., л. 23.

654 Խոսքր վերաբերում է 1921 թ. ԽՍՀՄ-ի և Աֆղանստանի միջև կնքված պայմանագրին, որով կողմերը միմյանց ճանաչեցին: Սույն պայմանագրի կնքման գործընթացում եղել են մանրամասներ, որոնց հրապարակումը կարող էր լարվածություն հարուցել Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ-ի հարաբերություններում:

դեռ շատ առաջ և դեռևս այն ժամանակ ինքս ինձ մշակեցի հակաարշավի մի ծրագիր: Ես թուրք գործիչների հետ իմ բոլոր զրույցները լայնորեն օգտագործեցի, որպեսզի նրանց ապացուցեմ, որ մենք ինքներս ենք մոլորության մեջ եղել. իթթիհադականների մեջ երկար ժամանակ տեսել ենք միայն Քեմալի գինակիցներին և աջակցել նրանց մինչև ընդհուպ այն պահը, երբ մեզ համար սկսեցին ավելի պարզորոշ ուրվագծվել Քեմալի հետ նրանց ունեցած տարաձայնությունները և նրանց իրական մտադրությունները: Ես ընդգծեցի, որ միայն մեր իշխանությունների զգոնության շնորհիվ Էնվերին և մյուսներին չի հաջողվել հասնել Անատոլիա, և որ մենք Քեմալից հեռացնելով նրա դեմ ուղղված հարվածները՝ փաստորեն մեզ վրա ենք վերցրել դրանք:

Դատարանի անդամների հետ զրույցում ես նրանց տեղեկացրի, թե մեղադրյալներից մի քանիսն իրագեկված են եղել Հնդկաստանին և Աֆղանստանին վերաբերող մեր աշխատանքներին ուղղված ծրագրերի մասին, և որ դատարանի պարտավորությունների մեջ է մտնում մեզ պաշտպանել այդ բնագավառի վերաբերյալ հավանական բողոքներից, որոնք կարող են բարդացնել մեր միջազգային դրությունը:

Դատավորները, մասնավորապես՝ դատարանի նախագահը մեծ ուշադրությամբ վերաբերվեցին իմ հայտարարություններին և թույլ չտվեցին մեղադրյալներին, հատկապես՝ Նազըմին ծավալվել այդ թեմայի շուրջ: Իմ միջամտությունը նաև խաղաց այն դրական դերը, որ մեղադրական ակտի նախնական տեքստից ջանադրաբար դուրս կորզվեց այն ամենը, ինչն առնչվում էր իթթիհադականների գործունեությանը մեր տարածքներում: Դատական գործընթացն այդ իմաստով լրիվ բարեհաջող անցավ մեզ համար»[655]:

1926 թ. դատավարություններին մյուս օտար պետությունների միջամտության առումով հարկ է նշել, որ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան թուրքական իշխանությունների վրա ճնշումներ էին բանեցրել՝ Ջավիդի մահապատիժը կանխելու ուղղությամբ: Նույնիսկ Եվրոպայի և Ամերիկայի նշանավոր քաղաքական գործիչներն Անկարայի առաջ բարեխոսել էին՝ ձերբակալված Ջավիդին ազատ արձակելու համար: Ջավիդի ձերբակալման մասին լուրը մեծ անհանգստություն էր հարուցել նաև Եվրոպայի մասոնական շրջանակներում: Թուրքական «Հաբիմիյեթ-ի միլլիյե» թերթր 1926 թ. օգոստոսի 30-ի համարում բերել էր «Դեյլի թելեգրաֆ»-ում հրատարակված հոդվածից մի հատված, որում մեծ դրվատանքով և ցավով

655 АВП РФ, Ф. 08, Секретариат Карахана, оп. 10, папка 38, д. 263, 1926-1927 гг., лл. 147-148.

էր խոսվում մահապատժի ենթարկված Ջավիդի մասին: «Հաքիմիյեթ-ի միլլիյեն» գրում էր. «Այս հատվածը ցույց է տալիս, թե ինչ միտումներ են ունեցել այն շրջանակները, որոնց վրա հենվել էր Ջավիդը: (...) Ջավիդը եղել է թուրք ժողովրդի տնտեսական անկախության հակառակորդների ամենաամուր հենարանը»[656]:

1926 թ. Իթթիհադի վերնախավի հետ հաշվեհարդար տեսնելուց հետո Անկարան, փորձելով մեղմել Եվրոպայի վրա գործած տպավորությունը, համեմատաբար թեթև պատիժներ է սահմանել Աբդուլ Քադիրին ու Քարա Քեմալին թաքցրած անձանց և լրտեսների դեմ[657]:

1919-1921 թթ. կայացած իթթիհադականների դատաքննությունների համար հիմք են ծառայել հայերի տեղահանման ու ոչնչացման, Հայոց ցեղասպանության իրականացման մեջ կարևոր դեր կատարած Հատուկ կազմակերպությունը հիմնելու, առանց հիմնավոր պատճառի երկիրը համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու, տնտեսական չարաշահումներ թույլ տալու, սև շուկայում գործունեություն ծավալելու և երկրի անվտանգությունը խախտելու մեղադրանքները:

1919-1921 թթ. և 1926 թ. դատավարությունների համընկնող մեղադրանքներն էին երկրի ներքաշումը Առաջին աշխարհամարտի մեջ և պատերազմի ժամանակ, հատկապես սննդի հարցում, կատարված չարաշահումները:

1926 թ. հիշյալ մեղադրանքներին ավելացան նաև երկիրը պատերազմի մեջ ներքաշած և արտերկիր ճողոպրած իթթիհադականների գործունեությունը արտասահմանյան երկրներում և հետագայում երիտթուրքերի կողմից Թուրքիայում կուսակցություն վերստեղծելու փորձերը՝ իշխանությունը խլելու նպատակով: 1926 թ. դատավարության մեղադրանքների մեջ իսպառ բացակայում էր քրիստոնյաների, հատկապես՝ հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքը: Ավելին՝ 1926 թ. ողջ դատաքննության ընթացքում հիշատակություն անգամ չի եղել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երիտթուրքերի կողմից քրիստոնյաների բնաջնջման մասին: Սակայն հարկ է նշել, որ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը 1926 թ. «Լոս Անջելես Էքզամիներ քվոթ» օրաթերթին տված հարցազրույցում նշել է, թե Իթթիհադը մեղավոր էր նաև Համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրության հազարավոր քրիստոնյա հպատակների ոչնչացման համար[658]: Թեև թուրք պատմագրությունը ժխտում է Աթաթուրքի՝ նման հարցազրույց ընդհանրապես տված լինելու փաստը, սակայն ուշագրավ է, որ այդ հարցազրույցի ամսաթիվը համընկնում է 1926 թ. դատավարության կայացման ամսաթվի հետ:

Դրա հետ մեկտեղ՝ Միություն և առաջադիմություն կուսակցության հետ հաշվեհարդարի դատավարություն դարձավ ոչ թե 1919-1921 թթ. անզոր իթթիլյաֆական կառավարության կողմից կազմակերպված երիտթուրքերի դատական գործընթացը, այլ փաստորեն նույն իթթիհադական կուսակցությունից կազմված բեմալական կառավարության՝ 1926 թ. իրականացրած Իզմիրի և Անկարայի դատավարությունները: Ինչպես նշում է երիտթուրքական կուսակցության պատմության վերաբերյալ համապարփակ գիտական աշխատության հեղինակ, պրոֆեսոր Թարրք Զաֆեր Թունայան՝ 1926 թ. «Միություն և առաջադիմությունից 18 տարվա հաշվետվություն պահանջեցին»[659]: 1926 թ. դատավարության ընթացքում Անկարայի մամուլը խոսում էր «Իթթիհաթ վե թերաքքի փորձանքից փրկվելու» ("İttihat ve Terakki belasından kurtuluş") մասին[660]:

1919-1921 թթ. և 1926 թ. դատավարությունների միջև մեկ այլ էական տարբերություն է այն փաստը, որ 1919-1921 թթ. երիտթուրք մեղադրյալներին թույլ է տրվել դատապաշտպաններ վարձել և իրենց օգտին վկաներ ներկայացնել, իսկ 1926 թ. դատական գործընթացի ժամանակ՝ ոչ: Ավելին՝ 1919-1921 թթ. դատաքննությունների ժամանակ մի շարք մեղադրյալներ, հատկապես՝ պետական գործիչներ մեկի փոխարեն միաժամանակ մի քանի փաստաբաններ էին վարձել: Այսպես, օրինակ, 1919 թ. դատավարության ժամանակ Հասան Հայրի Թաներ և Զելալեդդին Արիֆը պաշտպանում էին ամբաստանյալ Սայիդ Հալիմին, Էսադը, Քյազըմը և Թահսինը՝ Հալիլ Մենթեշևին, Սաքին ու Էսադ Մուհլիսը՝ Ահմեդ Նեսիմիին, Սաղեդդին Ֆերիդը՝ Ծյուրյունին, Մահմուդ Մահիրը, Յուսուֆ Զեմալն ու Քադրին՝ Իբրահիմ Փիրիզադեին, Սաղեդդին Ֆերիդը, Ահմեդ Ռամիզը և Մահմուդ Մահիրը՝ Միդհադ Ծյուրյունին, Հայդար Ռըֆաթն ու Իսմայիլ Թևֆիկը՝ Զիա Գյոքալփին, Միշոն Վենտուրան՝ Զեադին և Ալի Հայդարը՝ Մուսա Քյազիմին և Հաշիմին:

Թեև 1926 թ. Իթթիհադի դատաքննությունն իրականացրած Անկախության դատարաններում ըստ օրենքի ամբաստանյալներին չէր արգելվում

656 АВП РФ, Ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 79, д. 36, 1926 г., л. 387.

657 АВП РФ, Ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 78, д. 33, 1926 г., л. 139.

658 Los Angeles Examiner Quote, 1 August 1926.

659 **Tarık Zafer Tunaya,** Türkiye'de Siyasal Partiler, cilt III, s. 713.

660 Նույն տեղում:

դատապաշտպան վարձել և վկա ներկայացնել, սակայն դատարանը կրտրականապես մերժել է մեղադրյալների այդ պահանջը[661]: 1926 թ. Անկախության դատարանը վճռել է ունկնդրության չարժանացնել ամբաստանյալների ներկայացրած վկաներին: Ինչպես շեշտում է թուրք պատմաբան Սեյհուն Թունաշարը, «Ակնհայտ էր, որ եթե այդ վկան նույնիսկ Աթաթուրքը լիներ, դարձյալ ոչ մի ազդեցություն չէր ունենալու արդյունքի վրա, քանի որ դատարանը նախապես մշակված սցենարն էր խաղում»[662]:

Բացի այդ՝ 1919-1921 թթ. երիտթուրքերի դատավարությունների ժամանակ մեղադրյալները մահվան դատավճիռը բողոքարկելու հնարավորություն ունեին, իսկ 1926 թ. զրկված էին նաև այդ հնարավորությունից:

Վերը բերված փաստերը սնանկ են դարձնում որոշ թուրք պատմաբանների այն տեսակետը, թե քանի որ 1919-1921 թթ. հայերի տեղահանության և կոտորածների դատաքննությունները կայացել են միջազգային ճնշման հետևանքով, դրանք օրյեկտիվ չեն եղել: Ընդհակառակը՝ ռազմական արտակարգ ատյաններում ամբաստանյալներին շնորհվել են իրենց պաշտպանելու բոլոր հնարավորությունները՝ ի տարբերություն 1926 թ. կայացած դատավարության:

1919-1921 թթ. իթթիհադականների դատավարությունների նպատակն է եղել մեղմացնել Առաջին աշխարհամարտում հաղթանակած պետությունների դիրքորոշումը Թուրքիայի նկատմամբ և կանխել պատերազմական հանցագործների հնարավոր դատաքննությունը Անտանտի տերությունների կողմից: 1926 թ. իթթիհադականների դատաքննություններն ուղղված են եղել Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի մենիշխանության պահպանմանը, նրա ընդդիմադիրների չեզոքացմանը և երկրում միակուսակցական վարչակարգ հաստատելուն:

Հարկ է նշել, որ թե՛ 1919-1921 թթ. և թե՛ 1926 թ. կայացած դատավարությունները երբևէ ուղղված չեն եղել Իթթիհադի դեմ, այլ միայն նպատակ են ունեցել վերացնել կուսակցության որոշ ներկայացուցիչների, ընդ որում՝ միայն վերնախավից: Ինչպես նշում է Թ.Զ. Թունայան, թեև «1926 թ. հետո գործուն իթթիհադականները պատմություն դարձան, բայց իրականությանը չի համապատասխանում այն պնդումը, թե սկսած գինադարի շրջանից՝ բոլոր երիտթուրքերը դեմ էին Մուստաֆա Քեմալին և հանրապետական իշխանությանը: Ընդհակառակը՝ իթթիհադականների մի մասը միախառնվեց այդ իշխանության հետ և կարևոր դիրքեր զբաղեցրեց Ժողովրդա-հանրապետական կուսակցության մեջ և երկրի ղեկավարության կազմում»[663]:

1926 թ. Անկարայի դատաքննությունից հետո Իթթիհադը, որպես կուսակցություն, հեռացել է Թուրքիայի քաղաքական թատերաբեմից, իսկ թուրք պատմագրության մեջ ամրապնդվել է ազգայնական պայքարում երիտթուրքական գործոնի մասին լռություն պահպանելու ուղեգիծ[664]:

Ուշագրավ է, որ Իզմիրի և Անկարայի դատաքննություններին անմիջապես հաջորդած ժամանակաշրջանի թուրք պաշտոնական պատմագրությունը նախընտրել է չանդրադառնալ Աթաթուրքի դեմ մահափորձի մեջ իթթիհադականների ունեցած դերին: Ինչպես նկատում է պրոֆեսոր Էրիկ Յյուրխերը, 1931 թ. ֆրանսերենով վերատպված «Թուրքիայի Հանրապետության պատմությունը» գրքում որպես մահափորձի պարագլուխ է ներկայացվում Ռաուֆ Օրբայը, իսկ երիտթուրքերի մասին խոսք անգամ չկա[665]: Ըստ Յյուրխերի՝ նույն ուղեգծին է հետևում նաև թուրք պաշտոնական պատմագիրներից Էնվեր Զիյա Քարայը՝ 1945 թ. հրատարակված «Թուրքիայի Հանրապետության պատմությունը» գրքում, այսինքն՝ մահափորձի մեջ մեղադրում է միայն Առաջադիմական հանրապետական կուսակցությանը և ակնարկ անգամ չի անում իթթիհադականների վերաբերյալ[666]: Յյուրխերի դիտարկմամբ՝ տվյալ ժամանակաշրջանի թուրք պատմաբանները կամ լրիվ աչքաթող են արել Իզմիրի և Անկարայի դատաքննությունները, կամ էլ այդ դեպքերը որակել որպես դավադրություն՝ կազմակերպված Առաջադիմական հանրապետական կուսակցության գործիչների կողմից: Անգամ Ռաուֆ Օրբայը սկզբնաղբյուրներում ներկայացվել է որպես գլխավոր մեղավոր[667]:

Մեր կարծիքով այս միտումը պայմանավորված էր Իթթիհադին, որպես կուսակցություն, չվարկաբեկելու ցանկությամբ: Չպետք է մոռանալ, որ Մուստաֆա Քեմալն ինքը, Յունուս Նադիի բնորոշմամբ, «ամենամեծն

661 Երբ Իզմիրի գործով մեղադրյալներից Իզմիթի պատգամավոր Ցյուրրյու բեյը հայտնել է իր՝ փաստարան վարձելու ցանկության մասին, դատարանի նախագահ Ալի Չեթինքայան պատասխանել է. «Անկախության դատարանները չեն տրվում փաստաբանների խարդավանքներին», տե՛ս **Tarık Zafer Tunaya,** Türkiye'de Siyasal Partiler, cilt III, s. 712.

662 **Seyhun Tunaşar,** Gizemli Bir Devrimci Osmanlı'nın Dahiliye Vekili Cumhuriyetimizin İstanbul Milletvekili İsmail Canpolat (Janbulet), s. 87.

663 **Tarık Zafer Tunaya,** Türkiye'de Siyasal Partiler, cilt III, s. 30.

664 **А. Авакян,** Черкесский фактор в Османской империи и Турции, с. 381.

665 **Erik Jan Zürcher,** Milli Mücadelede İttihatçılık, s. 243.

666 Նույն տեղում, էջ 244:

667 Նույն տեղում:

ու առաջինն էր երիտթուրքերի մեջ»[668], և որ Թուրքիայի Հանրապետության բոլոր հիմնադիրները՝ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ, եղել են իթթիհադականներ: Աթաթուրքը երբեք չի թաքցրել, որ «իր զգացմունքների հայրը եղել է Նամըք Քեմալը, իսկ գաղափարներինը՝ Զիյա Գյոքալփը»[669]: Նույնիսկ որպես Թուրքիայի Հանրապետության հռչակման ամսաթիվ ընտրվել է հոկտեմբերի 29-ը, քանի որ 1907 թ. հոկտեմբերի 29-ին Մուստաֆա Քեմալն անցել էր Իթթիհադի շարքերը:

1926 թ. Իզմիրի և Անկարայի դատավարությունները, Իթթիհադին՝ որպես կուսակցություն, հեռացնելով պատմության թատերարևմից, բնավ նպատակ չունեին և չէին կարող քաղաքականությունից վերացնել ոչ իթթիհադական ավանդույթներն ու գործելաոճը, ոչ էլ մտայնությունը: Թուրք պատմաբաններն ու քաղաքագետները նշում են, որ այսօրվա Թուրքիայում գրեթե միայն մեկ թուրքական կուսակցություն գոյություն ունի՝ Միություն և առաջադիմություն, քանի որ հանրապետական շրջանում երկու հիմնական կուսակցություններ՝ ժողովրդա-հանրապետական կուսակցությունը և Դեմոկրատական կուսակցությունը, որոնցից էլ անջատվել կամ ստեղծվել են Թուրքիայի մյուս կուսակցությունները, կազմված էին նույն երիտթուրքերից և նույն գաղափարախոսությամբ: Թուրք պատմաբան Շյուքրյու Հանիօղլուն նույնիսկ ներկայում Թուրքիայում տիրապետող գաղափարախոսությունը բնութագրում է որպես «դարավոր իթթիհադական գաղափարախոսություն»՝ նշելով, որ դրա հիմքը դրվել է 1908 թ. հուլիսի 23-ի հեղափոխությամբ, իսկ 1922 թ. փոփոխությունը իրականում «այդ գաղափարախոսության շարունակության արդյունքն է»[670]:

Բացի այդ՝ հարկ է նկատի ունենալ, որ Իթթիհաթ վե թերաքքի կուսակցությունը հիմնվել էր մասոնական կազմակերպությունների օրինակով: Այդ առումով, ինչպես նկատում է թուրք պատմաբան Մեթե Թունչայը, սխալ կլինի կարծել, թե իթթիհադականությունը վերացել է վերջին երիտթուրքի մահից հետո[671]: Սեյհուն Թունաշարի խոսքով՝ Միություն և առաջադիմություն կուսակցության ոգին ողջ է անգամ այսօր[672]: Քեմալականները

668 **Gülçiçek Günel,** İttihat Terakki'den Günümüze Yek Tarz-ı Siyaset: Türkleştirme, s. 174.

669 Նույն տեղում, էջ 175:

670 **M. Şükrü Hanioğlu,** Osmanlı'dan Cumhuriyet'e Zihniyet, Siyaset ve Tarih, Bağlam Yayıncılık, İstanbul, 2009, s. 73.

671 **Mete Tunçay,** Türkiye Cumhuriyeti'nde Tek-Parti Yönetimi'nin Kurulması (1923-1931), s. 169.

672 **Seyhun Tunaşar,** Gizemli Bir Devrimci Osmanlı'nın Dahiliye Vekili Cumhuriyetimizin İstanbul Milletvekili İsmail Canpolat (Janbulet), s. 82.

նաև, հետևելով երիտթուրքերի օրինակին և ազգայնական պայքարում օգտագործելով «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսը, Թուրքիայի Հանրապետության հիմնումից հետո փարվել են «Մեր պետությունը ոչ թե բազմազգ, այլ՝ ազգային պետություն է: Պետությունը, թուրքից բացի, այլ ազգություն չի ճանաչում» գաղափարին[673]: Հանրապետության հռչակումից հետո, թուրքերից բացի, մյուս բոլոր ժողովուրդները օտարվել են, և պետությունը վարել է մեկ լեզու, մեկ կրոն, մեկ մշակույթ և մեկ ազգ ստեղծելու, մնացած բոլոր ժողովուրդներին թուրքացնելու քաղաքականություն:

673 **Gülçiçek Günel,** İttihat Terakki'den Günümüze Yek Tarz-ı Siyaset: Türkleştirme, s. 180.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով աշխատանքը և ի մի բերելով ուսումնասիրության հիմնական արդյունքները՝ կարելի է գալ հետևյալ եզրակացությունների.

- Մուդրոսի զինադադարի կնքմանը (1918 թ. հոկտեմբերի 30) հաջորդած ամիսներին Օսմանյան կայսրության հասարակության շրջանում նկատելի էր Առաջին աշխարհամարտում քրիստոնյաների դեմ իրականացված կոտորածների մեջ իթթիհադականներին մեղադրելու և նրանցից զատվելու միտում: Այս ժամանակաշրջանում օսմանյան մամուլում խիստ մեղադրանքներ են հնչեցվել երիտթուրքերի դեմ: Հատկապես սուր քննադատության է ենթարկվել հայերի նկատմամբ նրանց վարած քաղաքականությունը: Հայերի տեղահանության և կոտորածների խնդիրն ընդգրկվել է նաև տվյալ ժամանակաշրջանի օսմանյան խորհրդարանի օրակարգ, և վերջինս 1918 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին դարձել է թեժ վիճաբանությունների թատերարեմ: Օսմանյան խորհրդարանում կայացած քննարկումների արդյունքում փաստվել է պատերազմի ժամանակ երիտթուրքական կուսակցության և կառավարության կատարած չարաշահումների և ոճրագործությունների իրողությունը: Դրանք քննելու նպատակով օսմանյան խորհրդարանում ստեղծվել է Հինգերորդ հանձախումբը, որը ի թիվս այլ մեղադրանքների՝ երիտթուրքական կուսակցությանը մեղադրել է նաև պատերազմի տարիներին հայ բնակչության անհիմն տեղահանության, զանգվածային ոչնչացման և այդ բնաջնջումն իրականացնելու համար Հատուկ կազմակերպություն անվամբ անօրինական կառույց ստեղծելու մեջ:
- Հայոց ցեղասպանության պատասխանատուների հետաքննությունը Օսմանյան կայսրությունում գրեթե միաժամանակ կատարվել է երեք տարբեր հետաքննիչ հանձնաժողովների կողմից: Օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնախումբը հարցաքննված նախարարների մնկնաբանություններին և խոստովանություններին հավելել է, նաև բազմաթիվ փաստաթղթեր, որոնց մեջ եղել են կոտորածներին վերաբերող խիստ գաղտնի հրահանգներ: Այս վավերագրերը հետագայում հանձնվել են Ռազմական ատյանների դատախազներին: Հայոց ցեղասպանության պատասխանատուներին գտնելու ուղղությամբ կարևոր հետաքննություն է կատարել նաև Ներքին գործերի նախարարության կողմից ստեղծված Հանցագործությունների հետաքննիչ հանձնաժողովը, որը հայտնի է Մազհարի հանձնաժողով անունով: Վերջինս երկու ամսվա ընթացքում ձեռք է բերել հայերի կոտորածների վերաբերյալ բազմաթիվ ապացույցներ, այդ

թվում՝ ծածկագիր հեռագրեր, պաշտոնական գրություններ, հրահանգներ ու հրամաններ, ինչպես նաև՝ ականատեսների վկայություններ, որոնք ևս 1919 թ. հունվարին հանձնվել են Ստամբուլի ռազմական ատյանին: Սակայն Առաջին ռազմական ատյանը, վերոհիշյալ հետաքննող հանձնաժողովների կողմից ձեռք բերված նյութերը թերի համարելով, հիմնել է նաև իր 5 հետաքննիչ հանձնաժողովները, որոնք ևս հասու են դարձել մի շարք հավելյալ տեղեկություններ, որ հանձնվել են ռազմական դատարանների դատախազներին:

- 1919 թ. Միություն և առաջադիմություն կուսակցության և կառավարության անդամների դատավարության ժամանակ Օսմանյան կայսրության իշխանությունները ձգտել են հայերի զանգվածային կոտորածները կազմակերպելու մեջ մեղավոր ճանաչել միայն Իթթիհաթ վե թերաքքի կուսակցությանն ու նրա ղեկավարած կառավարությանը և ոչ թե կոտորածների բոլոր պատասխանատուներին, իսկ իրենք՝ երիտթուրքերը և նրանց կողմնակիցները, ընդհակառակը՝ ամեն կերպ փորձել են չվարկաբեկել կուսակցության անունը՝ ձգտելով մեղքը բարդել միայն առանձին անհատների և ոչ թե կազմակերպության վրա:
- 1919 թ. Միություն և առաջադիմություն կուսակցության և կառավարության անդամների գործի ամբաստանագրում արձանագրվել է, որ երիտթուրքական կուսակցությունն ու կառավարությունը բացահայտ հրաման էին արձակել հայերի կոտորածների վերաբերյալ: Մեղադրական ակտում ընդգծվել է, որ իթթիհադականներն օգտվել են Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից՝ իրենց գաղտնի ծրագրերը (իմա՝ Հայոց ցեղասպանությունը) իրականացնելու համար: Ամբաստանագրում հերքվել է նաև Մեծ Եղեռնի հեղինակների և այս փաստը ժխտող թուրք պատմաբանների այն «փաստարկը», թե տեղահանությունն իրականացվել էր որպես ռազմական միջոցառում:
- Որոշ քաղաքական իրադարձությունների և հաշվարկների ազդեցության տակ Մեծ Բրիտանիան որոշել է մի շարք թուրք պատերազմական հանցագործների, այդ թվում՝ հայերի տեղահանության և կոտորածների մեջ մեղադրվող կալանավորների տեղափոխել ավելի ապահով մի վայր՝ Մալթա կղզի: Թեև Մեծ Բրիտանիան սկզբում, իրոր, մտադրված է եղել դատապարտել Մալթա աքսորված պատերազմական հանցագործներին, այդ թվում նաև՝ Հայոց ցեղասպանության պատասխանատուներին, սակայն հետագայում նրա վճռականությունը հետզհետե թուլացել է, և Անգլիան Հայոց ցեղասպանությունն իրականացրած ոճրագործներին ի վերջո փոխանակել է անգլիացի ռազմագերիների հետ: Մալթա աքսորյալ-

ներր վերադարձել են Թուրքիա, մասնակցել ազգայնական պայքարին և հանրապետության հռչակումից հետո գրաղեցրել կարևոր քաղաքական պաշտոններ: Այսպիսով՝ Հայոց ցեղասպանության պատասխանատուներր դարձել են Թուրքիայի Հանրապետության հիմնադիր կադրերը:

- Հայերի տեղահանության ու կոտորածների մեղադրանքով իրականացված դատաքննությունների արդյունքում Ռազմական արտակարգ ատյանների դատական կազմերր մահվան դատավճիռներ կայացնելիս ավելի «շռայլ» են եղել փախուստի մեջ գտնվող դատապարտյալների հանդեպ: Նշյալ մեղադրանքով հարուցված՝ մեզ հայտնի 63 դատական գործերի արդյունքում կայացվել է ընդհանուր թվով 20 մահապատժի դատավճիռ: Հատկանշական է, որ այդ մահապատիժներից միայն 3-ն են ի կատար ածվել: Ներկա գտնվող ամբաստանյալների վերաբերյալ մահապատժի դատավճիռներ կայացնելուց խուսափելր պայմանավորված է եղել նաև դատավարությունների ձևական բնույթով, քանի որ սուլթանական կառավարությանր հայերի տեղահանության ու կոտորածների պատասխանատուներին դատելուն է մղել առավելապես ոչ թե արդարադատություն գործադրելու ցանկությունր, այլ՝ պատերազմում հաղթանակած պետությունների վրա նման տպավորություն թողնելու ձգտումր: Ասվածր չի վերաբերում մյուս մեղադրանքներին, քանի որ Առաջին աշխարհամարտի մեջ երկրի ներքաշման և պատերազմի ժամանակ, հատկապես սննդի հարցում, կատարված չարաշահումների մեղադրանքներր կրկնվել են նաև 1926 թ. կայացած երիտթուրքերի դատական գործերում:

- Թեև 1919-1921 թթ. հայերի կոտորածների հետաքննությունր շրջան առ շրջան իրականացնելր գործնական տեսանկյունից ավելի նպատակահարմար է եղել, սակայն, ըստ էության, տեսականորեն դրանք կարող էին ամփոփվել նաև մեկ դատական գործի շրջանակներում և ավարտվել մեկ ընդհանուր դատավճռով, քանի որ խնդրո առարկա միևնույն ոճրագործությունն էր: Սակայն հայերի կոտորածների կազմակերպիչների դատաքննությունները շրջան առ շրջան իրականացնելր Ռազմական արտակարգ ատյանին ժամանակ չահելու և դատավարությունները դաշնակից պետությունների առաջ չահարկելու հնարավորություն էր տալիս:

- 1919-1921 թթ. երիտթուրքերի դատավարություններն ուղղված են եղել միայն Միություն և առաջադիմություն կուսակցության վերնախավի դեմ, որի վրա է բարդվել թե՛ հայերի ոչնչացման և թե՛ Օսմանյան կայսրությունն Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու մեղքր: Ընդ որում՝ այդ ծրագիրր մշակվել էր հենց Իթթիհադի կողմից, որպեսզի անհաջողության դեպքում կուսակցությունը փրկվեր, և պատասխանատվություն կրեին միայն նրա ղեկավարները: Դա է հաստատում նաև այն փաստր, որ Թևջեդդյութ կուսակցության կազմավորման որոշման մեջ նշված էր, թե Իթթիհադի բարձրաստիճան պաշտոնյաները չեին կարող անդամագրվել տվյալ կուսակցությանը:

- 1919-1921 թթ. և 1926 թ. դատավարությունների միջև որոշ զուգահեռներ անցկացնելու դեպքում կարելի է արձանագրել, որ այս դատավարությունների համրնկնող մեղադրանքներն են եղել երկրի ներքաշումր Առաջին աշխարհամարտի մեջ և պատերազմի ժամանակ, հատկապես սննդի հարցում, կատարված չարաշահումները: 1926 թ. հիշյալ մեղադրանքներին ավելացել են նաև երկիրր պատերազմի մեջ ներքաշած և արտերկիր ճողոպրած իթթիհադականների գործունեությունր արտասահմանյան երկրներում և հետագայում երիտթուրքերի կողմից Թուրքիայում կուսակցություն վերստեղծելու փորձերր՝ իշխանություններ խլելու նպատակով: Սակայն 1926 թ. դատավարության մեղադրանքների մեջ իսպառ բացակայել է քրիստոնյաների, հատկապես՝ հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքր:

- 1919-1921 թթ. և 1926 թ. դատավարությունների միջև էական տարբերություն է նաև այն փաստր, որ 1919-1921 թթ. երիտթուրք մեղադրյալներին թույլ է տրվել դատապաշտպաններ վարձել և իրենց օգտին վկաներ ներկայացնել, իսկ 1926 թ. դատական գործընթացների ժամանակ՝ ոչ: Բացի այդ, 1919-1921 թթ. իթթիհադականների դատավարությունների ժամանակ մեղադրյալներր մահվան դատավճիռր բողոքարկելու հնարավորություն են ունեցել, իսկ 1926 թ. գրկված են եղել նաև դրանից: Վերր բերված փաստերր սևանկ են դարձնում որոշ թուրք պատմաբանների այն տեսակետր, թե քանի որ 1919-1921 թթ. հայերի տեղահանության և կոտորածների դատաքննություններր կայացել են միջազգային ճնշման հետևանքով, դրանք օբյեկտիվ չեն եղել: Ընդհակառակր՝ ռազմական արտակարգ ատյաններում ամբաստանյալներին չեորհվել են իրենց պաշտպանելու բոլոր հնարավորություններր՝ ի տարբերություն 1926 թ. կայացած երիտթուրքերի դատավարությունների:

- Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների հետ հաշվեհարդարի դատավարություն է դարձել ոչ թե 1919-1921 թթ. անգոր իթթիլաֆական կառավարության կողմից կազմակերպված երիտթուրքերի դատական գործընթացր, այլ փաստորեն նույն իթթիհադական կուսակցությունից կազմված բեմալական կառավարության՝ 1926 թ. իրականացրած Իզմիրի և Անկարայի դատավարությունները:

- 1919-1921 թթ. և 1926 թ. երիտթուրքերի դատավարությունները,

Միություն և առաջադիմության՝ որպես կուսակցություն, հեռացնելով պատմության թատերաբեմից, բնավ նպատակ չունեին և չէին կարող քաղաքականությունից վերացնել ո՛չ իթթիհադական ավանդույթներն ու գործելաոճը, ո՛չ էլ մտայնությունը, քանի որ հանրապետական շրջանում գործող գրեթե բոլոր կուսակցությունները սերվել են նրանից և օգտագործում են նույն գաղափարները: Հանրապետության հռչակումից հետո, թուրքերից բացի, մյուս բոլոր ժողովուրդները օտարվել են, և պետությունը վարել է մեկ լեզու, մեկ կրոն, մեկ մշակույթ և մեկ ազգ ստեղծելու, մնացած բոլոր ժողովուրդներին թուրքացնելու քաղաքականություն:

- 1926 թ. երիտթուրքերի դատավարությունները, Թուրքիայում վերջ դնելով իթթիհադական խորքային պետությանը, հիմք դրեցին մեկ այլ՝ քեմալական խորքային պետության ձևավորմանը՝ հաշվեհարդար տեսնելով հայերի վրեժխնդրությունից սպրդած Իթթիհադի մի շարք պարագլուխների հետ, սակայն քաղաքական կյանքում անփոփոխ թողնելով իթթիհադական գաղափարախոսությունը և պետական կառավարման մեջ որդեգրված գործելաոճը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային փաստաթղթեր

1. Архив внешней политики Российской Федерации (АВП РФ), Фонд 132, Референтура по Турции, опись 11, папка 78, д. 34; папка 79, д. 36.

2. Архив внешней политики Российской Федерации, Фонд 08, Секретариат Карахана.

Արխիվային փաստաթղթերի հրապարակումներ

3. **Տատրեան Վ.**, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, տպ. «Պայքար», Մասաչուսեթս, 1995:

4. **Փափազյան Ա.**, Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 1989:

5. **Нерсисян М., Саакян Р.**, Геноцид армян в Османской Империи, Ереван, 1982.

6. **Bardakçı M.**, Talât Paşa'nın Evrak-ı Metrûkesi, Everest Yayınları, İstanbul, 2009.

7. **Dadrian V., Akçam T.**, "Tehcir ve Taktil", Divan-ı Harb-i Örfî Zabıtları, İttihad ve Terakki'nin Yargılanması 1919-1922, İstanbul, 2008.

8. **Kocahanoğlu O. S.**, İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması (1918-1919), İstanbul, Temel Yayınları, 1998.

9. **Kocahanoğlu O. S.**, Atatürk'e Kurulan Pusu. İzmir Suikasti'nin Perde Arkası 1926. İddianame/Duruşmalar/Hüküm, İstanbul, Temel Yayınları, 2003.

10. Osmanlı Belgelerinde Ermeniler (1915-1920), T.C. Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü, Ankara, 1994.

11. **Yeghiayan V.**, Malta Belgeleri, İngiltere Dışişleri Bakanlığı "Türk Savaş Suçluları" Dosyası, Belge Yayınları, İstanbul, 2007.

Հուշագրություններ

12. **Ակունի Ս.**, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ.Պոլիս, 1920:

13. **Ամջա Հ.**, Տեղահանություն և ոչնչացում (Տեղահանության իրական պատկերը), օսմաներենից թարգմանությունը, ներածականն ու ծանոթությունները՝ Ա.Գ. Ավագյանի, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2007:

14. **Անտոնյան Ա.**, Մեծ ոճիրը, Պոսթըն, 1921:

15. **Аралов С.**, Воспоминания советского дипломата 1922-1923, изд. Института международных отношений, Москва, 1960.

16. **Джордж Л.,** Правда о мирных договорах, том второй, изд. Иностр. лит., Москва, 1957.

17. **Altınay A. R.,** İki Komite, İki Kıtal, İstanbul, 1999.

18. **Altınay A. R.,** Kafkas Yollarında. İki Komite İki Kıtal, Temel Yayınları, İstanbul, 1998.

19. Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, Derleyen: Hulûsi Turgut, İstanbul, 2005.

20. **Atay F.R.,** Çankaya-Atatürk'ün doğumundan ölümüne kadar-, İstanbul, 1969.

21. **Atay F.R.,** Çankaya. Mustafa Kemal'ın Çankaya'sı, İstanbul, 1998.

22. **Atay F.R.,** Zeytindağı, İstanbul, 1981.

23. **Bleda M.Ş.,** İmparatorluğun Çöküşü, Remzi Kitabevi, İstanbul, 1979.

24. **Çavdar T.,** Talât Paşa, Bir Örgüt Ustasının Yaşamöyküsü, 4. Baskı, İmge Kitabevi, 2001.

25. **Ertürk H.,** İki Devrin Perde Arkası, İstanbul, 1996.

26. **Halil Paşa,** İttihat ve Terakki'den Cumhuriyet'e Bitmeyen Savaş, Derleyen: Taylan Sorgun, Kamer Yayınları, İstanbul, 1997.

27. İttihat ve Terakki İçinde Dünenler, Anlatan: Galip Vardar, Yazan: Samih Nafiz Tansu, Yeni Zamanlar Yayınları, İstanbul, 2003.

28. İttihat ve Terakki'nin Kurucu Üyelerinden Dr. Reşid Bey'in Hatıraları. "Sürgünden İntihara", Yayına Hazırlayan: Ahmet Mehmetefendioğlu, Arba Yayınları, İstanbul, 1993.

29. **Nadi Y.,** Kurtuluş Savaşı Anıları, İstanbul, 1978.

30. Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları, Yay. Haz. İsmail Arar, Hürriyet Vakfı Yayınları, İstanbul, 1986.

31. Talât Paşa'nın Hatıraları, H. Yalçın'ın Önsözüyle, İstanbul, 1958.

32. **Herbert A., Ben Kendim.** A Record of Eastern Travel, London, 1924.

Մենագրություններ

33. **Գրիկէր,** Եոզղատի հայապահութեան վաւերագրական պատմութիւն, Նիւ Եորք, 1980:

34. **Կիրակոսյան Զ.,** Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, «Հայաստան», 1967:

35. **Կիրակոսյան Զ.,** Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հատոր երկրորդ, Երևան, «Հայաստան», 1983:

36. **Հովհաննիսյան Ն.,** Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, 2010:

37. **Ղազարեան Հ.,** Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968:

38. **Պողոսյան Ս.,** Գոյատևման պայքարի բառուղիներում, Երևան, 1988:

39. **Սահակյան Ռ.,** Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990:

40. **Սաֆրաստյան Ռ.,** Օսմանյան կայսրությունն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, «Լուսակն հրատ.», 2009:

41. **Փիլիպոսեան Ն., Քէստէքեան Ա. (Կապենց Ա.),** Յուշարձան եօզղատցիներու (Եօզկատ), Ֆրէզնօ, 1955:

42. **Авакян А.,** Геноцид 1915 г., Механизмы принятия и исполнения решений, изд. "Гитутюн" НАН РА, Ереван, 1999.

43. **Авакян А.,** Черкесский фактор в Османской империи и Турции, (вторая половина XIX-первая четверть XX вв.), Ереван, изд. "Гитутюн", 2001.

44. Новейшая история Турции, отв. ред. А. М. Шамсутдинов, Москва, изд. "Наука", 1968.

45. **Новичев А.,** Турция, Краткая история, Москва, изд. "Наука", 1965.

46. **Шамсутдинов А.,** Национально-освободительная борьба в Турции 1918-1923, Москва, изд. "Наука", 1966.

47. **Akçam T.,** Ermeni Tabusu Aralanırken Diyalogtan Başka Çözüm Var mı?, İstanbul, 2002.

48. **Akçam T.,** İnsan Hakları ve Ermeni Sorunu. İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşı'na, 2. Baskı, İstanbul, 2002.

49. **Akçam T.,** Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu, Su Yayınları, 2001.

50. **Akşin S.,** İstanbul Hükümetleri ve Milli Mücadele, İstanbul, 1983.

51. **Ata F.,** İşgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, Ankara, 2005.

52. **Avcıoğlu D.,** Millî Kurtuluş Tarihi 1835den-1995e, 1. Cilt, İstanbul, 1996.

53. **Aybars E.,** İstiklal Mahkemeleri, İstanbul, 1998.

54. **Bayur H.,** Türk İnkılâbı Tarihi, Cilt 1, Giriş: Berlin Muahedesinden Trablus Garp Savaşına Kadar, Maarif Matbaası, İstanbul, 1940.

55. **Çulcu M.,** Spekülatif Marjinal Tarih Tezleri, İstanbul, E Yayınları, 2000.

56. **Dadrian V.,** Ulusal ve Uluslararası Hukuk Sorunu Olarak Jenosid, Belge Yayınları, İstanbul, 1995.

57. **Eyicil A.,** İttihat ve Terakki Liderlerinden Doktor Nazım Bey, Ankara, Gün Yayıncılık, 2004.

58. **Gülcan Y.,** Cumhuriyet Halk Partisi 1923-1946, Alfa Yayınları, 2001.

59. **Günel G.,** İttihat Terakki'den Günümüze Yek Tarz-ı Siyaset: Türkleştirme, Belge Yayınları, İstanbul, 2006, 455 s.

60. **Hanioğlu Ş.,** Osmanlı'dan Cumhuriyet'e Zihniyet, Siyaset ve Tarih, İstanbul, Bağlam Yayıncılık, 2009, 286 s.

61. **Kandemir,** Cumhuriyet Devrinde Siyas: Cinayetler, Ekiciğil Matbaası, İstanbul, 1955.

62. **Kandemir,** İzmir Suikastinin İç Yüzü, Birinci Cilt, İkinci Cilt, Ekiciğil Matbaası, İstanbul, 1955.

63. **Mumcu U.,** Gazi Paşa'ya Suikast, Ankara, 1999.

64. **Sarıhan Z.,** Kurtuluş Savaşı Günlüğü, I. Cilt, Mondros'tan Erzurum Kongresi'ne (30 Ekim 1918-22 Temmuz 1919), Öğretmen Yayınları, 1982.

65. **Selek S.**, Anadolu İhtilali, Cilt 1, İstanbul, 2000.

66 **Sorgün T.**, Mütareke Dönemi ve Bekirağa Bölüğü, Kamer Yayınları, İstanbul, 1998, 440 s.

67. **Şimşir B.**, Malta Sürgünleri, Bilgi Yayınevi, İstanbul, 1985.

68. **Tunaşar S.**, Gizemli Bir Devrimci Osmanlı'nın Dahiliye Vekili Cumhuriyetimizin İstanbul Milletvekili İsmail Canpolat (Janbulet), Ankara, Piramit Yayıncılık, 2004.

69. **Tunaya T.**, Türkiye'de Siyasal Partiler, Cilt 3, İttihat ve Terakki, Bir Çağın, Bir Kuşağın, Bir Partinin Tarihi, İstanbul, 2000.

70. **Tunçay M.**, Türkiye Cumhuriyeti'nde Tek-Parti Yönetimi'nin Kurulması (1923-1931), Tarih Vakfı Yurt Yayınları, İstanbul, 1999.

71. **Zürcher E.**, Milli Mücadelede İttihatçılık, İletişim Yayınları, İstanbul, 2008.

72. **Hovhannisyan N.**, The Armenian Genocide. Armenocide, Yerevan, 2002.

73. **Üngür U. and Polatel M.**, Confiscation and Distruction, Continuum International Publishing Group, London, 2011.

74. **Zürcher E.J.**, The Unionist Factor. The Role of Committee of Union and Progress in Turkish National Movement 1906-1926, Leiden, 1984.

75. **Dadrian V.**, Histoire du génocide arménien, Stock, 1996.

76. **Garzou J.-M.**, Un génocide exemplaire: Armenie 1915, Paris, 1975.

Հոդվածներ

77. **Ասումյան Մ.**, Յոզղատի և Տրապիզոնի տեղահանության ու կոտորածների դատավարությունները ըստ «Ալեմդար» օրաթերթի, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 9, Երևան, 2004, էջ 64-87:

78. **Ասումյան Մ.**, Մեծ եղեռնը հավաստող վկայություններ օսմանյան «Ալեմդար» օրաթերթում, «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1 (107), Երևան, 2006, էջ 310-317:

79. **Ավագյան Ա.**, 1915 թ. Օսմանյան Թուրքիայում օտարահպատակ և վատառողջ հայերի տեղահանման խնդրի վերաբերյալ (թուրքական արխիվի մեկ փաստաթղթի հիման վրա), Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 2 (106), Երևան, 2005, էջ 194-197:

80. **Ավագյան Ա.**, 1915 թ. ցեղասպանության նախապատրաստական փուլից. Բեհաեդդին Շաքիրի այցն արևելյան նահանգներ, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» IV, Երևան, Ասողիկ, 2006, էջ 245-251:

81. **Գուշակճեան Մ.**, Տրապիզոնի և Սամսոնի նահանգներու տեղահանութիւնն ու ջարդերը, Գերսամ Ահարոնեան (խմբագրապետ «Զարթօնքի»), Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), Պէյրութ, Ատլաս տպարան, 1965, էջ 465-475:

82. **Дадрян В.** Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян: характер и значимость четырех основных серий

судебного разбирательства, "Геноцид-преступление против человечества (Материалы I Московского Международного Симпозиума 18-19 апреля 1995 г.)", отв. ред. академик НАН Республики Армения В. А. Микаелян, Москва, 1997, с. 17-45.

83. **Avagyan A.**, Dr. Nazım'ın Milli Mücadele hakkında bir mektubu, "Toplumsal Tarih", N 125, İstanbul, Mayıs 2004.

84. **Barlas M.**, İstiklal Mahkemesi belgeleri niye gizli kalsın ki?, "Sabah", 11 Şubat 2010.

85 **Kévorkian R.**, La Turquie face à ses responsabilités. Les procés des criminels jeunes turcs (1918-1920), Revue d'histoire de la SHOAH le monde juif, N 177-178, Janvier-Août 2003, p. 167-205.

Մամուլ

86. «Ժողովուրդ», 1919:
87. «Ժողովուրդի ձայնը», 1919:
88. «Ձակատամարտ», 1919-1921:
89. «Վերջին լուր», 1919:
90. "Alemdar", 1919.
91. "Memleket", 1919.
92. "Peyâm-ı Sabah", 1920.
93. "Takvîm-i Vekayi", 1919-1920.
94. "Taraf", 28 Şubat, 2010.
95. "Tasvir-i Efkâr", 1919.
96. "Sabah", 11 Şubat 2010.
97. "Los Angeles Examiner Quote", 1 August 1926.

Սրբագրիչ՝ Մելինե Անումյան
Համակարգչային շարվածքը՝ Արուսյակ Օհանյանի
Շապիկի ձևավորումը՝ Գևորգ Պապյանի

Տպագրությունը՝ օֆսեթ:
Թուղթը՝ օֆսեթ:
Տպաքանակը՝ 300

ՏՊԱԳՐՎԵԼ Է «ԿՈԼԼԱԺ» ՏՊԱԳՐԱՏԱՆԸ
Երևան, Սարյան 4
Հեռ.՝ (374 10) 52 02 17
Էլ. փոստ՝ collage@arminco,com
www.collage.am

ՄԵԼԻՆԵ ՎԱՀԵԻ ԱՆՈՒՄՅԱՆ

Ծնվել է 1977 թ. Երևանում:

1999 թ. ավարտել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության բաժինը: 1999 թ. ընդունվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտուրա: 1999-2001 թթ. աշխատել է հիշյալ ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող:

2002 թ. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից 3 ամսով գործուղվել է Սթամբուլ, որտեղ մասնակցել է Թուրքական պատմական հիմնադրամի (Türk Tarih Vakfı) օսմաներեն լեզվի արագացված դասընթացներին:

2004-ից մինչ օրս աշխատում է Հայաստանի հանրային ռադիոյի արտասահմանի համար հեռարձակվող հաղորդումների բաժնում՝ որպես թուրքերեն հաղորդումների խմբագիր:

2009-ից առ այսօր աշխատում է «Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն» գիտահետազոտական հիմնադրամում՝ որպես գիտաշխատող և թուրքական բաժնի վարիչ:

2009 թ. Մ. Անումյանի թարգմանությամբ Երևանում տպագրվել է թուրք ժամանակակից դրամատուրգ Հասան Էրքեքի «Շեմ» պիեսը:

2011 թ. ապրիլին հրատարակել է «Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի» մենագրությունը:

2012 թ. հուլիսին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայոց ցեղասպանության խնդիրը երիտթուրքերի դատավարություններում (1919-1921 թթ.)» թեմայով:

Մասնակցել է մի շարք հանրապետական և միջազգային գիտաժողովների: Շուրջ մեկ տասնյակ գիտական հոդվածների հեղինակ է: Մ. Անումյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայոց ցեղասպանության, երիտթուրքերի 1919-1921 թթ. ու 1926 թ. դատավարությունների, օսմանյան մամուլում փվյալ խնդիրների արծարծման և Թուրքիայում իսլամացած ու ծպտյալ հայերի թեմաները: